

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՊՐՈՖԵՍՈՐ ՄԱՆՎԵԼ ԱՍԱՏՐՅԱՆԻ
90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

(Երևան, ապրիլի 27, 2016)

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016**

ՀՏԴ 81'1

ԳՄԴ 81

Մ 271

*Տպագրվում է ԵՊՀ հայ բանասիրության
ֆակուլտետի գիտիտորհրդի որոշմամբ և ԿԳՆ գիտության
պետական կոմիտեի աջակցությամբ*

Խմբագիր՝ Բ.Գ.Ռ., պրոֆ. Աննա Աբաջյան

Մ 271 Պրոֆեսոր Մանվել Ասատրյանի 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի գեկուցումների ժողովածու (Երևան, ապրիլի 27, 2016): -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 196 էջ:

Սույն ժողովածուի մեջ գետեղված են անվանի լեզվաբան Մ. Ասատրյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի գեկուցումներն ու ելույթները, որոնք վերաբերում են ոչ միայն մեծ գիտնականի կյանքին, գործունեությանը, գիտական վաստակին ու ժառանգությանը, այլև հայերենագիտության զանազան հարցերի:

Ժողովածուն կարող է օգտակար լինել ինչպես մասնագետների, այնպես էլ բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են լեզվի հարցերով:

ՀՏԴ 81'1

ԳՄԴ 81

ISBN 978-5-8084-2144-8

© ԵՊՀ հրատ., 2016

© Հեղ. խումբ, 2016

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Հարգելի՛ բարեկամներ,

Ողջունում եմ մեծավաստակ գիտնական, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մանվել Ասատրյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի մեկնարկը:

Անուրանալի է Մ. Ասատրյանի գիտական բեղմնավոր վաստակը հայերենագիտության զարգացման գործում: Անվանի լեզվաբանը Երեւանի պետական համալսարանում սկսել է աշխատել 1954 թվականից, և նրա հետագա գիտամանկավարժական ողջ գործունեությունը կապված է եղել մայր բուհի հետ: Նա շուրջ կես դար դասավանդել է ժամանակակից հայոց լեզու և բարբառագիտություն առարկաները՝ այդ ընթացքում դաստիարակելով բանասերների բազմաթիվ սերունդներ: Այսօր դժվար է Հայաստանում գտնել հայոց լեզվի և գրականության ուսուցիչների, հայագետների կամ լրագրողների, որոնց դասավանդած չլինի Մ. Ասատրյանը: Նրա լեզվաբանական աշխատությունները արժեքավոր ու մնալուն գործեր են: Քերականի գրչին են պատկանում մեկ տասնյակից ավելի մենագրություններ, բուհական դասագրքեր, գործնական աշխատանքների ձեռնարկներ, հարյուրից ավելի գիտական հոդվածներ ու հրապարակումներ, որոնք նվիրված են հայերենագիտության կնճռոտ ու հրատապ խնդիրներին: Դրանցից են՝ «Բայի սեռերը ժամանակակից հայերենում», «Ուրմիայի բարբառը», «Լոռու խոսվածքը», «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» (երեք գրքով), «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն», «Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն» և այլն:

Հայոց լեզուն, հայագիտությունը և հարազատ համալսարանը Մ. Ասատրյանի պաշտամունքի առարկաներն էին, որոնց նա ծառայեց անմնացորդ կերպով՝ երախտապարտ սերունդների հիշողության մեջ մնա-

լով իբրև մեծ գիտնական, նվիրյալ ուսուցչապետ և սկզբունքային ու ազնվագույն մարդ: Դատելով գիտաժողովի ծրագրի հագեցվածությունից, արժարժվող խնդիրների կարևորությունից՝ համոզված եմ՝ քննարկումները կլինեն արդյունավետ ու շահեկան:

Բոլորիդ մաղթում եմ ստեղծագործական բեղմնավոր աշխատանք...

**ԵՊՀ ռեկտոր՝
Ա. Հ. Սիմոնյան**

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Պրոֆեսոր Մանվել Ասատրյանի 90-ամյակի նվիրված գիտական նստաշրջանի մասնակիցներին

Հարգելի՛ գործընկերներ, սիրելի՛ հյուրեր,

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և իմ անունից ողջունում եմ հայ լեզվաբանության երախտավորներից մեկի՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մանվել Ասատրյանի 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի մասնակիցներին:

Պրոֆեսոր Մանվել Ասատրյանի գիտական գործունեությունն անմնացորդ նվիրված է եղել հայ լեզվաբանության, բարբառագիտության, ժամանակակից հայոց լեզվի և նրա պատմության խնդիրների ուսումնասիրության հայրենամվեր գործին, իր հարուստ գիտելիքները նա հաղորդել է Երևանի պետական համալսարանի ուսանողների մի քանի սերունդների, իսկ ամենակարևորը՝ սերմանել է սեր մայրենի լեզվի ու գիտության հանդեպ: Մանվել Ասատրյանի հեղինակած մեծարժեք գիտական աշխատություններն ու բուհական դասագրքերն այսօր էլ ծառայում են մեր գիտնականներին և ուսանողությանը:

Այս գիտաժողովը պատեհի առիթ է ոչ միայն վաստակաշատ լեզվաբանի և օժտված դասախոսի գիտամանկավարժական ժառանգության արժևորման, այլև հայոց լեզվի պատմության ու զարգացման ժամանակակից խնդիրների վերաբերյալ գիտական հետազոտություններ ներկայացնելու, նոր գաղափարներ քննարկելու համար: Հայ լեզվաբանների, բանասերների, հայագիտության բնագավառը ներկայացնող ողջ կրթության ու գիտական հանրության գործունեությունը պետք է ուղղված լինի դարերից եկող մեր հարուստ մշակույթի, լեզվի, գրականության, պատմության ու արվեստի զարգացմանը՝ հանուն հայ ժողովրդի ինքնության

պահպանման, ազգային նպատակների իրագործման, մեր պետության հզորացման ու առաջընթացի:

Նստաշրջանի մասնակիցներին մաղթում եմ բեղմնավոր աշխատանք, գիտական նոր գաղափարներ ու նվաճումներ, երջանկություն ու բարեկեցություն:

**ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ՝
Սամվել Հարությունյան**

ԱՆՆԱ ԱԲԱԶՅԱՆ

(ԵՊՀ)

abajyan.anna@ysu.am

Մ. ԱՍԱՏՐՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Մեծատաղանդ գիտնական, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մանվել Եգորի Ասատրյանի ստեղծած գիտական արժեքները հայերենագիտության բնագավառում հայ ավանդական լեզվաբանության լավագույն ավանդույթների շարունակությունն ու զարգացումն են, մնայուն արժեքներ, որոնց շնորհիվ լեզվաբանը դուրս եկավ հայ քերականագիտության ամենաբարձր դիրքերը՝ գրավելով իր առանձնահատուկ ու հիմնավոր տեղը:

Մ. Ասատրյանը ծնվել է 1926 թ. ապրիլի 26-ին Էջմիածնի շրջանի Արագած գյուղում: Նախնիները Պարսկահայքից են՝ Խոյից: 1829 թ. Բաբայան ազգանունը կրող նրանց գերդաստանը վերաբնակություն է հաստատել Հայաստանում: Ասատրյան ազգանունը ընդունվել է՝ ի հիշատակ հայրական պապի:

Միջնակարգ կրթությունը լեզվաբանը ստացել է ծննդավայրում: 1942թ. գերազանցությամբ ավարտել է տեղի մանկավարժական ուսումնարանը և աշխատանքի անցել հայրենի գյուղում որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1944-1946 թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում, զորամասի հետ մեկտեղ հասել մինչև Գերմանիա: Ջորաջրվելուց հետո՝ 1946-ին, ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը, որը գերազանցության վկայականով ավարտել է 1951-ին: Հենց այստեղ էլ՝ նույն կուրսում, հանդիպել է իր ապագա կնոջը՝ Ժենյա Ճշմարիտյանին, ում հետ միասին տարիներ անց պիտի դառնային հայոց լեզվի ամբիոնի հայտնի դասախոսներ:

Դեռևս ուսանողական տարիներից Մ. Ասատրյանին բախտ էր վիճակված աշակերտելու այնպիսի ականավոր հայագետների, ինչպիսիք էին՝ Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Տերտերյանը: Նշենք, որ ներհուն, խոստումնալից երիտասարդի լեզվաբանական աշխարհայացքի ձևավորման գործում մեծ դեր է խաղացել Հ. Աճառյանը: 1951-1954 թթ. Մ. Ասատրյանը սովորել և ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան Գ. Սևակի ղեկավարությամբ: 1954 թ. պաշտպանել է քեկնածուական ատենախոսություն, որը նվիրված էր հայերենի քերականության կարևորագույն հիմնահարցերից մեկին՝ բայասեռի քերականական կարգին: 1970 թ. «Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր» քեմայով ատենախոսության պաշտպանությամբ ստացել է բանասիրության դոկտորի գիտական աստիճան: 1957-ին արժանացել է դոցենտի, 1973-ին՝ պրոֆեսորի պատվավոր կոչման: 1990-1995 թթ. եղել է մայր բուհի հայոց լեզվի պատմության ամբիոնի երկրորդ վարիչը:

Մ. Ասատրյանը իր մահկանացուն կնքել է 2000 թ. հունվարի 25-ին Երևանում:

Նրա գիտական ողջ գործունեությունը կապված է մայր համալսարանի հետ, որի նվիրյալն ու մեծ ջատագովն էր: Շուրջ կեսդարյա պատմությամբ գիտնականը ամուր քելերով կապված էր սիրելի ֆակուլտետին, որտեղ դասավանդել է ժամանակակից հայոց լեզու, հայ բարբառագիտություն, հատուկ դասընթացներ՝ հայոց լեզվի կառուցվածքի մի շարք խնդիրների ու օրինաչափությունների մասին:

Լայն և ընդգրկուն է լեզվաբանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Դժվար է գտնել հայերենի քերականության ուսումնասիրության որևէ բնագավառ, որտեղ նա իր ծանրակշիռ խոսքն ասած չլինի: Լավագույնս տիրապետելով գրաբարի, միջին և նոր գրական հայերենների, ինչպես նաև բարբառների լեզվական իրողություններին՝ Մ. Ասատրյանը գիտական յուրաքանչյուր ուսումնասիրություն կատարում էր լեզվական տվյալ երևույթը դիտարկելով իր ձևավորման պատմության մեջ, ներկայացնում տվյալ հարցի տեսության պատմությունը, ապա արտահայտում իր կարծիքը՝ քննարկվող նյութը ենթարկելով բազմակողմանի և քննադատական ուսումնասիրության: Այս ամենը նրա համաժամանակյա քննությունները դարձնում են հիմնավոր և գիտակա-նորեն պատճառաբանված:

1959 թ. լույս է ընծայվում Մ. Ասատրյանի «Բայի սեռերը ժամանակակից հայերենում» ուշագրավ աշխատությունը, որը խնդրո առարկային նվիրված ամբողջական, համակարգային առաջին լուրջ քննությունն էր հայ քերականագիտության մեջ: Մենագրության մեջ ներկայացված են բայասեռի ըմբռնման, ձևաբանական տարբերակման կրած փոփոխությունները հայերենի զարգացման բոլոր փուլերում, հստակ տրված է բայասեռի՝ որպես քերականական կարգի, գիտականորեն հիմնավորված ասատրյանական մոտեցումը:

Իր գիտական երկերով և հոդվածներով հեղինակը առաջինն է արձագանքել հայերենագիտության վիճահարույց բոլոր հարցերի լեզվաբանական բանավեճերին՝ դրանց մասին ձևակերպելով իր մոտեցումները՝ գիտական հստակ հիմնավորումներով, հրաշալի տիրապետելով գիտական բանավեճի բոլոր նրբերանգներին: Բավական է հիշել հայերենի հոլովներին նվիրված բանավեճի երրորդ փուլը: 1960-ական թթ. կեսերին՝ Գ. Սևակի և Ա. Ղարիբյանի հոլովական ուսմունքի անդերեր տիրապետության շրջանում, վերստին արծարծվում է հայերենի հոլովական համակարգի հարցը¹: Ռ. Իշխանյանը «Սովետական դպրոց» շաբաթաթերթի 1965 թ. 47-րդ համարում մի հոդված է հրատարակում՝ «Ուղղակա՞ն, թե՞ հայցական» խորագրով՝ կասկածի տակ առնելով հայցականի գոյությունը արևելահայերենում: Եվ ինչպես ինքն է գրում, իր մտորումները հրապարակելով՝ ավելի շուտ հարց տվողի դերում է, քան պատասխանողի: Օրեր անց նույն պարբերականում վճռականորեն հանդես է գալիս Մ. Ասատրյանը և հաստատում ու հիմնավոր դիրքերից ապացուցում, որ արևելահայերենում հայցական հոլովը վաղուց է ջնջվել²: Գ. Ջահուկյանի, Հ. Բարսեղյանի, Ս. Աբրահամյանի, Ռ. Իշխանյանի, Ա. Պապոյանի, Պ. Շարափխանյանի և այլոց հետ Մ. Ասատրյանը անվերապահորեն պաշտպանում է հինգ հոլովի արեղյանական գիտական ճշմարիտ տեսությունը, որը և արտացոլվեց «Հին և նոր բանավեճեր

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Աբաջյան Ա.**, Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Եր., 2006, էջ 327-361:

² Տե՛ս **Ասատրյան Մ.**, Կա՞ր արդյոք ժամանակակից հայերենում հայցական հոլով, «Սովետական դպրոց», Եր., 1965, հ. 50:

հայերենի հոլովական համակարգի շուրջը» հողվածում³ և իր հետագա աշխատություններում:

Սկսած 1960-ականներից՝ անվանի լեզվաբանին գնալով ավելի են զբաղեցնում ժամանակակից արևելահայերենի ձևաբանության հիմնախնդիրները, և 1970, 1973, 1977թթ. Մ. Ասատրյանը հրատարակում է «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» եռահատոր աշխատությունը, որն իրավամբ կարող ենք համարել նրա գիտական ժառանգության թագն ու պսակը: Այստեղ պատմաքննական վերլուծությամբ ներկայացնելով ու արժեքավորելով արդի հայերենի ձևաբանության գլխավոր և առանցքային խնդիրների մասին մինչ այդ շրջանառության մեջ գտնվող գիտական ըմբռումներն ու տեսակետները՝ գիտնականը բազմաթիվ իրողությունների նորովի դիտարկումներով հարստացրեց ու զարգացրեց հայերենի խոսքի մասերի ձևաբանական համակարգի տեսությունը: «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» ուսումնասիրության Գ հատորում հեղինակը գրում է. «Անդրադառնալով «Ձևաբանության հարցերի» երեք գրքերին ամբողջությամբ՝ պետք է նշենք, որ դրանցում ի նորո շարադրված է ժամանակակից հայերենի ամբողջ ձևաբանությունը, և նոր մեկնակետերից են քննված ու լուսաբանված քերականական մի շարք հարցեր: Եվ եթե դրանց գոնե մի մասը ճանաչում ու ընդունելություն գտնի և նպաստի մեր լեզվի քերականական կառուցվածքի որոշ երևույթների ավելի խոր ընկալմանն ու մեկնաբանությանը, ապա մենք լիովին հասած կլինենք մեր նպատակին»⁴: Այո, ամուր հենվելով հայ գիտական քերականության հիմնադիր Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» կոթողային աշխատության հիմնարար դրույթների վրա՝ Մ. Ասատրյանը մի նոր, բարձր մակարդակի է հասցրել արդի արևելահայերենի ձևաբանությունը, որին նա հասել է տարիների խորացումով, քերականական երևույթների բազմափնտռությամբ ու դրանց սահմանման, դասակարգման, բացատրության, մեկնության, ընդհանրացման անուրանալի օժտվածությամբ:

³ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Հին և նոր բանավեճեր հայերենի հոլովական համակարգի շուրջը, Եր., ԲԵՀ, 1969, հ. 2:

⁴ **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Գ, Եր., 1977, էջ 4:

Մույն եռահատոր աշխատասիրության կարևորագույն արժանիքներից մեկն էլ լեզվական երևույթների քննության բազմակողմանիությունն ու համապարփակությունն է:

Մենագրության առաջին հատորը նվիրված է արևելահայերենի գոյական և կապ խոսքի մասերի համատեղ քննությանը, որը գիտնականը հիմնավորում է նրանով, որ գոյականը իր ձևափոխությունների ամբողջական համակարգով խոսքակազմիչ դեր է կատարում, իսկ կապը, կարևորվելով տարբեր հոլովների հետ իր ունեցած գործառնությով, գոյականի հոլովների շարահյուսական իմաստների արտահայտմանը մասնակցում է անմիջականորեն՝ ձևավորելով շարահյուսական որոշակի համանիշներ (խոսել *պարերազմից* // խոսել *պարերազմի մասին*):

Հայ քերականության մեջ առաջին անգամ գոյական անունը տրվում է իմաստաբանական հստակ դասակարգմամբ: Եթե նախկինում այն ընդունված էր բաժանել երկու խմբի՝ թանձրացական և վերացական, ապա Մ. Ասատրյանը ներկայացնում է գոյականների յոթ ենթատեսակներ՝ հասարակ և հատուկ, թանձրացական և վերացական, անձ և ոչ անձ ցույց տվող, շնչավոր և անշունչ, նյութ ցույց տվող, հավաքական, ինչպես նաև անեզական գոյականներ: Դժվար չէ նկատել, որ վերջին դասակարգման համար հիմք է ծառայել ձևաբանական հիմունքը: Ինչ վերաբերում է հոլովի քերականական կարգին, ապա գիտնականը անհողորդ է իր սկզբունքներում. հինգ հոլովի տեսակետը պաշտպանում է թե՛ այս և թե՛ հետագայում հրատարակած բուհական դասագրքերում: Աշխատության երկրորդ հատորում ուսումնասիրության են ենթարկված ածական, թվական, դերանուն խոսքի մասերը և բայի անդեմ ձևերը: Պատմական և տեսական բնույթի՝ տարընթերցումների տեղիք տված բազմաթիվ վիճահարույց խնդիրներ են արծարծված հատկապես դերանուններին և դերբայներին նվիրված հատվածներում: Բայի անդեմ ձևերի քննությունը կատարելիս հեղինակը տալիս է նրանց մասին եղած ձևաիմաստային վերլուծությունը՝ ըստ քերականագիտության մեջ եղած մոտեցումների, անդրադառնում դրանց անվանումներին և հայերենի համար առանձնացնում անորոշ, անկատար առաջին, անկատար երկրորդ, ապառնի առաջին, ապառնի երկրորդ, վաղակատար, հարակատար, ենթակայական և ժխտական դերբայներ, մասնավորապես կա-

տարում է հարակատար դերբայի իմաստային երկակիության (վիճակային-ածականական և գործողության-բայական) վերլուծություն, որով և պայմանավորված են նրանց կիրառելիության շուրջ եղած տարամետ մոտեցումները հայերենագիտության մեջ:

Հիշյալ աշխատության երրորդ հատորում հանգամանորեն քննված են բայի դիմավոր ձևերը, մակբայ, շաղկապ, եղանակավորող բառ և ձայնարկություն խոսքի մասերը: Վերլուծություններ կատարելիս, ըստ հարկի, Մ. Ասատրյանը հիմնավորում և ամբողջացնում է դրանք հին ու միջին հայերեններից, արևմտահայերենից ու բարբառներից բերված ամենատարբեր փաստերով ու օրինակներով: Այսպես՝ դիմավոր բայի քերականական կարգերի վերլուծությունը կատարելիս լեզվաբանը ընդգրկում է դրանց մասին եղած բոլոր մոտեցումները՝ վիճահարույց հարցերի իր առանձնակի մեկնաբանումներով: Եղանակի կարգի գիտաբաններից հակասական կարծիքների տեղիք են տալիս **կ** եղանակիչով կառույցները, որոնք, ըստ նրա, պիտի անվանել հաստատողական եղանակի միավորներ, քանի որ նրանք հիմնականում արտահայտում են հաստատապես կատարելի գործողություն: Կարելի է այսպես շատ օրինակներ թվարկել:

Լեզուն արժևորելով իբրև կառուցվածքային մի ամբողջական համակարգ՝ գիտնականը անդրադարձավ ոչ միայն հայերենի ձևաբանությանը, այլև քերականության մյուս ենթամակարդակին՝ շարահյուսությանը: Եվ իրար հաջորդեցին նախանձախնդիր քերականի նույնքան արժեքավոր բուհական դասագրքերը՝ նվիրված ժամանակակից հայոց լեզվի ձևաբանությանը և շարահյուսությանը⁵, որոնցով ուսանել և շարունակում են ուսանել բանասերների տասնյակ սերունդներ, այդ թվում՝ նաև մեր սերունդը:

Մ. Ասատրյանը մեծ ներդրում ունի նաև հայ բարբառագիտության զարգացման բնագավառում: Ասվածի լավագույն ապացույցն են նրա «Ուրմիայի (Խոյի) բարբառը» (1962 թ.) և «Լոռու խոսվածքը» (1968 թ.) ուսումնասիրությունները, որոնցում հեղինակը ներկայացնում է նշված

⁵ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), Եր., 1983, Ժամանակակից հայոց լեզու (շարահյուսություն), Եր., 1987:

բարբառի ու խոսվածքի լեզվաբանական խոր ու մանրակրկիտ քննությունը:

Մեծ գիտնականի տեսադաշտից չի վրիպել նաև մայրենի լեզվի քերականական կառուցվածքի գործնական ուսուցումը. նա ուսանողի սեղանին է դրել ժամանակակից հայերենի, ինչպես նաև բարբառագիտության գործնական պարապմունքների ձեռնարկներ, ինչպես՝ «Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ» (համահեղինակ՝ Ժ. Ճշմարիտյան. 1981 թ.), «Հայոց լեզու» դասագիրք՝ բուհերի ռուսական բաժինների ուսանողների համար (համահեղինակներ՝ Ա. Մարգարյան և Դ. Ջաղացպանյան. 1-ին հրատ. 1964, 2-րդ հրատ. 1970 թ.), «Հայ բարբառագիտության գործնական աշխատանքների ձեռնարկ» (1985 թ.):

Այսքանով չի սահմանափակվում Մ. Ասատրյանի արգասաբեր գործունեությունը. այս ամենին պետք է հավելել նաև հարյուրից ավելի գիտական հոդվածներն ու հրապարակումները, որոնցում իրենց հանգուցալուծումն են ստացել հայերենագիտության ամենատարբեր կնճրոտ հիմնախնդիրներ:

Մանվել Ասատրյան գիտնականը նաև անփոխարինելի մանկավարժ էր, հմուտ ու խստապահանջ դասախոս: Գրեթե կես հարյուրամյակ նա իր խոր ու անսպառ բազմակողմանի գիտելիքները փոխանցեց համալսարանական բազում սերունդների՝ նրանց հաղորդակից դարձնելով մայրենիի գանձերին, պատվաստելով լեզվական բարձր ճաշակ, սերմանելով մեծ սեր դեպի ոսկեդենիկ հայոց լեզուն: Մ. Ասատրյանը մայր բուհի այն վառ անհատականություններից էր, ում մեջ խտացված էին բեղուն գիտնական-մանկավարժի, ազնվագույն, սկզբունքային և անկողմնակալ մարդու, հայրենասեր հայի, հավատարիմ ընկերոջ լավագույն հատկանիշները: Արտաքուստ խստասիրտ գիտնականը նույնքան բարի էր և նրբազգաց, կենսասեր, սրամիտ ու սրախոս: Նրա խոսքը միշտ շաղախված էր նուրբ հումորով:

Անվանի լեզվաբանը իր հետևից թողել է ասատրյանական դպրոց, որն ունի իր բազում հետևորդները, բժախնդրությամբ և հոգատարությամբ դեկավարել բազմաթիվ ատենախոսություններ, գիտական աշխատանքներ: Գաղտնիք չեմ բացահայտի, եթե ասեմ, որ ինձ բախտ է վիճակված եղել լինելու մեծ գիտնականի ուսանողն ու ասպիրանտը, հե-

տագայում՝ գործընկերը: Իմ՝ որպես լեզվաբանի, կայացման գործում անգնահատելի է Մ. Ասատրյանի ունեցած դերը: Նախաձեռնելով անվանի հայագետի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտական այս նստաշրջանը՝ փորձում եմ խորին ու անմոռաց երախտագիտությունս հայտնել մեր ուսուցչապետին՝ ի նշան մեծ ակնածանքի...

Ծնունդը շնորհավոր, սիրելի՛ ընկեր Ասատրյան...

Բանալի բառեր – *ձևաբանություն, շարահյուսություն, բարբառ, խոսքի մաս, դերանուն, կապ, բայի սեռ, քերականական կարգ, հոլով, դասագիրք:*

АННА АБАДЖЯН – Жизнь и научное наследие М. Асатрян. – Созданные известным ученым М. Асатряном научные труды в области арменоведения являются развитием и продолжением лучших традиций классической армянской лингвистики, непреходящие ценности, благодаря которым языковед достиг вершин в армянской грамматике, заняв свое весомое место. Трудно найти какую-либо область в армянской грамматике, где бы он не сказал свое весомое слово. После М. Абегяна он поднял на новый уровень исследование морфологии армянского языка. М. Асатрян автор более десятка монографий, учебников, пособий, более ста научных статей и публикаций. Вся его научная деятельность связана с альма-матер, преданным деятелем которой он был всегда.

Ключевые слова: *морфология, синтаксис, диалект, часть речи, местоимение, союз, залог, грамматическая категория, падеж, учебник.*

ANNA ABAJYAN - M. Asatryan's life and scientific heritage. - The scientific merits created by the prominent scientist Manvel Asatryan in Armenian Studies is the best sequel and development of the Armenian classic Linguistics, stable values, due to which the linguist reach the supremacy of the Armenian grammar, taking his unique and due place. It is hard to find any branch in the study of the Armenian grammar, where he doesn't have his ponderous words. After M. Abeghyan he moved the study of the Armenian morphological system a step forward. M. Asatryan has left more done a dozen of monographs, textbooks, handbooks, more than one hundred scientific articles and publications. His overall scientific activities are interconnected with the dear University, the devoted worker and apologist of which he was.

Keywords: *morphology, syntax, dialect, part of speech, pronoun, conjunction, voice of verbs, grammatical category, case, textbook.*

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

(ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ)

Մ. ԱՍԱՏՐՅԱՆԸ ԲԱՐԲԱՌԱՎԵՏ

Հայ լեզվաբանական մտքի զարգացման գործում նշանակալի ավանդ ունի անվանի հայերենագետ Մ. Ասատրյանը, որի գիտական հետազոտությունները բնութագրվում են հայոց լեզվի իրողությունների համակողմանի, համալիր դիտարկմամբ, արդի գրական արևելահայերենի քերականական կառուցվածքի՝ լեզվի զարգացման տարբեր փուլերի, արևմտահայերենի ու բարբառային հայերենի հետ կապի մեջ քննությամբ ու նկարագրությամբ: Հայերենը իր բոլոր դրսևորումներով իբրև մեկ ամբողջություն դիտարկող լեզվաբանը, բնականաբար, առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձներ նաև լեզվի բնական վիճակը ներկայացնող տարբերակներին՝ բարբառներին:

Բարբառագիտական իր աշխատանքներում Մ.Ասատրյանը կատարել է բարբառային որոշ միավորների փոխհարաբերությունների ճշգրտում, հայերենի տարածական առանձին միավորների համակարգերի ամբողջական նկարագրություն, բարբառ – գրական լեզու փոխհարաբերությունների քննարկում, լեզվական տարբեր իրողությունների վերլուծություն, տեսական խնդիրների արծարծումներ և այլն:

Հայ բարբառագիտության բնագավառում Մ. Ասատրյանի կարևորագույն ներդրումներից է Ուրմիայի և Խոյի բարբառային միավորների փոխհարաբերությունների ճշգրտումը: Ինչպես հայտնի է, Հ. Աճառյանը իր «Հայ բարբառագիտություն» և «Քննություն Մարաղայի բարբառի» աշխատանքներում Ուրմիայի խոսվածքը համարել է Մարաղայի բար-

բառի ենթաբարբառ¹: Ա. Ղարիբյանը, Հ. Աճառյանի առանձնագրած **Ե** ճյուղը բաժանելով **Լ** և **Ս** ճյուղերի, Մարադայի բարբառը Խոյի բարբառի հետ ներառում է **Լ** ճյուղում, իսկ իր կողմից առանձնացված Ուրմիայի բարբառը մի շարք այլ բարբառների հետ ընդգրկում է **Ս** ճյուղում²: Այնուհետև տարածական երկու միավորների փոխհարաբերությունը հստակ չի ներկայացվում Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ, որտեղ հեղինակը նախ նկատում է, որ Խոյի բարբառն ընդգրկում է Պարսկաստանի Խոյի, Սալմաստի և Ուրմիայի գավառները³, սակայն քիչ անց նշում է. «Այսպես են ստացվել Խոյի բարբառի *սսէս հմ*, Ուրմիայի բարբառի *քալէս հմ*, *ըսնէս հմ* ևն ձևերը»⁴: Այս և այլ հակասական մեկնաբանություններ նկատի ունենալով՝ Մ. Ասատրյանը արձանագրում է Ուրմիայի և Խոյի խոսվածքների փոխհարաբերության պարզված չլինելը⁵: Հարցը պարզաբանելու համար լեզվաբանը, մեջբերելով նաև Ա. Ղարիբյանի դիտարկումը, նախ փաստում է, որ երկու միավորները և՛ հնչյունական, և՛ ձևաբանական տեսակետից ամբողջովին նույնական են⁶, ուստի պետք է համարել, որ «... մենք գործ ունենք ոչ թե երկու տարբեր բարբառների հետ, այլ մի միասնական բարբառի երկու տարբերակների, ենթաբարբառների հետ»⁷: Այնուհետև անդրադառնալով ընդունված տեսակետին, թե Խոյն ու Ուրմիան միմյանցից տարբերվում են միայն սահմանականի ներկայի կազմությամբ՝ Մ. Ասատրյանը նախ նկատում է, որ «այսպես կոչված «Խոյի բարբառը» իր ներկան կազմում է ոչ թե անորոշ դերբայով, այլ *լիս*-ով վերջավորվող անկատար դերբայի *խ* ձևի տվմամբ, որով և նույնանում է անորոշին»⁸, ապա ցույց տալիս, որ ի տարբերություն Խոյի՝ Ուրմիան էլ տղում է *լիս*-ով վերջավորվող դերբայի *լի* ձևը, սակայն շրջուն շարադա-

¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայ բարբառագիտություն, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա – Նոր Նախիջեան, 1911, էջ 284, **Աճառյան Հ.**, Քննություն Մարադայի բարբառի, 1926, էջ 16:

² Տե՛ս **Ղարիբյան Ա.**, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, ԵՊՀ ԳԱ, հ. 11, Եր., 1939:

³ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951, էջ 359:

⁴ **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 360:

⁵ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Եր., 1962, էջ 8:

⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 11:

⁷ Նշվ. աշխ., էջ 12:

⁸ Նշվ. աշխ., էջ 14:

սության դեպքում «... երկուսն էլ սղում են ս-ն և ձևով նույնանում՝ չեն իւ-զելի, չեն էթալի»⁹: Իրավացիորեն կասկածի տակ առնելով հայ բարբառների առանձին Լ և Ս ճյուղերի գոյությունը՝ հեղինակը ճիշտ է համարում Ա. Գրիգորյանի առաջարկը՝ Լ և Ս ճյուղերը միավորել և կոչել Լիս ճյուղ¹⁰: Համեմատության մեջ դիտարկելով մաս Ուրմիայի և Խոյի խոսվածքներով երկու մմուշ՝ Մ. Ասատրյանը եզրակացնում է. «... Ուրմիայի և Խոյի խոսվածքները տարբեր բարբառներ համարվել չեն կարող. նրանք նույն և միևնույն բարբառի (հեղինակը այն պայմանականորեն անվանում է Ուրմիայի (Խոյի) բարբառ – Վ.Կ.) տարբեր դրսևորումներն են և ունեն սոսկ հնչյունական առանձին տարբերություններ: Իսկ սոսկ հնչյունական տարբերություններով խոսվածքները առանձին բարբառներ համարվել չեն կարող»¹¹: Նկատենք, որ հիշյալ երկու միավորների փոխհարաբերության այս ճշգրտումը ոչ միայն ընդունելի համարվեց հետագա ուսումնասիրողների կողմից, այլ մաս արտահայտվեց Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման մեջ, որտեղ Խոյ-Մարաղայի բարբառի շրջանակում ներառված են Մարաղան, Ուրմիան, Փայաջուկն ու Խոյը¹²:

Մ.Ասատրյանը անհրաժեշտ է համարել առանձին անդրադառնալ մաս Արարատյան բարբառի և Լոռու խոսվածքի փոխհարաբերությանը¹³: Հիշատակելով այն իրողությունը, որ Լոռու խոսվածքը Հ.Աճառյանը մտցրել է Արարատյան բարբառի մեջ¹⁴, իսկ Ա.Ղարիբյանը այն համարել է Արարատյան բարբառի ենթաբարբառ¹⁵, լեզվաբանն իր առջև խնդիր է դնում պատասխանել «... հետևյալ հարցին՝ Լոռու խոսվածքը Արարատյան ենթաբարբառներից մե՞կն է, թե՞ անկախ ու ինքնուրույն բարբառ», և հենց սկզբից էլ նկատում է, որ «... առաջին հայացքից

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նշվ. աշխ., էջ 16:

¹² Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 135:

¹³ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Լոռու խոսվածքի հնչյունական և ձևաբանական առանձնահատկությունները, ՊԲՀ, 1966, թիվ 3, էջ 193-202. **Ասատրյան Մ.**, Լոռու խոսվածքը, Եր., 1968, 198 էջ:

¹⁴ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Լոռու խոսվածքը, Եր., 1968, էջ 6:

¹⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 7:

պարզ ու հասարակ թվացող այս հարցին այնքան էլ հեշտ չէ պատասխանել»¹⁶: Իրերի նման վիճակի պատճառ նա իրավացիորեն համարում է ժամանակի հայ բարբառագիտության մեջ առկա անորոշությունն ու պայմանականությունը բարբառներն ու ենթաբարբառները սահմանազատելու հարցում, ապա առաջ է քաշում յուրօրինակ մի սկզբունք. «...ենթե ուսումնասիրողը շեշտը դնում է լեզվական միավորները շաղկապող ընդհանրությունների վրա, կունենա ենթաբարբառներ, իսկ եթե շեշտը դնում է լեզվական միավորները առանձնացնող տարբերությունների վրա, կունենա բարբառներ»¹⁷: Լեզվաբանը կարևոր դիտարկում է անում՝ նշելով, որ «... որևէ խոսվածք ինքնուրույն բարբառ համարվելու համար պետք է ունենա լեզվական տարբերիչ գծերի մի ամբողջ խումբ»¹⁸: Մ. Ասատրյանը հանգամանորեն ներկայացնում է Արարատյան և Լոռու խոսվածքների հնչյունական, ձևաբանական և բառապաշարային տարբերություններն ու ընդհանրությունները և եզրակացնում. «Լոռու խոսվածքը Արարատյան խոսվածքի հետ գտնվում է այնպիսի հարաբերության մեջ, որ դա կարելի է համարել և՛ Արարատյանից տարբեր, ինքնուրույն բարբառ, և՛ Արարատյանի ենթաբարբառներից մեկը: Դա կախված է նրանից, թե ուսումնասիրողը շեշտը դնում է այդ լեզվական միավորները իրարից անջատող տարբերությունների¹⁹, թե՞ դրանք իրար մոտեցնող ընդհանրությունների վրա: Առաջին դեպքում կարելի է խոսել Լոռու բարբառի, իսկ երկրորդ դեպքում՝ Լոռու ենթաբարբառի մասին»¹⁹: Իհարկե, նման մեկնաբանությունը չի լուծում դիտարկվող միավորների փոխհարաբերության հարցը, սակայն, մեր կարծիքով, հեղինակը այստեղ առաջադրում է շատ կարևոր մի թեզ՝ բարբառային միավորների փոխհարաբերությունները դիտարկելիս հավասարապես կարևորելով ինչպես դրանց տարբերությունները, այնպես էլ ընդհանրությունները:

Մ. Ասատրյանի բարբառագիտական աշխատանքներում կարևոր տեղ ունեն բարբառային միավորների մենագրական ուսումնասիրու-

¹⁶ Նշվ. աշխ., էջ 8:

¹⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 11:

¹⁸ Նշվ. աշխ., էջ 12:

¹⁹ Նշվ. աշխ., էջ 41:

թյունները: Լեզվաբանը հեղինակ է այդ կարգի երկու աշխատության²⁰, որոնք նվիրված են Խոյի բարբառի և Լոռու խոսվածքի համակարգերի նկարագրությանը, ընդ որում, բարբառային այդ միավորները առաջին անգամ էին ենթարկվում ամբողջական ու համակողմանի ուսումնասիրության: Երկու դեպքում էլ հետևելով բարբառների նկարագրության աճառյանական սկզբունքներին՝ հեղինակը բարբառային հնչյունաբերականական իրողությունները ներկայացնում է գրաբարի հետ համեմատության մեջ, այնուհետև անդրադառնում բառապաշարի քննությանը: Իր մենագրություններում բարբառագետը բերում է բարբառային խոսքի նմուշներ, բառացանկեր: Նկատենք նաև, որ բարբառային իրողությունները նկարագրվում են ամենայն մանրամասնությամբ՝ ներկայացնելով նաև դրանց տարածական դրսևորումների յուրահատկությունները:

Բարբառների, նրանց առաջացման և զարգացման վերաբերյալ իր պատկերացումներում Մ. Ասատրյանը հետևում է Հ. Աճառյանին: «Հ. Աճառյանը և հայ բարբառների ուսումնասիրությունը» հոդվածում²¹ գնահատելով հայ բարբառագիտության բնագավառում Հ. Աճառյանի կատարած տիտանական աշխատանքը՝ հեղինակը ներկայացնում է բարբառների քննության Աճառյանի սկզբունքները, որոնց և հետևել է ինքը: Մ. Ասատրյանը համամիտ է Հ. Աճառյանի հետ, որ «... բարբառների ու ենթաբարբառների միջև որոշակի սահմանագիծ անցկացնելը, եթե չասենք անհնարին, ապա չափազանց դժվար է»²²: Լեզվաբանի համար ընդունելի է նաև Հ. Աճառյանի տեսակետը 5-րդ դարում հայերենի՝ բարբառներ չունենալու վերաբերյալ. «գրաբարի ու բարբառների լեզվական ձևերի և հնդեվրոպական լեզուների ու փոխատու լեզուների ձևերի մանրակրկիտ ու բազմակողմանի համեմատությամբ Հ. Աճառյանը ... գալիս է այն անառարկելի եզրակացությանը, որ 5-րդ դարում հայերեն բարբառներ չունենալու վերաբերյալ»:

²⁰ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Եր., 1962, 256 էջ, **Ասատրյան Մ.**, Լոռու խոսվածքը, Եր., 1968, 198 էջ:

²¹ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Հ.Աճառյանը և հայ բարբառների ուսումնասիրությունը, ԲԵՀ, 1977, քիվ 1, էջ 52-64:

²² Նշվ. աշխ., էջ 58-59:

բառներ փաստորեն գոյություն չունեին»²³: Ի դեպ, Մ. Ասատրյանը նշում է նաև, որ Ժամանակի «հայ համարյա բոլոր լեզվաբանները, բացի Ա. Ղարիբյանից, ելնում են հնդեվրոպական հայագիտության սահմանած և հատկապես Հ. Աճառյանի կողմից բազմաթիվ ու բազմապիսի փաստերով հիմնավորված գրաբարի նախնականության սկզբունքից»²⁴:

Մ. Ասատրյանին զբաղեցրել է նաև բարբառ - գրական աշխարհաբար փոխհարաբերությունների խնդիրը, որին նա անդրադարձել է մի շարք հոդվածներում²⁵: Լեզվաբանը նախ մատնանշել է խնդրի ակունքները. 17-18-րդ դարերի աշխարհաբարը անմիօրինակ էր ու խայտաբղետ և ներկայացնում էր բազմաթիվ տարատեսակություններ ըստ այն բանի, թե որ բարբառի հիմքի վրա էր բարձրացել այդ աշխարհաբարը, և ինչ տեղ էր տրված գրաբարին բարբառի «վերամշակման» մեջ²⁶: Այնուհետև կարևորում է այն հանգամանքը, որ «Երբ ասում ենք՝ արևելահայ գրական լեզուն բարձրացել է Արարատյան բարբառի հիմքի վրա, ապա նկատի ենք ունենում այն, որ Արարատյան բարբառը չէ, որ ընդհանրաճառվող դարձել է արևելահայության գրական լեզուն»²⁷: Ուստի անհրաժեշտ է սահմանագծել, առանձնացնել ու բնորոշել գրական լեզվի՝ բուն բարբառից և այլ աղբյուրներից՝ հատկապես գրաբարից եկող բաղադրիչները²⁸: Վերոհիշյալ իր հոդվածներում Մ. Ասատրյանը հանգամանորեն անդրադարձել է այս խնդիրներին՝ այդպիսով փաստորեն ամբողջական պատկերացում տալով գրական լեզվի ձևավորման և այդ գոր-

²³ Նշվ. աշխ., էջ 62:

²⁴ Նշվ. աշխ., էջ 63:

²⁵ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի ծայնավորական համակարգերի փոխհարաբերությունները, ԲԵՀ, 1978, թիվ 2, էջ 184-196, **Ասատրյան Մ.**, Արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի բաղաձայնական համակարգերի փոխհարաբերությունները, ԲԵՀ, 1979, թիվ 3, էջ 106-117, **Ասատրյան Մ.**, Արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի ձևաբանական համակարգերի փոխհարաբերությունները, ԲԵՀ, 1980, թիվ 3, էջ 81-95, **Ասատրյան Մ.**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների համակարգերի շուրջ, ԲԵՀ, 1994, թիվ 1, էջ 87-100 և այլն:

²⁶ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի ծայնավորական համակարգերի փոխհարաբերությունները, ԲԵՀ, 1978, թիվ 2, էջ 184:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նշվ. աշխ., էջ 185:

ծընթացում բարբառային հիմքի ու դրա տարրերի խաղացած դերի մասին:

Մ. Ասատրյանի բարբառագիտական հետազոտություններում արժեքավոր են մաս հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման վերաբերյալ դիտարկումները, որոնք միտված են բարբառագիտական նոր ձևավորվող ուղղության՝ վիճակագրական բարբառագիտության զարգացմանը, դասակարգման սկզբունքների ճշգրտմանն ու հստակեցմանը նպաստելուն: Գ. Ջահուկյանի կատարած այդ դասակարգմանը նվիրված հոդվածում²⁹ լեզվաբանը կարևորում է այդպիսով հայերենի բարբառների, ենթաբարբառների ու խոսվածքների՝ իրար նկատմամբ ունեցած դիրքն ու փոխհարաբերությունները ճշգրիտ, մաթեմատիկորեն որոշելու գաղափարը³⁰: Այնուհետև քայլ առ քայլ անդրադառնում է դասակարգման հետ կապված խնդիրներին և կատարում արժեքավոր մի շարք հարցադրումներ: Այսպես՝ բարբառախոս վայրերի կատարված ընտրության վերաբերյալ գրում է, որ այն իդեալական համարվել չի կարող, որովհետև մեծ կարևորություն ունեցող այնպիսի բնակավայրեր, ինչպիսիք են Ախալցխան, Ախալքալաքը, Դիլիջանը, Իջևանը, Կիրովականը (այժմ՝ Վանաձոր), Ստեփանավանը և այլն, հաշվի չեն առնված, և բացի այդ՝ մի շարք դեպքերում չի պահպանված առանձին բարբառներ կերկայացնող խոսվածքների ընդգրկման համամասնությունը³¹: Հավելենք, որ հաշվի չեն առնվել մաս Հայաստանի Հանրապետության Հրազդանի և Սևանի տարածաշրջանները, որի հետևանքով դասակարգման ոլորտից դուրս է մնացել բավականին մեծ տարածում ունեցող Մակուի խոսվածքը: Եվ իրավացի է Մ. Ասատրյանը, երբ նշում է, որ բարբառային վայրերի ընտրության բացթողումները կարող են բացասաբար ազդել դասակարգման ճշգրտության վրա, քանի որ բարբառախոս վայրերի հետ կարող են դուրս մնալ մաս տարբերակիչ հատկանիշներ, և կարող են սպրդել անճշտություններ³²: Ի տարբերություն Գ. Ջահուկյա-

²⁹ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, ԲԵՀ, 1982, քիվ 1, էջ 85-102:

³⁰ Տե՛ս նշվ. աշխ., էջ 85, 92:

³¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 86:

³² Տե՛ս նշվ. աշխ., էջ 87:

նի՝ Մ. Ասատրյանը կարծում է, որ հայերենի բարբառային հատկանիշները առանց որոշակի եզրի հետ համեմատվելու որոշվել չեն կարող: Նա մաս նկատում է, որ Գ. Ջահուկյանի մոտ առանձին դեպքերում «բարբառային հատկանիշ» հասկացության բուն ըմբռնումը այնքան էլ հստակ չէ³³: Ակնհայտ է, որ այսօր էլ թե՛ համեմատության եզրի խնդիրը, թե՛ «բարբառային հատկանիշ» հասկացությունը դեռևս ճշգրտման կարիք ունեն: Բազմահատկանիշ դասակարգման հետ կապված հաջորդ խնդիրը, որին անդրադառնում է Մ. Ասատրյանը, բարբառային միավորների հարաբերակցությունների ճշգրտման հարցն է: Լեզվաբանի դիտարկումները ցույց են տվել, որ երբեմն բարբառների մույն խմբակցությանը պատկանող խոսվածքները ավելի շատ տարբերակիչ հատկանիշներ ունեն, քան տարբեր խմբակցությունների պատկանող խոսվածքները³⁴: Նման իրավիճակ դիտարկել ենք մաս մենք Բայագետի և Դիադինի բարբառների փոխհարաբերությունների հարցում: Ըստ Գ. Ջահուկյանի դասակարգման՝ Բայագետի բարբառն ընդգրկված է բարբառների արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիս-արևելյան բարբառախմբում, իսկ Դիադինի բարբառը՝ բարբառների արևմտյան խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբում, մինչդեռ մեր դիտարկումներն ու հաշվումները ցույց են տալիս, որ Բայագետի և Դիադինի բարբառները, ըստ թվային ցուցանիշների, միմյանց ավելի մոտ են, քան Բայագետը՝ մույն բարբառախմբի Երևանին, և Դիադինը՝ մույն բարբառախմբի Վանին: Մ. Ասատրյանը փաստում է, որ Գ. Ջահուկյանի ընտրած հնչյունաբերականական հատկանիշներն արտացոլում են բարբառների ու խոսվածքների՝ իրարից ունեցած կարևոր ու էական տարբերությունները, սակայն իր անհամաձայնությունն է հայտնում հատկանիշների ընտրությանն ու բնութագրմանը, նրանց էությանն ու բովանդակությանը, բաշխմանը վերաբերող մի շարք հարցերում³⁵: Այսպես՝ լեզվաբանը իրավացիորեն նկատում է, որ շատ դեպքերում իրարից բոլորովին տարբեր իրողություններ համարվել են մույն գուգաբանությունը, և ոչ միայն բերում է օրինակներ, այլ մաս առաջարկում է հատ-

³³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 88-89:

³⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 94-95:

³⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 95:

կանիշների ձևակերպման ճշգրտումներ³⁶: Մ. Ասատրյանը իրավա-
ցիտեմն բարբառային հատկանիշների որոշման անճշտությունները
հետևանք է համարում այն բանի, որ մման դեպքերում հաշվի են առն-
վում ոչ թե իրողությունների կոնկրետ նյութական դրսևորումները, այլ
ինչ-որ հատկանիշով դրանց ընդհանրացված սահմանումը³⁷: Ճիշտ է
մաս այն դիտարկումը, որ մի շարք դեպքերում հատկանիշները շատ
ընդհանուր են և չեն կարող արտահայտել իրողության դրսևորման իրա-
կան հանգամանքները: Օրինակ՝ «Երկբարբառների առկայություն»,
«Քմայնացած ձայնավորների առկայություն» ձևակերպումները իրոք
անտեսում են այն հանգամանքը, որ «Երկբարբառները և քմային ձայ-
նավորները տարբեր խոսվածքներում համասեռ դրսևորումներ չունեն,
հաճախ արդյունք են իրարից բոլորովին տարբեր կարգի երևույթների և
այդ իսկ պատճառով էլ միասնական գուգաբանություններ համարվել
չեն կարող»³⁸: Ընդունելի են մաս Մ. Ասատրյանի այն դիտարկումները,
որ գուգաբանությունների աղյուսակներում բարբառային մի շարք կար-
ևոր հատկանիշներ ընդգրկված չեն, տարբերակված չեն կարևոր և ոչ
կարևոր հատկանիշները և այլն³⁹: Բարբառների բազմահատկանիշ դա-
սակարգման վերաբերյալ Մ. Ասատրյանի կատարած դիտարկումները,
ինչ խոսք, մատնանշում են այդ սկզբունքի հետագա ճշգրտման, գար-
գացման ուղղությունները, կիրառելի են այդ սկզբունքով բարբառային
միավորների փոխհարաբերությունները որոշելիս⁴⁰:

Մ. Ասատրյանը կարևորել է մաս բարբառագիտական գիտելիքների
ուսուցման խնդիրները: Նրա հեղինակած «Հայ բարբառագիտության

³⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 95-100:

³⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 97-98:

³⁸ Նշվ. աշխ., էջ 98:

³⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 101:

⁴⁰ Ի դեպ, այս դասակարգման հետագա մշակման անհրաժեշտությունը նկատել են մաս
Լ. Հովսեփյանը (Գ. Ջաևուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Լրաբեր հա-
սարակական գիտությունների, 1974, թիվ 1, էջ 106-111), Հ. Մուրադյանը (Հայ բարբառա-
գիտության անցած ուղին և գարգացման հեռանկարները, Լրաբեր հասարակական
գիտությունների, 1974, թիվ 4, էջ 15-25), Գ. Հանանյանը (Հայ բարբառների բազմահատ-
կանիշ դասակարգումը, ԲԵՀ. Բանասիրություն, 2016, թիվ 1, էջ 14-25):

գործնական աշխատանքների ձեռնարկը»⁴¹ յուրօրինակ է գիտամեթոդական առումով և տասնամյակներ շարունակ հաջողությամբ ծառայում է իր նպատակներին: Հետաքրքրական է, որ ձեռնարկի առաջադրանքներն ու վարժությունները այնպես են ձևակերպված, որ միաժամանակ իրենց մեջ տեղեկություն ու գիտելիք են պարունակում: Սովորողների վերլուծական միտքը, ընդհանրացումներ անելու կարողությունները զարգացնելուն են միտված այն առաջադրանքները, որոնց պահանջն է՝ հանգել եզրակացությունների, կատարել խմբավորումներ, սահմանել օրինաչափություններ: Գործնական աշխատանքների ձեռնարկը ներառում է բարբառային հայերենի վերաբերյալ գիտելիքների ամբողջությունը, ընդգրկում է նմուշներ հայերենի գրեթե բոլոր տարածված բարբառներից:

Ամփոփելով նշենք, որ Մ. Ասատրյանի՝ տասնամյակների ընթացքում հայ բարբառագիտության ոլորտում կատարած ուսումնասիրությունները մեծապես նպաստել են հայերենագիտության այդ ոլորտի զարգացմանը՝ բարբառագիտական մի շարք խնդիրների լուծմամբ, տեսական ու գործնական բնույթի հարցերի առաջադրմամբ ու քննարկմամբ:

Քանալի բառեր – *բարբառագիտություն, տարածական միավոր, բարբառային հարկանիշ, գրաբար, բազմահարկանիշ դասակարգում, գրական լեզու, շեշտ, հոլով, հնչույթ*:

ВИКТОР КАТВАЛЯН – М. Асатрян – диалектолог. – Значительную роль в развитии армянской лингвистической мысли сыграл известный арменовед М. Асатрян. Особое внимание он уделял исследованию армянских диалектов. В своих диалектологических работах М. Асатрян поднимал вопрос взаимоотношений некоторых диалектных единиц, описывал отдельные диалектные единицы армянского языка, обсуждал взаимоотношения диалектов и литературного языка, анализировал некоторые языковые явления и т.д. Исследования М. Асатряна в значительной степени содействовали развитию этой области арменоведения.

⁴¹ **Ասատրյան Մ.**, Հայ բարբառագիտության գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 1985, 224 էջ:

Ключевые слова: *диалектология, территориальная единица, диалектный признак, грабар, многопризнаковая классификация, литературный язык, ударение, падеж, фонема.*

VIKTOR KATVALYAN – The Dialectologist M. Asatryan. - The distinguished Armeniologist M. Asatryan has a significant contribution in the development of Armenian linguistic thought. He has paid a particular attention on the Armenian dialects. In his dialectological works M. Asatryan has made clarifications on the relationship of some units, a complete description of the systems of separate territorial units of Armenian, discussion on dialect – literary language correlation, analysis of different linguistic realities, raising theoretical problems etc. The works of M. Asatryan have greatly contributed the development of that field of Armeniological studies.

Keywords: *dialectology, territorial unit, dialectical feature, Grabar (Old Armenian), multifeature classification, literary language, stress, case, phoneme.*

ԱՆԱՀԻՏ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

(ԵՊՀ)

anahit.yuzbashyan@ysu.am

ՔԱՅԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԸՍՏ Մ. ԱՍԱՏՐՅԱՆԻ

Մ. Ասատրյանը բայի դիմավոր և անդեմ ձևերի քննությունը կատարել է «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» եռահատոր աշխատության II և III հատորներում, «Բայի սեռերը ժամանակակից հայերենում» և «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն» գրքերում: Բայի թվի և դեմքի քերականական կարգերի առումով քերականագիտությունը տարամետ կարծիքներ չի արձանագրում: Ուստի անդրադառնալով ենթ սեռի, կերպի, ժամանակի և եղանակի քերականական կարգերի մասին Մ. Ասատրյանի մոտեցումներին:

Սեռի կարգը հեղինակը քննում է քերականական ենթակայի (տրամաբանական սուբյեկտ), կրող խնդրի (տրամաբանական օբյեկտ) փոխհարաբերության տիրույթում: Ըստ այդմ.

ա) Ընդունում է ներգործական, կրավորական և չեզոք սեռի բայեր:

բ) Ներգործականների մեջ տարբերակում է երգել, սիրել տիպի պարզ կառույցները և խաղացնել, սովորեցնել տիպի պատճառականները, որոնք կազմվում են և՛ չեզոք, և՛ կրավորական սեռի բայերից՝ ածանցմամբ: Քննում է նրանց իմաստային առանձնահատկությունները, նմանություններն ու տարբերությունները *Երեխան բարչրացավ: Մայրը բարչրացրեց երեխային: Երեխան դաս է սովորում: Մայրը դաս է սովորեցնում երեխային* տիպի կառույցների համեմատական դաշտում:

գ) Կրավորական սեռանիշ **վ** ածանցավոր կրավորական սեռի բայերից հեղինակն առանձնացնում է անդրադարձ բայերը՝ թվարկելով հագնվել, հանվել, պատրաստվել, պաշտպանվել, սափրվել, օծվել և նման այլ կառույցներ, սրանց մեջ դնելով նաև փաթաթվել բայը, որը այլ

հեղինակներ, օր.՝ ակադ. Գ. Ջահուկյանը, անվանում են փոխադարձ բայեր՝ համբուրվել, գրկախառնվել, փաթաթվել փոքրաթիվ բայերի ընդգրկմամբ:

Մ. Ասատրյանը յուրաքանչյուր սեռի բայախմբի մանրակրկիտ իմաստային վերլուծություն է կատարում:

Մեռի կարգը բնորոշ է բայի դիմավոր և անդեմ ձևերին: Դերբայական համակարգում հեղինակն առանձնացնում է անկախ և կախյալ դերբայներ՝ շեշտադրելով նրանց գործառնությունը: Մասնավորապես վերլուծում է հարակատար դերբայի մասին քերականագիտության մեջ եղած երկակի մոտեցումը, որը, ըստ հեղինակի, պայմանավորված է դերբայի արտահայտած երկիմաստով:

Հարակատար դերբայով և օժանդակ բայով կառույցները հարացուցային միավորներ չի համարում: Հեղինակի տարբերակած անորոշ, անկատար I, անկատար II, ապառնի I և ապառնի II (իբ-ով ձևեր), հարակատար, վաղակատար, ենթակայական, ժխտական դերբայներից անկախ են անորոշը, անկատար II-ը, ապառնի II-ը, հարակատարը և ենթակայականը: Մնացած դերբայները կախյալ են՝ ըստ գործառնության այն առանձնահատկության, որ նրանք դառնում են հարացուցային միավորներ:

Հայերենագիտության պատմության սկզբնավորումից առ այսօր, ի թիվս մի շարք հիմնահարցերի, տարակերպ է մնում հայերենում ժամանակի քերականական կարգի մեկնաբանման խնդրի լուծումը: Սա պայմանավորված է փիլիսոփայական և քերականական ժամանակ, բայական ժամանակ և բայակերպ, բայական ժամանակ և ժամանակաձև եզրերի տարրմբռնումով:

Փիլիսոփայական ժամանակն իր արտահայտությունը լեզվում գտնում է գլխավորապես բայական համակարգի միավորների միջոցով, որ կարող ենք անվանել բայական ժամանակի դրսևորումներ, և լեզվական այլ միջոցներով, որ ստեղծում են խոսքի ժամանակային տիրույթ. հայերենի համար այդպիսի առանձնակի դեր ունեն ժամանակի մակբայները: Հայերենը բայակենտրոն լեզու է, քանի որ բայն ունի խոսքակազմիչ դեր: Ուստի մենք հետևում ենք այն լեզվաբաններին, որոնք գտնում են,

որ հայերենի համար ժամանակի կարգը ձևաբանական և շարահյուսական կարգ պիտի համարել¹:

Հ. Աճառյանը, հիմք ընդունելով ժամանակային ձևերի ամենատարբեր կիրառությունները, գտնում է, որ գործողությունը կարող է կապակցվել ոչ միայն խոսված բոլորի հետ, այլև մեկ այլ գործողության կատարված կամ կատարվելիք ժամանակի հետ: Առաջինները նա համարում է գլխավոր, երկրորդները՝ հարաբերական կամ երկրորդական, որոնք նույնպես կարող են ունենալ իրենց երկրորդականները²: Հ. Աճառյանը ժամանակ, ժամանակաձև եզրերի, քերականական ժամանակի քերականությունների տարբերակված մեկնաբանում չի տալիս: Մ. Աբեղյանի բայականորոն տեսության մեջ կերպի կարգը ուղղակիորեն կապված է ժամանակի կարգին: «Բայերի ցույց տված ամեն մի եղելություն կարող է երեք ժամանակների նկատմամբ ևս, այսինքն՝ թե՛ խոսողի ներկայի, թե՛ մի անցյալ ապառնի ժամանակակետի նկատմամբ լինել չորս կերպ՝ կատարվող, կատարված, կատարվելի և պարզ»³:

Ա. Ղարիբյանը, ընդունելով ժամանակակետերի հետ երկակի հակադրությունը՝ ժամանակների հաշվարկման սկզբնակետերի առումով, ընդունում է ժամանակի երկակի համադրություն, որը վերլուծական կառույցներում դրսևորվում է օժանդակ բայի **եմ-էի** հակադրությամբ, իսկ պարզ ժամանակաձևերում՝ «բայական վերջավորությունների հակադրությամբ»⁴:

Ի. Շիլակաձեն, հաջորդականությունը առանձնացնելով իբրև «հաջորդականության կարգ, իր համարժեք հակադրաեզրերով, գտնում է, որ

¹ Մանրամասն տե՛ս **Իշխանյան Ռ.**, Լեզվաբանական վերլուծության սահմանը արդի հայերենի շարահյուսական մակարդակում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1977, N 12, էջ 95: **Ղարիբյան Ա.**, Աբեղյանի քերականագիտական ժառանգությունը, Եր., 1946, էջ 150-151: Ըստ Մ. Աբեղյանի՝ բայը խոսք է կազմում՝ լինելով ստորոգման կարգն արտահայտող միավոր, իսկ մյուս անդամները՝ ենթական, խնդիր, պարագա, ստորադասվում են նրան:

² **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գիրք Բ, Եր., 1961, էջ 34-35:

³ **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 299:

⁴ **Ղարիբյան Ա.**, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., 1954, էջ 306:

«քերականության մեջ գործողության ժամանակը որոշելիս այդ գործողությունը կարելի է վերցնել միայն խոսքի պահի համեմատությամբ»⁵:

Է. Աղայանը, հարակատարի ձևերը հանելով խոնարհման հարացույցից, հայերենի բայի ժամանակակերպային համակարգը ներկայացնում է Մ. Աբեղյանի մոան⁶:

Հ. Բարսեղյանը բայի կերպը քննում է՝ ա) իբրև խոսքիմասային կարգ, որ բնորոշ է բայ խոսքի մասին և բ) իբրև ստորոգելիական կարգ, որ բնորոշ է միայն խոնարհված բային: Այս դեպքում այն առնչվում է ժամանակի քերականական կարգի հետ⁷:

Գ. Սևակը, երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը ընդունելով ժամանակային առանձին միավորներ, բային վերագրում է «հաստատական խոնարհման 58 ժամանակ»⁸:

Գ. Ջահուկյանը ժամանակի քերականական կարգի երկու ենթակարգ է տարբերակում՝ իրադրական և ոչ իրադրական, որը վերաբերում է վերլուծական կառուցվածքներին: Իրադրական ժամանակը, ըստ Գ. Ջահուկյանի, ունի երկու դրսևորում, ըստ այդմ՝ ընդունում է բացարձակ և հարաբերական ժամանակներ: Առաջին դեպքում ժամանակային հաշվարկման սկիզբը խոսելու պահն է, երկրորդ դեպքում՝ անցյալի կետ: Ըստ Գ. Ջահուկյանի՝ վերլուծական կառույցներում դերբայների միջոցով դրսևորվում է ոչ-իրադրական ժամանակը: Օժանդակ բայի հարաբերակցությամբ այն հանդես է գալիս իբրև իրադրական ժամանակ: Ըստ այդմ՝ այն բաժանվում է բացարձակ (գրում եմ), հարաբերական (գրում էի) ժամանակային հակադրանքների⁹: Պարզ երևում է ժամանակի կարգի տարբերումները հայերենի բայի տեսությանը մվիրված ակնառու լեզվաբանների կողմից: Մ. Ասատրյանը, անդրադառնալով եղած ըմբռնումներին, ժամանակի քերականական կարգի իր մեկնաբանու-

⁵ **Շիրակաճե Ի.**, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, Լեզվի և ոճի հարցեր, Եր., 1985, էջ 189:

⁶ **Աղայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 369:

⁷ Մանրամասն տես՝ **Բարսեղյան Հ.**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր. 1953, էջ 136-172:

⁸ **Սևակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 317:

⁹ **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 272-275:

թյան մեջ նախ կարևորում է հաջորդականության եզրը վերլուծական կառույցների համար: Նա հաջորդականությունը կերպային դրսևորում չի համարում, այլ՝ գործողությունների հաջորդականություն, այսինքն՝ կատարվող, կատարված և կատարելի գործողություններ¹⁰: Սահմանական եղանակի համար ընդունում է

գնում եմ – ներկա	գնում էի – անցյալի անկատար
գնացել եմ – վաղակատար	գնացել էի – անցյալի վաղակատար
գնալու եմ – ապառնի	գնալու էի – անցյալի ապառնի

Ժամանակների հակադրությունը: «Մենք գործ ունենք քերականական 6 ինքնուրույն ու անկախ ժամանակների հետ, որոնք կազմում են երկանդամ հակադրություններ»¹¹: Այս երկանդամ հակադրությունը երևում է մաս ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ժամանակային համակարգում, որտեղ այն ունի գնամ, կգնամ, պիտի գնամ – ապառնի և գնայի, կգնայի, պիտի գնայի - անցյալի ապառնի հակադրությունը: Հ. Բարսեղյանը ևս ճիշտ է համարում դրանք «գործողության կատարման ընդհանուր ժամանակի անունով» կոչելը¹²: Լեզվաբանները մրանց տարբեր անվանումներ են տվել. մի մասը դրանք անվանում է ըղձական (ենթադրական կամ պայմանական) ապառնի և անցյալ (կամ անցյալի) ապառնի¹³: Լեզվաբանների մի մասն էլ դրանք անվանում է ապառնի ներկա և ապառնի անցյալ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մի դեպքում կատարելի գործողությունը դիտվում է խոսելու պահի և երկրորդ դեպքում՝ մի անցյալ ժամանակի համեմատությամբ¹⁴:

Գ. Ջահուկյանը համադրական ձևերի համար ժամանակային հակադրության երկու եզր է ընդունում՝ անցյալ և ոչ անցյալ: Ոչ անցյալը եմ, կամ, գիտեմ, արժեմ, ունեմ պակասավոր բայերի համար ներկա է, իսկ

¹⁰ Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 2004, էջ 277:

¹¹ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 278:

¹² Բարսեղյան Հ., Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 158-163:

¹³ Ղարիբջան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., 1954, էջ 304-308: Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1954, էջ 134:

¹⁴ Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 313-317:

կով ձևերի համար՝ ապառնի¹⁵: Գ. Ջահուկյանի կողմից մնան մոտեցումը նաև նպատակ էր հետապնդում հրամայական եղանակի բայաձևերի ապառնի ժամանակի ճիշտ տեղադրումը ոչ անցյալի մեջ: Այս դեպքում նաև ճշգրիտ լուծում կստանար գրաբարի բայի ժամանակային համակարգում ստորադասական եղանակի բայաձևերի հարցը, քանի որ նրանք կտեղադրվեն ոչ անցյալ համակարգում:

Մ. Ասատրյանի կողմից այս մոտեցումը քննադատվում է¹⁶:

Մեր կարծիքով՝ եթե ժամանակի կարգի հակադրության առնվազն երկու եզր պիտի ունենանք, ապա հրամայական եղանակի բայաձևերը, անցյալ կատարյալը և գրաբարում ստորադասական եղանակի բայաձևերի երկրորդ եզրը մնում են դուրս և այդ դեպքում Գ. Ջահուկյանի մոտեցումը ամբողջացնում է ժամանակի կարգի քերականության բացակայությունը՝ բոլոր եղանակաձևերի ընդգրկմամբ:

Ժամանակի կարգի մեջ Մ. Ասատրյանը ընդգրկում է նաև երկրորդական վերլուծական ժամանակները. «Եթե գլխավոր վերլուծական ժամանակների դեպքում բաժանման ելակետը ներկան է, ապա երկրորդական վերլուծական ժամանակների դեպքում բաժանման ելակետը որևէ գլխավոր ժամանակն է»¹⁷: Երկրորդական վերլուծական ժամանակները անվանում է համընկնող (գնալիս), նախորդող (գնացած) և հաջորդող (գնալու)՝ անվանումներին ավելացնելով գլխավոր ժամանակաձևի անվանումը: Այս դեպքում ունենք **գնում եմ** ներկա ձևին համարժեք 3 ձև՝ համընկնող ներկա (գնալիս եմ լինում), նախորդող ներկա (գնացած եմ լինում), հաջորդող ներկա (գնալու եմ): Ըստ այդմ՝ ժամանակների թիվը կհասնի 42-ի (14 գլխավոր և 3 անգամ բազմապատկած՝ 42 երկրորդական վերլուծական):

Մեր կարծիքով՝ նշված կառույցները ժամանակաձևեր են, այսինքն՝ բայական ժամանակի հարացուցային միավորներ և ոչ թե ժամանակներ:

¹⁵ **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 272-276:

¹⁶ Տե՛ս **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 275-277:

¹⁷ **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 281:

Կերպի կարգը Մ. Ասատրյանը անբաժան է համարում ժամանակի կարգից: «Դերբայների արտահայտած գործողության ընթացքի հարաբերումը որևէ ժամանակակետի հետ հայ քերականագիտության մեջ կոչվում է գործողության կերպ»¹⁸: **Կատարվող կերպի** միավորներն են սահմանական ներկան և անցյալ անկատարը (գնում է – գնում էր), վաղակատարը և անցյալի վաղակատարը **կատարված կերպի** միավորներն են (գնացել է – գնացել էր), սահմանական ապառնին և անցյալի ապառնին **կատարելի կերպի** միավորներն են (գնալու է – գնալու էր): Կերպի նման դրսևորումը հեղինակը համարում է համադրական և վերլուծական ժամանակների տարբերակելի հատկանիշներից մեկը¹⁹: Հայերենագիտության մեջ վիճահարույց է նաև եղանակի կարգի եզրերից մեկի՝ պայմանական կամ ենթադրական եղանակի հարցը, ինչին հեղինակը տալիս է իր լուծումները: **Կ** եղանակիչով բայաձևերը հեղինակը անվանում է **հաստատողական եղանակի** միավորներ: «Եթե նկատի ունենանք, որ **կը**-ով կազմված բայաձևերը ենթադրական եղանակի իմաստ են արտահայտում, երբ նրանց մեջ մարում է ապառնիության գաղափարը, իսկ սահմանական եղանակի իմաստ են արտահայտում, երբ երկրորդաբար կիրառվում են որպես կրկնություն, սովորության ներկա և անցյալ անկատար, ապա պարզ կդառնա, որ **կը**-ով կազմված բայաձևերի եղանակային հիմնական իմաստը **հաստատողական** իմաստն է, ուրեմն և դրանք կարելի է կոչել հաստատողական եղանակի բայաձևեր»²⁰: Դրանք հեղինակը պայմանականորեն թողնում է ավանդական՝ պայմանական կամ ենթադրական անվանումով, բայց աներկբայորեն նրանց բնորոշ է համարում հաստատողական գործողության իմաստը:

Կ եղանակիչով բայաձևերը տարբեր բնորոշումներ ունեն հայերենագիտության մեջ: Ստ. Պալասանյանը **կ** եղանակիչով և ըղձական ապառնիով (կտեսնեն) կառույցները համարում է սահմանական ապառնին, իսկ **կ** եղանակիչով և ըղձական անցյալով կառույցներն անվանում է պայմանական եղանակի ձևեր²¹: Գ. Սևակը մույնպես այն անվանում է

¹⁸ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 280:

¹⁹ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 280-281:

²⁰ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 304:

²¹ Պալասանյան Ս., Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, էջ 65:

ենթադրական²²: Մ. Աբեղյանն այս կառույցներն անվանում է ենթադրական եղանակի բայաձևեր²³: Ա. Ղարիբյանը միացնում է այս երկու անվանումները և եղանակն անվանում պայմանական կամ ենթադրական²⁴: Ըստ Ս. Աբրահամյանի՝ «ավելի ճիշտ կլիներ ենթադրականի փոխարեն գործածել կանխադրական անվանումը»²⁵: Այս կառույցները նա ներառում է սահմանական եղանակի բայաձևերի մեջ: Գ. Ջահուկյանը **կ**-ով կառույցներին բնորոշ է համարում սահմանական և հրամայական եղանակներին հատուկ իմաստային հատկանիշներ²⁶: Պ. Պողոսյանը այս բայաձևերը կոչում է «կատեգորիկական եղանակի միավորներ»²⁷:

Մ. Ասատրյանը **կ**-ով կառույցների համար բնորոշ է համարում հաստատողական իմաստը և եղանակը անվանում է հաստատողական:

Մ. Ասատրյանը բայասեռի երեք եզր է տարանջատում՝ կատարելով նրանց կառուցվածքային և իմաստային վերլուծություն, հաճախ նաև ըստ անհրաժեշտության դրանք արժևորելով ոճական դաշտում: Օրինակ՝ չեզոք սեռի բայերի ինքնատիպ կիրառություն է համարում նույնարմատ կամ ոչ նույնարմատ խնդրով գործառույթը, ինչպես «**Լաց** վերջին **լացդ**, սիրտ իմ մենավոր» (Վ. Տ.):

«Ու աշնան միգում կանգնել եմ անհույս,

Անհույս **հեկեկում անունդ անուշ**» (Ավ. Իս.)²⁸

Յուրաքանչյուր քերականական իրողություն Մ. Ասատրյանը քննում է՝ անդրադառնալով այդ մասին եղած մոտեցումներին, որոնք նա արժևորում է քննական և ըստ անհրաժեշտության նաև քննադատական մեկնաբանումներով՝ դրանց շուրջը ձևակերպելով իր կարծիքը, որը նա հաստատում է գիտական փաստերով: Մասնավորապես բայական կարգերի ինքնատիպ վերլուծություն է կատարում հեղինակը՝ դրանց շուրջ

²² Տե՛ս Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 198:

²³ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 326:

²⁴ Ղարիբյան Ա., Հայոց լեզվի քերականություն, Եր., 1949, էջ 215:

²⁵ Աբրահամյան Ս., Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը, Հայկական ԳԱԱ տեղեկագիր հասարակական գիտությունների, N 9, 1953, էջ 75:

²⁶ Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 246:

²⁷ Պողոսյան Պ., Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Եր., 1959, էջ 175:

²⁸ Տե՛ս Ասատրյան Մ., Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Եր., 1959, էջ 190-193:

եղած վեճերի գիտական բանարվեստի բոլոր նրբերանգներին տիրապետելով: Իր մոտեցումների հիմնավորման համար հեղինակը հաճախ է տվյալ իրողության տարժամանակյա քննության անցնում, քանի որ հեղինակը ճիշտ էր համարում լեզվաիրողության սկզբնավորման և բարբառային դրսևորումների դիտարկումը:

Բանալի բառեր – *եղանակի կարգ, ժամանակի կարգ, գլխավոր և երկրորդական բաղադրյալ ժամանակներ, անկարար I, անկարար II, ապառնի I, ապառնի II, դերբայներ, վաղակարար և վաղակարար անցյալ ժամանակներ, հասարարողական եղանակ:*

АНАИТ ЮЗБАШЯН – Глагольные категории по М. Асатрян. – М. Асатрян оставил большое научное наследие, в котором свое особое место имеет анализ морфологии современного армянского языка. Автор провел анализ глагольных категорий обращаясь к различным лингвистическим мнениям. Автор владеет всеми нюансам научных дискуссий, представляет различные подходы к анализу времени, вида, наклонения глагола и научно обосновывает свое мнение по этим вопросам. В работе представляются подходы М. Асатряна к изучению глагольных категорий и оцениваются анализы спорных вопросов, созданные М. Асатряном.

Ключевые слова: *категория наклонения, главные и второстепенные времена, возвратные глаголы, утвердительное наклонение, категория времени и вида, зависимые и независимые причастия.*

Anahit Yuzbashyan – Verbal categories by M.Asatryan. - M. Asatryan left a great scientific heritage in which the analysis of the morphology of the modern Armenian language has its place. The author analyzes the verbal categories referring to different linguistic opinions. Author owns all the nuances of scientific discussions, presents different approaches to the analysis of time, type, verb moods and scientifically proves his opinion on these issues. The work presents M. Asatryan's approaches to the study of verbal categories. The paper analyzes the estimated disputes made by M. Asatryan.

Keywords: *category of mood, primary and secondary compound tenses, reflexive verbs, affirmative mood, category of time and type, dependent and independent participles.*

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

(ԵՊՀ)

narine.dilbaryan@ysu.am

**ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԸՄԲՈՂՈՒՄԸ Մ. ԱՍԱՏՐՅԱՆԻ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

XX դարակեսը հայ քերականագիտության ծաղկման ժամանակաշրջանն էր, երբ արդեն շուրջ չորս տասնամյակ պետական կարգավորման ենթարկվող արևելահայ աշխարհաբարի ձևաբանական, շարահյուսական և ոճաբանական նկարագրությունն ամբողջանում էր՝ ժամանակի լեզվաբանական նոր մեթոդների և սկզբունքների կիրառմամբ։ Քերականական միավորների գիտական նկարագրության համար կարևորվում էին ինչպես քննվող միավորի ձևը, այնպես էլ՝ բովանդակությունը, ներքին և արտաքին հարաբերությունները։ Խոսքի մասերը սկսում են ըմբռնվել և հետազոտվել ոչ թե իբրև առանձին, այլ ամբողջական համակարգի փոխկապակցված բաղմարժեք միավորներ։ Առանձին խոսքի մասերի ներտեսակային տարբերակումների անհրաժեշտությունը դառնում է առաջնային խնդիր։ Եվ եթե թեքվող խոսքի մասերի ներքին դասակարգումները արդեն գրեթե հստակեցված էին, ապա չթեքվող խոսքի մասերի, ի մասնավորի՝ մակբայի, կապերի ենթատեսակների ավանդական բաժանումը վերանայման, լրացման կարիք ուներ։

Մ. Ասատրյանը նշյալ ժամանակաշրջանի այն նախանձախնդիր լեզվաբան-քերականներից էր, որը ձեռնամուխ եղավ արևելահայ աշխարհաբարի համակարգային նկարագրությանը ձևաբանական, շարահյուսական, բարբառագիտական մակարդակներում։ Ընդ սմին՝ նա և՛ նորարարական տեսական աշխատություններ էր գրում, և՛ դրանց հիման վրա՝ որակյալ դասագրքեր։ Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունի «Ժամանակակից հայոց լեզվի ձևա-

բանության հարցեր» եռահատոր աշխատությունը (1970, 1973, 1977 թթ.), որի հիմնարար դրույթները արտացոլվում են 1983 թ. լույս տեսած «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն» բուհական դասագրքում: Այս աշխատանքներում ավանդական հայերենագիտության և իր ժամանակի լեզվաբանության նվաճումների հիման վրա գիտնականը հետազոտում և բազմափաստյալիչ դասակարգման է ենթարկում արևելահայ գրական լեզվի բոլոր խոսքի մասերը:

Խնդրո առարկա խոսքի մասերի և նրա ենթատեսակների քննությանը Մ. Ասատրյանն անդրադարձել է «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցերի» Գ գրքում: Գրքի «Երկու խոսք» կոչվող մասաբանում Մ. Ասատրյանն արձանագրում է, որ ինքն ի նորոյ է շարադրել ժամանակակից հայերենի ամբողջ ձևաբանությունը, նորովի լուսաբանել որոշ իրողություններ. «Եթե դրանց գոնե մի մասը ճանաչում ու ընդունելություն գտնի և նպաստի մեր լեզվի քերականական կառուցվածքի որոշ երևույթների ավելի խոր ընկալմանն ու մեկնաբանությանը, ապա մենք լիովին հասած կլինենք մեր նպատակին»¹: Կարող ենք արձանագրել, որ չթեքվող խոսքի մասերի նկարագրության ժամանակ Ասատրյան քերականի կատարած դասակարգումները ցայսօր արդիական են և ունեն տարժամանակյա կիրառում, այսինքն՝ կիրառելի են ոչ միայն արդի հայերենի, այլև գրաբարի և միջին հայերենի չթեքվող խոսքի մասերի վերաբերմամբ: Ընդ որում, Մ. Ասատրյանը, վերլուծելով տարբեր խոսքի մասերը, հաճախ է անդրադարձ կատարում հին հայերենին՝ ընդգծելով պատմականության սկզբունքի կարևորությունը: Այսպես՝ սկսելով արդի հայերենյան մակբայի քննությունը՝ նա դիմում է գրաբարին՝ ՆՀԲ-ից բերելով երկու տասնյակից ավելի համագործածական ածականների մակբայական կիրառության բնորոշ օրինակներ:

Գիտենք, որ Մ. Աբրահամյանը 1959 թ. լույս է ընծայել առանձին աշխատություն՝ նվիրված չթեքվող խոսքի մասերին, որտեղ փորձել է ճշտել չթեքվող խոսքի մասերի դիրքը ընդհանուր խոսքիմասային համակարգում՝ նշելով մի կարևոր առանձնահատկություն. մեր լեզվի տարբեր

¹ **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ, Եր., 1977, էջ 4:

փուլերում թեքվող և չթեքվող խոսքի մասերի հակադրությունը տարբեր աստիճաններ է ունեցել: Չթեքվող մակբայը, կապը, շաղկապը և վերաբերականը ամենից առաջ հակադրվում են գոյական անվանը, որոշ դեպքերում նաև բայերին, որոնք հոլովվում կամ խոնարհվում են: Իսկ ածականներին և թվականներին հակադրվում են ավելի փոքր չափով, այնինչ գրաբարում այդ հակադրությունն առավել ընդգծված էր. «Դրա պատճառը հետևյալն է: Ժամանակակից հայերենում ածականներն ու թվականները հոլովվում են միայն գոյականաբար գործածվելու դեպքում..., մինչդեռ գրաբարում այդ խոսքի մասերը հոլովվում էին առանց գոյականաբար գործածվելու», - ընդգծում է Ս. Աբրահամյանը²: Այսինքն՝ ածականը և թվականը արդի հայերենում չթեքվող խոսքի մասեր են: Երկրորդ կարևոր առանձնահատկությունը, որի վրա ներածության մեջ բևեռում է իր ուշադրությունը Ս. Աբրահամյանը, խոսքի մասերի միջև հստակ սահմանների բացակայությունն է, որը հանգեցնում է տարաբեռության, ընդ որում հիմնականում տարաբեռ են մակբայը, կապը, շաղկապը և եղանակավորողները, որովհետև նրանք կազմավորվում և հարստանում են այլ խոսքի մասերի հաշվին³: Կատարելով այս երկու կարևոր շեշտադրումները՝ Ս. Աբրահամյանը, սակայն, դրանք չի զարգացնում: Դեռ ավելին՝ փորձում է հիմնավորել, որ նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերից մակբայը միակն է, որ չի թեքվում⁴: Իսկ Մ. Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» աշխատության Գ հատորում հիշյալ առանձնահատկությունները դառնում են առանցքային, որովհետև Մ. Ասատրյանի համար լեզուն զարգացող և ինքնահարստացող համակարգ է, որի բոլոր միավորները փոխկապակցվածության մեջ են, և հակադրությունները կրում են ժամանակավոր բնույթ: Քննելով առանձին-առանձին չթեքվող խոսքի մասերը՝ լեզվաբանը պարտադիր անդրադառնում է տվյալ ձևաբանական միավորի կապին մնացյալ խոսքի մասերի հետ, այսինքն՝ դրանք դիտարկում է որպես համակարգային մեկ ամբողջության բաղկացուցիչ, փոխկապակցված միավորներ: Ամեն խոսքի մաս Մ. Ասատրյանը բնու-

² Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Եր., 1959, էջ 15:

³ Տե՛ս նշվ. աշխ., էջ 11-12:

⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 23-25:

թագրում է բազմահատկանիշ դասակարգումների միջոցով, որը նույնպես նորույթ էր:

Մինչ առանձին խոսքի մասերի քննությանն անդրադառնալը կարևորենք *ձևաբանություն* հասկացության Մ. Ասատրյանի ըմբռնումը. նա տարբերակում է ձևաբանության լայն և նեղ ըմբռնումները: Նեղ ըմբռնմամբ ձևաբանության ուսումնասիրության առարկա կարող են դառնալ միայն դիմավոր բայերը և գոյականները: Մրանք լեզվաբանի բնորոշմամբ «ձևաբանական» խոսքի մասեր են, մնացյալը՝ «ոչ ձևաբանական»։ «Բայց լայն ըմբռնմամբ՝ ձևաբանության քննության նյութ են հանդիսանում խոսքի մասերն ընդհանրապես»⁵:

Մ. Ասատրյանը չի գործածում *չթեքվող խոսքի մասեր* ձևակերպումը. ավանդական քերականություններում չթեքվող կոչվող կապը, շաղկապը, եղանակավորող բառերն ու ձայնարկությունները, լեզվաբանի բնորոշմամբ, *քերականական և վերաբերմունքային* խոսքի մասեր են: Այս շարքից նա հանում է մակբայը, որովհետև վերջինս ածականին և թվականին մոտ կանգնած խոսքի մաս է. այս երեքն էլ հատկանիշ անվանող խոսքի մասեր են՝ ածականն ու թվականը հիմնականում՝ գոյականի, իսկ մակբայը՝ բայի, ընդ որում, նրանց միջև ոչ միայն իմաստային, այլև շարահյուսական ընդհանրություն կա: Մակբայ→ածական, ածական→մակբայ անցումը հայերենում միշտ տարածված և սովորական երևույթ է եղել՝ գրաբարից մինչև արդի հայերեն: Ս. Աբրահամյանի այն պնդումը, թե մակբայը նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերից միակն է, որ չի թեքվում, հերքվում է, որովհետև ածականը և թվականը ևս հայերենի պատմական զարգացման ընթացքում չթեքվող խոսքի մասեր են դարձել:

Այսպիսով՝ ածականը, թվականը և մակբայը բայի և գոյականի հետ նույն հարթության վրա են հայտնվում՝ որպես օբյեկտիվ իրականության առարկաների, երևույթների, հատկանիշների ու գործողությունների նշանային փոխարինիչներ, նյութական իմաստ ունեցող բառեր, որոնք ունեն անվանողական գործառնություն:

⁵ **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Ա, Եր., 1970, էջ 4:

քային խոսքի մասերը, լեզվաբանի դիտարկմամբ, ևս ունեն անվանողական գործառույթ: Չանվանելով հանդերձ նյութական հասկացություններ՝ կապերն ու շաղկապները անվանում են հարաբերություններ, գործրինակ՝ գնաց *դեպի* տուն, պատմում էին եղբոր *մասին*, հայրը *և* մայրը, *եթե* տեսնեմ, կասեմ, եղանակավորողները՝ դատողական վերաբերմունք, իսկ ձայնարկությունները՝ զգացական վերաբերմունք, այսպես՝ *թերևս* կգաս, *իրոք* կգա կամ՝ *վա՛հ*, դու ես, *ա՛խ*, արդյոք նորից կտեսնեմ նրան և այլն⁶: Մ. Ասատրյանը տրամաբանորեն հիմնավորում է, որ անհնար է որևէ բան արտահայտել, առանց անվանելու: Հետևաբար, ձայնարկությունների այն սահմանումը, ըստ որի՝ ձայնարկություններն այնպիսի բառեր են, որոնք արտահայտում են զգայական կամ կամային վերաբերմունք, առանց անվանելու դրանք, սխալ է: Փոխարենը լեզվաբանը առաջարկում է հետևյալ սահմանումը. «Չայնարկություններն այն բառերն են, որոնք արտահայտում են զգայական, նաև կամային վերաբերմունք ընդհանուր, տարտամ, ոչ որոշակի ձևով»⁷: Այս առումով եզրակացությունը մեկն է. բոլոր խոսքի մասերը անվանում են որևէ բան՝ առարկա, հատկանիշ, գործողություն, հարաբերություն կամ վերաբերմունք:

Մակբայի՝ իբրև առանձին խոսքի մասի քննության ընթացքում առավել արժեքավոր է Մ. Ասատրյանի առաջարկած իմաստային դասակարգումը, համաձայն որի՝ տարբերակվում են երկու մեծ խմբեր՝ պարագայական և հատկանշային, և ապա այդ դրանց մեջ ավելի փոքր ենթախմբեր են առանձնացվում՝ տեղի, ժամանակի՝ իբրև պարագայական մակբայների տեսակներ, որակի և քանակի՝ իբրև հատկանշային մակբայներ⁸: Որպես խոսքիմասային փոխանցումների վկայություն՝ քերականը մանրամասն ներկայացնում է գոյական→մակբայ անցումները՝ ցույց տալով լեզվի հարակա զարգացման ընթացքում գոյականների առարկայական նշանակության խամբումը և նրանց վերածումը մակբայների: Այս հարցում նա բանավիճում է Մ. Աբեղյանի հետ, որը *այսօր*,

⁶ Հմմտ. նշվ. աշխ., էջ 100:

⁷ Նույն տեղում:

⁸ Հմմտ. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ, Եր., 1977, էջ 227-251:

երեկ, վաղը, էգուց, այժմ, հիմա, առաջ ժամանակի անունները վճռական և անվերապահ գոյականներ է համարում՝ հավասարության նշան դնելով սրանց և *շաբաթ, ամիս, տարի, առավոտ, իրիկուն* բառերի միջև: Ընդունելով, որ այս երկու բառախմբերի միջև կան ընդհանրություններ՝ դրանց հոլովակաճությունը և ընդհանուր նշանակությունը՝ Մ. Ասատրյանը գտնում է դրանց բառակազմական, իմաստային ու կիրառական երեք տարբերությունները, որոնք խոսքիմասային տարբերակման վճռորոշ հիմնավորում են՝ ա) մակբայ համարվող առաջին խմբի բառերը չունեն հոգնակի, մինչ դեռ երկրորդ խմբի գոյականներն ունեն, բ) առաջին խմբի բառերը, որպես կանոն, ենթակայի և խնդրի պաշտոնով հանդես չեն գալիս, իսկ երկրորդ խմբի գոյականների համար դա ընդհանուր և տարածված շարահյուսական կիրառություն է, և գ) *այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, հիմա, առաջ* ժամանակի անունները որոշիչներ չեն ընդունում, չենք կարող ասել *գեղեցիկ, հաղթական այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, հիմա, առաջ*, այնինչ *շաբաթ, ամիս, տարի, առավոտ, իրիկուն* գոյականները ազատորեն որոշիչներ են ընդունում՝ *գեղեցիկ, հաղթական շաբաթ, ամիս, տարի, առավոտ, իրիկուն*⁹: Այսինքն՝ Մ. Ասատրյանը ընդգծում է, որ բառերի շարահյուսական կիրառությունները վերջիվերջո բխում են նրանց խոսքիմասային իմաստներից: Թեև ակնհայտ է, որ առանձին դեպքերում եթե չասենք անհնար, ապա բավական դժվար է առանձնացնել գոյականը մակբայից: Այս հարցում հայ քերականների անհետևողականությունը բավական նկատելի է: Այսպես՝ Ս. Աբրահամյանն իր նշված աշխատության մեջ *կեսօրին, գիշերով, ցերեկով, կեսգիշերին* ձևերը համարում է մակբայներ, իսկ մյուս կողմից՝ *Երեխաները խաղում են դրսում: Ներսում շար շոգ է* նախադասությունների *դրսում և ներսում* բառերը համարում է գոյականներ¹⁰: Մինչդեռ նրանք մակբայական և կապական գործառնություններ ևս ունեն, այսինքն՝ տարարժեք խոսքի մասեր են: Ունենալով բանավիճային տաղանդ և երկաթյա տրամաբանություն՝ Մ. Ասատրյանը ցանկացած պնդման հակասականությունը բացահայտում էր և ի ցույց դնում:

⁹ Հմմտ. **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 223-226:

¹⁰ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Եր., 1959, էջ 259:

Հայերենի կապերը գիտնականը համաժամանակյա և տարժամանակյա մոտեցումներով ընդարձակ քննում է «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցերի» Ա հատորում՝ նշելով, որ աշխարհաբարի առաջին քերականները, ելնելով գրաբարյան իրողություններից, կապերը կոչում էին նախադրություններ: Այս բաժնում լեզվաբանը բանավիճում է Ա. Մարգարյանի հետ՝ ապացուցելով, որ Մ. Աբեղյանի և Գ. Սևակի սահմանումները կապերի վերաբերյալ ըստ էության նույնն են, նրանց հակադրելն անիմաստ է. Մ. Աբեղյանը կապը բնորոշում է որպես կախման հարաբերություններ ցույց տվող բառեր, իսկ Գ. Սևակը՝ գոյալին վերաբերություններ, պարագայական հարաբերություններ ցույց տվող բառերի կարգ, այսինքն՝ երկուսի սահմանումների հիմքում էլ ընկած է այս բառերի շարահյուսական գործառույթը: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ կապերը, ինչպես փաստում է Մ. Ասատրյանը, սպասարկու խոսքի մաս են, արտահայտում են կախման զանազան հարաբերություններ և ունեն շարահյուսական գործառույթ: Ա. Մարգարյանի հետ Մ. Ասատրյանի բանավեճն այս պարագայում վճռորոշ է, որովհետև Ա. Մարգարյանը, առաջ մղելով խոսքի մասերի որոշման լեզվական-իմացաբանական ընդհանուր իմաստի գործոնը, լիովին անտեսում էր դրանց որոշման շարահյուսական հիմունքը՝ զարգացնելով այն միտքը, թե լեզվում չեն կարող լինել բառեր, որոնք գոյականներ և կապեր, ածականներ և կապեր, մակբայներ և կապեր են հավասարապես: Նման երկարժեք բառերը Ա. Մարգարյանը կապ չի համարում, գործրինակ՝ *հեղուկ*-ն միայն մակբայ է, *մմա*-ն՝ ածական, *ժամանակ*-ը՝ գոյական, թեև այս բառերը խոսքի մեջ որոշակի կապակցություններում կորցնում են իրենց նյութական իմաստը՝ հանդես գալով կապերին բնորոշ շարահյուսական գործառույթներով:

Մ. Ասատրյանը նման մոտեցումը սխալ է համարում՝ կապ խոսքի մասի մեջ ներառելով ավանդական քերականության տարանջատած ոչ միայն իսկական կապերը, այլև, այսպես կոչված, անիսկական կապերն ու կապական բառերը: Ընդ որում, նպատակահարմար է գտնում կապերը բաժանել երկու խմբի՝ իսկական կապեր, որոնք միշտ հարաբերության իմաստով են գործածվում և չեն կարող այլ խոսքիմասային առումներ ունենալ, գործրինակ՝ *առ*, *առանց*, *առթիվ*, *բացի*, *դեպի*, *գալստ*, *ըստ*,

ընդ, ի, ի հեռուկա, ի սեր, ի փրկություն, ի դեմս, իբրև, հանդերձ, հանձին, հանձինս, հոգույր, շնորհիվ, վերաբերմամբ, վերաբերյալ (ակնհայտ է, որ իսկական կոչվող կապերի մեծամասնությունը գրաբարյան մախաիրներն են, մախաիրավոր կապակցությունները, հոլովական կամ խոնարհման հին ձևերը, որոնց նյութական և քերականական իմաստները դարերի ընթացքում մթագնել են), երկրորդ խմբում անիսկական կապերն են, որոնց միավորվում են կապական կոչվող բառերը: Մյուսը հարաբերության իմաստից զատ կարող են արտահայտել նաև նյութական իմաստ, ըստ որում, նյութական իմաստը կարող է դրսևորվել հարաբերության իմաստի հետ հավասար չափով, քիչ կամ առավել, դրանց մի մասը կարող է հող ստանալ, հոլովվել՝ *առաջ, առջև, անկախ, դեմ, դիմաց, դուրս, նման, շուրջ, վրա փակ, քով, անկախ, անունից, գծով, ընթացքում, հետևանքով, չեռքից, չեռքով, միջոցով, չնայած, չնայելով, պարզապես, ուղղությամբ* և այլն (այս շարքում և՛ մակբայներ, և՛ գոյականներ՝ հոլովված, անհոլով, անգամ դերբայներ կան, այսինքն՝ ինչպես Մ. Ասատրյանն է նշում, անիսկական կապերը, չունենալով հանդերձ մի միասնական ձևաբանական կամ շարահյուսական հատկանիշ, իրար հետ միավորվում են հարաբերության իմաստ արտահայտելու հատկանիշով)¹¹: Լեզվաբանն այնուհետև մանրամասն քննում է հոլովների և կապերի արտահայտած հարաբերությունների բնույթը՝ ցույց տալով, որ հոլովները ձևաբանական կառուցվածքի տարրեր են, որոնց արտահայտած իմաստը ավելի ընդհանուր ու վերացական է, քան բառապաշարի միավոր հանդիսացող կապերի արտահայտած հարաբերություններին¹²: Մ. Ասատրյանը սպառնիչ ներկայացնում է հայերենում կապերի առաջացման ուղիները և կազմությունը, դրանց խնդրառական տեղաշարժերը և իմաստային ընդգրկումն դասակարգում կատարում:

Շաղկապների գիտական նկարագրության ընթացքում Մ. Ասատրյանը վճռորոշ է համարում երկու հանգամանք. ա) շաղկապներն առանձին, ինքնուրույն, անկախ բառեր են և, որպես այդպիսիք, ունեն իրենց բառային իմաստները, այդ պատճառով էլ հայերենի *բայց, և,*

¹¹ Հմմտ. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Եր., 1970, էջ 350-351:

¹² Հմմտ. **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 326-330:

կամ, երբ, եթե, որովհետև և այլ շաղկապներն ունեն իրենց համարժեքները օտար լեզուներում, ք) շաղկապների իմաստները հենց քերականական իմաստներն են: Ելնելով այս երկու կանխադրույթներից՝ լեզվաբանը եզրակացնում է. «Շաղկապները գտնվում են բառապաշարի և քերականական կառուցվածքի եզրերին»¹³: Այս նույն եզրին է գտնվում նաև շաղկապներին ամենամոտ խոսքի մասը՝ կապը. կապերը ևս արտահայտում են սոսկ քերականական իմաստներ և կատարում շարահյուսական դեր՝ դրսևորելով ստորադաս բառերի՝ գերադասների հանդեպ ունեցած կախման զանազան հարաբերություններ: Ընդ որում, Մ. Ասատրյանը կապերի և շաղկապների ընդհանրությունները հիմնավորում է նրանց իմաստային գույզահեռականությամբ, յուրօրինակ հոմանիշությամբ: Այսպես՝ նպատակ արտահայտող կապեր և շաղկապներ - *Գնաց քաղաք ուսումը շարունակելու համար* // *Գնաց քաղաք, որպեսզի ուսումը շարունակի*: Ժամանակ - *Նրան տեսնելուն պես ինչ իմաց կանես* // *Հենց որ նրան տեսնես, ինչ իմաց կանես*: Պայման - *Նրա մասնակցելու դեպքում գործը հաջողությամբ կավարտենք* // *Եթե նա մասնակցի, գործը հաջողությամբ կավարտենք*: Լեզվաբանը միաժամանակ նշում է նաև կապերի ու շաղկապների հիմնական տարբերությունը. «Շաղկապները անտարբեր են իրենցով կապակցվող միավորների ձևերի նկատմամբ»¹⁴: Դրանք ստորադաս բառերը գերադաս բառերին կապելու, նախադասության անդամների ձևավորման դեր չունեն: Պարզ նախադասության կազմում շաղկապները միավորում են նախադասության համագոր անդամները, իսկ բարդ նախադասության մեջ, որը նրանց կիրառության հիմնական տիրույթն է, շաղկապներն արտահայտում են բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների ամենաբազմազան ու տարատեսակ համադասական ու ստորադասական հարաբերություններ: Հավատարիմ իր սկզբունքին՝ Մ. Ասատրյանը մամրամասն ներկայացնում է շաղկապների առաջացման ուղիները, նրանց կապը մնացյալ խոսքի մասերի հետ և կատարում շաղկապների բառակազմական և իմաստային դասակարգումներ, նկարագրում է նրանց

¹³ **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ, Եր., 1977, էջ 254:

¹⁴ Նշվ. աշխ., էջ 256:

հիմնական կիրառությունները՝ նշելով որ այս պարագայում ձևաբանությունից սահուն անցում է կատարվում շարահյուսությանը, որովհետև սպասարկու, կապակցական դեր կատարող շաղկապների իմաստների ու կիրառությունների ամբողջական ուսումնասիրությունը վերաբերում է շարահյուսությանը, որի հիմնական խնդիրը բառերի ու նախադասությունների կապակցությունների քննությունն է:

Անդրադառնալով եղանակավորող բառերին՝ Մ. Ասատրյանը հետևում է Մ. Աբեղյանի առաջադրած սկզբունքներին (նշենք, որ նա էր առաջինը եղանակական, բացասական մասնիկները և պատասխանական բառերը համարել հատուկ բառախումբ): Այնուհետև Ա. Աբրահամյանը և՛ գրաբարում, և՛ արդի հայերենում եղանակավորող բառերը առանձնացնում է որպես առանձին խոսքի մաս: Մ. Ասատրյանը ճիշտ է համարում լեզվաբանության մեջ իշխող այն տեսակետը, ըստ որի՝ եղանակավորող բառերը պատկանում են համեմատաբար ուշ առաջացած խոսքի մասերի թվին. դրանք առաջանում են տարբեր խոսքի մասերին պատկանող բառերից նրանց մեջ ի սկզբանե առկա եղանակավորության, կերպայնության երանգի զարգացմամբ և ամրակայմամբ: Դա, իհարկե, չի նշանակում, որ լեզուների հին շրջանում եղանակավորման իմաստ արտահայտող բառեր չկային: Հայերենի վերաբերմամբ այս պնդումը հաստատելու համար լեզվաբանը դիմում է գրաբարին և գրաբարյան մատենագրությանը՝ այնտեղից քաղելով եղանակավորող բառերի օրինակներ և ցույց տալով, որ դրանք արդի հայերենում էլ գործածվում են գրեթե նույն իմաստներով: Ձորօրինակ՝ «*Մի քէ քար տայցէ մմա... մի քէ* օձ տայցէ մմա», «*Գուգէ* երբէք յափշտակիցէ», «*Արդեօք* լուսից, *արդեօք* տեսից», «*Չտունն արդարեւ* ես աւերեսցի», «*Այդ այդպէս է անշուշտ*» եւ այլն: Մ. Ասատրյանը մեկ տասնյակից ավելի գրաբարյան եղանակավորող բառեր է մատնանշում, որ այսօր էլ չեն փոխել իրենց բնույթը և իմաստը: Այնուհետև նա ապացուցում է, որ եղանակավորողները տարբերվում են քերականական խոսքի մասերից և հավասարազոր ու հավասարաթիւ են նյութական իմաստ արտահայտող բառախմբերին, որովհետև դրանք դատողական վերաբերմունքի արտահայտիչներ են, այսինքն՝ լիարժեք բառեր են և խոսքի մեջ հաճախ հանդես են գալիս որպես ամբողջական նախադասության փոխարինիչներ՝

«Դու այսօր նրան տեսնելո՞ւ ես: - Իհարկե»¹⁵: Հաջորդ կարևոր խնդիրը, որ փորձում է հստակեցնել քերականը, եղանակավորող բառերի՝ նախադասության անդամ լինել, չլինելու հարցն է: Մ. Ասատրյանը առավել ճիշտ է համարում Մ. Աբեղյանի և Վ. Առաքելյանի հիմնավոր տեսակետը, ըստ որի՝ եղանակավորողները նախադասության անդամ են դառնում՝ եղանակի, վերաբերմունքի կամ հավաստիության պարագաներ: Ասատրյանի քերականական համակարգում ճշգրտվում են նաև եղանակավորող բառերի սահմանները՝ եղանակավորողների շարքից հեռացվում են այն ստորոգումային կապակցությունները կամ բառերը, որոնք ոճական տարբեր երանգավորումներ կարող են արտահայտել, օրինակ՝ *ճիշտ է, ճշմարիտ է, միևնույնն է, արի, տես, բեր, եկ, խնդրեմ, ներեցեք, նախ, առաջին, երկրորդ, երրորդ* գուգադրվող ձևերը: Այս հարցում նա հակադրվում է Ս. Աբրահամյանին և Վ. Ավագյանին, որոնք հույժ ընդլայնել էին եղանակավորողների շրջանակները:

Ճայնարկությունների բնութագրման ընթացքում Մ. Ասատրյանը յուրօրինակ սահմանում է բերում դրանց համար՝ նշելով, որ լեզվաբաններից մեկը, որոշ չափազանցում կատարելով, բայց իրավացիորեն ճայնարկությունները համարում է բառերի ժխտում. «...մենք բառերը գործածում ենք այն ժամանակ, երբ ուզում ենք խոսել, իսկ ճայնարկությունները գործածում ենք այն ժամանակ, երբ չենք ուզում խոսել»¹⁶: Ճայնարկությունները, փաստորեն, մարդու ոչ թե դատողական, այլ զգացմունքային աշխարհի արտահայտիչներն են, որոնք նախադասության անդամ չեն դառնում:

Հավարտ ընդգծենք, որ Մ. Ասատրյանի քերականական համակարգը կաշկանդված չէ ավանդական քերականության կադապարներով. նա նորարար լեզվաբան էր: Մակբայը, կապը, շաղկապը, եղանակավորողները և ճայնարկությունը Մ. Ասատրյանի կողմից հստակ բնութագրվում են ոչ միայն ձևաբանական, այլև շարահյուսական մակարդակներում. նրանց հարում են արդի հայերենի ածականը, թվականը՝ որպես չթեքվող խոսքի մասեր՝ ստեղծելով խոսք կազմող միավորներների կեն-

¹⁵ Հմմտ. նշվ. աշխ., էջ 321-323:

¹⁶ Նշվ. աշխ., էջ 353:

դանի համակարգ, որտեղ քարացած պատճեններ չկան և չեն կարող լինել:

Բանալի բառեր – *Մ. Ասատրյան, քննական քերականություն, չբերվող ինքնի մասեր, ածական, բվական, մակբայ, կապ, շաղկապ, եղանակավորող բառեր, չալնարկություն, նորարական մոդեղում, քաղմահարկանիշ դաաաաարգում:*

НАРИНЕ ДИЛБАРЯН – Концепция неизменяемых частей речи в грамматической системе М. Асатрян. – XX век стал периодом расцвета армянской лингвистики. Научное описание и исследование восточноармянского литературного языка, его диалектов М. Асатрян поднял на новый уровень, используя современные лингвистические методы. Он был автором как теоретических монографий, так и практических учебников. Созданная им грамматическая система армянского языка целостная: морфология, синтаксис, диалектология. В этой системе части речи играют важную роль, особенно неизменяемые части речи – наречие, связочные слова, союзы, модальные слова. Морфологическая, синтаксическая многоплановая характеристика всех частей речи показала, что не существует четкой границы между изменяемыми и неизменяемыми частями речи. В современном армянском языке только глаголы и существительные морфологически меняются, а прилагательные, числительные, как и наречия выражают неизменное качество, связочные слова, союзы, модальные слова, междометия – грамматические и эмоциональные отношения. В живой речи эти грамматические единицы взаимосвязаны и часто заменяют друг друга.

Ключевые слова: *М. Асатрян, научная грамматика, неизменяемые части речи, прилагательные, числительные, наречия, связочные слова, союзы, модальные слова, междометия, новаторский, комплексный подход, многоплановая классификация.*

NARINE DILBARYAN – The concept of uninflected parts of speech in M. Asatryan's grammatical system. - The first half of the 20th Century saw the heyday of the Armenian linguistics. The scientific description and study of the Eastern Armenian literary language and its dialects were raised to a new level by M. Asatryan, using modern linguistic methods. He was the author of both theoretical monographs and practical tutorials. He created a concise scientific grammatical system of the Armenian language: morphology, syntax, dialectology. In this system, the parts of speech play an important role, especially the uninflected parts of speech –

adverbs, interjections, conjunctions, modal words. Morphological, syntactic multi-faceted classification of all the parts of speech showed that they are interconnected, between them there is no clear distinction. In everyday intercourse these grammatical units are interrelated and are often used interchangeably.

Keywords: *M. Asatryan, innovative grammar, uninflected parts of speech, adjectives, numerals, adverbs, conjunctions, modal words, interjections, integrated approach, multi-faceted classification.*

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

(ՎՊՀ)

ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՅԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ Գ. ԹՐԱԿԱՅՈՒ «ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՈՒԵՍ»-Ի ՄԵԿՆԻԶՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Թրակացու *Քերականութեան* քարգմանություններում՝ Դավթի, Անանուն Մեկնիչի և Մովսես Քերթողի «Մեկնութիւն քերականին» երկերում¹ հնչյունական, բառակազմական, ձևաբանական վերլուծություններին զուգահեռ ներկայացվում են նաև շարահյուսական դիտարկումներ, որոնք իրականում արտացոլում են հին հայերենի բառերի կապակցելիության հնարավորությունները:

Երեք մեկնություններն ունեն ընդհանրություններ և առանձնահատկություններ: Երեք հեղինակներն էլ քերականությունը համարում են արվեստ՝ այն զուգադրելով ինչպես գրականությանը (Դավթի, Անանուն Մեկնիչ), այնպես էլ փիլիսոփայությանը (Մովսես Քերթող):

Դավթի քերականը բառերի կապակցելիությունը համեմատում է բնության բաղադրիչների՝ հոգու և մարմնի համադրության հետ, որոնք, առանձին գոյություն ունենալով, «հաւասարութեամբ» կապակցվում են միմյանց՝ «....միմն՝ մտածաւրէն առաջնորդելով, եւ միւսն՝ զոնյն գործովք կատարելով»:

Բառակապակցության յուրաքանչյուր բաղադրիչ կարող է փոխարինվել հարցի՝ կապակցվելով հայտնի բառի հետ: Այս դեպքում երկու բառերից գերադաս է ճանաչվում այն, որը հիմնականում հայտնի է: Արդի լեզվաբանության մեջ բառերի կապակցելիության մասին դիտարկումներ է կատարել Գ. Ջահուկյանը՝ տարբերակելով արժույթի, դասան-

¹ Մատենագիրք Հայոց, 7-րդ դար, հ. 5, էջ 1167-1238:

շության և ընտրութայնության տեսակները: Նշվածներից դասանշությունը վերաբերում է «ենթակա+ստորոգյալ» կապակցությանը, որը բառակապակցության մակարդակում հարաբերվում է «որոշիչ+որոշյալ» գույ-գին:

Դավիթը «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ նախատեսության գերադաս անդամների կապակցելիության մասին դիտարկումները կատարում է հարցուպատասխանի եղանակով. **մարդ** բառի որոշչառությամբ բացահայտվում է նրա էությունը. «զի՞նչ է մարդ», հարցնում է նա և պատասխանում բառակապակցությամբ. «կենդանի բանաւոր մահկանացու», որից պարզ է դառնում **մարդ** հասկացության էությունը. «Կենդանեաւն՝ ընդ բնաւ կենդանիս դասեցաւ, բանականաւն՝ ընդ վերին զարութիւնսն և մահկանացոաւն անջատեցաւ ի վերնոցն»:

Բառերի կապակցելիության եղանակը Դավիթը անվանում է «բաղկացութիւն»՝ «իբր թէ ի բազմաց միացեալ» և այն համեմատում է «Ոստայնանգութեան» առակի հետ, որտեղ բայերը կիրառվում են՝ ըստ անվան նշանակության:

Բառերի կապակցելիությունից քերականը հանգում է «առասութիւն» գաղափարին, որը բացահայտում է բաղադրյալ բառի կազմավորման աստիճանականությունը՝ ըստ գործողի և գործողության փոխհարաբերության, ինչպես՝ «Եւ **հեղինեալդ** ասելով զդա որպէս **զհեղանկեալ** բառիցն համեմատ իմն շարագրաց, զորս ի մանրամասն գործոյն իւրեանց ասացին **հեղինակս**, իսկ զքերդդս՝ **հեծեալս**: Քաղելով ի յինքն եւ անդամս գործելով, որով եւ **ինքնակապար** երելի եւ զհանգամանս մտացն եւ զփոփոխմունս գլխոցն ըստ **պրամախոսութեան** բառականաբար յայտնիցէ,եւ կամ նոյն **ինքն** բառիս **ինքնըստինքեան** յանգեալ»:

Բառերի ստորադասական հարաբերությունների զուգորդումներով կազմվում է խոսքը ճիշտ այնպես, ինչպես բնության երևույթները. «Եւ նախագաղափար իմանալի է նախարինակ իմն, յորմէ ածանցին, իբր յերկրէ՝ բոյսք եւ կենդանիք եւ ըստ մմին, եւ բան՝ ի մարդոյ եւ բերք՝ ի սերմանց պտղոց տնկոց»: Եվ ինչպես պտուղներից ճանաչվում են սերմերը, այնպես էլ «....բայ զարեւն սեռի անհողով որոշի յանոանէ»:

Բայի և անվան համադրելիությունը թե՛ Դավթի, թե՛ Մովսես Բերթողի, թե՛ Անանուն Մեկնիչ Քերականի երկերում ամփոփվում է «ընդունե-

լութին» եզրույթով, որը համապատասխանում է ժամանակակից «դեր-բայ» բառին: Դավիթը սահմանում է «ինքն ըստ ինքեան անունդ յայտնեմ», իսկ Անանունը՝ «Ընդունելութիւն յանուանէ եւ ի բայէ ունի զկարն էութիւն»՝ առանց դիմային նշանակության: Հատկանիշները վերագրվում են առարկաներին «ըստ գործականին», իսկ դրանց հետ կապված առարկաները՝ «ընդ ազդեցութեամբ»:

Մովսէս Բերթողը, անդրադառնալով բայերի «գուգանունապէս կոչմանը»՝ բազմադասությանը, նկատում է, որ մարդը և կենդանին կարող են «համախոհ» լինել և մույն բային կապակցվել այնպես, ինչպես «երկնքի աստղերը և ախտական նյութերը» միմյանցից տարբերվում և միմյանց են նմանվում ըստ ստորոգառության:

Խոսքի կապակցելիության մասին դիտարկումները Մովսէս Բերթողը շարունակում է «Ի Հաւատոյ ճառէն Մովսէսի Հայոց քերթողահարն» երկում: Մարդկային և աստվածային բնությունները բնութագրող միավորները միավորվում են «առ Աստուածն, ըստ որի էլ յարմարեցաւ շարժութիւն կամաց»: Խոսքը համեմատվում է Քրիստոսի խաչելության հետ. ինչպես անշնչացած մարմինը կենդանի էր խաչի վրա «Աստուածութեանն միաւորութեամբ», այնպես էլ անկենդան բանը կենդանություն՝ իմաստ է ստանում՝ «միացեալ ըստ նմին բանի»: Կյանքում առկա հակադրամիասնությունները իրենց արտահայտությունն են գտնում խոսքում. «Քանզի մեռաւ Աստուած եւ մահուամբն զմահ մեռոյց. վասնզի մեռաւ անմահականն՝ տակաւին անմահ ի մեռելութեան մնալով»:

Անանուն Մեկնիչը, «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ քերականության «մասունք» համարելով «գրուցատրութիւն»-ը, «բացատրութիւն»-ը, «ստուգաբանութիւն»-ը, «համեմատութիւն»-ը, «արոեստատր բանի տեսութիւն»-ը և «դատումն քերդածաց»-ը, առանձին գլուխներով ներկայացնում է գրավոր խոսքի առանձնահատկությունները՝ հիմնականում գրային նշանները և դրանց կիրառությունը: Այնուհետև սահմանելով բառը՝ որպես «բան»-ի բաղադրիչ՝ անդրադառնում է «բան» գաղափարին՝ իբրև «բառի շարադրութիւն»՝ կազմված աստիճանական զարգացմամբ. այսպես «Դաւիթ» գոյականը կարող է ենթադրել այնպիսի գործողություն, որը կարող է կատարել անձը՝ տվյալ դեպքում «շարադրեաց», վերջինս էլ իր հերթին ենթադրում է մեկ այլ առարկա՝

«պատերազմ», և այս ամբողջ կապակցությունը միասին պահանջում են մեկ այլ հանգամանք՝ «զմարացն և զհայոց»:

Փոքրիկ այս արտահայտության մեջ բանը ներկայացվում է որպես «հետեւակ բառի շարադրութեանց», որտեղ «ցան եւ ցիր» եկած բառերը կապակցվում են որոշակի իմաստային և քերականական առանձնահատկություններով:

«Բան» և «բառ» հասկացությունների բացահայտումից հետո Անանունը ներկայացնում է «անուն» և «բայ» հասկացությունների քերականական և իմաստային առանձնահատկությունները և առնչությունները, որոնք խոսքում ամփոփվում են «ընդունելութիւն» հասկացության շրջանակներում. վերջինս էլ համարվում է խոսքի էությունը:

Այսպիսով՝ 5-րդ դարի մեկնիչ-քերականները իրենց աշխատասիրություններում կարևորում էին խոսքի կապակցելիության մասին դիտարկումները աստվածային էության բացահայտման նպատակով և խոսքի ուսուցումը զուգորդում էին «Աստուածաշունչ» մատյանի ընթերցանությանը:

Բանալի բառեր – *կապակցելիություն, Դիոնիսիոս Թրակացու «Մրոհար քերականի» երկը, հին հայերեն, Դավիթ Քերական, Մովսես Քերթոզ, Անանուն Մեկնիչ:*

ЛИЛИТ ПЕТРОСЯН – Замечания по поводу сочетаемости слов в работах комментаторов «Искусства грамматики» Дионисия Фракийского. – Синтаксические наблюдения, представленные в работах толкователей «Искусства грамматики» Дионисия Фракийского, в частности, в трудах Давида Грамматика, Анонимного Толкователя и в труде «Толкование грамматики» Мовсеса Кертюга, отражают особенности сочетаемости слов в древнеармянском языке. Все три комментария имеют сходства и расхождения. Все три автора считают грамматику искусством, сравнивая ее как с литературой (Давид Грамматик, Анонимный Толкователь), так и с философией (Мовсес Кертюг).

Давид Грамматик сравнивает сочетаемость слов с природными компонентами, сопоставляя, в частности, с душой и телом, которые, имея различную сущность, равномерно сочетаются друг с другом. Мовсес Кертюг, обращаясь к категориальному разнообразию глаголов, замечает, что человек и животное

могут сочетаться с одним и тем же глаголом, так же как звезды на небе и недра земные сближаются и расходятся друг с другом по принципу соподчиненности.

Анонимный Толкователь сочетаемость глагола и имени считает сутью слов, замечая, что в роли имени могут выступать также причастные формы. Ассоциативность, как особенность живого языка, присуща речи с точки зрения последовательности сочетаемых слов.

Ключевые слова: *сочетаемость, «Искусства грамматики» Дионисия Фракийского, древнеармянский язык, Давид Грамматик, Мовсес Кертogh, Анонимный Толкователь.*

LILIT PETROSYAN - Comments on the Combinability of Words in the Works of the Interpreters of " The Art of Grammar " by Dionysius Thrax. - Syntactic observations represented in the works of the interpreters of "The Art of Grammar" by Dionysius Thrax, in particular, Davit the Grammarian, Anonymous Interpreter and Movses Kertogh's, reflect the features of the words combinability in the Old Armenian language. Both similarities and differences can be observed in all three interpretations. All the three authors compare the grammar with literature (Davit the Grammarian, Anonymous Interpreter) and philosophy (Movses Kertogh).

Davit the Grammarian compares the combinability of words with natural components, specifically collating the combination of the soul and body, that combine equally.

Movses Kertogh, referring to the diversity of the verb categories, notes that people and animals can combine with the same verb, as well as stars in the sky and the earth entrails converge and diverge based on the principle of subordination.

Anonymous Interpreter considers the compatibility of the verb and name(noun) the essence of the words, noting that the role of the name can be also performed by the forms of participles. Associativity, as a feature of a living language, is inherent to speech from the prospective of the sequence of words.

Keywords: *combinability, "The Art of Grammar" by Dionysius Thrax, Old Armenian language, Davit the Grammarian, Movses Kertogh, Anonymous Interpreter.*

ՆՈՐԱՅՐ ՊՈԳՈՍՅԱՆ

(ԵՊՀ)

norayr.poghosyan@ysu.am

**ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ (ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ՏԱՐՐԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՄԲ)
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ 17-18-ՐԴ ԴԴ. ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ**

Հայերենի վաղաշխարհաբարյան շրջանի բազմաթիվ աղբյուրներում նկատելի է լեզվական մի էական առանձնահատկություն. նույն երկում, հաճախ միևնույն նախադասության մեջ կողք կողքի գործածվում են արևմտահայ և արևելահայ բարբառների իրողություններ, փաստեր: Հայերենագիտության մեջ այս երևույթը նկատել են լեզվաբանները, կան համառոտ անդրադարձներ: Մենք փորձել ենք նույն իրողության մասին խոսել՝ նոր բնագրեր ու նոր փաստեր բնության մեջ ներառելով:

Նախ նշենք, որ ներկայացված թեմայի հետ որոշակի աղերս ունի Մանվել Ասատրյանի մի հոդվածը՝ «Հայոց գրական լեզվի միասնության խնդրի մասին» վերնագրով, որ գիտական ու տեղ-տեղ նաև հրապարակախոսական անդրադարձ է մեր լեզվի երկու ճյուղերի միավորման՝ 1990-ական թթ. սկզբներին արժարժվող տեսակետներին: Հակադրվելով Մ. Աբեղյանին՝ Մ. Ասատրյանն ընդունում է, որ «մեր երկու գրական լեզուների ստեղծումը ոչ թե անհատների կամքի, այլ հայ ազգի քաղաքական դրության և հայերենի զարգացման ընթացքից բխող պատմական անխուսափելի անհրաժեշտություն էր»¹: Եվ որպես եզրակացություն ընդունում է, որ մեր լեզվի միասնության խնդիրը սոսկ լեզվական հարց չէ, այլ միաժամանակ արտալեզվական հարց է և կարող է լուծվել միայն քաղաքական փոփոխություններով կամ բեկումներով:

¹ **Ասատրյան Մ.**, Հայոց գրական լեզվի միասնության խնդրի մասին, ԲԵՀ, 1991, ք. 3, էջ 98-99:

Այս առումով պետք է ասել, որ լեզվաբանական գիտակարգերը կարիք ունեն մատենագիտական ուսումնասիրությունների, այդ թվում՝ առանձին հեղինակների գրական-մատենագիտական ժառանգությունը կազմելու և հրապարակելու առումով: Բազմաթիվ ուշագրավ հոդվածներ կամ հրապարակումներ են սփռված այս ու այն պարբերականներում, որոնց տվյալները հաճախ չեն ներառվում մերօրյա ուսումնասիրությունների մեջ:

* * *

Ներկա հրապարակումն, այսպիսով, մի փորձ է՝ հայերենագիտության ձեռքբերումների ներկայիս աստիճանի վրա վերստին անդրադարձ կատարելու նոր հայերենի կամ աշխարհաբարի ձևավորման ակունքներին: Վաղ աշխարհաբար ասելով՝ նկատի ունենք Գ. Ջահուկյանի՝ հայերենի շրջանաբաժանման փուլը²:

Միջին հայերենի «աշխարհաբարացման ենթաշրջանում» (XV-XVI դարեր) մեծապես աճում է գրական լեզվի տարբերակների անմիօրինակությունը, հատկապես հոլովական և բայական համակարգերում, բազմաճյուղում են բարբառայնությունները, մեծ չափեր են ընդունում թյուրբայարսկական նոր փոխառությունները: Ընդհանուր այսպիսի գծերով ներկայացվող «ուշ միջին հայերենը», սահուն անցնելով մեր լեզվի մի նոր որակի (սահուն ենք ասում, քանի որ լեզվում կտրուկ փոփոխություններ չեն լինում, և ուրեմն նոր փուլերը ի հայտ են գալիս որպես երկարաժամկետ լեզվական փոփոխությունների նոր որակական արտացոլում), նոր շրջանում՝ 17-րդ դարի սկզբին, *միասնականացնող որոշակի միջոցումներ* է ստանում, ինչպես նկատում է Գ. Ջահուկյանը:

Դա առաջին գործոնն է դառնում մի կողմից ընդհանուր լեզվի կազմավորման, մյուս կողմից գրաբարի՝ որպես գրական լեզվի գործառույթը սահմանափակելու համար:

Հայերենագիտության մեջ այս իրողությունը նկատվել է, ցույց է տրվել կոնկրետ բնագրային քննություններով: Ռ. Իշխանյանը, օրինակ,

² Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 50-64:

միասնականացող միտումները նկատի ունենալով, գործածում է պարզապես «միասնական նոր գրական հայերեն» տերմինն արդեն 17-րդ դարի համար՝ գրելով. «Գրքերի մեջ գոյացավ 17-րդ դարի միասնական նոր գրական հայերենը... Միասնական այն իմաստով, որ չունի արևելահայերեն-արևմտահայերեն բաժանումը, միավորում է նրանց առանձնահատուկ տարրերը»³:

Ռ. Իշխանյանն այդ միասնականությունը ցույց է տալիս՝ քննության հիմքում ընդունելով լեզվական մի քանի իրողություններ, այդ թվում՝ ա) արևելահայ բարբառներին հատուկ ներգոյականի (քաղաքում, ամսումն) առկայություն, բ) արևմտյան բարբառներին (և միջին հայերենին) հարազատ՝ բայի համադրական կամ վերլուծական ներկայի կազմություն («Այժմ ես կու աղաղակեմ», «Կուրախանամ և կցնծամ»), գ) արևելահայ բարբառներին հատուկ հոգնակի սեռական-տրական հոլովի *ի*-ով ձև (ժառանգներին, սարերի), դ) առավելապես արևմտյան բարբառներին հատուկ *է*-ով բացառական (խորհուրդէն, պատուհասէ) և այլն: Այլ լեզվաբաններ բերում են այլ հատկանիշներ:

17-18-րդ դարերի լեզվական «միասնականությունը» կամ արևմտահայ-արևելահայ լեզվական ընդհանրությունը ցույց տալու համար մենք առաջնորդվում ենք քննության մույն սկզբունքով, սակայն՝ ընդունելով այլ հատկանիշներ⁴:

ա) Ներկայի և անցյալ անկատարի մասնիկավոր կամ դերբայական կազմություն (կու գրեմ - գրում եմ),

բ) վաղակատարի -*ել* կամ -*եր* վերջավորության առկայություն (գրել - գրեր),

գ) անորոշ դերանվան մախադաս կամ հետադաս կիրառություն (մի(ն) գիրք - գիրք մի(ը): Առհասարակ հատկանիշների ընտրությունը պայմանական բնույթ ունի. այդ մասին ակնարկում է Գ. Ջահուկյանը հայերենի բարբառների բազմահատկանիշ իր քննությունը կատարելիս, ուր ընտրում է 100 հատկանիշ: Մեր թվարկած հատկանիշները ունեն

³ Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Եր., 1978, էջ 21:

⁴ Լեզվական հատկանիշների նշված քանակի ընտրությունը կատարել ենք ներկա հրապարակման համար, իսկ քննությունը տանում ենք հատկանիշների առավել լայն ընդգրկմամբ:

սահմանային բնույթ, և վստահ ենք՝ ընդհանուր առմամբ կարող են արտացոլել կոնկրետ 17-րդ դարի բնագրերի «միասնական» կամ ճյուղերի «երկփեղկված» լինելը:

Նշենք մաս, որ ի հավելումն «Արիեստ համարողության» և մի քանի այլ երկերի, որոնց մասին լեզվաբանական գրականության մեջ անդրադարձներ կան, քննության մեջ ենք ներառել տարբեր ժանրերի մի շարք բնագրեր, այդ թվում՝ Եղիա Կարնեցու դիվանական գրությունները, Ջաքարիա Ագուլեցու օրագրությունը, Հովհաննես Թութունջիի ուղեգրությունը և այլն: Բնագրերի ընտրությունն էլ պատահականության սկզբունքով չի կատարվել. դրանք ա) նախ ունեն ընդգծված աշխարհաբար բնույթ (առավել կամ պակաս չափով), բ) ստեղծվել են թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ միջավայրերում, գ) ժանրից բխում է տվյալ ստեղծագործության լեզուն, և նամակներում, օրագրություններում, ի տարբերություն պաշտոնական կամ գիտական գրությունների, բնականաբար առավել չափով է դրսևորվում խոսակցական լեզուն, դ) հեղինակները սերում են արևմտահայ և արևելահայ տարբեր միջավայրերից, այսինքն՝ բնագրերը ապահովում են համեմատաբար լայն ընդգրկում ժամանակի հայախոս տարածքների առումով, որոնք ձգվում էին Լեհաստանից մինչև Պարսկաստան ու Հնդկաստան: Տեղին է հիշատակել 17-րդ դարում հայերի սփռված լինելու մասին Սիմեոն Լեհացու մի բնորոշումը. «Ուր եւ ինչ տեղ գնայաք, նա հայ գտանէաք, զի տարածեալ եւ սփռեալ էին ընդ երեսս երկրի որպէս գփռչի»⁵:

Ստորև բերվող բնագրային օրինակներում արտացոլված է մեր ընտրած հատկանիշների, այդ թվում՝ աշխարհաբարյան և գրաբարյան որոշ ձևերի գուգահեռ ու անմիօրինակ գործածությունը:

Հովհաննես Թութունջի⁶ ծնունդով Վանից, երկար ժամանակ գործել է Էջմիածնում, ապա եղել է Կ.Պոլսի պատրիարք, այսինքն՝ գործել է արևելահայ և արևմտահայ միջավայրերում⁶:

⁵ Սիմեոն Դալիր Լեհացույ Ռիդեգրութիւն, հրատ. Հ. Ներսէս Վ. Ակիմեան, Վիեննա, 1936, էջ 41:

⁶ Հովհաննես Թութունջիի ուղեգրությունը տե՛ս **Անապան Հ.**, 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961, էջ 301-319:

ա) Ներկա և անկատար – կու պահեն, կու գնայ, կու մնայ, կու իջան, կելան, երկում գուգահեռաբար գործածվել են ներկայի գրաբարյան ձևեր – ոչ ըմպեն, ելան և այլն:

բ) Վաղակատար – հանդիպում է երկու բայաձևերում՝ հասեր է ի ծովն, եկեր է ի Ալիկօռնայ:

գ) Անորոշ դերանուն – գերազանցապես նախադաս կիրառություն ունի՝ մի կողմն, մի հաւատ, մի օրէնք և այլն:

Հ. Թութունջիի երկում *-ու-*ով անկատար, *մի-*ի հետադաս կիրառություն և *-ել-*ով վաղակատար չեն հանդիպում:

Եղիա Մուղեշյան⁷ ծնունդով Կարինից, հաճախ այդպես էլ գրվում է՝ Եղիա Մուշեղյան Կարնեցի, Կարինից բացի գործել է Պարսկաստանում և ռուսահայ միջավայրերում⁷:

ա) Ներկա և անկատար – կու ծախես, կու մխիթարես, գու գան, կառնում, գուգես: Արևմտահայերենին հատուկ այս ձևերի կողքին հանդիպում ենք նաև՝ «ֆիքիր չեմ անում», «անց կացնում է», «ամէն օր աղէն հարցնում է», «քանի՞ հատ ուզում ես», «գրում է (յ)ի» և այլն:

բ) Վաղակատար – առերես, ինչու համար չեմ եկեր, գրած էին, գրել ես, ծանուցեալ է (յ)ի, անցել գնացել են, չի գնացել, Գասպարն եկել է: Նկատելի է, որ գուգահեռաբար կիրառվում են *-եալ*, *-ել*, *-եր*, *-ած* վերջավորություններով դերբայական ձևեր:

գ) Անորոշ դերանուն – ունի նախադաս կիրառություն՝ մին թուման, մին էուհալ չի կայ:

Թե՛ Եղիա Մուշեղյանի, թե՛ այլոց երկերում հանդիպում են քերականական ուշագրավ փաստեր, որոնց միջոցով հնարավոր է բացատրել այս կամ այն ձևային ծագումն ու տարածումը: Այսպես՝ Եղիա Մուշեղյանի մոտ հանդիպում ենք «ԺԲ ապասի *գուգեն եղել*» (էջ 13) կառույցը, այսինքն՝ արևմտահայերենի հայտնի կազմության միջանկյալ և անցումային մի ձևը: Անցումային նման այլ ձևեր նույնպես շատ ենք հանդիպում աղբյուրներում, ահա մեր կարծիքով խիստ ուշագրավ ևս մեկ կիրառություն. «Ի թոականութեանս մերում ՌԾԵ սով սաստիկ է եղեար, որ

⁷ Եղիա Կարնեցու դիվանը, կազմեցին Ա. Աբրահամյան և Ռ. Աբրահամյան, Եր., 1968:

մարդ զմարդ, շուն եւ կատու կերեալ են»⁸, նախադասության մեջ *եղհար* բայաձևը միջանկյալ դիրք է գրավում մի կողմից գրաբարի անցյալ դերբայի (եղեալ), մյուս կողմից՝ արևմտահայերենի վաղակատար դերբայի (եղեր) կազմությունների միջև:

Եղիա Մուշեղյանի լեզվի առիթով մեկ այլ կարևոր իրողություն մատնանշենք: Եթե միջին հայերենում *կու* մասնիկը, որպես եղանակիչ մասնիկ, սկսել էր ներկա ժամանակաձևեր կազմել, ապա վաղ աշխարհաբարյան շրջանի շատ երկերում արդեն *կու*-ն հանդիպում է միաժամանակ ապառնի բայաձևերի կիրառությամբ: Սա հստակ կարելի է համարել «միասնական աշխարհաբարի» մեկ այլ կարևոր առանձնահատկությունը. որքան էլ որ բնագրերը ջրբաժանվում են ընդհանուր առմամբ արևմտահայ և արևելահայ տարատեսակների, բայց *կու*-ի հարցում հաճախ դրսևորվում է միասնականություն. այն միևնույն տեքստում, հաճախ միևնույն նախադասության մեջ կարող է արտահայտել և՛ ներկայի, և՛ ապառնիի իմաստներ, և Եղիա Մուշեղյանի դիվանը դրա լավագույն ցուցանիշն է: Շատ ու շատ ներկայի բայաձևերի կողքին հանդիպում ենք նաև հստակ ապառնիի ձևեր՝ «Ո՞րն լաւ կու լինի», «Գրիգորին էլ փող կու տամ»: Իսկ հետևյալ նախադասությունը բացառիկ է երկու կազմությունները համատեղ գործածելու առումով. «Եթէ իմ հալմ հարցանես, ողջ և առողջ անք, և տեղս նստում եմ, աղէմ քո հրամանոցն շատ բարև կանէ» (27):

Զաքարիա Ագուլեցի, Ագուլեցի վաճառականի օրագրությունը⁹:

ա) Ներկա և անկատար – կու հարցնելիմ, կու գրեմ, վեր կունին, կու գինք, մեր կու մտաներ, առանց մասնիկի ներկայի կազմություն՝ պտուտ գայ և այլն:

բ) Վաղակատար – ծակել են, մտել են, եղպայր Սիմոն է աղարկե, շատ ապրանք տարել, գրաբարյան ձևով՝ չէր տեսեալ, բարբառային ձևեր՝ աղարկել ան Սպահան, եկել ան, դու եկել աս Երևան:

գ) Անորոշ դերանուն – ազգ մի կայ, մի մարդ եկաւ, այսինքն՝ նկատելի են նախադաս և հետադաս գործածություններ:

⁸ Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դ.), հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Եր., 1951, էջ 454:

⁹ Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Եր., 1938:

Կարապետ Եզյան, արցախահայերի մամակները ռուսական արքունիքին¹⁰: Դրանք գրվել են հիմնականում բարբառախառն աշխարհաբարով, որից թարգմանվել են կանոնավոր ռուսերենի, այսինքն՝ հայերեն բնագրերն ընդամենը թարգմանելու համար են գրվել:

ա) Ներկա և անկատար – կու մատուցանեմք, կու պաղատիմք, կու ի հետ մեկտեղ տարբեր էջերին առատապես հանդիպում են ներկայի այլ մասնիկներ՝ *կո* լցուցանե, ճար *կոյ* լինի, ողորմութեամբ *կույ* պախեն, բանին *կույ* կենան, *կի* լինիմք և այլն:

Թեև Ղարաբաղի մեզ հայտնի բարբառը ՌԻՄ ճյուղի է, սակայն այս տեքստերում ում-ով բայաձևերը սպասված ակտիվությունը չունեն՝ մեք ենք պահում և զաթում, չեն գիտում, ինձ հետ բերում են և այլն, որոնք կարծես զիջում են կու-ով ձևերին: Տեղ-տեղ հանդիպում ենք մաս բարբառին միտված բայաձևեր՝ կոտորում ան: Չնայած առկա են նույն մասնիկով ներգոյականի կազմություններ՝ միջումն, առաջի գրումն, երկրումն:

բ) Վաղակատար – ծանուցեր ենք, ընդուներ է, ձգեր ես, որոնց գու-գահեռ գործածված ենք տեսնում մաս՝ եկել տեսել են, եկեալ էր և այլն:

գ) Անորոշ դերանուն – մի խորհուրդ, մի տէր և այլն:

Նամակներում շատ են այնպիսի բայաձևերը, որոնց կազմում մեկ-տեղ ներկայացված են այս կամ այն ժամանակաձևի կազմություններ, ինչպես՝ «անձն առեր էր և կու աշխատի վասն մեր» (18), «տարակուսել ենք և կու դողանք» (18), «Չարչարանք է քաշեր, որ մենք ակներև տեսեալ ենք» (19), «թե գալու էք՝ բարի, ահա և մեք սպասեմք» (434), մասնացեր ենք, գրեր էաք, ծանուցեր ենք և այլն:

Եվս մեկ իրողություն: Առնվազն 17-րդ դարում հանդիպում ենք այսօրվա աշխարհաբարին կամ խոսակցական տարբերակին նմանվող տեքստեր: Ահա մի քանի օրինակներ: Նամակներից – «հիմա չեն կարող գրել, երբ որ ոտն համբուրելու հասայ, ամենն արգ կանեն»¹¹, «Սուրբ Էջմիածնայ գիւղի անունն Վարդգէս է, Վաղարշ Արշակունին մեծացրել է և

¹⁰ Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом (документы), С. Петербург, 1898:

¹¹ Эзов Г. А., նշվ. աշխ., էջ 257:

իր անունն դրել»¹²: Արևմտահայերենի նախնական մի տարբերակ. «Քիչ մը առաջ աջ կողմն սեթ մի կայ, յորժամ մեծ մարդ մի գայ նէ, նորա ձին անդ կապեն»¹³:

Համառոտ այս քննությունը կարող է մի քանի դրույթ առանձնացնելու հնարավորություն տալ:

ա) 17-րդ դարում և 18-րդի սկզբում ստեղծված մի շարք երկերում դեռևս արմատացած չենք գտնում մեր լեզվի երկու ճյուղերն իրենց ուրույն օրինաչափություններով. լեզվական մի շարք հատկանիշներ միասնական գործածություն ունեն արևմտահայ և արևելահայ միջավայրերում ստեղծված երկերում: Բնական է ենթադրել, որ այդ առանձնահատկությունը գործում էր ոչ միայն գրավոր խոսքում, այլ ժամանակի հայախոս հանրության որոշակի շրջանակներում:

բ) Ի տարբերություն գուտ բարբառով գրված բնագրերի՝ միասնականություն դրսևորող տեքստերն արտացոլում են քաղաքացիական, միջբարբառային հաղորդակցական խոսակցական տարբերակները: Իսկ կախված նրանից, թե լեզվական ինչ կենտրոնում են դրանք ստեղծվել (լեզվական կենտրոնների մասին խոսելու առիթ ունեցել ենք՝ Ջուղայի, Կ.Պոլսի, Լեհաստանի, Ղրիմի, Արարատյան և այլն¹⁴), ըստ այդմ՝ գերակշռում են տեղի խոսվածքի տարրերը, մեր ընտրած հեղինակների դեպքում՝ Ջուղայի, Վարաբաղի, Կարմո և այլն:

գ) Միասնական լինելու հարցում որոշակի դեր է խաղացել նաև հեղինակի ծննդավայրն ու խոսվածքը. անկախ այլևայլ հանգամանքներից՝ հեղինակներն ընդհանուր առմամբ փորձում են իրենց երկում գործածել իրենց մայրենի խոսվածքի՝ աշխարհաբարյան տարրեր, սակայն կաշկանդված լինելով գործող լեզվական օրինաչափություններով (ընդունված նորմայով)՝ զուգահեռաբար գործածում են նաև համընդհանուր

¹² Պողոսյան Ն., Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակագրություններ, Եր., 2012, էջ 14:

¹³ Ջուար Քահանայ, Ուղեգրություն, «Բազմավեպ», 1867, ք. 3, էջ 180:

¹⁴ Տե՛ս Պողոսյան Ն., Աշխարհաբարի ձևավորման հարցում հայկական գաղթավայրերի ունեցած դերը, Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2015, էջ 279-290:

տարածում գտած իրողություններ, որից և ստեղծագործությունները ստանում են թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ լեզվական փաստեր:

դ) Արևմտահայ և արևելահայ մշակութային, կրթական կենտրոնները մի փոքր ավելի ուշ սկսեցին մեկուսի զարգանալ, որը և խորացրեց միասնականության սահմանափակումը:

Այս ամենը հիմք է տալիս ասելու, որ 17-րդ դարում, իրոք, աշխարհաբարը, առնվազն նրա խոսակցական, քաղաքացիական տարբերակը դեռ երկփեղկված, ճյուղերի բաժանված չէր այսօրվա պատկերացմամբ: Երկփեղկումը կայացավ 18-րդ դարի կեսերից հետո: Մեր նոր լեզվի զարգացումն անվերադարձ ընթացավ երկփեղկումը խորացնելու ճանապարհով, որում մենք դեր ունեն արտալեզվական գործոնները:

«Միասնական» հայերենի այս լեզվավիճակը, ինչպես նկատում են մաս ալլ ուսումնասիրողներ, երկար կյանք չունեցավ: 18-րդ դարի սկզբներին վերջնականապես արմատացավ տասնամյակներ առաջ սկսած լեզվական ընթացքը. մի կողմից արևմտյան բարբառների, հատկապես Կ.Պոլսի բարբառի ազդեցությամբ աշխարհաբարը արևմտյան երանգ ստացավ, մյուս կողմից Արարատյան բարբառի (նախապես մասն` Նոր Ջուղայի) ազդեցությամբ արևելյան երանգ ձեռք բերեց»:

Բանալի բառեր – *վաղ աշխարհաբար, արևմտահայերեն, արևելահայերեն, աղբյուրներ, չհաքանական հարկանիշներ, միասնական լեզու:*

НОРАЙР ПОГОСЯН – Проявления единого новоармянского языка (с совместными элементами западно- и восточноармянских ветвей) в источниках XVII-XVIII веков. – Лингвисты отмечают, что во многих армянских источниках XVII и начала XVIII веков параллельно используются языковые элементы двух ветвей ашхарабара /новоармянского/ языка. Такие тексты принято характеризовать как “единые”.

Изучая некоторые произведения новых /ранее неисследованных/ авторов этого периода (Егия Мушегян, Закария Агулеци и др.), мы пришли к выводу, что на рубеже XVII-XVIII веков новоармянский язык еще не был разделен на ветви в современном понимании. Раскол состоялся с середины XVIII века.

В исследование включены образование и структура неопределённого местоимения, глаголов настоящего и прошедшего времени, чтобы наиболее целостно показать явление.

Исследование показывает, что данные элементы часто использовались объединенно в западно- и восточноармянских источниках. Автор предполагает, что эта особенность была характерна как для письменной, так и разговорной речи данного периода.

Ключевые слова: *ранний период новоармянского языка, западноармянский, восточноармянский, источники, морфологические особенности, единый язык.*

Norayr Poghosyan - The manifestations of common Armenian language (the joint use of elements of western Armenian and eastern Armenian branches) in the sources of the 17th -18th centuries. - Linguists have noticed that in many Armenian sources created in the 17th and the beginning of the 18th centuries parallel are used the two patterns of branches of ashkharabar language. Such sources are called 'common'.

After examining several new authors (Elias Musheghyan, Zacharias Aguletsi etc.) we came to the conclusion that in this period, especially in the 17th century ashkharabar language has not been divided into branches. The split took place in the mid-18th century.

For the demonstration, the investigation included indefinite pronoun structures: present and past. The investigation shows that these features are often used unites in western and eastern Armenian sources. It is natural to assume that this feature was not active only in written speech but also in spoken versions of that time.

Keywords: *Early ashkharabar, Western Armenian, Eastern Armenian, sources, morphological features, common language.*

ՆԵԼԼԻ ԹԻՐԱՔՅԱՆ

(ԵՊՀ)

tirabyannelli@ysu.am

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕՏԱՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Փոխառությունների և օտարաբանությունների վերաբերյալ առկա են դրանք տարբեր տեսանկյուններից դիտարկող ու լուսաբանող հոդվածներ՝ նման կամ տարբեր մեկնաբանություններով: Լեզվական այդ իրողությունները բնական զարգացման արդյունք են և փոփոխվում են ժամանակների ու հանգամանքների համեմատ: Գիտատեխնիկական առաջընթացը, հասարակական ու մարդկային նոր հարաբերությունները, բնականաբար, իրենց հետ բերում են նոր իրողություններ ու ըմբռնումներ, որոնք ստանում են նոր անվանումներ: Ուստի օտարաբանությունների և փոխառությունների դիմելը նույնպես բնական անհրաժեշտություն է:

Մեր խնդիրն է ցույց տալ, թե փոխառություններն ու օտարաբանությունները ժամանակակից լրատվամիջոցներում ի՞նչ դրսևորումներ ունեն, քանի որ լեզվում կատարվող բոլոր փոփոխություններն առաջին հերթին արտացոլվում են մամուլում ու համացանցում և հաճախ դրանց միջոցով անցնում բառապաշար: Այսօրվա մամուլը լի է բազում փոխառություններով ու օտարաբանություններով, որոնց գործածության սահմանները ճշգրտման կարիք ունեն:

Հայտնի է, որ փոխառությունները լեզվի բառապաշարի հարստացման կարևորագույն աղբյուրներից են: Ակադ. Էդ. Աղայանի բնութագրմամբ՝ «Ժողովուրդների փոխառարձ շփումները, նրանց քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններն առաջ են բերում լեզվական ազդեցություններ ու փոխազդեցություններ, որոնք առաջին

հերքին և առավել շոշափելիորեն արտահայտվում են բառերի փոխառությամբ»¹:

Ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենում նոր բառերի առաջացումը հիմնականում տեղի է ունենում երկու ճանապարհով՝ արտաքին և ներքին: Արտաքին ուղին փոխառություններն են, իսկ ներքին ուղին՝ բառակերտման ներքին միջոցները՝ բառաբարդումն ու ածանցումը: Փոխառությունները հատուկ են բոլոր լեզուներին, կարող են կատարվել լեզվի զարգացման տարբեր շրջափուլերում: Հին և հնագույն փոխառություններից շատերը երկարատև գործածության հետևանքով արդեն չեն ընկալվում որպես փոխառյալ բառեր: Տարբերակվում են այդպիսի բառերի երկու տեսակ՝ փոխառություններ և օտարաբանություններ: Օտար լեզուներից վերցրած բառերը փոխառություններ են, քանի դեռ տվյալ լեզվի բառապաշարում նրանք չունեն իրենց համապատասխան ազգային համարժեք ձևերը, իսկ «երբ արդեն դրանց համարժեքները ստեղծվում են տվյալ լեզվի համապատասխան բառակազմական միջոցներով, նշված փոխառությունները դառնում են օտարաբանություններ»²:

Վերջին շրջանում առաջացավ մեր լեզուն անհարկի մուտք գործած օտար բառերից մաքրելու և դրանք հայերեն համարժեքներով փոխարինելու անհրաժեշտ միտում, որը, սակայն, միշտ չէ, որ կարող է արդարացվել: Այդ գործընթացն ունեցավ նաև իր սխալները. Երբեմն այնպիսի օտար բառեր, որ լիարժեք արտահայտում էին տվյալ երևույթի կամ հասկացության իմաստային բոլոր նրբերանգները, դուրս եկան գործածությունից և փոխարինվեցին հաճախ ոչ հարմար հայերեն բառերով: Օրինակ՝ **շփար - սպախակույտ, կոմպոզիտոր - երգահան, կոմսերվատորիա - երաժշտանոց, պրոֆեսիոնալ - արհեստավարժ, դիրիժոր - խմբավար, կինո - շարժանկար, պոլիկլինիկա - համաբուժարան** և այլն: Նկատելի է, որ մեծ մասամբ ռուսերենից փոխառված բառերն են ճիշտացվել:

¹ Ադայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 168:

² Տե՛ս Եգեկյան Լ., Ոճագիտություն, Եր., 2003, էջ 152:

Ռուսերենից ու եվրոպական լեզուներից մամուլում հայտնվում են նոր փոխառություններ, որոնք կապված են հասարակական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների հետ: Այսպես՝ մեր օրերում ամենից շատ գործածվող փոխառություններից են հաղորդակցության նորագույն միջոցներին և համակարգչային տեխնիկային առնչվող **ինսերնետ** և **կոմյույտեր** բառերը: Սրանք ունեն իրենց համարժեք հայերեն ձևերը՝ **համացանց** և **համակարգիչ**, որոնք արդեն մտել են ակտիվ գործածության ոլորտ: Սրանց հետ կապված՝ գործածվում են նաև **մոնիտոր** (համակարգչում պահպանված տեղեկությունը էկրանի վրա տեսանելի արտացոլող սարք), **դիսկիկ** (համակարգչի մաս, որի էկրանին գրվում է համակարգչի կատարած աշխատանքը՝ նրա կուտակած ինֆորմացիան, էկրան), **պրինտեր** (տպիչ), **ֆայլ** (համակարգչային ինֆորմացիայի որոշակիորեն բաժանված և որպես մեկ ամբողջություն վերցվող միավոր), **սայթ** (կայք), **սկաներ** (պատկերամուտ՝ տեսանելի գրաֆիկական պատկերները համակարգիչ ներմուծող սարք), **քարքրիջ** (ներկապնակ), **դիսկետ** (տեղեկատվություն կրող համակարգչային սկավառակ, պնակիտ, կրիչ) փոխառյալ բառերը:

Փոխառությունների և օտարաբանությունների քննությամբ 20-րդ դ. կեսերին հանդես են եկել նաև ռուս լեզվաբանները (Ա. Գվոզդև, Լ. Շչերբա, Լ. Կրիսին և այլք): Նրանք տարբերակել են այդպիսի բառերի երեք տեսակ՝ փոխառություններ, օտարաբանություններ և էկզոտիզմներ (վերջինները ուրիշ ժողովուրդների կենցաղին և մշակույթին բնորոշ առարկաներ, երևույթներ ու հասկացություններ են, որոնք այլ ժողովուրդների մոտ գոյություն չունեն)³: Թե՛ռուս, թե՛ հայ լեզվաբանները տարբեր անվանումներով բնորոշել են միևնույն երևույթը: Լ. Կրիսինը, օրինակ, գրել է. «Քանի որ էկզոտիզմների մեծամասնությունը ներկայացնում է որոշակի բառապաշար և երբեմն ստեղծում է այնպիսի իրավիճակ, որը սահմանափակում է օտար բառերի մուտքը լեզու, դրանք կարելի է ձևակերպել այսպես. բառը չի կարող փոխառվել ավելի շուտ, քան այդ բառը նշանակող առարկան: Այդպիսի օտար բառը լեզվում կարող է գործած-

³ Այս մասին տե՛ս նաև **Քամալյան Ա.**, Օտարաբանություն, փոխառություն, էկզոտիզմ, ԲԵՀ, Բանասիրություն, 2015, №2(17), էջ 66-80:

վել, բայց այդ լեզուն կրողներին այն կմնա օտար և էկզոտիկ այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ լեզվի օտար և էկզոտիզմ կրող կարող է թվալ այդ բառը նշանակող իրույթը (ռեալիան)»⁴:

Օտար բառերի գործածությունը բնորոշ է գրեթե բոլոր լեզուներին: Գեղարվեստական ստեղծագործության մեջ գրողը միջավայրը ներկայացնելու և հերոսին կերպավորելու նպատակով ըստ անհրաժեշտության գործածում է օտար բառեր: Պ. Պողոսյանն այդ կարգի բառերը համարել է օտարամոծություններ⁵, իսկ Ֆ. Խլղաթյանը օտարաբանություն համարել է «մայրենի խոսքում գործածված այլալեզվյան օտար բառերն ու դարձվածքները»⁶: Ուսումնասիրելով արդի պարբերական մամուլը («Ազգ», «Առավոտ», «Իրավունք», «Հրապարակ», «Հայկական ժամանակ», «168 ժամ») և որոշ կայքէջեր՝ մենք հանդիպեցինք բազմաթիվ փոխառությունների՝ **սդեկվապ, սկցիա, գոքալ, պրիզմա, պոպուլիստական, պրոցեսոր, ֆորում** և այլն:

Բերենք դրանց գործածության որոշ օրինակներ:

1. Ա. Սիմասյանի **պոպուլիստական** (ամբոխասիած) գործունեությունը հասցրել էր որոշակի զանգվածի վրա ազդեցություն ունենալ («Ազգ», 04. 03. 2016):

2. Նման հայտարարություն նա արել է միջկրոնական «Համընդհանուր ժողովրդական ճակատ» **ֆորումի**⁷ (լատ. forum – ներկայացուցչական ժողով, համաժողով) ժամանակ, որը հեռարձակվում է «Ռոսիա 24» հեռուստաալիքով («168 ժամ», 26. 01. 2016):

3. Հատկապես մեծ վրդովմունք է առաջացնում բրիտանացի պատգամավորի զեկույցը, որում նա հայերին անվանում է բռնիչներ և զավթիչներ՝ այսպիսով թև ու թիկունք տալով Ադրբեջանի **սգրեսիվ** (լատ. agressif–մվաճողական հարձակողական) և ոչ **սդեկվապ** (լատ.

⁴ Տե՛ս Крысин Л. П., Иноязычные слова в современном русском языке. М., 1968, էջ 40:

⁵ Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ.1, Եր., 1990, էջ 161:

⁶ Տե՛ս Խլղաթյան Ֆ., Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկառու, Եր., 1976, էջ 104:

⁷ Այս և մյուս օտար բառերի բացատրությունները տե՛ս Մարգարյան Ա., Հայրապետյան Ա., Օտար բառերի բացատրական բառարան, Եր., 2004:

adaequatus – համապատասխան, համարժեք) պահելառճին («Իրավունք», 26. 01. 2016):

4. **Ակցիայի** (ֆր. action – միջոցառում, որ կատարվում է քաղաքական կամ տնտեսական նպատակներով) կազմակերպիչները նախատեսում են հայտարարությունից բացի բրիտանական դեսպանատանը փոխանցել նաև հայկական իշխանի խավիար՝ որպես **սիմվոլիկ** (խորհրդանշական) կաշառք՝ ի ցույց դնելով, որ ԵԽԽՎ-ն կուլ է գնում ադրբեջանական խավիարային դիվանագիտությանը («Իրավունք», 22. 01. 2016):

5. «Շենգավիթ» ԲԿ-ում հղի Մերիի մահվանից հետո բժիշկների որակավորման խնդիրը նորից **սկսուալ** (լատ. actualis - արդիական) դարձավ: Եթե կազմակերպության բժիշկները հինգ տարին մեկ չեն վերապատրաստվել, դա հիմք կարող է լինել ԲԿ-ին զրկելու բժշկական **լիցենզիայից** (լատ. licentia - արտոնագիր, թույլտվություն) («Իրավունք», 6. 02. 2016):

6. Մասնավորապես հայտարարվեց, որ Հայաստանի էլեկտրական ցանցերում պետք է **ստուդի** (անգլ. audit - հաշվեստուգում) անցկացվի («Հայկական ժամանակ», 30. 01. 2016):

7. Նախագահի մասնակցությունը վկայում է Հայոց ցեղասպանությունը վերապրածների սերունդների նկատմամբ Ֆրանսիայի նախագահի ստանձնած պարտավորությունների և ֆրանսահայերին **ինստիտուցիոնալ** (լատ. institutional – պետականագիտության ուղղություն) կառույցներին ներգրավելու նրա հետևողական մտադրության մասին (www. news.am, 21. 06. 2016):

8. Մինչ մեկնարկը սոցիալական ցանցերում և հեռուստատեսությամբ կհայտարարվի **քառփնդի** (մրցութային ընտրություն) մասին (www. news.am, 27. 01. 2016):

9. «Կին» միջազգային կինոփառատոնը՝ **Ֆեմինիստական** (լատ. femina - կին, կանացիացում) գաղափարախոսություն տարածելու համար («Իրավունք», 30. 01. 2016):

10. Ամերիկյան ռազմական գերատեսչության ներկայացուցիչ Մարկ Ռայթը «РИА Новости»-ի հետ զրույցում կոչ է արել նստել բանակցությունների սեղանի շուրջ և միջոցներ ձեռնարկել հնարավոր **էս-**

կայացիայի (անգլ. escalation – որևէ երևույթի աստիճանական ուժեղացում, ընդլայնում) կանխարգելման համար («Հայկական ժամանակ», 31. 01. 2016):

11. Առաջին անգամ միջազգային պրակտիկայում ընդունվել է ձևակերպում, որ Հայաստանը **օկուպացրել** (լատ. occupation - որևէ պետության կողմից օտար տարածքի զինված գրավումը, զավթումը) է Լեռնային Ղարաբաղը և Ադրբեջանի այլ տարածքները («Հրապարակ», 29. 01. 2016):

12. Քննարկվել է նաև նախարարական և մարզպետների պորտֆելների (ֆր. portefeuille – 1. թղթապանակ, 2. մինիստրի՝ նախարարի պաշտոն) հարցը («Հայկական ժամանակ», 31. 01. 2016):

Մեր կյանքում տեղի ունեցող նոր երևույթներն ու հասկացությունները անվանող օտարաբանություններն իրենց արտացոլումն են գտնում մամուլում, անցնում խոսակցական լեզու, այնուհետև՝ բառապաշար: Այսպես, վերջին տասնամյակներում մուտք գործեցին **պրեզիդենտ – նախագահ, պառլամենտ – խորհրդարան, սպիքեր – խոսնակ, էլեկտրոսպ – ընկրազանգված, մոնիթորինգ - դիտորդում, աուդիո – հաշվեքննություն** և այլն:

Հ. Պետրոսյանը, փոխառությունը համարելով բառապաշարի հարստացման կարևորագույն միջոցներից մեկը, գտնում էր, որ «Անհարկի փոխառությունները ծանրաբեռնում, խճուղում են լեզուն: Պայքարն անհարկի փոխառությունների դեմ երբեմն հասնում է ծայրահեղության (մաքրամոլության), որից պետք է խուսափել»⁸: Սա նշանակում է՝ միշտ չէ, որ փոխառյալ բառերը պետք է պարտադիր փոխարինել հայերեն համարժեքներով: Երբեմն այդ օտար կամ փոխառյալ բառերն ավելի ճշգրիտ են արտահայտում հասկացությունների իմաստային նրբերանգները: Օրինակ՝ համագործածական **գրապահոցը** հասկանալի է և ընդունելի, բայց **արխիվ** – ին փոխարինող **պահոց** բառից արդյո՞ք հասկացվում է, թե հատկապես ինչի՞պահոց է:

Մամուլում հանդիպում ենք բազմաթիվ օտարաբանությունների, այսինքն՝ փոխառյալ բառերի հայերեն համարժեքների: Բերենք օրինակ-

⁸ Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 614:

ներ՝ դրանց բառակազմական – կադապարային վերլուծության հետ միասին.

1. Ակնհայտ է, որ **արտարժույթի** այս տատանումները մեր անառողջ տնտեսության արտացոլումն են (www. 7 or. am):

արտարժույթ – ածանց + արմատ + ածանց

2. Իրանական անօդաչու սարքը Պարսից ծոցում անցել է Միացյալ Նահանգների ռազմածովային ուժերի **ավիակրի** վրայով («Հայկական ժամանակ», 31.01.2016):

ավիակիր – արմատ + արմատ

3. **Համացանցը** միշտ լեն ու բոլ է, ինչպես ասում են, օգտատերերը՝ բազմաքանակ ու բազմատեսակ («Ազգ», 04.03.2016):

համացանց – ածանց+հոդակապ+արմատ, օգտատեր – արմատ+հոդակապ+ արմատ

4. Այնուհետև **համակարգիչները** թափանցեցին հիմնարկ, խանութ, բնակարան՝ արագ տեղեկատվության հետ հնարավորություն տալով մարդկանց դուրս գալու իրենց բնակարանների մենությունից, վիրտուալ շփվելու միմյանց հետ, տեղեկություն ստանալ-տալու, իսկ ոմանց՝ ինքնադրսևորվելու, որի գլխավոր հարթակն այսօր արդեն 10 տարի **ֆեյսբուքն** է կամ **դիմագիրքը** : («Ազգ», 04.03.2016)

համակարգիչ – ածանց + հոդակապ + արմատ + ածանց

դիմագիրք – արմատ + հոդակապ + արմատ + ածանց

5. Խնդրեմ, **ինքնասեռը** գցի՛ր և ի՛նձ տուր ու պատուհանից նայի՛ր, քանի որ թուրք գաղտնի ոստիկանությունը մեզ հետևում է («Ազգ», 02.04. 2016):

ինքնասեռ – արմատ + հոդակապ + արմատ

6. Երեկ տարածվեց հաղորդագրություն, որտեղ նշված է, որ վարչական դատարանը անվավեր է ճանաչել §Բջնի՛ գործարանի **աճուրդը** («Ազգ», 02.04. 2016):

աճուրդ – արմատ + ածանց

7. Գյումրին բոլոր ժամանակներում հետաքրքիր է եղել իր բնակիչներով, որոնցից յուրաքանչյուրն իր աշխատանքով և ստեղծագործական մտքով ևս մեկ վառ երանգ է ավելացրել **մշակութային** քաղաքի **գունապարկերին** («Իրավունք», 05.02. 2016):

մշակութային – արմատ + ածանց + ածանց
գունապատկեր – արմատ + հոդակապ + արմատ

8. Ղարաբաղում «Ազգի» ո՛չ **ֆաբր**, ո՛չ էլ **հեռապարճներ** կար 90-ական թվական-ներին («Ազգ», 04.03.2016):

հեռապատճեն – արմատ + հոդակապ + արմատ

9. Շարմազանովի խոսքով՝ համագործակցության **ձեռնարկ** մասին կխոսեն, իսկ դրանք դեռ ավարտված չեն («Հայկական ժամանակ», 15.01.2016):

ձեռնարկ – արմատ + հոդակապ + արմատ

10. Հարցազրույցում անհայտ է և՛ հարցերի, և՛ պատասխանների **արհեստավարժ** մակարդակը («Ազգ», 12. 02. 2016):

արհեստավարժ – արմատ + հոդակապ + արմատ

11. Վաչե Տերտերյանը որպես հիմնավորում նշել էր, որ մարզպետարանն այս տարի **օդորակիչները** նախատեսվածից ավելի է օգտագործել, որի հետևանքով այդքան պարտք է կուտակվել: («Հայկական ժամանակ», 15.01.2016)

օդորակիչ – արմատ + արմատ + ածանց + ածանց

Ինչպես տեսնում ենք, այս օրինակներում գերիշխում է **Ա+հ+Ա** կաղապարը, այսինքն՝ բառաբարդումը, չնայած կան մասն ածանցավոր կազմություններ՝ **սալ-, գեր-, հակ-, համ-** նախաձանցներով և **-ային, -իջ- -ություն, -ույթ, -որդ, -ք** վերջածանցներով:

Օտարաբանությունների բառակազմական վերլուծությունը մասնույց է տալիս, որ դրանք ունեն հայերենի բառակազմության բոլոր տեսակները՝ բարդությունն ու ածանցումն իրենց կաղապարներով: Ֆառակազմության կենտրոնական հասկացությունը,– գրել է ակադ. Գ. Ջահուկյանը,– բառն է, ուսումնասիրության առարկան՝ բաղադրյալ բառը⁹: Մեր լեզվում բառակազմության հիմնական եղանակները բառաբարդումն ու ածանցումն են: «Ժամանակակից հայոց լեզվում,– գրել է պրոֆ. Մ. Ասատրյանը,– կա բաղադրյալ բառերի կազմության երկու հիմնական եղանակ՝ ածանցում և բարդություն, ըստ որում և՛ ածանցումը, և՛

⁹ **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 158:

բարդությունը հավասարապես տարածված են ու գործուն: Ածանցավոր և բարդածանցավոր բառերը կոչվում են բաղադրյալ և կազմվում են ածանցման և բարդության միջոցով: Բարդ բառի հիմնական նշանակությունն արտահայտում է երկրորդ բաղադրիչը, իսկ առաջինը ստորադասվում է նրան՝ դառնալով նրա լրացումը»¹⁰: Պրոֆ. Մ. Ասատրյանը գտնում է, որ արմատ + հոդակապ + արմատ բառակազմական կաղապարը ընդհանուր է բազմաթիվ բառերի համար¹¹: Ինչպես նկատում ենք, թե՛ ակադ. Գ. Ջահուկյանը և թե՛ պրոֆ. Մ. Ասատրյանը գրեթե միևնույն տեսակետն են արտահայտել խնդրի վերաբերյալ՝ հիմնական իմաստակիր համարելով երկրորդ բաղադրիչը:

Նոր և նորագույն փոխառությունների մեջ յուրատեսակ կազմություններ են պատճենումներն ու կիսապատճենումները, որոնք անցել են հատկապես ռուսերենի միջոցով: Բառապատճենումներ են, օրինակ, **ինքնակո** և **ինքնագնաց** բառերը, որոնք կազմվել են ռուսերեն բառերի (самовар, самоход) մեջ մտնող բոլոր ձևայինների թարգմանությամբ: Մամուլում հանդիպած կիսապատճենման օրինակներ են **ավիակիր, ավիահարված, մակրոտրնսկություն, մեզատուղեղ** բառերը, որոնց մեջ հայերեն թարգմանվել է բառակազմական ձևային մի մասը:

Փոխառյալ բառերի մի տեսակ պետք է համարել նաև ներքին փոխառությունները արևմտահայերենից¹²: Օրինակ՝ **արհեստավարժ – պրոֆեսիոնալ, արմատականություն – ռադիկալիզմ, կարգախոս – լոզունգ, մարտագիտություն // ռազմագիտություն // ռազմարվեստ // մարտավարություն – տակտիկա, ռազմավարություն – ստրատեգիա, մարտասայլ // հրասայլ – տանկ**: Այս բառերը միշտ չէ, որ ընդունվում ու գործածվում են հանրության կողմից, օրինակ՝ **արհեստավարժ, հրասայլ, մարտասայլ** և այլն:

Մամուլում նկատում ենք տնտեսության, քաղաքական, ռազմական, կրթության ու գիտության, մշակույթի և իրականության այլ բնագավառ-

¹⁰ Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, գիրք Ա, Եր., 1970, էջ 63:

¹¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 59:

¹² Սարգսյան Ռ., Արևմտահայերեն – արևելահայերեն նոր բառարան, Եր., 2011:

ներին վերաբերող փոխառյալ բառեր, որոնք կարելի է խմբավորել հետևյալ երեք տեսակների.

ա. Օտարաբանություններ, որոնք դարձել են համագործածական բառեր:

բ. Բառեր, որոնք թեև ունեն իրենց հայերեն համարժեքները, սակայն զուգահեռաբար գործածվում են նաև նրանց օտար ձևերը. օրինակ՝ **աբսուրդ - անհեթեթ, ադեկվատ - համարժեք, գրանյ - դրամաշնորհ, լիդեր - առաջնորդ, լիցենզիա - հավաստագիր, կոռուպցիա - կաշառակերություն, չինովնիկ - պաշտոնյա, պրոցես - գործընթաց, պրոբլեմ - խնդիր, ռեֆորմ - բարեփոխում** և այլն:

գ. Բառեր, որոնք չունեն հայերեն համարժեքը և գործածվում են գերազանցապես իրենց օտար ձևերով. օրինակ՝ **անիմացիոն, գիգանյունմանիա, դիվերսիֆիկացիա, էստակադա, ինստիտուցիոնալ, լոբբինգ, կոնցեսիա, կոնցեսիոներ, կոմպլիմենտարիզմ, մանիպուլյացիա, մոնիթորինգ, ռեկորդ, վանդալիզմ, տոտալիտարիզմ** և այլն: Մյուսն են հատկապես շատ են տնտեսագիտական (**կադաստր, մաքսային, կոմպլեքս, ռեսուրս** և այլն) և քաղաքական (**դիվերսիա, լոբբինգ, կոմպլիմենտարիզմ, կոնսոլիդացիա, տոտալիտարիզմ, կոնցեսիա, օֆշորային**) ասպարեզի բառերը: Մյուսները վերաբերում են գիտությանը, մշակույթին, կենցաղին և այլ ոլորտների:

Տարբեր լրատվամիջոցների համեմատական քննությամբ պարզվում է, որ օտարաբանությունների հայերեն համարժեքներ ավելի շատ գործածվում են «Ազգ» պարբերաթերթում: Իսկ մյուս փոխառությունները, հատկապես քաղաքական, տնտեսագիտական, բժշկական, ռազմական ոլորտներին վերաբերող բառերն ու տերմինները ընդհանրապես գործածվում են ամբողջ մամուլում ու բոլոր կայքէջերում գետեղված հրապարակախոսական և քաղաքական բնույթի հոդվածներում: Ակնհայտ է, որ ամենից շատ հանդիպում են **գլոբալ, լիցենզիա, կոնֆլիկտ, կոռուպցիա, մեխանիզմ, չինովնիկ, պրոբլեմ, տեռոր** օտարաբանությունները: Այս բառերն ունեն իրենց ազգային համարժեքները, որոնք հանգիստ կարող են փոխարինել նրանց և ժամանակի ընթացքում դառնալ համագործածական բառեր:

Նկատելի է, որ որոշ ոլորտներում առկա է հակում դեպի օտարաբանությունները: Այդպիսին է, օրինակ, բժշկության ոլորտը: Առողջապահական բնույթի հոդվածներում կամ հաղորդումներում հաճախ են գործածում **հիպերպոնիա** (գերաճնշություն), **պրիսպուա** (մոպա), **պուլս** (զարկերակ կամ երակազարկ), **պրոֆիլակտիկա** (կանխարգելում) և այլ օտար բառեր:

Մյուսը երաժշտության ոլորտն է, որտեղ օտարալեզու են գտնել գործիքների՝ նվագարանների անվանումների զգալի մասը: Սակայն պետք է ընդունենք, որ գերապատվություն տալով օտար բառերի հայերեն համարժեքներին՝ չպետք է ծայրահեղ լինել նրանց օտար անունների հանդեպ, որոնք երբեմն միջազգայնորեն ընդունված ու գործածվող բառեր են և հասկանալի են մասնագետներին:

Մամուլում նկատելի է մի առանձնահատկություն ևս՝ նորագույն փոխառությունների և նրանց հայերեն փոխարժեքների զուգահեռ գործածությունը, ինչպես՝ **սիստորոշում - դիագնոզ, ալտերնատիվ - ալլերնատիվ, սպադիոն - մարզադաշտ, փոսիստ - զանգրենա, շրջափակում - բլոկադա** և այլն: Այդպիսի օրինակներ են նաև **ֆաքս - հեռապարճեն, ֆեյսբուք - դիմագիրք** ձևերը, որոնք միաժամանակ զուգահեռաբար գործածվել են մամուլում («Ազգ», 04.03. 2016): Այս բառերը սակավ են հանդիպում մամուլում, և դժվար է ասել, թե դրանցից ո՞րը ժամանակի ընթացքում ավելի կենսունակ ու գործածական կդառնա: Մի բան պարզ է, որ օտարաբանությունները կազմվում են հայերենի բառակազմական միջոցներով ու կաղապարներով և համալրում մեր լեզվի բառապաշարը: Ինչպես էդ. Աղայանն է գրել՝ «Ամեն մի նոր բառ՝ սեփական թե փոխառյալ, նախապես հանդես է գալիս որպես նորաբանություն»¹³:

Մամուլում օտարաբանությունների առատությունն իր պատճառներն ունի: Մեկն այն է, որ դրանք ոճական արժեք ունեցող նորաբանություններ են, որոնք, ինչպես թվում է դրանք գործածող լրագրողներին, կենսական կամ գիտական նորույթը արտահայտելու իմաստով կարող են ավելի արդիական լինել և ավելի ուժեղ ներգործություն ունենալ ընթերցողի վրա:

¹³ Աղայան է., նշվ. աշխ., էջ 169:

Ուսումնասիրելով ժամանակակից մամուլը՝ գալիս ենք այն եզրակացության, որ պետք է խուսափել անհարկի փոխառություններից և առաջնություն տալ օտար բառերի հայերեն համարժեքներին: Սակայն անհնար է ընդհանրապես հրաժարվել փոխառություններից, քանի որ դրանց ներմուծումն ու գործածությունը լեզվի բառապաշարի հարստացման բնական ու կարևոր գործընթացներից է: Ուստի պատահական չէ դրանց հաճախադեպ գործածությունը արդի լրատվամիջոցներում, տրնտեսական ու քաղաքական բնույթի հոդվածներում, գովազդում:

Բանալի բառեր – *ածանցում, բառակազմական կաղապար, բառապարհներում, բարդություն, մասնու, նորարարություն, օրարարարություն, փոխառություն:*

НЕЛЛИ ТИРАБЯН – Заимствования и варваризмы в современной прессе. – В статье рассмотрены мнения ученых о заимствованиях и варваризмах, проанализированы категории этих слов и представлены определенные закономерности. Приведены примеры использования в средствах массовой информации и в интернете заимствованных слов и варваризмов с объяснением их значения и анализом словообразующих форм. Отмечается, что надо избегать ненужных заимствований и отдавать предпочтение армянским эквивалентам, несмотря на то, что иногда заимствованные слова наиболее точно выражают семантические нюансы слов, следовательно, невозможно избежать их использования.

Ключевые слова: *аффиксация, словообразовательная форма, калькирование, сложность, пресса, неологизм, варваризм, заимствование.*

NELLI TIRABYAN - Borrowings and foreign words in the contemporary press. - The article deals with the opinions of the borrowings and foreign words, the analyzed categories of such words and certain patterns are presented. Examples of borrowings and foreign words used in the media and on the Internet with the explanation of their significance and analysis preformative forms are presented.

It is noted that it is necessary to avoid unnecessary debt, and give preference to the Armenian equivalents, although sometimes borrowings most accurately express the semantic nuances of words, so it is impossible to avoid using them.

Keywords: *affixation, derivational form, tracing, complexity, press, coinage, foreign words, borrowings.*

ՆՎԵՐ ՍԱՐԳՍՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՈՒ-ԲԱՐՔԱՌ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

1. Մեզանում խոսակցական լեզուն ընդհանուր հայերենի մեջ գրադեցրած իր տեղին ու դիրքին, լեզվական հաղորդակցության, լեզվի գործառության ոլորտներում ունեցած կարևոր նշանակությանը համապատասխան բավարար չափով և համարժեքորեն ուսումնասիրված չէ: Դա, անշուշտ, կապվում է ինչպես խոսակցական լեզվի ուսումնասիրության ասպարեզում ավանդաբար ձևավորված ուղղությունների ու խոսակցական լեզվի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, այնպես էլ առարկայական ու անձնային մի շարք հանգամանքների հետ: Դրանք շատ են, բայց մի քանի հիմնական պատճառների մասին կարելի է հակիրճ թվարկում կատարել: Խոսակցական լեզվի քննությանը հայ լեզվաբանները սովորաբար անդրադարձել են.

ա) Ընդհանուր լեզվաբանության ինչ-ինչ իրողություններ բացահայտելու առիթով. ինչ է այն, ինչպես սահմանել և այլն:

բ) Գրական լեզուների ուսումնասիրության առիթով. **ընդ որում**, եթե նախորդ գրական լեզուների խոսակցական տարբերակի վերաբերյալ դիտարկումները քիչ են, ապա, օրինակ, գրական արևելահայերենի դեպքում գրեթե բոլոր աշխատանքներում նորմի, ճիշտ կամ սխալ լինելու տեսակետից խոսակցական լեզվի տվյալները բավականաչափ ընդգրկված են:

գ) Գործառական ոճերի առիթով (այստեղ էլ երբեմն բացարձակապես նույնացվում են խոսակցական լեզու և խոսակցական ոճ հասկացությունները):

դ) Բարբառների ուսումնասիրության առիթով:

Այս չորս հիմնական ուղղություններն էլ, բնական է, դեռ չեն ապահովել խոսակցական լեզվի համակարգված և ամբողջական քննությունը: Այլ հանգամանքներ էլ կան:

ե) **Մարքասկազմի հարցը**, անհրաժեշտ են ձայնագրման համար տարատեսակ միջոցներ, որոնք ուսումնասիրության ոլորտ մտան վերջին 150-200 տարում: Հիմա դրանց տարբեր տեսակներ կան, բայց մեզանում մեծ մասամբ դեռ խոսակցական լեզվի քննությունը շարունակվում է գրական-գեղարվեստական լեզվում օգտագործված օրինակների միջոցով, որը նույնպես ամբողջականություն չի կարող ապահովել:

զ) Կարևոր է մաս վերաբերմունքը, այն, որ խոսակցական լեզուն համարվում է մի տեսակ երկրորդական իրողություն և կարծես անտեսվում է:

Հիշենք հնուց եկող **գեղջուկ խոսք**, հասարակաց բան, նույնիսկ գռեհիկ հայերեն և այլ որակումներ, որոնց մոտավոր համարժեքները այսօր էլ ավանդաբար կրկնվում են՝ չնորմավորված խոսք (մինչդեռ խոսակցական լեզուն էլ ունի իր նորմերը), ցածր ոճ (գրական լեզվի խոսակցական տարբերակի համար մման որակումը ընդունելի չէ, հասարակաբանություններն ու ժարգոնները խոսակցական լեզու չեն):

է) Միայն բանավոր դրսևորումն ընդունելով էլ՝ այն նույնացնում են բանավոր խոսքի հետ, որը ևս ընդունելի չէ:

Ուրիշ շատ երկրներում, քաղաքներում խոսակցական լեզուն ուսումնասիրվում է ինստիտուտների կոլեկտիվների, խմբերի, բազում անհատների, արշավախմբերի միջոցով: Նման բաների մասին մենք չենք կարող խոսել:

2. Խոսակցական լեզվի բավարար չափով ուսումնասիրված չլինելը, խոսակցական լեզվի տվյալներն անտեսելը, լեզվի գոյության, փոփոխության, զարգացման մեջ նրա դերը հետևողական ու մշտապես չդիտարկելը մեր լեզվաբանության մեջ մի կողմից տեղիք է տալիս զանազան տարակարծությունների հենց նրա մասին, մյուս կողմից տեղ է թողնում, որ հաստատվեն որոշ պայմանականորեն ճիշտ, բայց մանրամասնություններում թերի, երբեմն անհրաժեշտ ապացույցներով չհիմնավորված դրույթներ ու կարծիքներ: Այս իրողությունը փորձում ենք դիտարկել

Արարատյան բարբառի և գրական նոր հայերենի փոխհարաբերության շրջանակներում: Բայց մինչ այդ՝ մի երկու ընդհանուր դիտարկում:

Խոսակցական լեզու-բարբառ փոխհարաբերությունը շատ բարդ է ու բազմաթեղ: Ունենալով զանազան տարբերություններ, բայց և դրսևորելով ընդհանրություններ՝ դրանք բացարձակ չեն նույնանում, և շատ հարցեր կարող են իրենց պատասխանը ստանալ միայն հետևողական ուսումնասիրությունների արդյունքում: Իհարկե, դրանք ունեն իրենց նորմերը, համապատասխան լեզվական մակարդակները, գերազանցապես բանավոր են դրսևորվում, բայց ունեն նորմերի բնույթի և դրսևորման տարբերություններ, մակարդակներում ընդգրկված միավորների տարբերություններ, կա նաև տարածական սահմանափակության խնդիրը:

Գ. Ջահուկյանը լեզվի ընդհանուր տարատեսակների փոխհարաբերությունը ներկայացնում է հայտնի եռյակի կազմով, որի ձախ թևում գրական նորմավորված լեզուն է, աջ թևում՝ բարբառները, իսկ դրանց միջև տեղակայված է խոսակցական լեզուն: Այդ երեք կողմերն էլ, իհարկե, ունեն նաև իրենց անհատական տարբերակները¹:

Սրանց ձախ և աջ թևերը, կարելի է ասել, պահանջված խորությամբ ուսումնասիրված են և ուսումնասիրվում են. դրանք անհրաժեշտ չափով ներկայացված են թե՛ առանձին-առանձին, թե՛ փոխհարաբերության մեջ: Բայց նույնը չի կարելի ասել դրանց միջակա օղակի մասին, մինչդեռ հենց նա է այդ երկուսի խաչմերուկը, և հաճախ հենց նրանով են պայմանավորված դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Խոսակցական լեզուն էլ համաժամանակյա և տարժամանակյա բնության տեսակետից կարող է տարբեր դրսևորումներ ստանալ: Միայն աշխարհաբարյան փուլի համար կարելի է անել հետևյալ ընդհանուր բնութագրումները. ընդունված է ասել, որ **վաղ աշխարհաբարի շրջանում** (և նրանից էլ առաջ) խոսակցական լեզվի գործառնությունը իր տարածքում կատարում է հենց Արարատյան բարբառը՝ ներառելով այլ տարրեր: Ընդհանուր գրական լեզուն կա՛ն դեռ չկա, կա՛ն լիարժեք չի

¹ Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, Եր., 1980, էջ 2-8:

գործառույթ, և կարծես ունենք այդ երեքի դերում հանդես եկող մեկ լեզվական իրականություն, որը որակվում է որպես բարբառ:

Երկճյուղ աշխարհաբարի շրջանում արդեն գրական լեզուն հաստատել է իրեն, և բավական դժվար է հիմա սահմանազատում կատարել. բարբառը մնացել է բարբառ, ձևավորվել է **խոսակցական մի լեզու**, որի հիմքի վրա էլ՝ գրականը: Սրանց հստակ որոշումը շատ դժվար է: Մի բան պարզ է, որ գրական լեզուն դեռևս (թեկուզ գրաճանաչության առումով) շատ քիչ մարդկանց մենաշնորհն է, ժողովրդական հոծ զանգվածին մնում են բարբառը և դրա վրա աճած խոսակցական լեզուն: Այս շրջանում գրական լեզվի խոսակցական տարբերակի մասին խոսելը տեղին չէ:

Ժամանակակից փուլում (հատկապես անցյալ դարի 50-ական թվերից սկսած) դրանց փոխհարաբերությունը այլ է: Գրական լեզուն տիրապետող է, գործառույթ է գրեթե լիաժամպալ: Բարբառը, թեկուզ իր տարածքում, գրեթե ամբողջովին զիջել է իր դիրքերը: Պարզապես տարբեր բարբառային վայրերում գործառույթ է խոսակցական լեզուն՝ տվյալ բարբառի հատկանիշներով ներթափանցված (Երևան, Գյումրի, Վանաձոր, Գորիս...): Մյուս կողմից, գրական լեզվին նախորդած խոսակցական լեզվի կողքին գրական լեզվի համընդհանրության շնորհիվ տարածվում է գրական լեզվի խոսակցական տարբերակը (մի երևույթ, որ որոշ լեզուներում հենց դիտվում է խոսակցական լեզու, այսինքն՝ խոսակցական լեզու ասելով՝ հենց դա են հասկանում): Բայց մեզ համար դեռ այդպես չէ, թվում է՝ ունենք երկու խոսակցական լեզու՝ 1. բարբառի վրա աճած, գրական լեզվին նախորդող և այժմ էլ նրա կողքին գոյատևող, 2. գրական լեզվի խոսակցական տարբերակը: Ճիշտ է՝ անկախացման շրջանում վայրիվերումներ եղան, բայց ժամանակը սրանց համադրման օգտին է ընթանում:

Այս առումով հետաքրքիր է Գ. Ջահուկյանի մի դիպուկ դիտարկումը. «Հայտնի է, որ ինչպես միջին, այնպես էլ նոր գրական լեզուները իրենց մշակման պրոցեսում զգալիորեն հեռացել են հիմք-բարբառներից: Որոշ հեղինակներ հակված են, օրինակ, ժամանակակից գրական լեզուները դիտելու իբրև բարբառների և գրաբարի մեխանիկական համադրություն. իրականում, սակայն, գրական լեզուն կարող է առաջանալ

միայն խոսակցական հիմքի վրա (խոսքը արհեստականորեն ստեղծված լեզուների մասին չէ) և մշակման պրոցեսում ներծծել ուրիշ (հատկապես հին գրական լեզվի) տարրեր՝ ավելի կամ պակաս չափով»²:

Այսպես՝ կարևորելով խոսակցական լեզվի դերը՝ մեծ գիտնականը իր վիճակագրական աղյուսակների մեջ չի ընդգրկել խոսակցական լեզվի տվյալներ (քնականաբար այդ աշխատանքի նպատակներից դա դուրս էր):

Գրական լեզուների բարբառային կամ խոսակցական հիմքերի, բարբառների մաքրության աստիճանի վերաբերյալ խիստ կարևոր են մաս շատ անվանի լեզվաբանների դիտարկումները: Անդրադառնա՞նք մի քանիսին: Գ. Սևակը, օրինակ, գտնում է, որ նոր գրական հայերենը հայոց բարբառների և հին գրական հայերենի համադրման արդյունք է³: Է. Աղայանը պնդում է, որ նոր գրական հայերենն առաջացել է իր ժամանակի միջբարբառային խոսակցական լեզվից⁴: Ըստ Ռ. Իշխանյանի տեսակետի՝ «նոր գրական լեզուն առաջ է եկել և՛ բարբառի, և՛ միջբարբառային խոսակցականի մեջ հին ու միջին գրական հայերենի լրացուցիչ լեզվատարրեր մուծելու շնորհիվ»⁵: Փաստելով, որ բոլոր բարբառները հավասար չափով չեն մասնակցել նոր գրական հայերենի ձևավորմանը, նա առանձնացնում է մի քանիսը՝ Ն. Ջուղայի, Պոլսի, Արարատյան և այլն: «18-րդ դարից վճռական է դառնում մի կողմից Կ. - Պոլսի, մյուս կողմից՝ Արարատյան և ապա մաս Թփղիսի բարբառների դերը նոր գրական հայերենի մշակման ու կանոնավորման, մաս երկփեղկման գործում»⁶: Ի դեպ, դրանք համարելով խոսակցական տարբերակների կենտրոններ՝ իր հոդվածներից մեկում Ն. Պողոսյանը դրանց մեջ է դնում մաս Տրանսիլվանիան⁷:

² **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 194:

³ **Սևակ Գ.**, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Եր., 1948, էջ 37-39:

⁴ **Աղայան Է.**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1962, էջ 344-345:

⁵ **Իշխանյան Ռ.**, Նոր գրական հայերենը 17-18-րդ դդ., Եր., 1979, էջ 18:

⁶ Նույն տեղում:

⁷ **Պողոսյան Ն.**, Աշխարհաբարի ձևավորման հարցում հայկական գաղթավայրերի ունեցած դերը, Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2015, էջ 279-289:

Գրական արևելահայերենի և Արարատյան բարբառի փոխհարաբերությունը առավել հանգամանալից դիտարկված է Մ.Ասատրյանի կողմից⁸: Տարբեր հոդվածներում իրեն հատուկ նրբանկատությամբ ու բանիմացությամբ Մ. Ասատրյանը քննում է գրական արևելահայերենի և Արարատյան բարբառի փոխհարաբերությունները, ըստ հիմնական լեզվական մակարդակների՝ ներկայացնում է դրանց ընդհանրությունները, գլխավորապես տարբերությունները: Անշուշտ, կարևորում է նաև խոսակցական լեզվի դերը գրական արևելահայերենի կազմավորման համար:

Դժվար չէ նկատել, որ բոլոր լեզվաբաններն էլ մեծ տեղ են հատկացնում խոսակցական լեզվին, բայց նրանց բուն նպատակը խոսակցական լեզվի քննությունը, համակարգված բնութագրումը չի եղել, ուստի շատ հարցեր մնում են առկախ (վերջապես՝ ի՞նչ է խոսակցական լեզուն, արդյո՞ք կարելի է Պոլսում կամ Արարատյան տարածքում գործառող խոսակցական տարբերակները Պոլսի կամ Արարատյան բարբառ համարել, հիմա ինչպիսի՞ն է Հայաստանի տարբեր վայրերում գործառող խոսակցական տարբերակների (Երևան, Գյումրի, Վանաձոր և այլն) և համապատասխան բարբառների փոխհարաբերությունը և այլ իրողություններ, որոնց բացահայտումը ապագայի խնդիր է):

Բայց կա տեսական մոտեցման հիմքը, հաստատված է քննության գործնական կողմը: Պետք է հատուկ նպատակադրությամբ ա) մի կողմից՝ հենվելով եղած տվյալների, առկա ուսումնասիրությունների վրա՝ շարունակել հետազոտական աշխատանքները, խոսակցական լեզվի հատկանիշները, ընդհանրություններն ու տարբերությունները ներկայացնել հնարավորինս ամբողջական ու համակարգված, բ) մյուս կողմից՝ այսօր արդեն կարելի է կատարել որոշ տերմինների կամ ձևակեր-

⁸ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի բաղաձայնական համակարգի փոխհարաբերությունը, ԲԵՀ, 1979, N 3, էջ 106-117, Արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի ձևաբանական համակարգերի փոխհարաբերությունը (թվի և հոլովման կարգեր), ԲԵՀ, 1980, N 3, էջ 81-95, իսկ ածականը, թվականը, դերանունը, դերբայները մույն վերնագրով ներկայացված են՝ ԲԵՀ, 1983, N 2, էջ 115-128, Արևելահայ գրական լեզվի և Արարատյան բարբառի հնչյունական համակարգերի փոխհարաբերությունները, ժող. «Սիջագային հայերենագիտական գիտաժողով, 21-25 սեպտեմբերի, 1982 թ.», Եր., 1984, էջ 614-622:

սյուճների փոփոխություն, օրինակ՝ ասել, որ գրական արևելահայերենը ձևավորվել և առաջացել է ոչ թե Արարատյան բարբառի, այլ Արարատյան խոսակցական լեզվի հիմքի վրա, որը հատկանիշներով ու տարրերով ավելի մոտ է Արարատյան բարբառին: Նույն սկզբունքը կարելի է կիրառել նաև գրական արևմտահայերենի նկատմամբ:

Բանալի բառեր – *խոսակցական լեզու, գրական լեզու, բարբառ, գրական լեզվի բարբառային հիմք, լեզվական նորմ, բարբառային նորմ, գործառնական ոճ, միջբարբառային խոսակցական փարբերակ, հաղորդակցական ակտ, հայերենի զարգացման աշխարհաբարյան փուլ:*

НВЕР САРГСЯН – О соотношении разговорный язык-диалект. – Учитывая тот факт, что разговорный язык не был тщательно изучен в соответствии с его большим значением и важной ролью в коммуникативных вариантах армянского языка, автор представляет субъективные и объективные причины этого факта, а также главные направления исследования, подчёркивая необходимость отдельного и полного анализа разговорного языка.

Соотношение разговорный язык-диалект в основном рассматривается в рамках современной стадии развития армянского языка с разделением их общих и отличительных признаков, принимая во внимание их участие в процессе возникновения и формирования двух вариантов нового литературного армянского языка.

Ключевые слова: *разговорный язык, литературный язык, диалект, диалектная база литературного языка, языковая норма, диалектная норма, функциональный стиль, междиалектный разговорный вариант, коммуникативный акт, новая литературная (аишарабарная) стадия развития армянского языка.*

NVER SARGSYAN - On the colloquial speech – dialect correlation. - Taking into consideration the fact that colloquial speech has not been thoroughly studied among us according to its great significance and its important role in the communicative variants of Armenian language, the author states subjective and objective reasons of the fact and the main directions of the research emphasizing the necessity of separate and complete analysis of colloquial speech.

The colloquial speech – dialect correlation is mainly viewed in the Modern Armenian stage of the development of Armenian language with the separation of their general and peculiar features, with the participation in the process of the emergence and formation of two variants of literary Armenian.

Keywords: *colloquial speech, literary language, dialect, dialectical base of literary language, linguistic norm, dialectical norm, functional style, interdialectal colloquial variant, communicative act, Modern Armenian (ashkharabarian) stage of the development of Armenian language.*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ

(«Suph» ԳԿՀ)

ՀՆԽԼ. *PEL- «ՇԱՐԺԵԼ» ԵՎ *ME- «ՉԱՓԵԼ» ԱՐՄԱՏՆԵՐԻՑ ՍԵՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐ

Ներկայումս ընդունված է ասել, որ հայերեն շուրջ 1500 արմատ հավաստիորեն ունեն հնդեվրոպական ծագում, այսինքն՝ հանգեցվում են հնդեվրոպական նախալեզվի համար վերականգնված արմատներին: Հ.-ե. տարբեր արմատներից (դրանց ձայնդարձային և/կամ ընդլայնված տարբերակներից) բխեցվում են տարբեր քանակի հայերեն արմատներ՝ սկսած գրոյից մինչև մի քանի տասնյակ: Այդ թվերը, սակայն, վերջնական չեն: Մի քանի հազար անհայտ ծագման, երբեմն էլ փոխառյալ համարվող բազմաթիվ հայերեն արմատներ դեռ կարող են վերաստուգաբանվելով վերագրվել հ.-ե. այս կամ այն արմատին: Այդ գործընթացը, բնականաբար, շարունակական է: Ստորև ներկայացված են այդպիսի մի քանի փորձեր:

1. *pel- «շարժել» արմատից սերված բառեր

Բառեր կան, որ բառակազմորեն միանգամայն թափանցիկ են. պարզ երևում են նրանց բառակազմական բաղադրիչները: Այդպիսին է **հեղոյս (հեղոյս)** բառը, որ մատենագրության մեջ հանդիպում է՝ սկսած Ագաթանգեղոսի «Պատմությունից»: Ակնհայտ է, որ նա կազմված է **հեղ** արմատից և **-ոյս (-ոյս)** վերջածանցից: Բայց թե՛ ստուգաբանական, թե՛ բառակազմական բառարանները զարմանալիորեն անտեսում են այդ հանգամանքը և բառը համարում պարզապես անհայտ ծագման՝ անգամ ենթադրություն չանելով նրա բաղադրյալ լինելու վերաբերյալ¹: Մինչդեռ դժվար չէ կռահել, որ **-ոյս**-ը գրաբարի պատճառական ածանցից առա-

¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր., 1977, էջ 78, **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 456:

ջացած **-ույց/-ույզ** բառակազմական ածանցի հազվագյուտ մի տարբերակն է, որ առկա է նաև **-կորույս** (*խելակորույս, գլխակորույս, որդեկորույս, ոգեկորույս, համակորույս* և այլն) բաղադրող հիմքում:

Թերևս ավելի դժվար է որոշել **հեղ-** արմատի բնույթը՝ բնիմաստն ու ծագումը: Նա համանուն է **հեղ-** «թափել, լցնել» արմատին (<հնխլ. *pel- «լցնել, թափել, հոսել»)², սակայն իմաստով նրա հետ չի կապվում:

Ավելի մոտ է թվում **յեղ-** «փոխել, դարձնել, վերածել» արմատին (հնխլ. *quel-/*kuel- «դառնալ, պտտել, շարժել, շրջվել» նախաձևից)³, սակայն հնչյունական համապատասխանեցումը դժվարություններ է հարուցում:

Առավել հավանական է կապը հ.-ե. *pel-/*pol-/*pl- «հրելով կամ խփելով շարժման մեջ դնել, շարժել, ցնցել, քշել, վարել» նախաձևից սերված **հեղ/հաղ** «անգամ»⁴, **հոլ** «պտտվող խաղալիք», **հոլ-ով** «պտույտ»⁵, **հալածել** «քշել, վանել»⁶, **պողել (պուղել)** «ցրել, վանել, նետել, մաքրել, բրել» (կասկածով)⁷ բառափնջի հետ:

Ի դեպ, Հ. Աճառյանը **հոլ-**ը, **հոլ-ով-**ը (ինչպես նաև **եղ-**ը՝ «լինել, գոյանալ») բխեցնում է նույն արմատից, ինչ **յեղ-**ը⁸, իսկ Գ. Ջահուկյանը դրանք նախընտրում է բխեցնել հնխլ. երեք տարբեր արմատներից (**եղ-** <*el- «քշել, շարժվել, գնալ»)⁹ չնշելով դրանց միջև հնարավոր կապը:

Հեղ-ույս-ի **հեղ-** արմատը **հոլ-**ի, **հոլ-ով-**ի հետ կապելը հիմնավորվում է նախ իմաստաբանորեն: Հեղույսը մասամբ գամի, մասամբ էլ պտուտակի տարատեսակ է, այսինքն՝ դրանով երկու բան իրար միացնելու համար անհրաժեշտ է նրան հրելով, խփելով կամ պտտելով շարժման մեջ դնել և ամրացնել: Ներկայիս հասկացողությամբ դա մետաղե (երբեմն նաև փայտե կամ ճկազանգվածե) գլանաձև մեխ է (բոլտ), որի

² Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 456:

³ Տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 393-394, **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 551:

⁴ Տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 13-14, **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 439:

⁵ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 464:

⁶ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 438:

⁷ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 641, **Մալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Եր., 1944, էջ 112:

⁸ Տե՛ս **Աճառյան Հ.**, նույն տեղում, ինչպես նաև էջ 109-110:

⁹ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 212:

մի ծայրը պտուտակիչին կամ պտուտակաքանալուն հարմարեցված շրջանաձև կամ ութանկյուն գլուխ ունի, իսկ մյուս՝ պարուրակված ծայրին մանեկ (պնդողակ) է հագցվում և պտտական շարժումով ձգվում: Պտտվել կարող են թե՛ հեղույսը, թե՛ մանեկը առանձին-առանձին կամ միաժամանակ: Բառի կառուցվածքը ենթադրել է տալիս դասական մատենագրությամբ չավանդված ***հեղուս(ան)ել** բայի գոյությունը, որ նշանակում է «գամել, հեղույսով ամրացնել» (հմմտ. *կորուսանել*):

Հոլը կոնաձև փոքր խաղալիք է՝ ծայրին կոնաձև մեխ խփած, որ պտտեցվում է հարթ ու ամուր գետնին: **Հոլովել** նշանակում է «պտտել, գլորել, դարձնել, փոփոխել»: Դրանից է կազմված **հոլովակ** «անիվ, փականիվ, ռոլիկ» բառը:

Նույն արմատային փնջի մեջ պետք է մտցնել նաև հայերեն գրական, ժողովրդական կամ բարբառային հետևյալ բառերը, որոնք ստուգաբանական բառարաններում կա՛մ տեղ չեն գտել, կա՛մ նշված են որպես չստուգաբանված: **Հոլել**, **հոլոնել** «գլորել», **հոլնդել** «հրելով գլորել», **հոլոլ** «անիվ», **հոլոլա** «գլորվելը, սայլ», **հոլոփ** «ծխի գալար» (<*pol-), **հալ** «խաղազնդակ», **հալ տալ (հուլ տալ)** «վեր նետել», **հալ** «մղան», **հալալ** «շուրջպարի տեսակ», **հաղաղել** «տրորել» (<*pł-), **հեղ** «երկրորդ հերկ», **հեղինակ** «ղրդիչ, սկզբնապատճառ, հարուցող, վարիչ, ստեղծող, երկասիրող» (<*pel-), **հուլ** «մետաղի մեջ անցք բացելու գործիք» (<*pōl-), **պալուլ (բալուլ)** «փաթեթ, բարուր, խանձարուր» (<*pł-), **պելլել** «պտտվել, շրջագայել» (<*pel-), **պողոսակ (պողոսիկ)** «սեղմիչ պտուտակ կամ անիվ» (<*pol-) և այլն:

Հնդեվրոպական այլ լեզուների մույնարմատ ցեղակից ձևերից են՝ լատ. *pellere*, *pellō* (*pel-nō) «հրել, քշել, շարժել, ցնցել, խփել», *pultāre* «հարվածել, խրել, մխրճել», *pulsus* «1. վանել, քշել, 2. խփել, բախել, 3. բաբախել», *ōpilio* (*oʷj-pilīō) «հովիվ, հոտ քշող՝ վարող», *Palēs* «հովիվների աստված», *appellō*, *-āre* «հասցեագրել», **palpare**, *palpō* «մատ, հպվել, շոշափելով զգալ, դիմել», ումբր. *ar-peltu* «տեղափոխվել», հուն. *πόλος* «առանցք, լիսեռ, հերկած հող», *πολείν* «հերկել, հողը շուռ տալ», *πέλομαι* «շարժվել, դառնալ, վերածվել», *πάλιν* «դարձյալ», *πάλλω*, *πελεμίζω* «թափահարել, ցնցել, ճոճել», հ.հուն. *πάλλω* «ճոճել, ցնցել», հ.իռլ. *laē* «օր» (*plāiom «շրջել»), հ.բ.գերմ. *filz* «թաղիք», ն.բ.գերմ.

falzen «ծալել, հյուսել, միացնել, ձուլել», հ.անգլ. *feelan* «զգալ, ընկալել, հպվել» (նախագերմ. **fōlijana* «ստուգել, զգալ»), **անգլ. feel**, շոտլ. *fele*, արևմտ.ֆրիզ. *fieler*, հոլանդ. *voelen*, ս.գերմ. *fōlen*, *föhlen*, գերմ. *fühlen*, դան. *føle* «զգալ»¹⁰ և այլն¹¹:

Այսպիսով՝ **հեղույս**-ի բնիմաստն է «շարժել, շրջել, պտտել»: Դրա՝ գերմանական ծագման *bol* օտար համարժեքը կասկածով բխեցվում է հնիլ. **b^hel-d-* «խփել» նախաձևից:¹² Ֆրանսերեն *boulon* համարժեքը բխեցվում է հնիլ. **b^hln-* «կտր առարկա» (<**b^hel-* «փչել, ուռչել») նախաձևից¹³:

Ինչ վերաբերում է **հեղինակ** «ղրղիչ, սկզբնապատճառ, հարուցող, վարիչ, ստեղծող, երկասիրող» բառը նույն **pel-/pol-* «շարժել» արմատից բխեցնելու վարկածին, ապա դրա համար հիմք է տալիս Յ. Պոկորնոն բառարանը, որտեղ որպես ***pel-2a** արմատի իմաստներ նշված են ոչ միայն «շարժել, քշել, վարել», այլև «պատճառել»¹⁴: Բառի **-ինակ** վերջնամասի համար կարելի է ենթադրել ***հեղ-էն-ակ** կառուցվածքը, որտեղ առկա է երկու վերջածանց (**-էն**-ի համար հմմտ. *ծի > ծռէն*¹⁵, գուցե նաև *քերծ > քրծէն, ապաւ > ապաւէն*): **Հեղինակ** բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարում են անհայտ ծագման¹⁶:

Պալուլ (բալուլ) «փաթեթ, բարուր, խանձարուր» բառը նույն արմատին կցելը նույնպես հիմնավորվում է իմաստաբանորեն: Այստեղ **-ոլ**-ը ածանց է (հմմտ. տան-**ոլ**, գլ-**ոլ**, զանգ-**ոլ**-ակ, սր-**ոլ**-իկ): Այս բառի **բա-րուր** տարբերակը կարելի է բացատրել **-ոլ**-ին համարժեք **-ուր** ածանցի

¹⁰ Տե՛ս **Pokorny J.**, Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern-München, 2005, էջ 801-802 (<http://dnghu.org/indoeuropean.html>), <https://en.wiktionary.org/wiki/pello#Latin>, <https://en.wiktionary.org/wiki/feel#English> և այլն:

¹¹ Յ. Պոկորնին նույն արմատից է դուրս բերում նաև հուն. (դոր.) *πελάτης* «ղրացի, հարևան», *πλάτις* «կողակից, կին», *πέλας* «մոտ», *ἐμπλήν* «շատ մոտ», *πλήν, πλάν* «ընդ որում, նաև» և այլ բառեր (նույն տեղում), որոնք, սակայն, ավելի հարմար է բխեցնել **pol-/pel-* «կապ» արմատից, որի ժառանգն է նաև հայ. **հաղ-որդ** «կից, միասին, հար» բառը (տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 439):

¹² Տե՛ս http://www.etymonline.com/index.php?allowed_in_frame=0&search=bolt&searchmode=none, <https://en.wiktionary.org/wiki/bolt#English>

¹³ Տե՛ս <https://en.wiktionary.org/wiki/boule#French>

¹⁴ Տե՛ս <http://dnghu.org/indoeuropean.html>, էջ 801-802:

¹⁵ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 364:

¹⁶ Տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 78, **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 456:

առկայությամբ (հմմտ. **թափ-որ**, **բլ-որ**, **մր-որ**, **կտ-որ**) և դրա հետընթաց առնմանությամբ (**բալ-որ** > **բարուր**): Հնարավոր է նաև **բալուլ** > **բարուր** հնչյունափոխություն՝ **խանձարուր** հոմանիշի համաբանությամբ:

Պողոսակ (պողոսիկ) «սեղմիչ պտուտակ կամ անիվ» բառը, կցվելով նույն արմատին (*pel-/*pol-/*pl-), վերահաստատում է դրան հոմանիշ **հեղոյս**-ի վերոհիշյալ ստուգաբանությունը: Այս դեպքում ենթադրելի է ***պող-ոյս**- անհնչյունափոխ նախաձևը, որը, սակայն, դարձել է ոչ թե *պողոյս*, այլ *պողոս*՝ արմատի *n*-ի առնմանությամբ: Հնարավոր է ենթադրել նաև **պող-ou-ակ* և **պող-ou-իկ* սկզբնական կազմությունները, որոնց մեջ *-ou (-աւս)*-ը ածանց է (հմմտ. *ակ-ou*, *ար-ou*): Այսպիսի ենթադրության հիմք է տալիս **պողոսկել** բայը (փոխանակ **պողոսիկ* կամ **պողոսիկ* ենթադրյալ ձևի): Իսկ *o-n* անցումը հայերենում սովորական է ուշ միջնադարի համար¹⁷ (հմմտ. *կարօս* - *կարոս*¹⁸ և այլն):

2. *mē- «չափել» արմատից սերված բառեր

Հայերենում անհայտ ծագման է համարվում **մէտ** արմատը¹⁹, որ մատենագրության մեջ հանդիպում է «(կշեռքի) միջնակետ, սլաք, նժար, ծանրություն, նվազագույն կշիռ, ուղղություն, մտադրություն, նպատակ, ձգտող, հակված, ծուռ, շեղ, հոժար, 100 լիտր» և այլ իմաստներով²⁰: Դրա ածանցյալներից այսօր գործածական են **միտել**, **միտում(նավոր)**, **հոգեմետ**, **հակամետ**, **գուգամիտել** և այլ բառեր: Հ. Աճառյանը նույն արմատի հետ է կապում նաև **մէտ** «մեջտեղը», **մետական** «հասարակ բայ, միջակ» բառերը: Այնուհայտ է, որ արմատի գերիշխող իմաստներն են «կշռել, չափել, ձգտել, հակել»:

3. Պոկորնո բառարանում և Ս. Նիկոլասի կազմած «Հնդեվրոպական ստուգաբանության շտեմարանում» կա *mē- (*me-) «չափել» արմատը²¹, որ թե՛ ձևով, թե՛ իմաստով համապատասխանում է հայերենի **մէտ** արմատին: Դրա ածանցյալներից են՝ *me-t- «կշռել», *mē-ti- «չափ,

¹⁷ Պողոսակ (*պողոսիկ*) բառի գրավոր վկայությունները 14-րդ դարից են սկսվում (տե՛ս **Աճառյան Հ.**, նույն տեղում, հ. 4, էջ 95-96):

¹⁸ Տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., հ. 2, էջ 559:

¹⁹ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 525:

²⁰ Տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., հ. 3, էջ 314:

²¹ Տե՛ս **Pokorny J.**, նշվ. աշխ., էջ 703-704 (<http://www.proto-indo-european.ru/dic-pokorny/iew-m.htm>), <http://www.proto-indo-european.ru/dic-starostin/ice-m.htm>

իմաստություն», *mē-to- «տարի», *me-d- «մտածել, խորհուրդ տալ, բուժել», *mē-ro- «չափել», *mei-no- «ցանկություն, մտադրություն», *mē-no- «չափում, սահման», *mein-, *men-, *mōā- «մտածել», *mūdh- «խոսել, մտածել», *meh- «չափել», *mer-, *smer- «հիշել» և այլն՝ ձայնդարձի տարբեր աստիճաններով հանդերձ²²:

Հայերենի մէտ արմատի համար հարկ է վերականգնել *mē-d- «չափել, կշռել, որոշել, գնահատել, հակվել» նախաձևը:

Ստուգաբանական բառարաններում հ.-ե. նույն արմատի ձայնդարձի տարբեր աստիճաններից են բխեցվում նաև հայերեն միտ(ք), մոիկ < *mēd-, *med-, մատն < *mā-t-, մասն < *mā-k'- բառերը²³:

Տեղակից այլ լեզուների նույնարմատ բառերի ձևերը և իմաստները հաշվի առնելով՝ ենթադրում ենք, որ նույն հ.-ե. արմատից կարող են ծագած լինել նաև ստուգաբանական բառարաններում անհայտ ծագման կամ փոխառյալ համարված հայերեն մերթ, մերաղ «մետաղե նշան»²⁴ (<*me-ro-), մեզել, մէզել «մտմտալ, խոկալ»²⁵ (<*mē-s-), մթեր(ք) (<*me-t-), մատակարար²⁶ (<*mā-d-), մարագ, մառան²⁷ (<*mā-ro-), մուրալ (<-մոյր)²⁸ (<*mō-ro-), մուճիկ «սորում նյութի չափ»²⁹ (<*mō-d-), մեսուր (<*me-s-) «մետաղյա ջրաման՝ բաժակ», գուցե նաև մար «հեղուկի չափ»³⁰ (<*mā-ro-), ման «մի կշռաչափ»³¹ (<*mā-no-), մաքս³² (<*mā-k-so-) բառերը:

²² Տե՛ս նույն տեղերում:

²³ Տե՛ս Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 528, 514, 511, Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 325-326:

²⁴ Տե՛ս Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Եր., 1944, էջ 309:

²⁵ Տե՛ս Մալխասեանց Ս., նշվ. աշխ., էջ 288, 314:

²⁶ Գ. Զահուկյանը համարում է փոխառություն իրանական ենթադրյալ *mātakaδār(a)- ձևից (տե՛ս Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 513): Հ. Աճառյանը տեսնում է անծանոթ մատակ և -արար «անող» բաղադրիչներ (տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 267):

²⁷ Հ. Աճառյանը ենթադրում է *մարան նախաձև՝ որը կարող է փոխառյալ լինել ասորերեն madānā-ից (տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 262-263):

²⁸ Համարվում է փոխառություն պահլավական *mōd ենթադրյալ ձևից (տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 345):

²⁹ Տե՛ս Մալխասեանց Ս., նշվ. աշխ., էջ 363:

³⁰ Համարվում է փոխառություն պահլավական *mār (<*māhr<*mādra) ենթադրյալ ձևից (տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 273):

³¹ Տամարվում է փոխառություն պահլավական *man ենթադրյալ ձևից (տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 250):

Համեմատության համար բերենք այլ լեզուներից նույնարմատ իմաստային զուգաբանությունների օրինակներ (քաղված են Յ. Պոկոռնու հիշյալ բառարանից):

Մէտ «(կշեռքի) միջնակետ, սլաք, նժար, ծանրություն, նվազագույն կշիռ, չափ, 100 լիտր, ուղղություն, մտադրություն, նպատակ, ձգտող, հակված և այլն», հմմտ. լատ. *mētior* «չափել», *mēnsus* «չափ», հ.հնդկ. *mātrā-*, *māti-* «չափ», հուն. *μέτρον* «չափ, սահման», հ.իռլ. *med* «չափ, կշեռք», հ.իսլ. *meta* «գնահատել», *met* «կշիռ», ն.բ.գերմ. *Metze(n)* «չափել»; ռուս. *мера* «չափ», *мерить* «չափել, կշռել», *намерение* «մտադրություն», *мета* «նշան, թիրախ, նպատակ»:

Մետուր «մետաղյա ջրաման, մեծ քաս», հմմտ. լատ. *mensura* «չափանոթ», հ.բ.գերմ. *mez* «չափ, չափանոթ, բաժակ», հ.իսլ. *mællir*, անգլ.-սաքս. *mæle*, *mēle* «բաժակ, չափանոթ»:

Մար «հեղուկի չափ», հմմտ. գոթ. *mēla* «բուշել՝ հեղուկի չափ»; հուն. *μέδιμνος* «հեղուկի չափ»; լատ. *modius* «հեղուկի չափ»:

Մուճիկ «սորուն նյութի չափ, ավուճ», **ման** «մի կշռաչափ», հմմտ. *մնաս* (հուն.) «մի կշռաչափ», հ.բ.գերմ. *mezzo* «սորուն նյութի չափ», անգլ.-սաքս. *mitta* «ցորենի չափ», գոթ. *mēla* «ցորենի պարկ, չափ»:

Մերք «երբեմն, ինչ-որ պահի, որոշ ժամանակ», հմմտ. գոթ. *mēl* «ժամանակ», հ.իսլ. *māl* «չափ, ժամանակակետ, ուտելու ժամ», անգլ.-սաքս. *mæll*, հ.բ.գերմ. *māl* «ժամանակ», լիտվ. *mētas* «տարի, ժամանակ, չափ», լատվ. *meŗs* «ժամանակաշրջան», մ.ս.գերմ. *mōte* «ժամկետ», հ.անգլ. *mæll* «չափ, ժամանակ, դիպված, ուտելու ժամ», մ.ս.գերմ. **mēla*, արմ.ֆրիզ. *miel*, հոլ. *maal* «ճաշ, ժամանակ, պատահար», գերմ. *Mal* «ժամանակ»:

Մերաղ «մետաղե կամ փղոսկրե կլոր նշան», հմմտ. հ.իսլ. *mōt* «նկար, նշան», ռուս. *метить* «նշան բռնել; միտել», *мета* «նշան, նպատակ», բուլղ. *meta* «նշան, խայտ, պիսակ»:

³² Համարվում է փոխառություն ասորերեն *maxsā* ձևից (տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 292):

Մեզել, մեզել «մտմտալ, խոկալ, մտածմունքի մեջ ընկնել», հմմտ. ռուս. мысль «միտք», հուն. μέρερος «մտահոգություն», մ.իռլ. smāinim «մտածում են», հայ. *միտք*:

Մուրալ (մոյր) «ողորմություն խնդրել, խնդրելով պարեն հայթայթել, ողորմությամբ իր կարիքները հոգալ», **մուր** «կարիքավոր, կարոտ», հմմտ. հուն. μέριμνα «հոգս, խնամք, մտածմունք», úpa-māti- «հատկացում, բաժին», կռմն. mennaf «ուզում են», կիմր mwyg «բավարարում»:

Մթեր(ք) «պարեն, հումք, կույտ, դեզ, դիզված բան, շտեմարան, պահուստ», **մառան** «մթերանոց, շտեմարան, մկուղ», **մարագ** «անասնակերի մթերանոց, հարդանոց», հմմտ. անգլ. meal «ճաշ», գերմ. Mahl «ճաշ», շվեդ. mál «ճաշ»; լիտվ. mets «ցորենի կույտ»:

Մատակարար «կերակրապետ, կերակուրի մասին հոգացող, մթերք հասցնող՝ ապահովող», հմմտ. հուն. μῆδομαι «մտադրվել, ձեռնարկել, ապահովել, հոգալ», μῆδεα «հոգացություն, մտածմունք», mīmnaśskō, -omai, mnāśai, -asthai «հիշեցում, ապահովում», μέριμνα «հոգս, խնամք, մտածմունք», անգլ.-սաքս. mōt «մաքս, առաքում, մատակարարում»; կիմր. mwyg «բավարարում», մ.ս.գերմ. *maimrōnā «հոգալ, անհանգստանալ»:

Մաքս «սահմանային տուրք, հարկ», հմմտ. գոթ. mōta «մաքս», անգլ.-սաքս. mōt «մաքս, առաքում»:

Ի դեպ, հայերենում կա նաև **մետ** «շատ, կարի, հավետ» չստուգաբանված բառը³³, որը, սակայն, պետք է կապել ոչ թե վերոհիշյալ, այլ դրան համանուն հ.-ե. *mē-d- «շատ» արմատի հետ³⁴:

Այսպիսով՝ այս նոր ստուգաբանությունները հիմնավորված են թե՛ հնչյունական (ձևային-մյութական), թե՛ բառակազմական, թե՛ իմաստային, թե՛ համեմատական վերլուծություններով:

Բանալի բառեր – *հայոց լեզու, արուգաբանություն, հնդեվրոպական նախալեզու, արմատ, ածանցյալ, անհատ, չայնդարձ, արմատային տարբերակներ*:

³³ Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 306, Մալխասեանց Ս., նշվ. աշխ., էջ 307:

³⁴ Տե՛ս <http://www.proto-indo-european.ru/dic-starostin/iee-m.htm>

ОГАНЕС ЗАКАРЯН – Армянские слова, производные от индоевропейских корней *pel- «двигать» и *mē- «мерить». – Некоторые армянские слова считаются производными от индоевропейских корней *pel- «двигать» (հեղ/հաղ, հոլ, հոլով, հալածել, պողել/պուղել) и *mē- «мерить» (միտք, մտիկ, մատն, մասն). В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагается пополнить эти ряды некоторыми другими словами, до сих пор считающимися заимствованными или же не этимологизированными. Эти слова: **հեղոյս** «болт», **հոլել**, **հոլունել**, **հոլնդել** «катить», **հոլոլ** «колесо», **հոլոլա** «скатывание; тележка», **հոլովի** «изгиб дыма» (<*pol-), **հալ** «мяч», **հալ տալ (հոլ տալ)** «подкидывать», **հալ** «бульдозер», **հալայ** «вид хоровода», **հաղաղել** «мять, натирать» (<*p|-), **հեղ** «второе колошение», **հեղինակ** «автор» (<*pel-), **հոլ** «бур» (<*pōl-), **պալուլ (բալուլ)** «пелёнки» (<*p|-), **պելլել** «крутиться, развезжать» (<*pel-), **պողոսակ (պողոսիկ)** «винт; колесо» (<*pol-), **մէտ** «стрелка весов; тенденция» (<*mē-d-), **մերթ** «иногда», **մերալ** (<*me-ro-) «жетон», **մեզել/մեզել** (<*mē-s-) «задуматься», **մթեր(ք)** «продукты» (<*me-t-), **մատակարար** «поставщик» (<*mā-d-), **մարագ** «сарай» (<*mā-ro-), **մատան** «кладовая» (<*mā-ro-), **մուրալ (<մոյր)** «попрошайничать» (<*mō-ro-), **մուճիկ** «мера для сыпучих» (<*mō-d-), **մեսուր** (<*me-s-) «мензурка», возможно также **մար** (<*mā-ro-) «мера для жидкостей», **ման** (<*mā-no-) «мера для тяжести», **մարս** «пошлина» (<*mā-k-so-).

Ключевые слова: армянский язык, этимология, праиндоевропейский язык, корень, дериват, детерминатив, чередование, корневые варианты.

HOVHANNES ZAKARYAN – Armenian Words Generated from I. E. Roots *pel- "to Move" and *mē- "to Measure". - There are some Armenian words considered to be generated from I. E. roots *pel- "to move" (հեղ/հաղ, հոլ, հոլով, հալածել, պողել/պուղել) and *mē- "to measure" (միտք, մտիկ, մատն, մասն). The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward to replenish these series with some other Armenian words still not etymologized or considered to be borrowings. They are: **հեղոյս** "bolt", **հոլել**, **հոլունել**, **հոլնդել** "trundle", **հոլոլ** "wheel", **հոլոլա** "rolling; cart", **հոլովի** "smoke bend, gyre" (<*pol-), **հալ** «ball», **հալ տալ (հոլ տալ)** "throw up", **հալ** «bulldozer», **հալայ** «a kind of roundelay», **հաղաղել** «to knead» (<*p|-), **հեղ** «second earing», **հեղինակ** «author» (<*pel-), **հոլ** «borer» (<*pōl-), **պալուլ (բալուլ)** «swaddle» (<*p|-), **պելլել** «to spin,

drive around” (<*pel-), **պողոսակ** (**պողոսիկ**) “screw; wheel” (<*pol-), **մէտ** “arrow of weigher; tendency” (<*mē-d-), **մեքք** “sometimes”, **մերաղ** (<*me-ro-) “token”, **մեզել/մէզել** (<*mē-s-) “be lost in thought”, **մքեր(ք)** “hoard” (<*me-t-), **մատակարար** “provider” (<*mā-d-), **մարագ** “barn” (<*mā-ro-), **մառան** “pantry” (<*mā-ro-), **մուրալ** (<մոյր) “to beg” (<*mō-ro-), **մուճիկ** “measure for bulk” (<*mō-d-), **մեսուր** (<*me-s-) “beaker”, maybe also **մար** (<*mā-ro-) “measure for liquids”, **ման** (<*mā-no-) “a kind of measure”, **մաքս** “tollage, tax” (<*mā-k-so-).

Keywords: *Armenian, etymology, Protoindoeuropean, root, derivative, determinative, vowel gradation, root variants.*

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՆԱԻՐԱ ՊԱՐՈՆՅԱՆ

(ԵՊՀ)

susannagrigoryan@ysu.am, nairaparonyan@ysu.am

ՄԱԿՐԱՅ ԽՈՍՔԻ ՄԱՍԸ՝ ԸՍՏ Մ. ԱՍԱՏՐՅԱՆԻ

«Մակրայ է մասն բանի անխաղաց, ստոր բայի ասացեալ կամ մակասացեալ բայի»¹: Իր անվանումն այս խոսքի մասը ստացել է շարահյուսական, կիրառական հատկանիշից ելնելով: Մակայն բացի բուն մակրայից՝ հույն քերականները նրա մեջ էին միավորել ձայնարկությունները, մակրայական դերանունները (ցուցական և հարցական), եղանակավորող բառերն ու բառ-մասնիկները, ինչպես նաև *այո, ոչ, չէ* և նման պատասխանական բառերը: Ըստ Գ. Ջահուկյանի՝ ձայնարկությունների՝ բայի վրա դրվող բառեր կամ մակրայ համարվելու տեսակետը հույների մոտ առաջացել է «բայ» և «բան» կամ «խոսք» հասկացությունների նախնական անանջատ ըմբռնումից, երբ բայը՝ որպես առանձին խոսք կազմող բառ, նույնացվել է «բանին», ուստի և «բանին» կամ «խոսքին» զգացմունքային երանգներ տվող ձայնարկությունները համարվել են բային զգացմունքային երանգներ տվող մակրայներ²: Այսպիսով՝ տարբեր նշանակությունների ու բնույթի այս բառախմբերի մտցնելը մակրայի մեջ, ինչպես նաև այն, որ մակրայը դիտվում է իբրև միայն բայի լրացում, մի կողմից նեղացնում են նրա խոսքիմասային նշանակությունը, մյուս կողմից անհամապատասխան են դարձնում այդ սահմանումը մակրայի մեջ խմբված այլազան բառատեսակների համար: Հետագայում, իհարկե, որոշ քերականներ ձայնարկությունները զատել էին մակրայներից: Փաստորեն, մակրայ խոսքի մասը շարահյուսական

¹ Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, С. Петербург, 1915, էջ 31:

² Տե՛ս Զահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները միջնադարյան Հայաստանում, Եր., 1954, էջ 78:

դերով ճանաչելը հասավ մինչև Մ. Աբեղյան ու նրա հետևորդները: Մ. Աբեղյանը «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ գրում է, որ խոսքի մասերն ըստ իրենց նշանակության լինում են՝ 1) հատկանիշ և դեմք, միաժամանակ ստորոգում ցույց տվող բառեր, այսինքն՝ հատկանիշի վերագրումը դեմքին: Այս բառերը կոչվում են բայ: 2) Ինքնակա գոյություն ունեցող առարկաներ ցույց տվող բառերը կոչվում են գոյական: 3) Ոչ-ինքնակա հատկանիշներ ցույց տվող բառեր, որոնք բաժանվում են երկու խմբի՝ ա) իբրև առարկայից անբաժան, առարկայի բնության մեջ գտնված մի որպիսություն, դրություն և կոչվում են ածական, բ) իբրև առարկայի հատկանիշ կամ իբրև հատկանիշի հատկանիշ և կոչվում են մակբայ³: Ըստ Աբեղյանի՝ ածականն ու մակբայը մակադրական (վերադրական) բառեր են, որոնք ցույց են տալիս հատկանիշ: Սրանց տարբերությունն այն է, որ ածականը ցույց է տալիս առարկայի հատկանիշ, իսկ մակբայը՝ հատկանիշի հատկանիշ⁴: «Մեր մակբայներն ամենամեծ մասամբ դրությամբ միայն մակբայ են. երբ ածականների ցույց տված հատկանիշը վերաբերում է ոչ թե առարկային, այլ առարկայի հատկանիշին, այն ժամանակ ածականները առնվում են իբրև մակբայ, կամ թե, երբ ածականը խոսքի մեջ դրվում է ոչ թե գոյական անվան վրա, այլ մի ածականի ու բայի վրա, այն ժամանակ ածականը կիրառվում է իբրև մակբայ. օրինակ՝ «սաստիկ քամի», «սաստիկ կարմրություն» կապակցությունների մեջ «սաստիկ» բառն ածական է, իսկ «սաստիկ կարմիր», «սաստիկ կարմրել» կապակցությունների մեջ նույն բառն առնվում է իբրև մակբայ: Հայերենում մակբայն, ուրեմն, ածականի առանձին կիրառությունն է շարահյուսական կապակցության մեջ»⁵: Այնուամենայնիվ, Մ. Աբեղյանը հնարավոր է համարել ածական-մակբայ տարբերակում, քանի որ գտել է հայերենում որոշ քանակի բառեր, որոնք բուն մակբայներ են, այսինքն՝ ունեն ածականից տարբեր գործառական հատկանիշ, անվան վրա չեն դրվում և ունենում են միայն պարագայական կիրառություն: Մ. Ասատրյանը գրում է, որ մակբայը ընդհանուր եզրեր ունի ածականի հետ, քանի որ երկուսն էլ ցույց են տալիս հատկա-

³ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 106:

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում:

նիշ: Սակայն, ի տարբերություն ածականի, որն առարկայի հատկանիշ է մատնանշում, մակբայը ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ: Մ. Ասատրյանը նշում է, որ հայերենի համար սա էական նշանակություն չունի, քանի որ որակական ածականները ազատ կարող են գործածվել բայերի հետ՝ ցույց տալով գործողության հատկանիշ: Այս առանձնահատկությունը ժամանակակից հայերենը ժառանգել է գրաբարից: Սակայն գրաբարում ածականը գոյականի հետ գործածվելիս համաձայնում էր թվով ու հոլովով (հատկապես ետադաս գործածվելիս): Մ. Ասատրյանը նկատում է, որ հայերենի պատմական զարգացման ընթացքում վերանում է ածականի և գոյականի համաձայնությունը, որն էլ ավելի է նպաստում որակական ածականների մակբայական կիրառությանը: Եղած փաստերի հիման վրա լեզվաբանը եզրակացնում է, որ որակական ածականներն իրենց բառիմաստի մեջ համատեղում են և՛ առարկայի, և՛ գործողության հատկանիշի իմաստ, օր.՝ **տխուր մարդ և տխուր քայլում էր**: Հակադրվելով Ս. Աբրահամյանին՝ Մ. Ասատրյանը գրում է, որ չի կարելի բառի ընդհանուր իմաստն ու շարահյուսական կիրառությունները հակադրել իրար և դրանց միջև անջրպետ տեսնել⁶: Ըստ Ս. Աբրահամյանի՝ մակբայներին հարաբերակից են որակական ածականները, որոնք կարող են դրվել բայի վրա և կատարել պարագայի պաշտոն, օրինակ՝ լավ աշխատեց, բարձր խոսեց: «Նույն ածականը, դրվելով առարկայի անվան վրա, ցույց է տալիս նրա հատկությունը: Հետևապես պարագայական ֆունկցիան ածականի համար կիրառական հատկանիշ է, շարահյուսական դեր և ոչ թե խոսքի մասային առանձնահատկություն», - գրում է Ս. Աբրահամյանը⁷: Իսկ ըստ Մ. Ասատրյանի՝ հայերենի որակական ածականները և մակբայները տարբերակված չեն, և միևնույն բառը կարող է հանդես գալ և հանդես է գալիս ածականի ու մակբայի դերով: «Մակբայի հիմնական շարահյուսական ֆունկցիան այն է, որ դրվում է բայերի վրա՝ ցույց տալով գործողության

⁶ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Գ, Եր., 1977, էջ 208:

⁷ **Աբրահամյան Ս.**, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Եր., 1965, էջ 228:

ձևը, չափն ու քանակը և հանգամանքները (տեղ, ժամանակ և այլն)»⁸: Մակբայը կարող է դրվել նաև ածականների կամ մակբայների վրա՝ առավելապես ցույց տալով հատկանիշի աստիճանը: Հազվադեպ մակբայները կարող են գործածվել նաև թվականների հետ (շուրջ 3 տարի, ուղիղ 50 օր):

«Աշխարհաբարի քերականություն» դասագրքի շարահյուսության բաժնում Մ. Աբեղյանը պարագաները բաժանում է բուն պարագաների և պարագայական խնդիրների: Բուն պարագաներն արտահայտվում են մակբայներով և իբրև մակբայ գործածված ածականներով, իսկ պարագայական խնդիրներն արտահայտվում են կամ գոյականով, կամ գոյական + կապով: Ըստ նրա՝ պարագայական խնդիրները միջին տեղ են գրավում բուն պարագաների, այսինքն՝ մակբայների, և առարկայական խնդիրների միջև: «Մի կողմից այս լրացումները **խնդիր** են, որովհետև պահում են իրենց հոլովական ձևերը և հոլովներին հատուկ նշանակությունները: Մյուս կողմից՝ սակայն, դրանք **պարագա** են, որովհետև խոսքի մեջ դրվելով բայի վրա՝ կորցնում են իրենց առարկայական իմաստը, այսինքն չեն մտածվում իբրև **բան, ինչ** կամ առարկայական խնդիր, ինչպես են կրող, ներգործող և բնության խնդիրները, այլև առնվում են իբրև տեղ (որ, որտեղ), ժամանակ (երբ), ձև կամ որակ (ինչպես) և քանակ (որքան): Խոսքի մեջ ունեցած իրենց նշանակությամբ ուրեմն այս լրացումները պարագաների կարգին են պատկանում, բայց իսկական պարագա կամ մակբայ չեն, որովհետև, ինչպես ասացինք, պահում են իրենց հոլովական նշանակությունը»⁹: Հետևաբար «Նա քաղաքից վերադարձավ գյուղ» տիպի նախադասության մեջ, Աբեղյանի մոտեցմամբ, քաղաքիցը և գյուղ-ը, թեև խոսքի մեջ տեղի պարագա են, առարկայական իմաստ չեն արտահայտում, բայց և այնպես մակբայ չեն, որովհետև պահում են բացառական և հայցական հոլովների իմաստը և ձևը: Ըստ Մ. Աբեղյանի՝ ժամանակի անուններից բուն պարագաներին մոտենում են **այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, հիմի, առաջ** բառերը, որոնք խոսքի մեջ պարագայական նշանակություն ունեն և համարվում են մակբայ: «Բայց

⁸ Տե՛ս Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 209:

⁹ Տե՛ս Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 311-312:

այդ բառերը մակբայ համարելու հիմք չկա. մակբայներն անփոփոխ մնացող բառեր են, մինչդեռ դրանք հոլովվող բառեր են և խոսքի մեջ կատարելապես պահում են իրենց հոլովական նշանակությունները, ինչպես ամեն ուրիշ ժամանակի անուն՝ **շաբաթ, ամիս, տարի, առավոտ, իրիկուն** և այլն»¹⁰: Այստեղ Մ. Ասատրյանը հակադրվում է Մ. Աբեղյանին: Քանի որ Մ. Ասատրյանի հետաքրքրության շրջանակը գոյականի ու մակբայի հարաբերակցությունն ու տարբերակումն էր, հետևապես նա կարծում է, որ ճիշտ չէ հավասարության նշան դնել **այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, հիմի, առաջ և շաբաթ, ամիս, տարի, առավոտ, իրիկուն** բառերի միջև, ինչպես այդ անուն է անվանի լեզվաբանը: Մ. Աբեղյանի համար այս երկու խմբի բառերը հոլովվում են և պահում են իրենց հոլովական նշանակությունը, հետևապես **այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, հիմի, առաջ** բառերը գոյականներ է համարում: Մ. Ասատրյանի համար ընդունելի չէ, որ նշված ընդհանրությամբ այս բառերը մի խմբի մեջ ընդգրկվեն: Նրա համար շատ կարևոր է նաև այդ բառերի իմաստային ու կիրառական տարբերությունները հաշվի առնելը: Ըստ Մ. Ասատրյանի՝ առաջին խմբի բառերը հոգնակի չեն կարող կազմել, իսկ երկրորդները գործածվում են հոգնակի թվով (օր.[՝]**շաբաթներ, ամիսներ** և այլն): Այդ պատճառով էլ սրանք կարող են քանակական թվականների հետ կապակցվել՝ **երկու շաբաթ, հինգ տարի**, իսկ **այսօր, երեկ, այժմ** բառերը չեն կարող կապակցվել քանակական թվականների հետ (դիցուք, **երկու այսօր, չորս երեկ** և այլն ձևեր լեզվում գոյություն չունեն): Բացի այս, առաջին խմբի բառերը (**այսօր, երեկ, վաղը...**) որոշիչ ընդունել չեն կարող, իսկ **շաբաթ, ամիս, տարի** բառերը ազատորեն որոշիչներ են ընդունում: Վերոնշյալ առաջին խմբի բառերը ենթակայի ու խնդրի պաշտոնով հանդես գալ չեն կարող, իսկ երկրորդ խմբի բառերի գործածությունն այդ պաշտոններով սովորական է: Այս տարբերությունները մատնանշելուց հետո Մ. Ասատրյանը եզրակացնում է, որ **շաբաթ, ամիս, տարի** և այլ բառերը արտահայտում են առարկայական նշանակություն, իսկ **այսօր, երեկ, վաղը, այժմ** բառերի առարկայական նշանակությունը եթե

¹⁰Տե՛ս **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 312:

խապառ չի մարել, ապա որոշակի չափով խամրած է¹¹: Հետևապես սրանք ավելի մակբայներ են, քան գոյականներ, քանի որ խոսքի մեջ հանդես են գալիս մակբային հատուկ շարահյուսական պաշտոններով: Հ. Բարսեղյանը, համաձայնելով Մ. Ասատրյանի բերած փաստարկներին, գրում է, որ լեզվաբանի «վկայակոչած տարբերակիչ հատկանիշներին պիտի ավելացնել նաև առկայացման հատկանիշը, որ բնորոշ է գոյականին, և մակբայն ունենալ չի կարող»¹²: Ինչ վերաբերում է **այսօր, երեկ, վաղը, առաջ, ներս, ներքև, վերև** ժամանակային և տարածական նշանակություն ունեցող բառերի հոլովական առանձնահատկությանը, ի տարբերություն Մ. Արեղյանի՝ Մ. Ասատրյանն այդ իրողությունը չի համարում խանգարիչ հանգամանք՝ թվարկված բառերը ոչ թե գոյական, այլ մակբայ ճանաչելու համար: Նա իր կարծիքը հիմնավորում է հետևյալ դատողությամբ. «Այս բառերի մեջ առարկայականության որոշ հետքեր պետք է տեսնել այնքանով, որքանով որ վերջիվերջո դրանք հոլովով բառեր են, բայց պետք է նկատի ունենալ, որ դրանց հոլովական ձևերը՝ **այսօր-այսօրվա-այսօրվանից, վաղը-վաղվա-վաղվանից** և այլն, հանդես են գալիս պարագայական (ուղղանկյանը և բացառականը) կամ որոշչային (սեռական-տրականը) ֆունկցիաներով, այսինքն՝ ոչ առարկայական, ոչ գոյականական ֆունկցիաներով»¹³: Այդ կարգի ժամանակային և տարածական նշանակության գոյականների անցումը մակբայների ավարտված համարելու դեպքում սրանց հոլովական առանձնահատկությունը պետք է գնահատել որպես խոսքիմասային նոր իմաստ ձեռք բերած այդ բառերի՝ գոյականի հետ ունեցած ստորին կարգի կապ, որ բնորոշ չէ բուն մակբայներին: Իսկ եթե այդ կարգի բառերի խոսքիմասային անցումն ավարտված չենք համարում, կամ դրանք դեռևս գոյական ենք ճանաչում, ապա պետք է փաստել, որ մակբայի պաշտոնում մշտապես գործածվելու հետևանքով այդ բառերը հոգնակիության, հատկանիշ կրելու, առկայացման քերականական առանձնահատկությունների աստիճանական կորուստ են դրսևորում: Մ. Ասատրյանը եզրակացնում է, որ երբեմն շատ դժվար է, նույնիսկ անհնար

¹¹ Տե՛ս **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 224:

¹² **Բարսեղյան Հ.**, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1980, էջ 476:

¹³ **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 224:

առանձնացնել գոյականն ու մակբայը միմյանցից, քանի որ հայ քերականությունների մեջ տվյալ հարցի վերաբերյալ հատուկ չափանիշներ մշակված չեն: Ահա այս առումով էլ Մ. Ասատրյանը նշում է, որ Ս. Արքահամյանը իր «Չթեքվող խոսքի մասերը...» աշխատության մեջ որոշակի հստակություն չի մտցնում: Մի կողմից Ս. Արքահամյանը **կեսօրին, կեսգիշերին, գիշերով, ցերեկով** համարում է մակբայներ, իսկ մյուս կողմից՝ *Երեխաները խաղում են դրսում: Ներսում շար շոգ է* նախադասությունների **դրսում, ներսում** բառերը համարում է գոյականներ՝ պատճառաբանելով, որ դրանք, թեև կատարում են պարագայի պաշտոն, բայց մակբայ չեն, որովհետև հատկանիշի հատկանիշի իմաստով չէ, որ բնորոշվում են¹⁴: Ըստ Ս. Արքահամյանի՝ այդ իմաստը դրսնորվում է նրանց թեքված ձևի համապատասխան շարահյուսական կիրառության մեջ, իսկ բառի խոսքիմասային պատկանելությունը չի կարելի որոշել նրա որևէ ձևի կիրառության մեջ դրսնորված իմաստով, և ոչ էլ այդ ձևերը մակբայ համարել, քանի որ դրանք գոյականների թեքված ձև են՝ վերջինիս հատուկ շարահյուսական դերով¹⁵: Այս պատճառով էլ Մ. Ասատրյանը նշում է, որ հայ քերականության մեջ գոյականի և մակբայի տարբերակման ու սահմանագծման չափանիշ չկա: Մակբայների ներքին իմաստային կողմը նկատի ունենալով՝ Մ. Ասատրյանը դրանք բաժանում է երկու խմբի՝ **պարագայական**, որոնք ցույց են տալիս գործողությանը ուղեկցող հանգամանքները (տեղ, ժամանակ և այլն), և **հատկանշային**, որոնք արտահայտում են գործողության որակային ու քանակական տեղի և ժամանակի, իսկ հատկանշայինները՝ որակային (ձևի) և քանակային (չափ ու աստիճանի)¹⁶: Ըստ Ասատրյանի՝ տեղի մակբայները թե՛ քանակապես, թե՛ իմաստային բազմազանությամբ զիջում են ժամանակի մակբայներին: Սակայն տեղի մակբայների քանակը լեզուն չի համալրում, քանի որ տեղի պարագայական իմաստները ավելի շատ «արտահայտվում են տեղի իմաստ արտահայտող գոյականների հոլո-

¹⁴ Տե՛ս **Արքահամյան Մ.**, նշվ. աշխ., էջ 230, 259:

¹⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 231:

¹⁶ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Գ, Եր., 1977:

վական ձևերի միջոցով, ըստ որում տեղի պարագայական իմաստներ կարող են արտահայտել բոլոր հոլովներն առանց բացառության¹⁷:

Այսպիսով, Մ. Ասատրյանը եզրակացնում է, որ «լրիվ տրամաբանական ու հետևողական և հակասություններից բացարձակապես զերծ քերականական համակարգեր չեն եղել և, ըստ երևույթին չեն էլ լինի, որովհետև կենդանի ու զարգացող և ժողովրդի բերանում հավերժ ծփացող այդ անհուն օվկիանոսը քերականական կադապարներով ու կանոններով պարփակելն ուղղակի անհնար է, և լեզվաբանը միշտ վերահասու է լեզվի միայն ամենաընդհանուր օրինաչափություններին»¹⁸:

Բանալի բառեր – *համաչայնություն, մակրայ, կիրառություն, ածական անուն, խոսքիմասային առանձնահատկություններ, ընդհանուր իմաստ, պարզա, բառիմաստ*:

СУСАННА ГРИГОРЯН, НАИРА ПАРОНЯН – Наречие как часть речи по Асатрян. – В течение развития армянского языка исчезает согласование между существительным и прилагательным, что еще более способствует использованию прилагательных в виде наречия. На основе существующих фактов М. Асатрян приходит к выводу, что качественные прилагательные в своей основе объединяют признак предмета и признак действия. Не соглашаясь со мнением С. Абрамяна о том, что обстоятельственная функция для прилагательного прикладной признак, а не особенность части речи, известный лингвист пишет, что качественные прилагательные и наречия в армянском языке не имеют вариантности, и поэтому одно и то же слово может выступать и в роли прилагательного и в роли наречия. По мнению М. Асатряна нельзя основной смысл и синтаксическое значение слова противопоставлять друг другу и рассматривать между ними границы.

Ключевые слова: *согласование, наречие, применение, имя прилагательное, частеречные особенности, общее значение, обстоятельство, значение слова.*

SUSANNA GRIGORYAN, NAIRA PARONYAN - Adverb as a Part of Speech according to Manvel Asatryan. - During the historical development of Armenian the equivalence between adjective and the noun disappears which

¹⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 243:

¹⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 226-227:

contributes to the adverbial use of qualitative adjectives. On the basis of the existing data M. Asatryan comes to the conclusion that the qualitative adjectives have both the meaning of a thing and that of an action in their word-meaning. M. Asatryan did not agree with S. Abrahamyan according to whom the adverbial function is a functional feature for the adjective and not a part-of-speech meaning peculiarity, the great linguist writes that the qualitative adjectives of Armenian are not distinguished and the same word can have both the role of an adjective and that of an adverb. According to M. Asatryan, it is not correct to contrast the general meanings of the words and their syntactic usage and see a gap between them.

Keywords: *equivalence, adverb, usage, adjective, part-of-speech meaning peculiarities, general meaning, adverbial modifier, word-meaning.*

ՀԵՂԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

(ՎՊՀ)

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿԵՏԱՊՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Կետադրությունը նշանային համակարգ է, որ կոչված է ծառայելու ավելի ընդհանուր նշանային համակարգի՝ լեզվի գրավոր արտահայտմանը: Այն նշանային համակարգ է նշանային համակարգում, ասել է թե՛ լեզվի ենթահամակարգերից մեկը: Լեզվի ընդհանուր նշանների համակարգում կետադրական նշանները պետք է գնահատել որպես երկրորդ աստիճանի նշաններ: Ի տարբերություն առաջին կարգի նշանների (բառ, բառակապակցություն, նախադասություն, տեքստ)՝ կետադրական նշանները խոսքաշարից դուրս իմաստագուրկ են. ունենալով որոշակի իմաստակազմիչ և իմաստագատիչ դերեր՝ նրանք նշանավորվում են միայն առաջին կարգի նշաններին կից՝ իրենց կոնկրետ կիրառություններում: Այսինքն՝ առաջնային լեզվանշանների համեմատությամբ՝ սրանք, ի հավելում լեզվանշանի սոսյուրյան ըմբռնմանը¹, միակողմանի նշաններ են:

Չնայած կետադրական նշաններին վերագրվող նորմատիվ դերերին՝ գրողները, սակայն, բոլոր ժամանակներում էլ փորձել և փորձում են իրենց ստեղծագործությունները «համեմել» այլընտրանքային կետադրությամբ, ինչը հայտնի է «հեղինակային կետադրություն» անվամբ: Նկատելի է, որ արդի գրականության ներկայացուցիչները առավելագույնս են օգտվում այդ ազատությունից, ինչը կարող է ունենալ տարբեր պատճառներ, նպատակներ և արդարացված լինելու աստիճաններ:

«Հեղինակային կետադրություն» կոչվածը կարող է ընկալվել երեք կերպ՝

¹ Տե՛ս Սոսյուր Ֆ. ղը, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., 2008, էջ 104-107:

1. հեղինակի՝ նորմայից շեղվող կետադրությունը՝ վերցված ընդհանուր,

2. հեղինակի՝ նորմայից շեղվող կետադրության այն մասը, որ կրում է նպատակաուղղված բնույթ և կոչված է գեղագիտական որևէ լուծում իրականացնելու,

3. հեղինակի կողմից կիրառված կետադրությունն առհասարակ՝ իր կանոնավոր և այլընտրանքային դրսևորումների համակազմով:

Հեղինակային կետադրությունը հայ բանասիրության ուշագրավ, բայց չուսումնասիրված ոլորտներից է:

Այստեղ մենք փորձել ենք համակարգի բերել ոլորտին առնչվող հիմնահարցերը՝ անդրադառնալով հեղինակային կետադրություն ուսումնասիրելու վտանգներին և սկզբունքներին, ոլորտի հիմնական հասկացություններին, ուսումնասիրություն ծավալելու հնարավոր ուղիներին: Հակիրճ անդրադարձով փորձել ենք ուրվագծել նաև արդի հայ արձակույթում նկատված հեղինակային կետադրության միտումները, նախասիրությունները, հաջողված և կասկածելի լուծումները:

1. Հեղինակային կետադրություն ուսումնասիրելու վտանգները և սկզբունքները: Ինչպես ցույց է տվել մեր ուսումնասիրությունը, հեղինակային կետադրությունը հեղինակին կարող է տալ ռճային գրավոր խոսքով ներկայանալու լրացուցիչ հնարավորություններ: Այն հավելյալ, բայց ոչ ավելորդ ազատություն է, որից, ինչպես ազատության բոլոր դրսևորումներից, անհրաժեշտ է օգտվել որոշակի չափաբաժնով միայն՝ գերծ մնալով ծայրահեղություններից և կամայականություններից, և, որ ամենից անթույլատրելի է, հեղինակային կետադրությունը չափտի դառնա կետադրության նորմերի չիմացությունը քողարկելու միջոց: Հեղինակային կետադրություն ուսումնասիրելու հաջողությունը, կարծում եմ, պայմանավորված է լեզվաբանական և գրականագիտական գիտելիքների համակցված գործարկմամբ:

Պետք է ընդունել, սակայն, որ այս ոլորտը հավակնում է լինել լեզվաբանության ոլորտներից ամենից վտանգաշատը: Այսպես՝

- Շեղումների համար հիմնավորումների փնտրտուքը կարող է հանգեցնել ծայրահեղությունների. օբյեկտիվ մնալը դառնում է բարդագույն խնդիր:

- Հարց է՝ մեր ձեռքի տակ եղած տպագիր տեքստը որքանով է համապատասխանում հեղինակի գրչին. նկատի ունենք խմբագրական, շարվածքային միջամտությունները կամ առցանց տարբերակի որակը:
- Այս վտանգների հակադարձումներն էլ կարող են լինել աշխատանքային սկզբունքներ՝ ձգտել առավելագույն օբյեկտիվության և աշխատել հավաստի աղբյուրների հետ:

2. Ոլորտի հիմնական հասկացությունները: Առաջարկում ենք առանձնացնել և սահմանել մի շարք հասկացություններ: Նախ կառանձնացնեինք «հեղինակային» և «այլընտրանքային կետադրությունները»: Այլընտրանքային կետադրությունն ընդունված նորմերից շեղվող կետադրությունն է, որ կարող է հանդիպել ինչպես գրողների, այնպես էլ ցանկացած լեզվակրի գրավոր խոսքում: Այդպես կարելի է անվանել մաս հեղինակային կետադրությունը՝ առաջին կետում նշված իմաստով:

Կանոնավոր կետադրությունը գրական լեզվի կանոններին համապատասխանող կետադրությունն է, ինչին հակադրվում են հեղինակային, այլընտրանքային, բարբառային-խոսակցական, անգրագետ, ժարգոնային, չընդունված կետադրությունները:

Բարբառային-խոսակցական կետադրությունը վերաբերում է միայն առողջանական նշաններին, որոնք համապատասխան բարբառախոս գրվածքում դրվում են գրականից շեղվող դիրքերում:

Ժարգոնային կետադրությունը որևէ ժարգոնի գրավոր խոսքում հանդիպող «առանձնահատուկ» կետադրությունն է, օրինակ՝ համացանցային գրություններում հանդիպող կետադրությունը: Չի բացառվում ժարգոնային տեքստի՝ համապատասխան կետադրությամբ ներմուծումը գեղարվեստական տեքստի տարածք՝ իբրև տեքստ տեքստի մեջ:

Անգրագետ կետադրությունը գրական լեզվի նորմերից շեղվող կետադրությունն է՝ բացառած հեղինակային կետադրությունը:

Չհիմնավորվող կետադրությունը վերագրելի է միայն հեղինակային կետադրությանը. դա ոչ կանոնավոր և տվյալ պահին որևէ կերպ չպատճառաբանվող կետադրությունն է, ինչին չարժի տալ «անգրագետ» պիտակը:

Ոճային կետադրությունը հիմնականում վերագրելի է հեղինակային կետադրությանը, որով պետք է հասկանալ գեղագիտական խրճիթը լուծող, նպատակաուղղված և հիմնականում հաջողված կետադրությունը:

Հետևողական կետադրությունը հեղինակի կամ ցանկացած անհատի կողմից հետևողականորեն կիրառված, ոչ միանգամյա բնույթի կետադրությունն է, որը կարող է լինել կանոնավոր կամ այլընտրանքային բնույթի:

Դիպվածային կետադրությունը հետևողական կետադրության հա-
կոտնյան է. դիպվածային նորաբանությունների պես կրում է պատահա-
կան բնույթ և իրադրական պայմանավորվածություն: Վերագրելի է հե-
ղինակի և ցանկացած անհատի խոսքին:

Նորաբան կնտադրությունը լեզու նոր ներմուծված կնտադրությունն է, որ կարող է լինել անհատական-հեղինակային կամ համալեզվական բնույթի, վերջին դեպքում՝ պայմանավորված կնտադրության նորմերի փոփոխությամբ:

Հնաբան կետադրությունը նոր կանոններով դուրս մղված, բայց որոշ անհատների (նախորդ սերունդների ներկայացուցիչների կամ ժամանակակիցների) գրվածքներում հանդիպող կետադրությունն է, որը ևս կարող է լինել անհատական-հեղինակային կամ համալեզվական բնույթի: Այդպիսին կարելի է համարել, օրինակ, մասնական բացահայտչի՝ երկու կողմից ստորակետներով տրոհումը:

Օտարաբան կետադրությունը հայերենի կետադրության համակարգում չընդունված և օտար լեզուներից անհարկի վերցված կետադրանշանների կիրառությունն է, որը կարող է հանդիպել թե՛ հեղինակային, թե՛ ժարգոնային գրվածքներում: Այդպիսի նշաններից են գրական խոսքում անջատման գիծը՝ տրոհության նշանի դերով, ժարգոնային խոսքում՝ օտարալեզու հարցական, բացականչական նշանները, չակերտները (? , ! , ‘ ’, “ ”): Օտարաբան կետադրության դրսևորումներ կարող են համարվել նաև ուղղագրական բնույթի շեղումները, մասնավորապես՝ միության գծիկի անհարկի կիրառությունը լրացում-լրացյալ բաղադրիչներով ձևավորված օտարալեզու տեղանուններում (օր.՝ Սանկտ-Պետերբուրգ, Նյու-Յորք...): Այսինքն՝ օտարաբան կարող է լինել թե՛

օտար կետադրական նշանի կիրառությունը, թե՛ հայերենի կետադրական նշանի՝ օտարալեզու կանոններով կիրառությունը:

Փոխառյալ կետադրությունը հազվադեպ երևույթ է: Այսպիսին կարելի է համարել, օրինակ, գիտական տեքստերում հոլոմների ձևավորման համար ընդունված միջազգային որևէ ստանդարտի պարտադրված կիրառությունը: Գրական արևելահայերենում, իհարկե որոշակի վերապահությամբ, փոխառյալ կարող է համարվել ապաքարցը, վերապահությամբ, քանի որ այն կիրառվում է ոչ միայն օտարալեզու հատուկ անուններում (օր.՝ Ժաննա դ'Արկ), այլև արևմտահայերեն և բարբառային գրվածքներում:

Ջուգաբանական կետադրությունը գուցահեռ կետադրության հնարավորությունն է, որը կարող է իմաստաբանորեն նշույթավորվել կամ՝ ոչ: Օրինակ՝ մասնավորող պարագայական բացահայտչի և բազմակի պարագաների տրոհումը (կամ ,) իմաստային դաշտում նշույթավորված է, իսկ ներդրյալ խոսքի տրոհման գուգաձևությունը՝ ոչ (,..., կամ (...)) կամ ,... ,—):

Հավելադիր կետադրությունը հիմնական և լրացուցիչ կետադրական նշանների կամ գրաբանական օժանդակ միջոցների գուգակցումն է, ինչը հիմնականում կրում է ավելորդ բնույթ: Հավելադիր կարող են համարվել նաև չակերտները՝ ինքնանվանողաբար կիրառված բառն առանձնացնելիս, երբ այն շարված է ընդհանուր տեքստից տարբերվող տառատոճով (թավ, շեղատառ, գլխատառ, միջտառային հեռավորությամբ) կամ ընդգծված է (սա մերժելի չէ): Անհարկի հավելադրության ամենահաճախադեպ օրինակը կախման կետերով ավարտվող նախադասությունը նաև վերջակետով ամփոփելն է:

Զընդունված կետադրությունը առանձին անհատների, հիմնականում՝ գրողների կողմից կիրառված մորթվի կետադրությունն է, ինչը, սակայն, գնահատվում է որպես մերժելի կամ պարզապես ոչ օրինակելի:

Սինկրետ կետադրությունը տվյալ դիրքում երկու տարբեր կանոններով դրված (կամ չդրված) մույն կետադրական նշանն է (կամ նշանի բացթողումը): Օր.՝ *Վաղը կգնամ ամառանոց՝ իմ սիրելի վայրը, և ամեն ինչ կկարգավորվի: Սրացվեց [տնօրենի՝ պարոն Ավագյանի ժամանե-*

լու/ լուրը: Առաջին օրինակում ստորակետը դրված է բացահայտչի ամփոփման և ենթակայի փոփոխության համար, իսկ վերջին օրինակում բացահայտչից հետո ստորակետ չի դրվում երկու պատճառով՝ 1) սեռական հոլովի, 2) բացահայտիչ-բացահայտյալի՝ դերբայական դարձվածի կազմում գտնվելու և գերադաս անդամին անմիջապես նախորդելու²:

Ճուլված կետադրությունը մոտ է սինկրետ կետադրությանն այն մասով, որ նույն հատվածը կետադրելիս առաջանում է կանոնների բախում: Ի տարբերություն սինկրետի՝ ճուլված կետադրության դեպքում տարբեր կանոնները տարբեր կետադրություն են պահանջում, և հաղթում է տվյալ դիրքում նախապատվություն ունեցողը: Օր.՝ *«Վաղը կըգնամ ամառանոց՝ իմ սիրելի վայրը՝ շրջապարված աննկարագրելի բնությամբ,– հանկարծ անցավ մորքովս,– և ամեն ինչ կկարգավորվի»*: Այսպիսով, *ամփոփելով շարադրանքս, անցնեմ եզրահանգումներին*:

Մենադիր կետադրությունը մեկ կետադրական նշանով արտահայտվող կետադրությունն է, որի հակոտնյաները կրկնադիր և համակցված կետադրություններն են:

Կրկնադիր կետադրությունը նույն կետադրական նշանի կրկնությամբ իրականացված կետադրությունն է (չակերտներ, փակագծեր, ստորակետ-գծեր կամ ստորակետներ՝ ներդրյալ մտքի համար...):

Համակցված կետադրությունը մեկ կանոնի համար միաժամանակ երկու կամ ավելի կետադրական նշանների կիրառումն է, որը, սակայն, արտահայտվում է ոչ թե նույն (հմտ.՝ կրկնադիր կետադրություն), այլ տարբեր նշաններով: Համակցված կետադրության պարզագույն օրինակներից է ուղղակի խոսքի կետադրությունը:

Գրափոխված կետադրությունը կետադրական նշանի կիրառությունն է ոչ իր դիրքում, որը կարող է լինել սխալի արդյունք կամ նպատակաուղղված՝ իմաստային նշույթավորմամբ (տե՛ս 4-րդ ենթաբաժնում):

² Երկրորդ ենթակետի մասին տե՛ս Սանթրյան Ա., Արդի հայերենի կետադրության համակարգը, Եր., 2004, էջ 59:

Լեզվաբանական կետադրությունը գրական նորմերին համապատասխանող կետադրությունն է, որի դեպքում կետադրության հիմքում լեզվական միավորներն են:

Պատկերային կետադրությունը ինչ-որ չափով լեզվաբանական կետադրության հակոտնյան է, որի դեպքում բնագիրը կետադրվում է ըստ գեղարվեստական պատկերների և դետալների, այլ ոչ թե ըստ լեզվական միավորների³:

Բանաստեղծական կետադրությունը բանաստեղծություններում հանդիպող և նրա հորինվածքով պայմանավորվող այլընտրանքային կետադրությունն է, որը, գրական մյուս ժանրերի կետադրության համեմատությամբ, աչքի է ընկնում առավելագույն ազատությամբ:

Ռիթմական կետադրությունը ստեղծագործության՝ ռիթմով պայմանավորված կետադրությունն է, որ սովորաբար վերագրվում է չափածոյին: Գրականագետ Վ. Փիլոյանը, սակայն, համաձայն չէ մնան սահմանափակության հետ և իր հոդվածում (այն տպագրման փուլում է) առաջարկում է կետադրության ռիթմական գործոնը տարածել նաև արձակի վրա՝ ռիթմակազմիչ միավորների դիտելով շարույթը և դադարը, որոնց օգնությամբ, ըստ նրա, «սաես դրսևորվում է լեզվի շնչառությունը, ներշնչում-արտաշնչումը»: «Այս խնասրով («ռիթմի կանոնակարգման բաղկացուցիչ»՝ ՀՄ) Մաթևոսյանի կիրառած հեղինակային կետադրությունը, որ շարի համախ շեղվում է կանոնակարգված, նորմատիվ կետադրությունից, լավագույնս է հաստատում ու բացահայտում ռիթմական ներգզացողությունը: Նորմատիվ կետադրությամբ սահմանված տրոհության նշաններն արդեն իսկ հուշում են դադարի որոշակի յուրահատկություն և տրոհություն, սակայն միշտ չէ, որ այդ ամենը բավարարում է հեղինակին, այդտեղից էլ ծագում է անհատական կետադրության, անգամ կետադրական նշանների անհատական համախմբի հանգամանքը»⁴:

³ Այս դրույթը առաջ է քաշվել մեր ուսանողի կողմից, ով մեր ղեկավարությամբ այն զարգացրել է հոդվածում, որ տպագրման փուլում է (տե՛ս **Մանուշարյան Կ.**, Հեղինակային կետադրության դրսևորումները Հ. Մաթևոսյանի ստեղծագործություններում):

⁴ **Փիլոյան Վ.**, Գեղարվեստական արձակի ռիթմը (Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության օրինակով):

Համաքանական կետադրությունը բնագրի որևէ հատվածի կետադրությունն է՝ մնանատիպ միավորի կետադրության համաքանությամբ՝ լեզվաքանական հիմքով (տե՛ս 4-րդ ենթաբաժնում):

Կետադրության բացթողումը կետադրության նշանի՝ որևէ կերպ չհիմնավորվող բացթողումն է:

Մասնակի կետադրումը վերագրվում է հեղինակային տեքստի թույլ կետադրված որոշ հատվածների և պայմանավորված է հեղինակի նպատակադրումով: Այսպիսին կարող են համարվել նաև ուսումնական բնույթի առաջադրանքով տեքստերը՝ կետադրության առանձին թեմաների համար մշակված:

Կետադրագրկությունը բնագրի որոշ հատվածների նպատակաուղված անկետադիր վիճակն է, ինչը պայմանավորվում է գիտակցության հոսքի գրականության առանձնահատկություններով: Նման փորձ կա նաև արտասահմանյան գրականությունում: Արդի հայ արձակագիրներից կետադրագրկության հնարին է դիմում նաև Ա. Պաշյանը (տե՛ս 4-րդ ենթաբաժնում):

Համը բնագիրը ուսումնական նպատակով կազմված անկետադիր տեքստն է:

Չոր կետադրանշանը կետադրության նշանի նպատակաուղված, ոճային բացթողումն է, որը հակադրվում է մույն դիրքում սովորաբար սպասելի որևէ կետադրանշանի՝ դառնալով իմաստաբանորեն նշույթակիր տարր (օր.՝ բայական բաղադրիչների միջև ստորակետի բացթողումը կարող է ստեղծել հեղինակային զուգաբայ):

3. Հեղինակային կետադրություն ուսումնասիրելու տեսանկյունները և քայլերը: Իբրև հետազոտության առարկա՝ հեղինակային կետադրությունը կարող է հետաքրքրություն ներկայացնել միաժամանակ երեք ոլորտների համար՝ լեզվաբանության, գրականագիտության և տեքստաբանության: Այսպես՝ եթե լեզվաբանը իր նյութը դիտարկում է գրաբանության տեսանկյունից, ապա գրականագետը հարցին կարող է մոտենալ պատկերաստեղծման, գաղափարաբանության կամ տաղաչափության տեսանկյուններից, իսկ տեքստի քննությամբ զբաղվողը՝ տեքստային կարգերի (շրթայակցում, շարունակականություն, հիշեցում, ներգրավում, տեքստային հատվածների բովանդակային անկախու-

թյուն, ավարտվածություն)⁵ դրսևորման տեսանկյուններից: Իսկ ինչ վերաբերում է թարգմանական երկերին, ապա նրանց կետադրությունն էլ կարող է հետաքրքրել թարգմանության տեսաբանին:

Հեղինակային կետադրությունը կարելի է ուսումնասիրել հետևյալ քայլերով՝ 1) դուրս բերել կիրառված կետադրական մշանների համակարգը, 2) առանձնացնել կանոնավոր և այլընտրանքային կետադրությունները, 3) այլընտրանքայինների մեջ առանձնացնել հետևողական և դիպվածային, ոճային և չեզոք դրսևորումները, 4) ոճայիններն առանձնացնել ըստ կետադրական ենթահամակարգերի (տրոհության, բացահայտության, առոգանության), 5) ենթահամակարգերի ներսում մշան առ մշան խոսել կոնկրետ մշանի կանոնավոր և ոճային դրսևորումների մասին՝ բերելով օրինակներ և կատարելով հիմնավորման փորձեր, 6) անդրադառնալ հեղինակի կետադրական միտումներին ու նախասիրություններին, 7) ոճային կիրառությունների համար կազմել կետադրության համաբարբառ:

4. Հեղինակային կետադրությունն արդի հայ արձակում. ուրվագիծ: Ընդհանուր լեզվանյութում նկատել ենք ընդհանուր և անհատական բնույթի կետադրական շեղումներ և նախասիրություններ:

4.1. Ընդհանուր շեղումները տարածվում են տարբեր հեղինակների գործերի վրա և ունեն ընդհանրացված լինելու տարբեր աստիճաններ: Դրանցից են՝

- Ուղղակի խոսքի կետադրությունը հաճախ այլաձև է կամ անմիօրինակ, ինչը, թերևս, բխում է խոսքին բնականություն հաղորդելու միտումից: Դա վերաբերում է նաև ներքին ուղղակի խոսքին, ինչը տրոհված ենք տեսնում միջակետով կամ բութով՝ առանց չակերտների, օր.⁶ *Իմ ուղեղում զարթոցիչի պես զնգաց հարցը. ո՞վ է եղել մեր բնակարանում գիշերը: (ՀՄԳՀ)՝ Մրա-ծեցի. իմ ֆիլմի երկու կանայք կաթնագույն լույսի տակ մերկ*

⁵ Տեքստային կարգերի մասին տե՛ս **Гальперин И.**, Текст как объект лингвистического исследования, М., 2007, с. 73-136.

⁶ Այս և մյուս օրինակների մեջբերումները պայմանականորեն բերել ենք առանց չակերտների՝ առանձնացնելով շեղ տառադրով՝ տեքստն ավելորդ չձանրաբեռնելու և հեղինակային կետադրության հետ դրանք չմիախառնելու նկատառումով:

կլինեն.... (ԼԽՊ), Ես մրաժեցի. կարո՞ղ է այն բացեն՝ խորք չունենա, ու կափարիչի տակ փորվածք չունեցող հարթ մակերես լինի: (ՀՍԳՀ), Մրաժեցի՝ ինչ կա որ, կարելի է և թեյ խմել: (ՀՍԳՀ):

- Կոչականը հաճախ բերվում է անշեշտ տարբերակով, օր.՝ – Ինչ բարի ճամփա, քեզ էլ բարի մինիստրություն երեք օրով, Սերո ջան, զամ տեսնեն.... (ՀՄՏ, 208), Անժամանակ ես լքում մեզ, մեծ մշեցի.... (ՎԳԺԳ), Քո մեռնելուց հետո քաղաքում բան չի փոխվել, ախպերս: (ԱՊՕ, 199):
- Բութը կամ անշատման գիծը (վերջինս՝ օտարաբան) կիրառվում է միջակետի փոխարեն՝ իբրև պատճառահետևանքային կամ մեկնական իմաստով բարդ կառույցների տրոհման միջոց, օր.՝ Մահն ու դժբախտությունը պարտադրված սովորույթներ են հեռացրո՞ւ դրանց պոկվող մոխրի հետ: (ԱՊՕ, 36), Փողոցի մեջտեղում՝ արևի տակ, մի շուն էր պառկել՝ երևի տապից թուլացել, սրվերի չէր հասել: (ՀՍԳՀ), Քանի դեռ օրդերի գերին չես դառել, ծրի պես սպրիթ ուզածդ թաղում – ընկերոջը ինքներս ենք ընդրում, հարևանին մեզ քաղսովերն է տալիս: (ՎՄԾԵԿ):
- Բութը կիրառվում է ստորակետի փոխարեն՝ գոյումով կապակցված բարդ ստորադասական կառույցի բաղադրիչ նախադասությունները տրոհելիս, օր.՝ Այսպես մրաժեցիկը թե չէ՝ ծայրը երևաց: (ՎԳԺԳ), Երբ սիրտն ուզում էր՝ Գյումրի էր գնում: (ՌՀ, 15), Գիրեին, ու հենց աղջիկը երևում էր՝ բամբասանքը ծայր էր առնում.... (ՆՇԸ, 8),թե որ չունես՝ ամեն ինչ իր տեղը կընկնի: (ՆՇԸ, 14),միշտ ասում էր, որ մեծանա՝ չի է առնելու.... (ՆՇԸ, 44), Երբ մարում է դորդյունը և ցրվում փոշին՝ Կարոն տեսնում է, որ շենքը վերածվել է փայտակների.... (ԳԽՄՊ): Սրանցում գործողությունն ունի անմիջապես հաջորդելու իմաստ:
- Բութը կիրառվում է ինտրիգ ապահովելու համար, օր.՝ ու ամեն քայլ՝ նոր ցամաք է: (ԱՊՕ, 15), դիտավորյալ բոլորն էլ ականջներն իրենց կողմն էին պահել, սպասում էին՝ Հարութի հրաժարվելուն: (ԼԽՇԿ):

- Բուքը կիրառվում է խորքային կառույցի՝ պատճառահետևանքային իմաստով գործողությունները տրոհելու համար, որոնց պատճառ բաղադրիչը մակերեսային կառույցում կարող է ընկալվել որպես բառ-նախադասություն, օր.՝ *Շրբիկ՝ ու մեղ չկար: Շրբիկ՝ ու մրջյունը չկար: (ՌՀԾԾՏ, 131), «Ֆո'ի»՝ և ինքը ծնվել է, «ֆո'ի»՝ ֆոկլոս կարարվեց.... (ԱԱՓ):*
- Ուղղակի խոսքն արտահայտվում է առանց ասացական բայի և «թե»-ի՝ տրոհվելով բուքով, օր.՝ *Դարավորը՝ «Բա ինչո՞ւ քեզ հե-տը տարավ»:* (ԼԽՍ), *Ոչ հարցմունք ոչ բան, միանգամից՝ «բա-րով վայելեա».... (ՀՄՏ, 237):*
- Հակադրությունն արտահայտելու նպատակով կիրառվում է անջատման գիծ (այստեղ՝ օտարաբան), բուք կամ կախման կե-տեր, օր.՝ *Արամայիսը ուժեղ, վայրենի ու կրքոտ – երեխայի պես անգեղ էր.... (ՆՇԸ, 11), Օդը չէր բավականացնում, ծերունին շարժում է շրթունքները՝ չայն չկա: (ՀՄՏ, 5), Եվ Դիլանը ոռնաց միանգամից, սակվեց ու նայեց – խոռն ու կոշտ հարսանիքը փայլեռ սանդղողքով անադմուկ բարձրանում էր պարզգամբ: (ՀՄՏ, 15), Գետը գնում էր, օրը գնում էր, ջորին սև աչքերը փա-կում-բացում էր... մարդը չէր գնում...(ԼԽՍ):*
- Վերջակետը կիրառվում է ոչ ամփոփ մտքի տրոհման համար, օր.՝ *Հայելու մեջ իրեն քիկունքից էր տեսել: Մի պահ ընդամենը: (ՀՄԳՀ), Չանգահարեց Գալուստը՝ արդեն հարբած, իրենց տուն էր կանչում: Ապա Անին աղջիկա: (ՎԳԺԳ), Այդպես: Էնքան ու-շաքափվեց, գնաց-եկավ տեր Ասրծո մոտ, որ նրա հետ կապերն ամրացրեց: (ՆՇԸ, 76):*
- Որոշ հեղինակներ թույլ են տալիս ուղղագրական շեղումներ՝ կապված հարադրական բարդությունների՝ գծիկով կամ անջատ գրության հետ, օր.՝ «օր-օրի», «կողք-կողքի», «տեղից-տեղ»:
- Նկատվում են կետադրական մասնավոր, ոչ հետևողական բնույթի և չհիմնավորվող շեղումներ, օր.՝ *....երբ նա թափանցում է Վերոնենգեի և Էնգրի ներաշխարհ, որտեղ գիծը այլևս գիծ չէ (ստորակետի բացթողում՝ ՀՄ) և գույնը գույն չէ: (ԱՊՕ, 21),*

«Պարուհանից դուրս նայելիս, եթե գլուխդ շար կախես, մարմինդ կբաշի, կլրանի» (անջատման գծի բացթողում, ստորակետի փոխարեն՝ վերջակետ՝ ՀՄ) Ասում էր մայրս»։ (ԱՊՕ, 14), «Դեզան չունի ոճ. Դեզան հենց ինքը ոճ է», (անջատման գծի բացթողում՝ ՀՄ) ասում է Գոգենը։ (ԱՊՕ, 21), Այսպիսի կյանք պետք չի, (ստորակետն ավելորդ է՝ ՀՄ) ոչ ինչ, ոչ չեզ, ոչ էլ հարկապես նրանց, որ պիրի գան։ (ՎԳԺԳ), Աղաքեկ տացոխ գլուղի ակումբում դարում էին, իսկ հայրս ամոթից չգիրեր (բութի բացթողում՝ ՀՄ) որտեղ բաքնվեր։ (ԼԽՍ), Յավում էի Նապոյի հոր ճակարագրական վրիպումի համար, բայց ոչ այնքան, որ վախ-վուխ գցեմ. մարդ էր, մեռավ-գնաց, ցավալի է՝ (ստորակետի փոխարեն՝ բութ՝ ՀՄ) բայց մարդիկ առհասարակ ունեն էդ հարկությունը։ (ԳԽՊ)։

4.2. Ընդհանուր նախասիրություններ: Վերոնշյալ շեղումներից բացի՝ քննված ընտրանքում արձանագրել ենք նաև որոշ կետադրական նախասիրություններ՝ ընդհանուր կամ անհատական բնույթի։ Այսպես՝

- Կախման կետերը, որ հիմնականում ծառայում են ինտրիգի կամ առկախ մտքի արտահայտմանը, պարբերությունների սկզբում և վերջում ազդարարում են նաև ժամանակային կամ վիճակային անցում, մանրաթեմայի փոփոխություն, օր.՝ ... «Չեմ լսել ու վերջ...»... (ՆՇԸ, 16)։ Այստեղ կնոջ դավաճանությանը հավատալ չցանկացող ամուսնու՝ 5,5 տողով ներկայացված մտատանջությունները երկու կողմից ընդհանուր տեքստից՝ համընդհանուրի կարծիքից, առանձնացվել են կախման կետերով։

Մեկ այլ օրինակում հեղինակը, էլ ավելի ընդգծելով հավերժություն թվացող ժամանակային միջակայքի տևականությունը, երկկողմ կախման կետերից բացի՝ հատվածը վերևից և ներքևից առել է տողի վերածվող բազմակետերի մեջ.

.....
 ... Հերո (ոչ երագումս, ոչ էլ երագիս երագում) քնածիս հուշում եմ՝ բացի՛ր Գիրբը։ Եվ իսկույն արթնանում եմ..

.....
(ԽԳԵՅ, 271):

- Ուղղակի խոսքի կետադրությունը միտված է հնարավորինս պարզեցման, օր.՝ *Մի ուրքով եկել էր գյուղ ու հայրաբարեկ, թե՛ հերոս եմ: (ԼԽՍ), Հայրդ, ծկլթալով, չէր վագի րան շուրջը, թե՛ այ ժողովուրդ, հասեք կլոր բերան Սեթոյիս՝ չգնա... (ԼԽՍ), Նա թե՛ ջուր խմելիս նույնիսկ օջը չի խանգարում: (ՌՀԾԾՏ, 60):*
- Առատորեն կիրառվում են կետադրությանն օժանդակող գրաբանական և շարվածքային այլ միջոցներ (տառակրկնություն, գլխատառեր, թավ, շեղատառ կամ ընդգծված տառադրեր, միջտառային հեռավորության մեծացում, ազատ տող, չափաժոյաճն շարադրանք), որոնք բոլորն էլ ծառայում են ընթերցողի ուշադրության կենտրոնացմանը:
- Տրամաբանական շեշտը կետադրանշվում է, օր.՝ *Ասաց. «Հրա՛շք է, այդպիսի բան չի պարահում»:* (ԼԽՍ), *«Սայլն էլ ի՛ն լիմուզինն է...»* (ՌՀԾԾՏ, 170):
- Հրամայական ապառնին հաճախ կիրառվում է անշեշտ, օր.՝ – *Կերեք, – դեպի դուռը գնալով ասաց նա,– կերեք, որ ուժ ունենաք ու իմ կյանքն էլ ուրեք... (ՀՄՏ, 198), Ես վախենում էի, ասաց. «Մի վախենա»:* (ԼԽՍ), *Մի խնդա, քեզ եզիպտացիները չեն ներելու: (ԱՊՅԾ, 21):*

Սա թեև թույլատրելի է՝ պայմանավորված «որոշակիորեն մեղմ հնչեցնագով»⁷, սակայն, կարծում ենք, պետք է անընդունելի համարվի արգելական հրամայականի պարագայում, քանի որ այդտեղ շեշտադրումը կատարում է իմաստատարբերակիչ դեր՝ «մի» վերաբերականը տարբերելով «մի» արգելական մասնիկից⁸:

- Ստորակետ-գիծը կիրառվում է նաև ներդրյալ մտքի տրոհման համար, օր.՝ *Շնեքն անհամբեր կտրաւրում էին շղթաները,– հավանաբար վախենում էին մոռանալ խողովակի հուրը,– ուրի-*

⁷ Տե՛ս Աբրահամյան Ս., Հայերենի կետադրություն, Եր., 1999, էջ 54:

⁸ Տե՛ս Սանթրյան Ա., Արդի հայերենի կետադրության համակարգը, Եր., 2004, էջ 76:

կանները բռնեցքներով, ոտքով բախում էին փակ դարպասը... (ՌՀԾԾՏ, 23), Նապոն,- լրիվը՝ Նապոլեոն,- «Կույրերի կոմբինատի» պահակն էր: (ԳԽՊ):

- Միության գծիկը կիրառվում է բազմագործառույթ՝ որպես վանկարկում, զարմանք, հեգում, հանդիսավորություն, գործողության տևականություն, բառախաղ արտահայտելու, երեք և ավելի բաղադրիչներով հարադրություններ ձևավորելու միջոց, օր.՝ *Ես քեզ Գորիկ-մորիկ-գորմորիկ էի ասում, դու ինչ՝ Սոնա-մոնա-քելա-դոնա... (ՌՀԾԾՏ, 50), – Հե-դա-փո-խա-կան-ները, հանդիսավոր հայրենից խնամին: (ՌՀԾԾՏ, 82), Եվ, որ ամենածիծաղելիին է, հիսրերիկ այդ կնոջ թեկնածությունը որոշվել է վիճակահանությամբ: Տեսե՞լ եք նման բան: Վի-ճա-կա-հա-նու-թյամբ: (ՌՀԾԾՏ, 166),կապանքից ազատում էր բերանը ու բղավում. «Ֆա-շիսը, ֆա-շիսը»: (ՌՀԾԾՏ, 169),հինգից մեկի դեմ կանգնում, հարցնում ես ունե՞ք-չունե՞ք-ի՞նչ արժե... (ՎՄԾԵԿ), Հարևան ալիքները բոլոր կողմերից ճզմել էին Երևանի շայնը, գցել արաբա-թուրքա-ռուսա-անգլա-ֆրանսա լեզուների բարելոնյան մի խառնարան... (ՌՀԾԾՏ, 131), Գնացք նստեհներ, գնայինք-գնայինք-գնայինք... (ՀՄՏ, 41), –Լրագրող եմ: – Ի՞նչ... Այ տղա, Գրողը ե՞ս եմ: Էդ ինչե՞ր ես դուրս տալիս: – Լրագրող– շեշտեց Սանասարը: (ՍԽԴԱ):*

Միության գծիկը ծառայեցված է նաև բնության (ծղրիղի) ձայների ռիթմի արտապատկերմանը: Այսպես՝ *Ուշադիր լսեց, որ նրանց ծղրոցը խիստ որոշակի պարբերականություն ունի. ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ-ցրկ և այլն (ՀՄԵԱ, 183):*

- Տեքստի վերշարությային միասնությունների բաղադրիչ նախադասությունները երբեմն տրոհվում են միջակետով, որով բովանդակային առանձին հատվածները մի կողմից զատվում են միմյանցից, մյուս կողմից՝ միավորվում մեկ ամբողջի մեջ: Այս հնարից առավելագույնս են օգտվել Հ. Մաթևոսյանը և Ա. Պաշյանը:
- Հատվածին կամ ողջ տեքստին տրվում է անվերջակետ ավարտ,

օր.՝

Չգիտեմ՝ երբ է մահացել, չգիտեմ նրա անունը. խուսափում եմ իմանալ այն, չեմ հիշում նրա դեմքը. մայրս իմ հիշողություն է մտել մի լուսանկարով՝

հորս քեանցուկ արած,

հարսանեկան ճերմակ

տոնազգեստով,

**հարսնաքողով դեմքը ծածկած (թավով հափվածի շեղարառ ոճը
հեղինակինն է ՀՄ) (ՀՄԳՀ):**

Այս հատվածում մահացած մոր դիմապատկերումը անվերջակետ թողնելը, թերևս, խոսում է շարունակվող գոյության իմաստ արտահայտելու մասին: Հատվածի բովանդակային ընդգծմանն են ծառայում նաև չափածոյաձև կառուցվածքը և թավ տառառճը:

Անվերջակետ է նաև Ա. Այվազյանի «Օրհաս» պատմվածքի ավարտը, ինչը ևս շարունակականության (այս դեպքում՝ վիճակի) արտահայտիչ է: Այսպես՝ *Եվ տակավին օրհասական վիճակը շարունակվում է, շարունակվում է, շարունակվում է... և (ԱԱՕ):*

Անվերջակետ ամփոփման հնարից հաճախակի է օգտվում նաև Ա. Պաշյանը:

4.3. Անհատական բնույթի շեղումներ և նախասիրություններ:

Սրանց կիրառման քանակով առաջատարը Ա. Պաշյանն է, հեղինակ, ով ակնհայտորեն կետադրությունը դարձրել է ինքնարտահայտման լրացուցիչ միջոց՝ գործադրելով ամենից շատ հնարներ, որոնցից ոչ բոլորն են, սակայն, ենթակա միանշանակ հիմնավորման կամ ընդունման: Նշենք այդ հնարներից մի քանիսը՝

- Որոշ հատվածներում հանդիպում է կետադրության բացթողում կամ մասնակի կիրառում, ընդ որում՝ անկետադիր հատվածները վերաբերում են կա՛մ հոգեկան անհավասարակշիռ վիճակների նկարագրությանը (ԱՊՅԾ, 123-125, 126-127), կա՛մ գրառողի անգրագետ լինելուն (օր.՝ ագռավ, ԱՊՕ, 60): Իսկ ծայրահեղ թերի կետադրությամբ աչքի ընկնող հատվածներից մեկն էլ վերաբերում է մի ճնշված և կամային որակներից գուրկ զինվորի՝ Չրկոյի բանակային անտանելի առօրյայի նկարագրությանը (Ա-

ՊՕ, 99-103): Ոչ միանշանակ պնդմամբ, սակայն կարծում ենք, որ թույլ կետադրությունը վերջին դեպքում կարող է լինել դիմագրկությունը և քառսը ընդգծող հնար:

- Մեկ դրվագում հեղինակը միության նշանի փոխարեն եռաբաղադրիչ հարադրության մասերը միացնում է գումարման նշանով՝ նույն նախադասության մեջ, սակայն, թույլ տալով անհիմն ուղղագրական սխալ՝ «մեկը-մյուսի».

Մեկը-մյուսի երկից վնասում էր, ջարդում⁹ ավիրում⁺ փշրում էր քառասրում: (ՄՊՕ, 144):

- Վերջակետի կիրառումը հասցված է ծայրահեղության. այն հանդիպում է նույնիսկ առանձին շաղկապից հետո, կամ, որ ավելի տարօրինակ է, հոդակապով բարդության բաղադրիչների միջև («Հող: Ա: գործ» – ԱՊՕ, 29):

- Ներքին խոսք արտահայտող ոչ իրապատում երկխոսական հատվածներում նկատվում է տողասկզբի անջատման գծի բացթողում, օր.՝

Գեղնին սեղմված հրեշտակները չեն փախչում, թևերը չեն քափահարում, միայն թույլ դողդոջում են.

երևի մրսում են,

չէ, հրեշտակները չեն մրսում,

ուրեմն լացում են,

ես կարդացել եմ հրեշտակները չեն լացում....

բոլորին կուրի,

Ֆերոն հասարար կուրի (ՄՊՕ, 7-8):

- Հանդիպում է ստորակետ – միջակետ հետաքրքիր անցում, ինչով, կարծում ենք, ընդգծված է սպասման տևականությունը (ընդունված է միջակետին վերագրել ստորակետից տևական դադար արտահայտելու հատկանիշ⁹).

Հերոս նա գալիս է քեզ, շար դանդաղ, դանդաղ, դանդաղ. սպասումդ այնքան անհամբեր է, որ մաշկդ թրթռում է.... (ՄՊՅԾ, 11):

⁹ Տե՛ս, Սանթրյան Ա., Արդի հայերենի կետադրության համակարգը, Եր., 2004, էջ 15:

Որոշ հետաքրքիր լուծումներով հանդերձ՝ Ա. Պաշյանի գործերի կետադրությունը, կարծում ենք, ավելի հաճախ ծայրահեղ ազատ է, ինչը ստեղծում է անփույթ շարադրանքի տպավորություն՝ հաճախ խանգարելով գրող-ընթերցող հաղորդակցման լիարժեք կայացմանը:

Հայ դասական արձակույթի իրենց այլընտրանքային կետադրական համակարգով են առանձնանում հատկապես Հ. Մաթևոսյանի գործերը, որոնց տարբեր դրվագներում, կարծում ենք, կիրառված են կետադրման տարբեր հիմունքներ՝ հնչական, պատկերային, բովանդակային, քերականական՝ վերջինիս առավելագույն շրջանցմամբ:

Մյուս հեղինակների կետադրական շեղումները խիստ նպատակաուղղված չեն. նախասիրությունների բնույթի են: Այսպես՝ Վ. Սիրադեղյանի, Ն. Շահնազարյանի նախասիրած նշաններից են անջատման գիծը, ստորակետ-գիծը՝ դրսևորված ամենատարբեր գործառնություններով, Ա. Այվազյանի նախընտրած նշաններից են կախման կետերը և միջակետը, իսկ Հ. Սարիբեկյանի գրվածքներն աչքի են ընկնում կանոնավոր կետադրությամբ և շարվածքային օժանդակ հնարների առատ օգտագործմամբ: Անդրադառնանք մի քանի դիպվածային օրինակի՝

- Անջատման գիծը կիրառվում է որպես ներդրյալ միտք տրոհելու միջոց.

Չորեկդ կին էր Վարդանուշը. մարդը գլխին, վերիքաղցի Արամայիսին իրենով էր արել – այդպես էին մտածում գյուղացիները: (ՆՇԸ, 10):

- Փոփոխված ուղղակի խոսքը մեջբերվում է առանց չակերտների, ինչով, կարծում ենք, ընդգծվում է տեղեկույթի ոչ հավաստի լինելը.

Ասրվածաշնչում գրված է. երբ կրակում են՝ մրիկ ծակը, սպասիր, մինչև բռնեն կրակողին ու քաղեն սպանվածին: (ՌՀԾԾՏ, 29):

- Միջակետով տրոհվում է հետադաս որոշիչը.

Սենյակի կենտրոնում իմ մահճակալն է. իրալական ինչ-որ քաղաքում շինած. ռոկոկո: (ԱԱԶԲԳ):

Անհատական կետադրության ուշագրավ դրսևորումներից են նաև՝

- **Համաքանական կետադրություն**, օր.՝ և Սոնայի շորը կարճ էր, չէր ծածկում ծնկները՝ որ հիմա լիքն էին.... (ՀՄՏ, 9), իսկ

Դիլանը հնչանում չգտավ պատշաճ գեղիներ՝ որ պահվեր այս աշխարհից, քարը՝ որ գլուխը խփեր քարին: (ՀՄՏ, 15), - Երևի խնած գնում՝ ավել-պակաս խոսում ես... (ԳԽՊ): Առաջին երկու օրինակներում այլաձև տրոհման հիմքը, կարծում ենք, պարզ նախադասության մույն անդամի կետադրության համաբանությունն է, իսկ վերջին օրինակում՝ դերբայական դարձվածինը:

- **Ջրո կետադրանշան**, օր.՝ *Նա կանգնեց շրկեց ցավող մեջքը...* (ՀՄՏ, 12): «Կանգնել» և «շտկել» միավորների միջև բացակայող ստորակետը գրո նշան է, քանզի այդ բացակայությունը նշույթավորված է. առաջանում է «կանգնելով մեջքը շտկելու» գործողության իմաստը:
- **Հավելադիր կետադրություն**, օր.՝ *.... կախվում գոռում է* (այստեղ նաև՝ գրո՝ ՀՄ՝ «Արա Ֆելոֆ», «Մամա՛ա»... (ՀՄՏ, 338), *Տխրե՛եց, տխրության ծովն ընկավ:* (ՀՄՏ, 348): Այս օրինակներում տառակրկնությունը և բացականչական նշանը կատարում են մույն դերը:
- **Համակցված-հավելադիր կետադրություն**, օր.՝ *–Նա՛զի՛կ, չայնեց մայրը, իրար խառնված...* (ՆՇԸ, 27): Կոչականի կետադրությունը, որ, ըստ կանոնի, համակցված բնույթի է (ստորակետ(ներ), շեշտ կամ առոգանական այլ նշան), այս օրինակում արտահայտվել է նաև լրացուցիչ նշանի մասնակցությամբ:
- **Դրափոխված կետադրություն**, օր.՝ *Երբ ծնողները տուն հասան, ու Արշոն իմացավ եղելությունը, չեռքն ընկածը ջարդեց, փշրեց, գոռաց հոր վրա. «Ո՞նց թե,– ասաց,– էս ո՞ր թիվն է, որ առանց ինչ նշան ես դնում, ես մեխի գլուխ եմ քեզ համար... դու նշան ես դրե՛լ, դու էլ կուզեա:» և դուռը շրխկացրեց ու վայրի գազանի նման ուրբեց դուրս...* (ՆՇԸ, 32): Այս օրինակում վերջակետի դիրքը (ըստ կանոնի՝ վերջակետը դրվում է չակերտներից դուրս), կարծում ենք, ծառայում է ուղղակի խոսքին սպառնիչ՝ «վերջակետով ասված» բնույթ հաղորդելուն:

Ամփոփելով շարադրանքս՝ հանգում ենք հետևյալին՝

1. Հեղինակային կետադրության այլընտրանքային դրսևորումները կարող են լինել ոճային կամ անհիմն, զուտ հեղինակային նախասիրություններ կամ գաղափարական կողմի արտահայտիչներ՝ ընդհանուր կամ անհատական բնույթի:

2. Դրանցում քերականական հիմունքը հաճախ մղվում է երկրորդ պլան՝ տեղը զիջելով հնչական կամ բովանդակային հիմունքներին:

3. Դրանք կարող են գնահատվել համաժամանակյա կամ տարժամանակյա տեսանկյուններից:

4. Ամենից շատ շեղումները վերաբերում են տրոհության նշանների կիրառությանը, հատկապես՝ բութի գործառնությունների ընդլայնմանը:

5. Որոշ հեղինակային լուծումների հիմքում կարելի է տեսնել համապատասխան կանոնի բացակայությունը:

6. Հեղինակային կետադրությունը պետք է առավելագույնս համապատասխանի գրական լեզվի նորմերին: Այլընտրանքային կետադրությունը ընդունելի պետք է համարել միայն այն դեպքերում, երբ այն հաջողությամբ նպաստում է արտահայտարանական միջոցների ամբողջացմանը:

7. Հեղինակային կետադրության համեմատական կամ առանձնական քննությունը անհրաժեշտ է՝ գեղարվեստական երկի ընկալումն ամբողջական դարձնելու համար:

8. Նմանատիպ քննությունները կարող են նպաստել հեղինակային կետադրության բարելավմանը՝ անհիմն շեղումների բացառմանը և նոր ու ավելի հաջողված ոճային լուծումների մշակմանը:

Բանալի բառեր – *զրո կերպարանշան, կերպարության բացթողում, կանոնավոր, հեղինակային, այլընտրանքային, հերոսողական, դիպվածային, նորաբան, օրարարան, փոխառյալ, հնաբան, հավելադիր, զուգարանական, ոճային, կերպարություն:*

ЭГИНЕ МЕЛКОНЯН – Вопросы авторской пунктуации. – Авторская пунктуация является интересной, но неисследованной областью армянской филологии. В статье сделана попытка систематизировать основные вопросы данной области. Выявляются возможные риски и принципы процесса изучения авторской пунктуации, а также основные понятия и пути исследования.

Кратким обзором выявляется общая картина авторской пунктуации совре-

менной армянской прозы – тенденции, предпочтения, удачные и сомнительные решения.

Ключевые слова: *нулевой знак препинания, эллипс пунктуации, нормативная, авторская, альтернативная, последовательная, случайная, неологическая, иноязычная, заимствованная, архаическая, плеонастическая, параллельная, стильная пунктуация.*

HEGHINE MELKONYAN – Issues of Authorial Punctuation. - Authorial punctuation is one of remarkable but not studied spheres in the Armenian Philology. In the article we tried to systematize the issues concerning this sphere. The article concerns the risks and principals of authorial punctuation study, the main concept of this sphere, the possible ways of study this sphere.

The general view of authorial punctuation in modern Armenian prose, that is its trends, preferences, suspicious and successful solutions are shortly introduced in the article.

Keywords: *zero punctuation mark, ellipse of punctuation, normative, authorial, alternative, successive, casual, neological, foreign, adopted, archaic, pleonastic, parallel, stylish punctuation.*

ԱԼՎԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ԵՊՀ)

alvard.khachatryan@ysu.am

**ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆՅՈՒՄԸ և ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ
Մ. ԱՍԱՏՐՅԱՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Մ. Ասատրյանի գիտական վաստակը ակնառու է հայերենի ձևաբանության բնագավառում, որը դեռ ըստ արժանվույն չի գնահատվել: Նրա աշխատություններում համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքներով համակարգային մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվել հայերենի խոսքի մասերը, քերականական այլ վերլուծությունների հետ մեկտեղ՝ խոսքիմասային փոխանցումներն ու փոխանվանական դրսևորումները:

Փոխանցումը բառի քերականական մի կարգից մյուսին անցումն է բազմիմաստության կամ փոխաբերական իմաստավորման հիմքի վրա: Տարբերակում են փոխանցման լիակատար և նախատիպի պահպանումով անցումներ: Փոխանումը տարբեր խոսքի մասերի գոյականաբար գործածությունն է: Փոխանուն կարող են դառնալ ածականը, թվականը, դերանունը, դերբայը՝ գոյականին բնորոշ հատկանիշների արտահայտությամբ: Բուն փոխանուններից առանձնանում են ինքնանվանողական փոխանունները, որոնց դարձյալ բնորոշ է գոյականացումը¹:

Հայ քերականագիտության մեջ բառերի խոսքիմասային փոխանցման և փոխանունության վերաբերյալ կատարվել են տարբեր բնույթի ուսումնասիրություններ, որոնց ամբողջական քննությունը՝ ինքնատիպ բնութագրումներով, կատարել է Մ. Ասատրյանը իր «Ժամանակակից

¹ Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 608:

հայոց լեզու: Ձևաբանություն» դասագրքում և «Հայոց լեզվի ձևաբանության հարցեր» մենագրության մեջ:

Հետևելով հայագիտության մեջ ընդունված խոսքի մասերի դասակարգման ավանդական սկզբունքներին և այս հարցի վերաբերյալ այլ լեզվաբանների դիտարկումներին՝ Մ. Ասատրյանը առանձնացնում է խոսքի մասերի 3 խումբ՝ ա) նյութական իմաստ արտահայտող կամ հիմնական խոսքի մասեր, բ) ձևական, քերականական իմաստ արտահայտող կամ երկրորդական խոսքի մասեր գ) վերաբերմունքային խոսքի մասեր: Լեզվաբանի կարծիքով, սակայն, դրանք կարոտ են հետազալուսաբանումների:

Վերոհիշյալ խմբավորումը Մ. Ասատրյանը կատարել է՝ հաշվի առնելով բառերի արտահայտած ընդհանուր իմաստը, ձևը և շարահյուսական առանձնահատկությունները, միաժամանակ պարզաբանելով բառային միավորների խոսքիմասային փոխանցումները, մի խոսքի մասից մյուսին անցնելու քերականական երևույթը պայմանավորված է բառերի իմաստային նշանակություններով: Ըստ այդմ՝ նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ) սահմանագիծը դրանց անվանողական դերն է՝ ի հակադրումն քերականական իմաստ արտահայտող կապերի ու շաղկապների և վերաբերմունքային իմաստով եղանակավորող բառերի ու ձայնարկությունների:

Մ. Ասատրյանի այս բացատրությունը բավականին տարբերվում է Գ. Սևակի դիտարկումներից. խոսքի մասերը որոշելիս պետք չէ ելակետ համարել բառերի շարահյուսական կիրառությունները, որովհետև նույն բառի տարբեր շարահյուսական կիրառությունները կարող են խճճվելու և թյուրիմացությունների պատճառ դառնալ, հատկապես՝ բայի անդամ ձևերի, դերանունների խոսքիմասային պատկանելությունը որոշելու դեպքերում: Գ. Սևակի համոզմամբ, բառերի խոսքիմասային պատկանելության որոշման ժամանակ պետք չէ նաև հիմնվել դրանց ձևի, կերպարանավորման առանձնահատկությունների վրա: Այսինքն՝ լեզվաբանը բառակազմական և շարահյուսական հատկանիշները խոսքի մա-

սերի որոշման դեպքում համարում է հավելուրդային²: Այս խնդրում տարբեր է Մ. Ասատրյանի դիրքորոշումը: Չհամաձայնելով Գ. Սևակի կարծիքի այն մասին, ըստ որի՝ պետք է անտեսել բառերի ձևաբանական և բառակազմական հատկանիշները, Մ. Ասատրյանը իրավամբ գրում է. «Բիարկե, խոսքի մասերի որոշման ժամանակ առաջին հերթին պետք է հաշվի առնել բառերի ընդհանուր իմաստը, բայց բառերի մյուս հատկանիշների անտեսումը ճիշտ համարվել չի կարող»³: Այս տեսակետից Մ. Ասատրյանը հատկապես կարևորում է խոսքի մասի բառակազմական առանձնահատկությունները, նկատելով՝ օրինակ, որ նույն ածանցներով կարող են կազմվել և՛ ածականներ, և՛ գոյականներ, միաժամանակ տարարժեք այնպիսի խոսքի մասեր, որոնք համատեղում են և՛ ածականի, և՛ գոյականի խոսքիմասային իմաստները: Նա իր այս դրույթը հիմնավորում է *-ական, -իչ, -ոն, -(ա)վոր* ածանցներով կազմված բառաշարքով և խոսքիմասային տարբեր բնույթ ունեցող բառերի գուգահեռ օրինակներով, ինչպիսիք են՝ *դպրոցականները եկան և դպրոցական կարգապահություն, առևտրականը խիղճ չունի և առևտրական հարաբերություններ, իմաստունների հետ սեղան նստեց և իմաստուն խոսքեր, հողի ախարավորը և աշխարավոր մարդկությունը* և այլն⁴:

Բացի նշված կազմություններից՝ լեզվի բառապաշարում կան նաև այլ բառախմբեր, որոնց խոսքիմասային պատկանելությունը որոշելիս ելակետը այդ բառերի շարահյուսական կիրառության սկզբունքն է, ըստ որի՝ նշված բառախմբերն ունենում են գոյական→ածական և գոյական→ածական→մակբայ խոսքի մասերին բնորոշ գործառնություններ: Դրանք, Մ. Ասատրյանի բնութագրմամբ, երկփեղկված խոսքիմասային իմաստ ունեցող բառեր են⁵: Շարահյուսական մակարդակում առկա խոսքիմասային պատկանելության տարարժեք փոփոխականների կամ փոխանցումների վերաբերյալ արված իր դատողություններում Մ. Ասատրյանն ընդգծում է, որ բառի փոխանցումը տեղի է ունենում լեզվի պատմական

² Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009, էջ 218:

³ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Հ. Ա, Եր., 1970, էջ 72:

⁴ Հմմտ. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1983, էջ 32:

⁵ Տ. Ա. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Կ. Ա, էջ 92:

զարգացման ընթացքում: Հատկապես նկատելի է դերքայների փոխանցում գոյականների կամ ածականների, ինչպես օրինակ՝ *ածելի, հայելի, ունելի. սիրելի, գովելի* և այլն, գոյականների ու մակբայների փոխանցում կապերի՝ *հանչին, հանուն, մասին, շնորհիվ. հեղու, վրա, առաջ* և այլն: Կարևոր հանգամանք է այն, որ անվանի լեզվաբանը նկարագրում է նաև լեզվաքերականական մի ուշագրավ երևույթ, երբ լրիվ կամ լիակատար խոսքիմասային տեղաշարժ է կատարվում՝ նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի նյութական նշանակության լրիվ կամ մասնակի կորստի հիման վրա: Ըստ այդմ՝ փոխանցումը լիակատար է, երբ որոշ բառեր, ձեռք բերելով խոսքիմասային նոր հատկանիշներ, հաճախ գրկվում են իրենց նախկին խոսքիմասային իմաստից, որի պատճառը այդ բառերի երկրորդական իմաստների զարգացումն է: Այսպես, «Գոյականների փոխանցում կապերի» ենթավերնագրում համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքներով լեզվաբանը հստակ սահմանազատում է արդի հայերենում գոյականներից առաջացած կապերը, որոնք հավասարապես գոյականներ և կապեր են՝ *ժամանակ, չափ, տակ, տեղ*: Նշում է նաև գրաբարյան քարացած հոլովածներից առաջացած մի շարք կապեր՝ *վերաբերմամբ, դիմաց, դիպմամբ, հանուն, մասին* և այլն⁶:

Մ. Ասատրյանը հայերենի զարգացման բոլոր փուլերում սովորական երևույթ է համարում ածականների գոյականական կիրառությունը: Նա փորձում է գտնել խոսքի մասերի փոխանցումների խորքային պատճառներն ու հետևանքները: Խոսքաշարում որոշ ածականներ, հաճախակի գոյականաբար գործածվելով, ձեռք են բերում նաև հստակ առարկայական նշանակություն՝ հատկանշային իմաստի հետ մեկտեղ: Նման բառերը և՛ ածականներ են, և գոյականներ:

Ընդամին՝ ածականի և գոյականի խոսքիմասային իմաստով կարող են կիրառվել թե՛ պարզ՝ *աղբար, գիժ, ժլար և այլն*, թե՛ ածանցավոր՝ *ագգայնական, երկաթուղային, չքավոր* և այլն, թե՛ բարդ բառերը՝ *հանցագործ, հրշեջ, շարահիտ* և այլն: Մ. Ասատրյանը կարծում է, որ պարզ բառերի նախապես ածական կամ գոյական լինելու հարցը կարոտ է լու-

⁶ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 41:

սաբանման, բայց որպես ընդհանուր դրույթ՝ ընդունում է նշված պարզ բառերի մեծամասնության նախապես ածական լինելու փաստը, քանի որ հայերենում սովորական է ածականի փոխանցումը գոյականի. «Ածանցավոր բառերի մասին կարելի է ասել, որ դրանք նախապես ածականներ են եղել, որովհետև ԱԿԱՆ, ԱՅԻՆ, ՎՈՐ ածանցները, որոնցով կազմված են այս բառերը, որպես կանոն, ածականակերտ ածանցներ են: Իսկ ինչ վերաբերում է բարդ բառերին, ապա դրանք որպես գործողի անուններ (սուտասան=սուտ ասող, շատակեր=շատ ուտող) հավասարապես իրենց մեջ համատեղում են և՛ հատկանիշի, և՛ առարկայի գաղափար, ինչպես ենթակայական դերբայները, որոնց և՛ ածականական և՛ գոյականական կիրառությունը լեզվում սովորական երևույթ է⁷»:

Հետաքրքիր են նաև դերբայների փոխանցումների վերաբերյալ լեզվաբանի դիտարկումները: Նրա մեկնաբանությամբ, դերբայներն ազատ գործածվում են ածականաբար կամ գոյականաբար, որովհետև առարկայի հատկանիշ, վիճակ ցույց տվող բառեր են, որոնք ունեն նաև առարկայական նշանակություն: Իմաստային, ձևաբանական և գործառական հատկանիշներով պայմանավորված՝ դերբայները փոխանցվում են ածականների կամ գոյականների, ինչպես՝ *գովելի, քնակիչ, հանգուցյալ, ամբաստանյալ*:

Մ. Ասատրյանը խոսքի մասերի փոխանցման առանձին տեսակ է համարում փոխանունությունը. քննարկենք փոխանունության վերաբերյալ գիտական կարևորություն ունեցող նրա դատողությունները: Լեզվաբանը տարբերակում է փոխանունությունը գրականագիտության, ոճաբանության, ձևաբանության և շարահյուսության մակարդակներում: Հատկապես կարևոր է փոխանունության քերականական բնութագիրը, որը, Մ. Ասատրյանի ձևակերպմամբ, խոսքի շղթայում «որոշիչ-որոշյալ» և «հատկացուցիչ-հատկացյալ» կապակցությունների փոխարինումն են մի բառով, այն ներառում է և՛ առարկայի, և՛ հատկանիշի գաղափար⁸:

Արտահայտելով առարկայի ընդհանուր գաղափար՝ փոխանունները հող են ստանում, հողովվում են եզակի և հոգնակի թվերով: Փոխանու-

⁷ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 39-40:

⁸ Հմմտ. նշվ. աշխ., էջ 99-100:

նությունն ունի ոճական արժեք, լեզուն ազատում է կրկնաբանություններից, իբրև ոճական արտահայտչամիջոց՝ այն շատ ավելի գործածական է խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ: Որպես կանոն՝ փոխանվանական կիրառությունը բնորոշ է որոշչի շարահյուսական գործառույթ ունեցող խոսքի մասերին՝ ածական, թվական, դերբայ, օրինակ՝ Պետք է խրախուսել *լավերին, Երեքով* շարժվեցին, *Քնածը* արթնացավ, *Հաղթողը* պարգևատրվեց և այլն:

Ածականների փոխանվանական կիրառության ժամանակ հաճախ այնքան է զարգանում փոխանուն ածականի առարկայական նշանակությունը, որ հոդավոր ձևերը, ինչպես նկատում է Մ. Ասատրյանը, դառնում են անկախ բառային միավորներ՝ հատկանիշի և առարկայական ընդհանուր նշանակությամբ: Այդ բառերն են՝ *բարին, չարը, գեղեցիկը, վեհը, ծիծաղելին* (Ի՞նչ է *բարին*, ի՞նչ է *չարը, Վեհից ծիծաղելին* մի քայլ է միայն, *Գեղեցիկը* կյանքն է) և այլն⁹:

Հայտնի է, որ կապերն ու շաղկապները, եղանակավորող բառերն ու ձայնարկությունները, այսինքն՝ քերականական և վերաբերմունքային խոսքի մասերը գուրկ են անվանողական դերից: Մ. Ասատրյանը կարծում է, որ այդ դրույթը պետք է ընդունել որոշ վերապահությամբ: Նա գտնում է, որ նշված խոսքի մասերը ունեն անվանողական դեր, ընդ որում՝ կապերն ու շաղկապներն անվանում են հարաբերություններ, ձայնարկություններն ու եղանակավորող բառերը՝ խոսողի կամային ու զգացական վերաբերմունքներ, օրինակ՝ Գնաց *դեպի* տուն, *Թերևս* գա, *Եթե* տեսնեմ, կասեմ, *Վա՛հ*, դո՞ւ ես և այլն¹⁰:

Բառերն ունեն մաս ինքնանվանողական հատկանիշ, ասենք, *գրեկ*-ը բայ է, *այս-ը* դերանուն է, *դեպի, մասին* կապեր են և այլն: Ինքնանվանողական դեր կարող են ունենալ ոչ միայն բառերը, այլև լեզվական միավորներն ընդհանրապես՝ հնչյունները, վերջավորությունները, ածանցները և այլն: Լեզվական միավորների մասն կիրառությունը տարածված է գիտական ու լեզվաբանական գրականության մեջ և որպես

⁹ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 43:

¹⁰ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, էջ 100:

փոխանուն ընդունված է Գ. Սևակի, ինչպես նաև՝ Ս. Աբրահամյանի կողմից:

Ս. Աբրահամյանը փոխանունների երկու խումբ է տարբերակում՝ ա) իմաստային-ֆունկցիոնալ փոխանուններ, օրինակ՝ *կարմիրը, հինգը* և բ) անվանողական-ֆունկցիոնալ փոխանուններ՝ *գեղեցիկ*-ը որակական ածական է: Այս երկու փոխանունների միջև առկա է էական տարբերություն: Իմաստային փոխանունների մեջ բառային իմաստին ավելանում է նորը՝ առարկայականը, որը պատճառ է դառնում բառիմաստի և խոսքիմասային պատկանելության փոփոխության և բնորոշ չէ անվանողական ֆունկցիոնալ փոխանուններին¹¹:

Ս. Աբրահամյանի և այլ քերականների կողմից ընդունված անվանողական փոխանունների գործառնության վերաբերյալ Մ. Ասատրյանը հակառակ տեսակետն է առաջ քաշում և փորձում է հիմնավորել իր պնդումը. «Բառերը, ինչպես և լեզվական միավորներն ընդհանրապես, բացի նրանից, որ նշանակում են առարկա, հատկանիշ, գործողություն, հարաբերություն և այլն, միևնույն ժամանակ հանդես են գալիս որպես հենց իրենց անուն, այսինքն գործածվում են ինքնանվանողական ֆունկցիայով, և այդ առումով ամեն ինչ, որ արտասանում է մարդկային լեզուն, որպես իր անուն, գոյական է: Սա էլ նշանակում է ինքնին, որ լեզվական միավորների գործածությունը ինքնանվանողական ֆունկցիայով փոխանունություն չէ»¹²:

Ալնհայտ է, որ նշանավոր լեզվաբանը իր տեսակետը հիմնավորում է ինքնատիպ տրամաբանությամբ, որին դժվար կլինի առարկելը թեկուզ և հենց փոխանունության ու փոխանցման դասակարգումների այն լեզվական բազմազանության պայմաններում, որոնք բնորոշում են արդի հայերենի լեզվական հարստությունը:

Վերը նշված փոխանցումների հիմնական տիպերը Մ. Ասատրյանը դասակարգում է շարահյուսական հիմունքով՝ հակադրամիասնության եղանակով բացահայտելով յուրաքանչյուր տիպի մեջ մտնող խոսքի մասերի փոխհարաբերակցությունը:

¹¹ Տե՛ս Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, 84:

¹² Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 106:

Անհերքելի է, որ Մ. Ասատրյանը իր լեզվաբանական հետազոտություններում, մասնավորապես խոսքիմասային փոխանցումների և փոխանունության հիմնահարցերը ներկայացնելիս հանգամանորեն բացահայտել է խոսքի մասերի փոխանցումները՝ ըստ շարահյուսական գործառնությունների, խորամուխ է եղել դրանց դրսևորման առանձնահատկությունների մեջ և կատարել արժեքավոր եզրահանգումներ հայ քերականագիտության վիճահարույց և հակասական որոշ տեսական դրույթների վերաբերյալ՝ ուղենշային ամուր հենք ստեղծելով խոսքիմասային տարարժեքության հետագա համակարգված ուսումնասիրությունների համար:

Բանալի բառեր- *Մ. Ասատրյան, խոսքի մասերի տարարժեքություն, խոսքի մասերի փոխանցում, փոխանունություն, նյութական իմաստ, գոյական անուն, ածական անուն, դերբայ, քերականական իմաստ, մակերայ, կապ:*

АЛВАРД ХАЧАТРЯН – Гетерозначимость частей речи в грамматических трудах М. Асатрян. – М. Асатрян системно в синхроническом и диахроническом срезе исследовал переходы разных частей речи, которые происходят на синтаксическом уровне. В своих заключениях о сущности перехода частей речи М. Асатрян подчеркивает, что переход слова происходит в процессе исторического развития языка, и особенно заметен переход из причастий в существительные и прилагательные. Отдельной разновидностью перехода он считает метонимию, раскрывая ее многоплановую сущность. М. Асатрян различает метонимию на различных уровнях: литературоведение, стилистика, морфологию и синтаксис. Особенно важно грамматическое значение метонимии, которая, по определению М. Асатряна, заключается в замене одним словом словосочетаний типа «определение и определяемое» в живой речи, это слово совмещает в себе идею и предмета, и его качества.

Ключевые слова: *М. Асатрян, гетерозначимость частей речи, переход частей речи, метонимия, материальное значение, грамматическое значение, имя существительное, прилагательное, причастие, наречие, союз.*

ALVARD KHACHATRYAN - Heterosignificance significance of parts of speech in grammar works M. Asatryan

M. Asatryan systemically in synchronic and diachronic slice explored different parts of speech transitions that occur on the syntactic level. In their conclusions about the nature of the transition parts of speech M. Asatryan stressed that the transition word is in the process of historical development of the language, and is particularly noticeable transition of the participles in nouns and adjectives. It is a separate species move finds metonymy, revealing its multifaceted content. M.Asatryan distinguishes metonymy at various levels: literary criticism, stylistics, morphology and syntax. It is particularly important grammatical meaning of metonymy, which, by definition, M. Asatryan, is the replacement of one word phrases such as "identification and determined" in a live speech, this word combines the idea and object, and its quality.

Keywords: *M. Asatryan, heterosignificance of the parts of speech, the transition of the parts speech, metonymy, material meaning, grammatical meaning, noun, adjective, participle, adverb, conjunction.*

ԱՆԱՀԻՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(ԵՊՀ)

manukyananahit@ysu.am

Մ. ԳԱԼՇՈՅԱՆԻ «ՉՈՐԻ ՄԻՐՈՆ» ՎԻՊԱԿԻ ԲԱՌԱՊԱՇՏԱՐԸ

Լեզվի զարգացման փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բառապաշարի զարգացման գործում առաջնակարգ դերը պատկանում է նշանավոր գրողներին: Այս առումով Մուշեղ Գալշոյանի ստեղծագործությունների լեզուն բավական մեծ հետաքրքրություն է ներկայացնում, առավել ևս, եթե հաշվի առնենք այն փաստը, որ նրա լեզվի մասին որևէ լուրջ ուսումնասիրություն չկա:

Նախքան բուն նյութին անցնելը՝ տեսնենք, թե լեզվաբանության մեջ բառապաշարի ուսումնասիրության վերաբերյալ ինչպիսի մոտեցումներ կան: Գեղարվեստական ստեղծագործության բառապաշարը իմաստային և ոճական առումով միատեսակ բառերի մի ամբողջություն համարել չի կարելի: Դրանում կան լեզվական որոշակի միջոցներ, որոնք առանձնանում են իրենց իմաստով, ծագմամբ և հուզաարտահայտչական երանգավորմամբ: Եվ հենց սրանք են արժանանում լեզվաբանների ուշադրությանը: Սակայն վերջիններիս խնդիրը միայն դրանք առանձնացնելը չէ. անհրաժեշտ է նշել նաև դրանց ոճական արժեքը:

Ցանկացած գրողի բառապաշարի ուսումնասիրության ժամանակ սովորաբար առանձնացվում են հետևյալ բառաշերտերը՝ ժողովրդախոսակցական բառեր, բարբառայնություններ, նորաբանություններ, հնաբանություններ, օտարաբանություններ: Ոճական առումով հետաքրքրություն են ներկայացնում նաև բառերի ձևաիմաստային խմբերը (հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն):

Մ. Գալշոյանի արձակի բառապաշարի ուսումնասիրության համար նյութը վերցված է նրա «Չորի Միրոն» վիպակից: Ստորև ներկայացված

են ժողովրդախոսակցական և բարբառային բառերը, նորաբանությունները (հեղինակային նորակազմությունները), քանի որ այդ բառաշերտերն են նրա լեզվի հիմնական առաղծը:

Ժողովրդախոսակցական լեզուն և բարբառները միշտ էլ ուղեկցել են գրական հայերենին և յուրովի նպաստել վերջինիս հարստացմանը: Այս առումով առաջնությունը պատկանում է ժողովրդախոսակցական լեզվին, որը գրական լեզվի հարստացման կենդանի աղբյուր է: Նույնը չի կարելի ասել բարբառների մասին, քանի որ դրանց ազդեցությունը գրական լեզվի վրա ավելի թույլ է և սահմանափակվում է առանձին բառերի, դարձվածքների փոխառմամբ: Այս բարդ գործընթացում բավական մեծ է գրողների դերը:

Գեղարվեստական գրականության լեզվի ժողովրդայնության հարցը ոճաբանության կարևոր հարցերից մեկն է և բազմիցս արժանացել է և՛ գրողների, և՛ լեզվաբանների ուշադրությանը: «Գրողի լեզվի ժողովրդայնությունը լեզվի մի այնպիսի հատկանիշ է, որն ստեղծվում է համա-ժողովրդական լեզվական միջոցների ստեղծագործական մշակման ու զարգացման գործընթացում»¹, - գրում է ռուս հայտնի լեզվաբան Եփիմովը:

Ռուս հանճարեղ բանաստեղծ Ա. Պուշկինը ժողովրդի լեզուն համարում է «կենդանի ու եռացող աղբյուր, որը խոր հետազոտության կարիք ունի, և որ ժողովրդական լեզվական միջոցների գործածությամբ ստեղծվում է գեղարվեստական ստեղծագործությունների ոճի մաքրություն, փայլ և աղամանդյա ամրություն»:²

Լեզվի ժողովրդայնության գնահատման չափանիշները տարբեր են: Ոմանք առավել ժողովրդական են համարում այն հեղինակի լեզուն, որը շատ է օգտվում այս կամ այն բարբառի բառապաշարից և քերականական ձևերից, և որպես վառ օրինակ մատնանշում են Հովհ. Թումանյանին և Ա. Բակունցին: Փաստորեն նրանք լեզվի ժողովրդայնությունը հանգեցնում են սոսկ որոշակի ժողովրդական բառերի և արտահայտությունների կիրառմանը: Սակայն, ինչպես իրավացիորեն նկատում է Գ.

¹ Стн Ефимов А.И. Стилистика художественной речи, Москва, 1961, стр. 165.

² Пушкин А.С. Полное собрание сочинений, Москва, 1953, стр. 64.

Սևակը, եթե այդ առանձին բառերը հանենք, ապա «Թումանյանի լեզուն կմնա նույնքան ժողովրդական, որքան բնագրում, որովհետև ժողովրդայնություն տվողը բառերը չեն, այլ հարազատ ժողովրդի լեզվամտածողությունը, պարզ, ոչ շինծու լեզուն, որ տրվում է հարազատ ժողովրդի կենդանի խոսքի ուշադիր դիտումով, հմուտ օգտագործմամբ»³:

Ումանք էլ, ծայրահեղության մեջ ընկնելով, Թումանյանին և Բա-կունցին բարբառագիրներ են անվանում: Ժամանակին Հովհ. Թումանյանը հետևյալ կերպ է պատասխանել այդ հարցին. «Ես չեմ ասում զուտ բարբառով գրեցեք ձեր հոդվածները, բայց մեծ իրավունք տվեք բարբառներին, նրանց բառերին, ոճերին ու ձևերին»⁴:

Բավական տարածում գտած մեկ այլ տեսակետի համաձայն բարբառները սպառել են իրենց և չեն կարող գործածվել որպես գեղարվեստական ոճավորման միջոց: Այս տեսակետը բողոքովին անհիմն է, քանի որ, ինչպես ցույց է տալիս լեզուների զարգացման պատմությունը, բարբառները միշտ էլ ուղեկցել են մայր լեզվին, երբեք չի եղել գրական և խոսակցական լեզվի նույնություն: Եվ այսօր բարբառ-խոսակցական լեզու-գրական լեզու՝ բառերի փոխանցման գործընթացը բառապաշարի հարստացման կարևոր գործոն է: Մ. Գալշոյանի լեզուն իր հարստությամբ և բազմազանությամբ մի երևույթ է հայ գրականության մեջ: Նա առատորեն օգտվել է մեր լեզվի հարստացման բոլոր աղբյուրներից և դա արել է շատ վարպետորեն: Առաջին հերթին պետք է անդրադառնանք ժողովրդախոսակցական լեզվի գանձարանին: Վիպակի լեզվում գործածված են և՛ ժողովրդախոսակցական բառեր ու բառակապակցություններ, և՛ դարձվածքներ, և՛ քերականական կառույցներ: Նախ ժողովրդախոսակցական բառերի մասին: Դրանք հանդիպում են և՛ հեղինակ խոսքում, և՛ հերոսների խոսքում: Ինչ վերաբերում է բարբառային բառերին, ապա դրանք ևս մեծ թիվ են կազմում վիպակի լեզվում: Հերոսների խոսքն ամբողջությամբ ներկայացվում է բարբառով (բացառություն է կազմում երիտասարդ սերնդի ներկայացուցիչների խոսքը): Բարբառային բառերից բացի գործածված են քերականական իրողու-

³ Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1941, էջ 122:

⁴ Հ. Հարությունյան, Գեղարվեստական խոսք, Երևան, 1966, էջ 12:

թյուններ: Բերենք բնագրային օրինակներ. «Դավո չի էղնի, էգուցվա մապին մտածե»⁵: «Ինչի խանչալ կհանիս իմ ուրախության վրա, ուռքակնիվ է, լառ, հանաք է, մի իմանա, օրմ էլ դու Ներսեսին կգարկիս գետին» (39): Բարբառային բառերը քանակական առումով գերազանցում են ժողովրդախոսակցականներին: Բերենք օրինակներ՝ ծոցվոր, շլինք, թլոր, խարջ, խորոտ, ապրշումն, մանչ, օճորք, թվանք, ծանրած, սահաթ, խաս, պեծ, ճիժ, թոփ, քով, կշտով, ճնճուղ, տափել և այլն: Ժողովրդախոսակցական բառերն ավելի քիչ են՝ գեղ, նախշուն, չոբան, թախտ, կտոր, դոշ և այլն: Բերված օրինակները բոլորն էլ ունեն իրենց գուգահեռ տարբերակները գրական լեզվում: Սակայն հեղինակը նախապատվությունը տալիս է առաջիններին, քանի որ դրանց գործածությունը որոշակի նպատակի է ծառայում, այն է՝ լեզվի ոճավորմանը: Ժողովրդախոսակցական և բարբառային բառերը հիմնականում հնչում են հերոսների խոսքում: Տարեց հերոսների խոսքն ամբողջությամբ բարբառով է կառուցվում, ինչպես օրինակ՝ Սիրոյի, սայլապան Արոյի, հովիվ Ավգիի, Հարութ պապի խոսքը: «Սել կուգեմ, նախագահ» (6): «Էս է մեր օջախ, գառ» (8): «Յա տե՛ր ... իմ օղորմածիկ մեր էկավ, կանգ տվեց իմ աչաց դեմ» (11 Սիրո) «Մարաթուկի թոփ դիպնի քու ջան» (12 Հարութ պապ):

Հեղինակի խոսքը ևս տեղ-տեղ համեմված է բարբառային բառերով, հատկապես երբ նա խոսում է հերոսների փոխարեն՝ ներկայացնելով նրանց մտորումները: Օրինակ՝ «Էսօր Հարութ պապ աշխարհից կթողնի, կերթա»: «Նորեն Ծովասարից փչում էր քամին, ձյան տակ ջուր էր ընկնում, ծոցվոր ամպերը կախվում էին, Հարութ պապը խաչակնքում էր գարնան առաջին որոտը, թիկունքը դեմ անում պատին, նույնը պահանջում էր թլոր Պետրոսից» (18): Բոլոր այս բառերը գործածված են տեղին և մերվելով խոսքին՝ հնչում են շատ բնական ու ապահովում ժողովրդայնություն:

Ժողովրդախոսակցական լեզվի արժեքավոր տարրեր են բայական հարադրությունները, որոնք ևս մեծ թիվ են կազմում վիպակի լեզվում:

⁵ Մ. Գալշոյան Ի տեղ բաց նամակի, Երևան, 1994, էջ 39: Հետագա օրինակները այս գրքից են, նշվում է միայն էջը:

Այսպես օրինակ՝ շալակն առնել, ճամփա ընկնել, միտք անել, կոխ բռնել, ականջ կախել, ծոր տալ և այլն:

Բերենք բնագրային օրինակներ. «Միրոն երկու օր միտք արավ, ծխեց, անխնա խոտ տվեց Բաշե եզանը» (6): «Պապը հայացքով որոնում՝ չէր գտնում ու ականջ էր կախում դեղնափորիկին և ճռփիկին, և բզեզին...» (19):

Վերը բերված օրինակները համագործածական բայական հարադրություններ են, որոնք մերվել են գրական լեզվին և ժողովրդայնության երանգը նրանցում թույլ է: Դրանց կողքին հեղինակը գործածում է այնպիսի բայական հարադրություններ, որոնցում ժողովրդայնությունը և հաճախ նաև բարբառայնությունը խիստ ընդգծված են: Օրինակ՝ չոթ անել, կոխ բռնել, թն առնել, խնդիրք անել, բթխեղդ անել, սեր գցել, ճոթ տալ, աչք թացել, ծնկածալ լինել և այլն: Հաճախ Գալշոյանը բայական հարադրությունները գործածում է շրջուն նախադասությամբ: Օրինակ՝ դնել ճանապարհ, տալ պատիվ, անել քայլ և այլն:

Բայական հարադրությունների մի մասի արտահայտած իմաստը կարելի է մեկ բառով ներկայացնել, ինչպես՝ միտք անել-մտածել, մտից թռնել – մոռանալ, կախ տալ – կախել, ծիլ տալ – ծլել, աչք թացել – լալ և այլն: Լեզվի ժողովրդայնության տեսակետից հատուկ կարևորություն ունեն հատկապես նման հարադրությունները: Եվ հեղինակը նախընտրում է դրանք, քանի որ համադրական բայերով հնարավոր չէ արտահայտել իմաստային այն նրբերանգները, որ հատուկ են հարադրականներին, և որոնց միջոցով խոսքին հաղորդվում է ոճական ուրույն գունավորում: Այսպես օրինակ. «Մնաց ու սեր գցեց Մխեի քույր Խանդութին ու Մխիկենց տան մեծ ու փոքրին ու գյուղ Թաղավանքին» (26): Սեր գցել հարադրությունն առավել պատկերավոր է և մոտ ժողովրդական մտածողությանը, քան սիրահարվել բայը: Նույնը կարելի է ասել զարմանք անել (զարմանալ), աչք թացել (լալ), ականջ կախել (լսել) տարբերակների մասին:

Ժողովրդախոսակցական լեզվին հատուկ իրողություններ են գուգադրական բայերը: Գալշոյանը առատորեն գործածել է դրանք իր վիպակի լեզվում: Այսպես օրինակ՝ ծեփել – ջարդոտել, լցնել – դարսել, խլշտալ – փախչել, զարկել – դարձնել, քերծվել – բզկտվել, զարկել – սպա-

նել, մզգալ – բառաչել և այլն: Այս գուգադրական բայերն այնպիսի բայերից են կազմված, որոնց ցույց տված գործողությունները կամ բնույթով մոտ են իրար կամ մեկը մյուսի շարունակությունն են: Բայց կան նաև այնպիսիք, որոնք կազմված են հակադիր իմաստ արտահայտող բաղադրիչներից՝ գնալ-գալ, ելնել-իջնել, բարձել-թափել և այլն:

Ժողովրդախոսակցական լեզվի ուրույն մանուշներ են կրկնավոր բարդությունները: Բայց ոչ բոլոր կրկնավորներն են, որ ժողովրդական երանգ են տալիս խոսքին: Դրանց մի մասը համագործածական բառաշերտին պատկանող սովորական բարդություններ են՝ գուրկ ժողովրդայնությունից և հուգաարտահայտչական երանգավորումից (արագ – արագ, տխուր-տխուր, առանձին-առանձին): Սրանց կողքին Մ. Գալշոյանը գործածում է այնպիսի կրկնավոր կառույցներ, որոնք լեզվի ժողովրդայնության վառ արտահայտություն են՝ շիփ-շիտակ, փերթ-փերթ, պուճուր-մուճուր, պալան-պալան, դուրուշ-դուրուշ, քիսա-քիսա, պստիկ-մստիկ և այլն: Կրկնավոր բարդությունները գործածվում են իմաստի սաստկություն, շեշտվածություն, հատկանիշի բազմապատկություն արտահայտելու համար: Որոշ կրկնավոր բարդություններ կարելի է փոխարինել մակբայներով, ինչպես՝ ծանր-ծանր-ծանրորեն, ծույլ-ծույլ-ծուլորեն, ծուռ-ծուռ – խեթ և այլն: Սակայն վերջիններս չունեն իմաստային այն նրբերանգն ու ժողովրդայնության ոգին, որոնք հատուկ են նախորդներին: Կրկնավոր բարդությունները հավասարապես գործածվում են և՛ հերոսների, և՛ հեղինակի խոսքում: Կարելի է ասել, որ դրանք առաջին հերթին ծառայում են գրողի անհատական ոճի բնութագրմանը:

Կրկնավոր բարդությունների մեջ առանձին խումբ են կազմում հնչյունափոխված բաղադրիչով կառույցները (դա կարող է լինել հնչյունի կորուստ, հավելում, փոփոխություն): Սրանցում ժողովրդական երազն ավելի ուժեղ է՝ պուճուր-մուճուր, պստիկ-մստիկ, ոլոր-մոլոր և այլն:

Ժողովրդախոսակցական լեզվին հատուկ են նաև կցական բարդությունները: Նման օրինակները բավական շատ են վիպակի լեզվում: Օրինակ՝ պընկեպուռնկ, բանուգործ, վարուցանք, կալուկուտ, աչքունք, տնետուն, լուսելուս, գոտկահար, մատնագոլ, արևգալ, աստղակուտակ, թուլիոգի, աչքաղեն, անձրևակաթ, արևնտոց և այլն: Շատ հաճախ հեղինակը կցական բարդությունների բաղադրիչները գործածում է անջատ-

անջատ, ինչպես՝ դեմ ու դուռ, ցանք ու կալ, հող ու քոս, կող ու կուշտ, ամպ ու զամպ, հաց ու թաց, կես ու պռատ, քրո ու քաշ և այլն: Հատկանշական է, որ վերջիններս հիմնականում հանդիպում են հեղինակի խոսքում:

Ժողովրդախոսակցական լեզվին հատուկ իրողություններ են հարադրական (անվանական) բարդությունները, որոնք կարելի է բաժանել երկու խմբի:

1. Բարդություններ, որոնց բաղադրիչները իմաստով մոտ են՝ հող-սահման, լույս-առավոտ, բարով-խերով, պետք – պատճառ, դիող-գուռնա, կրակոց-տրաքոց և այլն:

2. Հարադրական բարդություններ, որոնց բաղադրիչները հակադիր կամ իրար հետ որևէ կապ չունեցող իմաստներ ունեն: Օրինակ՝ առավոտ-իրիկուն, արյուն-քրտինք, սարալանջ-կտուր, պատասխան-արարմունք, ճիշ-պար, կրակ-խուրձ և այլն:

Լեզվին ժողովրդայնություն են հաղորդում նաև բնաձայնական բառերը, որոնք երեք տեսակ են լինում՝ գոյականական, բայական և ձայնարկություններ: Գոյականական մանաձայնությունների օրինակները քիչ են՝ քոքոց, խշշոց, բզբզոց, շվշվոց և այլն: «Չորի Միտրյի ականջներում մանվեց սայլի ճռռռոց՝ սլացավ, լացավ, լացավ (63)»: «Իմ կյանքի ժամե՞ր կհաշվիս, քու պապու շիկշիկոց ...» (72):

Բայական մանաձայնությունների օրինակները համեմատաբար շատ են՝ խշշալ, ճռճռալ, խռխռալ, մռմռալ, տժժալ և այլն: «Տաք-տափ ըրըրըրազ Չորի Միտրյի հոգին» (73): «Մանգաղը սկսվաց ու արթնացավ անուշ երազից, ճյճյազոռեզ աչքերը» (36):

Ձայնարկությունները ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ արտահայտություններ են: Ժողովրդին հատուկ է իր զգացմունքների անմիջական և ազատ արտահայտումը: Ձայնարկություններն էլ լեզվական այն միջոցներն են, որոնք ամենից լավ են արտահայտում մարդկային ամենատարբեր զգացմունքներ՝ ուրախություն, զայրույթ, վիշտ, տխրություն, հուսահատություն, արհամարհանք. «Հեհեհե՜յ, Մեպասար ... երդում ուներ Մեջոյի պես» (57): «Հալաա՜, կրակն ենք ընկել էս գաղթականների ձեռքը» (71):

Ժողովրդախոսակցական և բարբառային բառերի գործածությունը ծառայում է ոչ միայն հեղինակի անհատական ոճի ինքնահաստատմանը, այլև հերոսների լեզվի ոճավորմանը: Ի վերջո, յուրաքանչյուր անհատ տարբերվում է իր մտածողությամբ, աշխարհըմբռնմամբ, իրականության ընկալմամբ և գնահատմամբ, որոնք անդրադառնում են նրա լեզվական առանձնահատկությունների վրա: «Խոսքի անհատականացման գեղարվեստական արժեքը ոչ միայն այն է, որ դրանով կերպարը դառնում է ավելի տիպական ու կենդանի, այլև այն, որ խոսքն ունի բնութագրող արժեք և հեղինակին ազատում է նրան իր բառերով բնութագրելու հոգսից»⁶:

Այժմ անդրադառնանք նորաբանությունների, ավելի ճիշտ՝ հեղինակային նորակազմությունների: Հենց այս կարգի բառերն են, որ հետաքրքրություն են ներկայացնում հետազոտողի համար և հենց սրանք են, որ ստեղծում են գալշոյանական ուրույն մի լեզվական միջավայր, որը հնարավոր չէ շփոթել որևէ այլ գրողի լեզվի հետ:

Ընդհանրապես ցանկացած գրողի հեղինակային նորակազմությունների բնույթն անմիջականորեն կապված է նրա անհատական ոճին հատուկ բառօգտագործման հետ: Բացառություն չէ և Գալշոյանը: Վիպակի լեզվում տեղ գտած հեղինակային նորակազմությունները իրենց բնույթով անխզելիորեն կապված են ստեղծագործության լեզվի և թեմատիկայի հետ: Ինչպես վերը նշել էինք, վիպակի լեզվի հիմնական ատաղձը կազմում են ժողովրդախոսակցական բառերն ու բարբառայնությունները: Գալշոյանի ստեղծած նորակազմությունները ժողովրդական խոսքի նմանողությամբ ստեղծված բացառիկ նմուշներ են: Դրանք բացառապես բարդ բառեր են: Այստեղ պետք է առանձնացնել համադրական և վերլուծական բարդությունները: Համադրական բարդությունները կարելի է առանձնացնել ըստ խոսքիմասային պատկանելության:

- ❖ Գոյականներ՝ անձրևաթել, ամպաշող, անձրևակաթեր, տարի-գիշեր, ամպագոլ, լուսելուս, աչքադեմ, մահակռիվ, արևմտոց, արևալատոց, շուրջալարիսպ, աստղակուտակ, հարսնագովք,

⁶ Հ. Հարությունյան, Գրողի լեզվի և ոճի հարցեր, Երևան, 1979, էջ 205:

աղոթատառ, եղերախաղ, դիմանլուս, սիրտքանդում, արևբաց, գյուղակուշտ:

- ❖ Ածականներ՝ սևաաղաթք, կոպկախ, աչքատես, գոտկահար, խելքամոտ, կիսատակոս, մակբայներ՝ գլուխկախ, իծաշատուկ, ծունկբաց, տափետափ, ծալեծունկ,:

- ❖ Բայեր՝ ելվերել, իջվարել, ասեղնահարել, դադրոտել:

Բերենք օրինակներ բնագրից. «Ծառերի տերևներին անձրևակաթերը շողում-շողշողում էին. Խանդութի պարանոցի ուլունքներն էին, քար ու ծառից, տանիքներից ամպաշողը ալիք – ալիք առաջանում էր, ելնում Ընկուզասարը, աչքատես սար ու ձոր ծխում էր (11)»: «Աստղակուտակ կար իրենց երդիկի վրա» (30): «Իսկ արևբացի հետ թմրություն իջավ ներվերին, հոգում լուռ թախիծ» (68): «Փեշերից ծվեններ էին մնացել փշերի վրա, հա՛, հա՛ ծունկբաց պիտի մնար ու դրա համար ամաչում էր...» (60):

Վերլուծական բարդություններից հատկապես բայական հարադրությունների օրինակներն են շատ՝ ծայր բացել, մորեորք մնալ, ականջ կախել, դադրաշունչ առնել, ականջ պահել, մեջքակռիվ տալ, զարմանք մնալ, պահանջահայացք գցել, բթխեղդ անել, անձրևացանք անել, անտես չմնալ և այլն: «Ուրիշ մեկը չկար, և միտք ունեցավ էդ շողոքորթին բթխեղդ անի, առնի մաուզերը, դուրս գա» (23): «Ինքը դրան չէր սպասում, զարմանք մնաց, մնաց ոտքի վրա» (23): «... Հետո յոթը օր, յոթը գիշեր քամին ու ընկուզենիները մեջքակռիվ էին տալիս...» (15):

Վիպակի լեզվում գործածված հեղինակային նորակազմությունները շատ վառ հուզաարտահայտչական երանգավորում ունեն և ամբողջականացնում են Մ. Գալշոյանի լեզվառճական նկարագիրը: Սակայն դրանք հետագա կիրառություն չեն ստացել:

Վիպակի լեզվում հանդիպել ենք հնաբանությունների և օտարաբանությունների հատուկեմտ օրինակների. ինչպես՝ այր, յաթաղան, սուլթան, արբախ, բոլշևիկ (հնաբանություններ), կոմսոմոլ, կոլխոզ, կոզիրյոկ, պիսր (օտարաբանություններ): Նման օրինակները որակ չեն կազմում, ուստի ավելորդ ենք համարել դրանց անդրադառնալը:

Ավարտելով մեր խոսքը՝ հարկ ենք համարում ասել, որ Մ. Գալշոյանը ոչ միայն մեծ վարպետությամբ օգտվել է մեր ժողովրդի լեզվական

գանձարանից, այլև նպաստել է դրա հարստացմանը: Եվ բոլոր այդ լեզվական միջոցները գործածվել են տեղին և նպաստել են ոչ միայն ողջ ստեղծագործության, այլև առանձին հերոսների լեզվի ոճավորմանը:

Բանալի բառեր- *բառապաշար, ժողովրդախոսակցական բառեր, բարբառներ, նորաբանություններ, գրական լեզու, հեղինակային ոճ, գեղարվեստական արժեք:*

АНАИТ МАНУКЯН – Словарный состав повести М. Галшояна «Дзори Миро». – Изучение фактов развития языка показывает, что знаменитые писатели играют большую роль в развитии словарного состава языка. В связи с этим язык М. Галшояна представляет большой интерес. В статье представлены основные слои словарного состава повести М. Галшояна «Дзори Миро»: разговорно-бытовые слова, диалектизмы, неологизмы.

Ключевые слова: *словарный состав, разговорные слова, диалектизмы, неологизмы, литературный язык, авторский стиль, художественная ценность.*

ANAHIT MANUKYAN- The vocabulary of the story of M. Galshoyan „Dzory Miro”

The study of language development factors show that Famous writers play a big role in the development of the vocabulary of the language. In connection with this language of M. Galshoyan is of great interest. The article presents the major segments of the vocabulary of the story M. Galshoyan „Dzory Miro”. It is colloquially – household words, dialect, neologism.

Keywords: *vocabulary, colloquialism dialectigisms, neologisms, literatary language, architectual style, artistic value.*

ՎԻԿՏՈՐՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

(ԵՊՀ)

muradyan.viktorya@ysu.am

ԲԱՌԱԿԱՊԱՅՈՒԹՅԱՆ ԱՍԱՏՐՅԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՒՈՒՄԸ

Սկսած 20-րդ դարի կեսերից՝ հայ քերականագիտական աշխատություններում լայնորեն սկսեց քննվել նաև բառակապակցությունը՝ որպես շարահյուսական միավոր: Բառերի կապակցության մասին անշուշտ խոսվել է դեռ հնուց, սակայն բառակապակցության՝ որպես առանձին միավորի առանձնացում և քննություն չի կատարվել: Նոր շրջանում բառակապակցությունները քննվել են թե՛ նրանց նվիրված առանձին մենագրություններում, թե՛ շարահյուսության վերաբերյալ տարբեր աշխատություններում, որոնց թվում և դպրոցական ու բուհական դասագրքերում: Բառակապակցությունների բավականին ծավալուն քննություն կա նաև Մանվել Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզու (շարահյուսություն)» ուսումնական ձեռնարկում, որը նախատեսված է բուհերի բանասիրական ֆակուլտետների համար¹: Այստեղ 40 էջ նվիրված է բառակապակցությունների քննությանը:

Քանի որ աշխատությունը ուսուցողական է, Մ. Ասատրյանը նախ համառոտ ներկայացնում է հարցի պատմությունը և նոր միայն անցնում բառակապակցության քննությանը: Նա գրում է, որ բառակապակցության՝ որպես առանձին միավորի առանձնացումը կատարվել է ուշ շրջանում՝ նշելով հետևյալը. «Ճիշտ է, լատինաբան քերականներ Ս. Ջուդայեցու, Կ. Գալանոսի, Հովհ. Հովվի, Մխիթար Սեբաստացու, Բաղդասար Դպիրի (17-18-րդ դարեր) և հետագա շրջանի հայ քերականներ Մ. Չամչյանի, Գ. Ավետիքյանի, Ա. Բագրատունու, Ս. Պալասանյանի աշխատություններում հայերենի շարահյուսության հետ կապված քննվում

¹ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն, Եր., 1987:

են բառերի կապակցությունները, բայց դրանք չեն սահմանվում ու բնութագրվում որպես շարահյուսական առանձին ու ինքնուրույն միավորներ: Հարցը այս ձևով է ներկայացվում մաս Մ. Արեղյանի «Աշխարհաբարի շարահյուսություն» աշխատության մեջ»²:

Այսպիսով՝ բառակապակցությունների ուսումնասիրությունը երկար պատմություն չունի, և շատ են տարակարծությունները բառակապակցությանն առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ: Առաջին խնդիրը, որն առնչվում է բառակապակցությունների քննությանը, բառակապակցության սահմանումն է: Տարբեր լեզվաբաններ տարբեր ձևերով են սահմանել բառակապակցությունը: Եթե ընդհանրացնենք առավել տարածված տեսակետները, ապա կարող ենք ասել, որ բառակապակցությունը հիմնականում սահմանվում է որպես մեկից ավելի բառերից կազմված անվանողական կապակցություն, որով արտահայտվում է մեկ ամբողջական, թեև անդամազատ հասկացություն: Այստեղ պետք է նշենք, որ տարակարծություններ կան տարբեր խոսքի մասերով կազմված կապակցությունների վերաբերյալ: Հարցն առաջին հերթին վերաբերում է կապով և նրա խնդրով կազմված կապակցություններին, որոնք լեզվաբանների մի մասը համարում է բառակապակցություն, իսկ մյուս մասը՝ ոչ: Այս հարցը քննելիս Էդ. Աղայանը նշում է, որ գոյականը, այսինքն՝ կապի խնդիրը, և կապը կապակցվում են խնդրառությանը, և ավելացնում է. «Ինչ վերաբերում է ամբողջ բառակապակցությանը, ապա մա գոյական գերադաս անդամի և կապի ստորադասական կապակցություն է, ուստի և *կապ+ գոյական որևէ հոլովով* պետք է համարել բառակապակցություն»³: Իսկ Ռ. Իշխանյանը հավելում է մաս ձայնարկություններով ձևավորվող կապակցությունները: Նա գրում է. «Շատ լեզվաբաններ բառակապակցությունը համարում են երկու և ավելի նյութական իմաստ ունեցող բառերի քերականական կապակցություն: Դրանով կապերի, ձայնարկությունների կազմած բառակապակցությունները այդպիսիք չեն համարվում»⁴: Ս. Գյուլբուրադյանը որոշ վերապահումով է

² Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 63:

³ Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 546:

⁴ Իշխանյան Ռ., Արդի հայերենի շարահյուսություն. պարզ մախադասություն, Եր., 1986, էջ 41:

կապական կառույցները բառակապակցություն համարում: Նա գրում է. «Բառակապակցության մի ուրույն տեսակ է համարվում կապի և նրա խնդրի կապակցությունը, քանի որ կապը հոլովական վերջավորության դեր կատարելով՝ ինքնուրույն անդամ չի լինում: Կապ+կապի խնդիր կապակցությունն է նախադասության անդամ»⁵: Կապական կառույցները նախադասության անդամ չեն համարվում «Ժամանակակից հայոց լեզու» գրքում, որում գրված է. «Բառակապակցությունները ըստ քանակային կազմի դասակարգելիս հաշվի չեն առնվում կապերն ու կապական բառերը, որոնք կատարում են միայն քերականական դեր՝ ցույց են տալիս բաղադրիչների միջև եղած հարաբերությունը»⁶:

Մ. Ասատրյանը կապով ու նրա խնդրով ձևավորված կապակցությունները բառակապակցություններ չի համարում: Նա բառակապակցությունների կազմությունը քննելիս շեշտում է. «Հատուկ նշենք, որ պարզ են նաև այն բառակապակցությունները, որոնցում բառերի կախման հարաբերությունը արտահայտված է կապերով, օրինակ՝ *զնալ դեպի Կրուն, պայքարել խաղաղության համար, պարունել տառապանքների մասին, պայքարել դավաճանների դեմ* և այլն»⁷: Չայնարկություններով ձևավորվող կապակցություններին Մ. Ասատրյանը չի անդրադառնում, սակայն բառակապակցությունների մասին խոսելիս հաճախ է գործածում «լիիմաստ բառերի կապակցություն» արտահայտությունը, որից էլ պարզ է, որ նա ոչ լիիմաստ բառերով ձևավորված կապակցությունները բառակապակցություն չի համարում:

Բառակապակցության ընդհանուր հատկանիշները և սահմանումը քննելով և մեջբերելով մի քանի սահմանումներ՝ Մ. Ասատրյանը իրավացիորեն հակադրվում է «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության⁸ մեջ եղած այն կարծիքին, որ բառակապակցությունները, ինչպես և բառերի մի մասը, ունեն իրենց ձևերի հարացույցը, ինչպես՝ *կարմիր ծաղիկ*,

⁵ Գյուլբուրդյան Ս., Ժամանակակից հայերենի շարահյուսություն (պարզ նախադասություն), Եր., 1988, էջ 31:

⁶ Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 17:

⁷ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 76:

⁸ Տե՛ս Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 9-10:

կարմիր ծաղկի, կարմիր ծաղկից, կարմիր ծաղկով: Նա նշում է, որ այստեղ, անշուշտ, գործ ունենք *ծաղիկ* գոյականի եզակի թվի հոլովման հարացույցի հետ, որն այդ գոյականը ունի մաս առանց բառակապակցություն կազմելու: Հավելենք, որ բառակապակցությունը՝ որպես շարահյուսական միավոր, չի կարող ունենալ ձևաբանական հատկանիշներ: Այդ հատկանիշները կարող են բնորոշ լինել բառակապակցության անդամներին՝ այս կամ այն խոսքի մասի մեջ մտնող բառերին, բայց ոչ ամբողջ կապակցությանը, ինչպես որ այդ իրողությունն առկա է նախադասության և նրա անդամների դեպքում:

Քերականական տարբեր աշխատություններում բառակապակցությունները դասակարգվում են տարբեր չափանիշներով: Հիմնականում դասակարգումը կատարվում է ըստ բաղադրիչների կապակցվածության աստիճանի, ըստ բառակապակցության գերադաս անդամի խոսքիմասային պատկանելիության և ըստ կազմության:

Սրանցից առաջինին Մ. Ասատրյանն անդրադառնում է բավականին հանգամանորեն: Հայտնի է, որ ըստ բաղադրիչների կապակցվածության աստիճանի՝ առանձնացվում են ազատ և կայուն բառակապակցություններ: Ասատրյանը սրանց քննությունը և առանձնացումը կատարում է այն հիմունքով, թե դրանցից որն է լեզվական միավոր, իսկ որը՝ խոսքային: Նա նախ վերլուծում է այն տեսակետը, համաձայն որի՝ բառակապակցությունները, ընդ որում մաս ստորոգում ունեցող կապակցությունները «դեռևս նախադասություն չեն, այլ նյութ են վերջինիս համար: Նրանք նախադասության են վերածվում միայն խոսքի մեջ՝ հատուկ հնչերանգի միջոցով»: Համաձայն չլինելով այս տեսակետին՝ Մ. Ասատրյանը գրում է. «Սակայն բառակապակցությունների այսպիսի ըմբռնումը հանգեցնում է կայուն (բառային) և ազատ (շարահյուսական) բառակապակցությունների հավասարեցմանը կամ մույնացմանը, այնինչ առաջինները լեզվական-բառային, իսկ երկրորդները խոսքային-շարահյուսական միավորներ են»⁹: Սակայն կայուն բառակապակցությունների վերաբերյալ բնորոշման մեջ նա հիմք է ընդունում ոչ թե լեզվական-բառային արժեք ունենալը, այլ կապակցության՝ այլ բառերի

⁹ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 67:

հետ շարահյուսական հարաբերությունների մեջ մտնելու ձևը: Ըստ այդմ. «*Կայուն* կամ *անանջատելի* են կոչվում այն ստորադասական բառակապակցությունները, որոնց բաղադրիչների գերադաս անդամները առանց կախյալ բառերի շարահյուսական հարաբերության մեջ չեն կարող մտնել այլ բառերի հետ, և, հետևաբար, բառակապակցության կախյալ և գերադաս անդամը միասնաբար հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ»¹⁰: Քանի որ կայուն բառակապակցությունները այսպես են սահմանվում, ուստի հասկանալի է, թե ինչու է որպես կայուն բառակապակցությունների օրինակներ Մ. Ասատրյանը բերում այսպիսի կապակցություններ՝ *ամեն օր* տեսնել, *միջին փարիքի* բանվոր, *հինգ փութ* գարի, *մեջքը բարակ* աղջիկ և այլն: Իրոք, սրանք այնպիսի կապակցություններ են, որոնք համապատասխանում են վերը բերված սահմանմանը: Մինչդեռ սովորաբար կայուն բառակապակցությունները ընկալվում են որպես խոսքաշարից դուրս էլ իրենց կայունություն դրսևորող կապակցություններ:

Այլ լեզվաբաններ կայուն բառակապակցությունները քննելիս ուրիշ կառույցներ են առանձնացնում: Մ. Գյուլբուդաղյանը, քննելով ազատ և կայուն բառակապակցությունները, որպես կայուն բառակապակցությունների օրինակներ նշում է այսպիսի կապակցություններ՝ *համաշխարհային շուկա*, *շրապ օգնություն*, *հավելյալ արժեք*, *կոմունիստական աշխատանքի բրիգադ*, *Վահան Տերյան* և այլն: Մ. Գյուլբուդաղյանը նաև նշում է հետևյալը. «Կայուն բառակապակցությունները անվանողական նշանակություն ունեն, անվանում են առարկան, երևույթը: Դրանք բաղադրյալ ձևեր են, որոնք մեկ բառի դեր են կատարում և ուսումնասիրվում են բառազիտության համակարգում»¹¹:

Մ. Ասատրյանի մոտեցումը պարզ է դառնում նրանով, որ նա ազատ է համարում այն բառակապակցությունները, «...որոնց կազմի մեջ մըտնող բաղադրիչները հանդես են գալիս որպես նախադասության ինքնուրույն, առանձին անդամներ և տարրալուծելի են, այսինքն բառակապակցությունների գերադաս անդամները որպես նախադասության ան-

¹⁰ Նույն տեղում, էջ 76:

¹¹ Գյուլբուդաղյան Մ., Ժամանակակից հայերենի շարահյուսություն (պարզ նախադասություն), Եր., 1988, էջ 31:

դամ կարող են հանդես գալ մաս առանց կախյալ ստորադաս բառերի»¹²:

Ինչպես նշվել է, բառակապակցությունները դասակարգվում են մաս ըստ կազմության: Համաձայն այս դասակարգման՝ առանձնացվում են *սարգ* և *բարդ* կամ *երկբադադրիչ* և *բազմաբադադրիչ* բառակապակցություններ: Արդեն նշել ենք, որ Մ. Ասատրյանը որևէ բառով և կապով ու նրա խնդրով ձևավորված բառակապակցությունները համարում է երկբադադրիչ: Բառակապակցությունների այս դասակարգումը քննելիս Մ. Ասատրյանը թեև նշում է, որ ստորադասական բառակապակցություններն ըստ բաղադրիչների քանակական կազմի բաժանվում են երկու խմբի՝ *սարգ* և *բարդ* կամ *երկբադադրիչ* և *բազմաբադադրիչ*, այնուամենայնիվ բազմաբադադրիչ բառակապակցությունները քննելով՝ նա եզրակացնում է. «...այսպես կոչված բարդ կամ բազմաբադադրիչ բառակապակցությունները չունեն միայն իրենց հատուկ քերականական միջոցները և այդ միջոցների հետ կապված իմաստները և հետևաբար դրանք կառուցվածքային առանձին միավորներ չեն, այլ, ինչպես նշված է արդեն, իրենցից ներկայացնում են երկբադադրիչ բառակապակցությունների զանազան միացությունները»¹³:

Վերն ասվել է, որ Մ. Ասատրյանը ոչ լիմաստ բառերով ձևավորվող բառակապակցություններ չի ընդունում: Նյութական արժեքով բոլոր խոսքի մասերով կազմվում են բառակապակցություններ, և ըստ այդմ՝ առանձնացվում են գոյականական (գեղեցիկ տուն), ածականական (շատ գեղեցիկ), թվականական (գրեթե հինգ), դերանվանական (համարյա բոլորը), բայական (արագ վազել), մակբայական (շատ արագ) բառակապակցություններ: Իհարկե, այս շարքում ծանրակշիռ տեղը գոյականական և բայական բառակապակցություններինն է, այնուհետև ածականական ու մակբայական բառակապակցություններինը, իսկ դերանուններով և թվականներով կազմվող բառակապակցություններ սակավաթիվ են: Այդ ամենով հանդերձ՝ բառակապակցությունները քննողները վերջին երկուսը ևս սովորաբար առանձնացնում են: Մ. Ասատրյա-

¹² Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 75:

¹³ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 77:

նը, քննելով գոյականական, ածականական, բովականական, բայական և մակբայական բառակապակցությունները, չի անդրադառնում դերանվանական բառակապակցություններին՝ ո՛չ հերքելով, ո՛չ էլ հաստատելով դրանց գոյությունը:

Բառակապակցության վերաբերյալ քննության մեջ հատկապես ուշագրավ է Մ. Ասատրյանի մոտեցումը հետևյալին: Վերն արված մի քանի մեջբերումներից երևաց, որ Մ. Ասատրյանը բառակապակցությունների վերաբերյալ տարբեր բնորոշումներ կատարելիս նշում է, որ խոսքը ստորադասական բառակապակցությունների մասին է: Բանն այն է, որ նա ընդունում է և՛ համադասական, և՛ ստորադասական բառակապակցություններ: Այսպիսի մոտեցումը համընդհանուր չէ: Լեզվաբանների մեծ մասը ընդունում է միայն ստորադասական հարաբերությամբ բառակապակցություններ: Այսպես՝ «Ժամանակակից հայոց լեզու» գրքում (բառակապակցություններին վերաբերող հատվածի հեղինակը Ն. Պառնասյանն է) գրված է. «Բառերի համադասական կապակցությունը բառակապակցություն չի կազմում, որովհետև այդ միջոցով չի արտահայտվում մեկ միասնական (թեկուզ բարդ) հասկացություն»¹⁴: Սակայն անմիջապես մի վերապահում է արվում. «Բառակապակցություն պետք է համարել միայն վերնագրային-անվանողական արժեք ունեցող համադասական հարաբերությամբ կապակցված մի շարք անվանական կապակցություններ, ինչպես՝ «Գիտությունը և կյանքը», «Դպրոցը և արտադրությունը», «Ինստիտուտը և հասարակական կազմակերպությունները» և այլն»: Համադասական բառակապակցություններ չեն ընդունում Ս. Գյուլբուդաղյանը, Ռ. Իշխանյանը, Էդ. Աղայանը, Վ. Քոսյանը և ուրիշներ:

Մ. Ասատրյանը բառակապակցությունների համադասական տեսակն էլ է ընդունում: Նա գրում է. «Համադասական են կոչվում այն բառակապակցությունները, որոնց կազմի մեջ մտնող անդամները մախադասության մեջ կատարում են նույն դերն ու ֆունկցիան և իրար նկատմամբ հավասարաբարձեր են ու անկախ, ինչպես՝ «Աշակերտները

¹⁴ Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 8:

գնեցին *գիրք, թուղթ, գրիչ, մատիկ, պաշտասկ»* նախադասության մեջ ընդգծված բառերը գտնվում են համագոր, հավասարաբժեք հարաբերության մեջ և կազմում են համադասական բառակապակցություն¹⁵։ Այս և բերված մի շարք այլ օրինակներից պարզ է դառնում, որ Մ. Ասատրյանը համադասական բառակապակցություններ է համարում բազմակի անդամները, որոնք մեկ այլ բառի կապված են շարահյուսական միևնույն հարաբերությամբ, օրինակ՝ *գեղեցիկ, վճիր, հովասուն* գետակ. Խոսափում էր իր *հարազատներից, բարեկամներից, ընկերներից ու ծանոթներից*։ Համադասական բառակապակցությունները ստորադասականներից տարբերվում են նաև նրանով, որ նրանց բաղադրիչների միջև կարող են լինել միավորական, հակադրական և տրոհական հարաբերություններ, որոնք ստորադասական բառակապակցություններում արտահայտվել չեն կարող։

Հայտնի է, որ վիճահարույց է տրոհվող անդամներով կապակցությունները բառակապակցություններ համարելու հարցը։ Այսպես՝ Վ. Քոսյանը այդ հարցի մասին գրում է. «Պետք է նշել նաև, որ բացահայտիչը, որն իր լրացյալից միշտ տրոհվում է, նախադասության անդամ է, սակայն այն լրացյալի հետ բառակապակցություն չի կազմում, քանի որ տրոհվող լրացումները լրացյալի հետ բառակապակցություն չեն կազմում»¹⁶։ Մ. Ասատրյանը տեսական դրույթները շարադրելիս այս հարցին չի անդրադառնում, սակայն նյութի քննությունից, բերված օրինակներից, մասնավորապես գոյականական բառակապակցությունների քննությանը վերաբերող հատվածից պարզ է դառնում, որ նա ևս տրոհվող լրացումներով կապակցությունները բառակապակցություններ չի համարում։

Եթե ի մի բերենք ասվածները, ապա կարելի է ասել հետևյալը։ Մ. Ասատրյանը բառակապակցությունները քննելիս հաճախ ընդունում է եղած տեսակետները, երբեմն դրանք ընդունում է վերապահունով, իսկ որոշ խնդիրների վերաբերյալ էլ հայտնում է առանձին կարծիք։ Մասնավորապես տարբերվում են նրա հայացքները բարդ և համադասական

¹⁵ **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 77։

¹⁶ Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 2-րդ մաս, Շարահյուսություն, հատոր Բ, Եր., 1975, էջ 4։

բառակապակցությունների վերաբերյալ, որոնցից առաջինը ընդունում է վերապահությամբ, իսկ երկրորդը մեկնաբանում է յուրովի: Նշենք նաև, որ բառակապակցությանը նվիրված շարադրանքը ավարտվում է բառակապակցական կադապարների կառուցվածքային և իմաստային վերլուծությամբ, որում բերված են անհրաժեշտ օրինակները, ինչպես նաև սեղմ ներկայացված են շարույթին վերաբերող հիմնադրույթներ:

Քանալի բառեր- *բառակապակցություն, կապակցություն, խուրհիմս, նախադասություն, գոյական, բայ, ածական, կազմություն, քերականություն, լեզվաբանություն:*

ВИКТОРИЯ МУРАДЯН – Словосочетания в понимании М. Асатрян. – Исследования словосочетаний стали проводиться недавно. Существует много разных мнений, связанных с различными вопросами словосочетабельности. Лингвисты по-разному определяют словосочетание. Разногласия вызывают словосочетания, состоящие из разных частей речи.

Когда Манвел Асатрян исследует словосочетания, он иногда принимает существующие мнения, а в отношении некоторых проблемных вопросов приводит свое собственное мнение.

Ключевые слова: *словосочетание, часть речи, предложения, сочетания, существительное, глагол, прилагательное, состав, грамматика, лингвистика.*

VIKTORYA MURADYAN – M. Asatryan about the Combinations

The survey of combinations doesn't have a long story. There are many different opinions about the different answers of combinations. Different linguists define the combination to different forms. There are many disagreements about the conjunctures different parts of speech.

When Manuel Asatryan exams the combinationism, he often accepts the views about the some exams and gives his own opinion.

Keywords: *combination, part of speech, sentence, conjuncture, noun, verb, adjective, composition, grammet, linguistics.*

ԹԱՄԱՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

(ԵՊՀ)

poghosyantamara@ysu.am

**«ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋ ԵՎ ԿԱՏԱՐԵԱԼ» ԳՐՔԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԸ**

Մուտք: Հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանման մեջ նոր կամ աշխարհաբարի շրջանը սկզբնավորվում է XVII դարից, որը միաժամանակ ազդարարում է վաղ աշխարհաբարի ենթաշրջանը (XVII դարի սկզբներից մինչև XIX դարի կեսը)¹: Հայերենի զարգացման այս փուլում են տպագրվել աշխարհաբար առաջին գրքերը՝ «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» (Մարսել, 1675), «Պարզաբանութիւն հոգեմտագ սաղմոսացն Դարթի մարգարէին» (Վենետիկ, 1687), «Գանձ չափոյ, կշռոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի» (Ամստերդամ, 1699): Սեր աշխատանքը նվիրված է աշխարհաբար առաջին տպագիր գրքի՝ «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» երկի բառապաշարի քննությանը:

«Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ»-ը լույս է տեսել խոշորագույն տպարանի հարուստ ճանապարհ անցած Ոսկանյան տպարանի մարսելյան գործունեության ընթացքում՝ 1675 թ.: Այն նաև մաթեմատիկայի՝ հայերեն առաջին տպագիր գիրքն է, որում ներկայացվում են թվաբանական գործողությունները, տարբեր հաշվարկներ կատարելու եղանակներն ու ձևերը: Գրքի մաթեմատիկական տերմինաբանական համակարգին անդրադարձել ենք մեր մեկ այլ քննության մեջ՝ առանձնացնելով տերմիններ և տերմինային բառեր, դասակարգելով դրանք ըստ կազմության, ծագման և իմաստի, այդ պատճառով սույն աշխատանքում:

¹ Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 26:

քում «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ»-ի մաթեմատիկական տերմինաբանական համակարգին լայն անդրադարձ չի կատարվի²:

Գրքի առաջաբանը և հիշատակարանը գրաբար են գրված, իսկ բուն երկի լեզուն միասնական աշխարհաբարի մի նմուշ է, որում առավել կամ պակաս չափով միախառնված են արևելյան և արևմտյան բարբառներին բնորոշ տարբեր լեզվամիջոցներ: «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ»-ն ունի հստակորեն առաջադրված խնդիր, նպատակ, որի մասին է վկայում «Առաջաբանութիւն գրգոյս» կոչվող առաջաբանը. «*Տեսանելով զհարկատրութիւն մերագնեայց վաճառականաց վասն կատարելապէս ո՛չ գիտելոյ զարհեստն համարողութեան, վայելուչ վարկաք զգիրզս զայս թարբմանել ի մերս բարբառ. որպէսզի սովաւ վարժեցեալք կարիցեն դիտապէս պարապիլ ի գործս իրեանց թարց դեգերման մրաց*»³: Գրքի նպատակը մեկնաբանվում է նաև հիշատակարանում՝ «Վախճան»-ում. «....ի վայելումն հանուրց հայկազունեաց վաճառականաց....» (էջ 145):

Սույն քննության նպատակն է թափանցել երկի բառապաշարի խորքերը և վեր հանել տարաբնույթ իրողություններ, պատկերացում կազմել ինչպես տվյալ երկի, այնպես էլ XVII դարի աշխարհաբարի բառապաշարի մասին առհասարակ, ցույց տալ, թե բառային ինչ նոր իրողություններ են հատուկ այս շրջանի աշխարհաբար երկերին, քանի որ աշխարհաբար առաջին տպագրված երկերը ժամանակի հայերենի մասին ամբողջական պատկերացում կազմելու անգնահատելի աղբյուրներ են:

Երկի բառապաշարի քննություն: Մեր կատարած քննությունը հենվում է բառարանային աշխատանքի վրա, որը բաղկացած է մի քանի փուլից: Առաջին փուլի նպատակն է վեր հանել երկի բառապաշարում

² Տե՛ս **Պողոսյան Թ. Ն.**, Մաթեմատիկական տերմինաբանական համակարգը «Արիեստ համարողութեան» գրքում, «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական տեղեկագիր», «Հումանիտար գիտություններ», 2-3 (21-22), 2014, էջ 141-152:

³ Տե՛ս «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ», Մարտի, 1675, Առաջաբանութիւն գրգոյս: Հետայսու մեջբերումները բնագրային ուղղագրությամբ և կետադրությամբ կկատարվեն այս աղբյուրից:

տեղ գտած ոչ գրաբարյան բառերը: Այդ նպատակով առանձնացրել ենք այն միավորները, որոնք վկայված չեն «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (1836), «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» (1865) բառարաններում: Այս բառարաններում չվկայված բառերը շարունակել ենք փնտրել Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»-ում (1698) և գրաբարի մյուս բառարաններում: Քննել ենք նաև Լ. Շ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր» (2012) աշխատության տվյալները (այս բառարանում ընդգրկված են այնպիսի բառեր, ոճեր ու դարձվածքներ, որոնք ՆՀԲ-ում վկայված չեն):

Ուսումնասիրության այս փուլում առանձնացվել է համագործածական բառերի մեծ խումբ, որը վկայված է ՆՀԲ-ում և ԱԲ-ում: Աշխարհաբար առաջին տպագիր գրքի բառապաշարում այս բառերը մեծ տեղ են զբաղեցնում, դրանք կարելի է համարել բառապաշարի միջուկը: Աշխատանքում ներկայացվող օրինակների շարքն ամբողջական համարելու նպատակով բերենք երկի լեզվում կիրառված և ՆՀԲ-ում ու ԱԲ-ում վկայված բառերի մի քանի օրինակ՝ *զհարկաւորութիւն-հարկաւորութիւն* (Առաջաբանութիւն գրգոյս), *ղիւրսպէս* (Առաջաբանութիւն գրգոյս), *համարողականի-համարողական* (1), *աշխարհականօրէն* (1), *միաւոր* (3), *խազ* (5), *շարն-շար* (6), *բովանդակ* (6), *հաւասար* (10), *ծռութիւն* (12), *գործառնութիւն* (68), *գիտոր* (144) ևն:

Քննության երկրորդ փուլի ընթացքում ուսումնասիրել ենք երկի բառապաշարին հատուկ միջինհայերենյան միավորները: Հետևաբար բառարանային աշխատանքը շարունակել ենք՝ հենվելով Ռ. Ս. Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան» (2009) աշխատության տվյալները՝ առանձնացնելով 2 բառախումբ: Առաջին՝ **միջինհայերենյան բառախումբն** են կազմում Ռ. Ս. Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան» (2009) աշխատության մեջ ներառված միջինհայերենյան բառերը, որոնք այս բառարանից առաջ մեր քննած բառարաններում վկայված չեն եղել: Երկրորդ՝ **միջինհայերենյան փոխառությունների խումբն** են կազմում վերոհիշյալ բառարանում վկայված փոխառությունները: Ստորև ներկայացնենք մեր առանձնացրած **միջինհայերենյան բառախումբը**՝

- ջոկ ջոկ (առանձին-առանձին) -...ամեն բաժին ջոկ ջոկ բար-
դենք.... (8),
- պզտիկ (փոքր, փոքրիկ)-....մին պզտիկ թիւ մի ի մեծ
թվէն....դուրս քաշել կուտուցանէ.... (17),
- ի միտ կածենք-ի միտ ածել-ՆՀԲ-ում վկայված է *գմբաւ ածել*
հարադիր բայը, իսկ *միտ ածել*-ը դիտվում է որպէս միջինհայե-
րենյան իրողություն (հիշել, վերհիշել), ընդ որում երկուսն այն
գործածվել է գրաբարյան ի նախդրի հետ-....*և շուտով ի միտ
կածենք գմէկն*.... (61),
- հիմիկս- հիմիկ (հիմա, այժմ)-....*էնորոր համար չերկարենք հի-
միկս թողունք* (51, 115),
- վերի (վերին, վերևի)-....*և կու բարդենք 2 վերի երեքին հետ և կու
լինի 5*.... (62, 100)⁴,
- մէկմէկի (մէկմէկու, միմյանց, իրար)-....*զի երկու եօթն մէկմէկի
հաւասար են և նման* (75),
- դուրս եկած- դուրս գալ (բառարանում վկայված է *դուս գալ* հա-
րադիր բայը՝ դուս տալ, ուռչել)-....*կու բազմացնենք էս բաժանօղ
թիւս 236 աջ կողմի դուրս եկած թվովն* (78)⁵,
- միատեղ (միասին, մեկտեղ)-*թէ ավելի գիր լինի մնացած
միասրեղ բարդելով*...(78),
- ստակ-ըստակ (դրամ, փող)-....*գէրա մին սրակն տասն երկու
տինար է* (97),
- տաքտեղ (պղպեղ, սև տաքդեղ) (106) // տաքդեղ (107)-...*12 լիպ-
րէ տաքդեղ կու տան*.... (106),
- իրուր (իրար)-....*և էն ժուկն պիտիմք զգուշանալ որ զքվերն
իրուր չի խրթենք*.... (112),

⁴ ՆՀԲ-ում վկայված է *վերին* բառը՝ *որ ինչ ի վեր է րեղեաւ, աստիճանաւ, մեծութեամբ
են, արտաքին* (հ. 2 , էջ 812), սակայն երկուսն գործածված *վերի* տարբերակը վկայված է
Ռ. Ս. Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանում»՝ *վերի (զրբ.
վերին)՝ վերին, վերևի* (էջ 737):

⁵ ՆՀԲ-ում բերված են *ի դուրս բերել, ի դուրս ելանել* և այլ հարադրություններ (հ. 1, էջ
640), սակայն *դուրս գալ* հարադրությունը *դուս գալ* տարբերակով վկայված է Ռ. Ս.
Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ում (էջ 174):

- խարճէ- խարճել (ծախսել)-....*թէ որ մին ամսումըն 6 ոսկի խարճէ* (113),
- կլայեկ- (անագ)-....*կամ գիտոր, կամ արճիճ, կամ կլայեկ....* (144):

Միջինհայերենյան փոխառությունների խումբը հետևյալն է.

- գէրայ (2, 15 ևն), գիրայ (8, 10, 17 ևն), գէրա (38, 39), գէրէ (72, 74, 97 ևն) շաղկապը, որը երկում հանդիպում է հնչյունական մի քանի տարբերակներով, փոխառություն է պարսկերենից՝ պրսկ. zira (որովհետև, քանի որ, բայց)-*գէրայ նոքա ինչպես արապներն և սատրիքն ի յաջէն դէպ ի չախ կերթան....* (2)
- սաղ-թուրք. sağ (ամբողջական, լրիվ)-*Յաղազս թէ ինչ է սաղ թվի բարդելն* (5),
- մարչիլ (80), մառչիլ (86, 93 և այլն)-միջին հայերենում մառնչիլ-խո. marsili (եվրոպական արծաթ)-....*մէկ մարչիլին կտորտանք կասվին* (80-81),
- թուման (81, 94 ևն)-պրսկ. tūmān (ղրամական միավոր)-*Դարչեալ թումանն 10000 դիան է....* (81),
- գագ-պրսկ. gaz (երկարության չափ)- *իմանամք թէ 33 գագ կրան....* (92-93),
- զարար անեն-զարար-արաբ., պրսկ. zarar, zārār (վնաս)-....*մին իքմին շահանեն կամ զարար անեն* (116): Հարկ է նշել, որ այս դեպքում ունենք բայական հարադրություն, որը բաղկացած է *զարար* փոխառությունից և *անել* բայից,
- ֆլանի-ֆուլան-արաբ. fulān, պրսկ. folan, felan, թուրք. filān (այսինչ, այնինչ, ոմն)-....*հապա ֆլանի այսչափ փողն որչափ շահ կամ որչափ զարար է արարեր....* (116),
- պարշեցաւ-պարըշիլ, պարիշիլ-բարիշել-թուրք. barış (հաշտություն, խաղաղություն)-....*քանով որ պարշեցաւ....* (121, 124), *հարիւրին ամսէն քանով որ պարշեցաւ....*(125),
- մանդուրն-թուրք. mangir (մանր պղնձադրամ)-*և երեք մանդուր և երեք կարփ է....* (123),
- սարմայէն-սարմիայ-պրսկ. sār maye (ղրամագլուխ)-*Սորա սարմայէն ինչպես վերին չորս հարիւր յիսուն մառչիլ է....*(126),

- տէնկ (135)-սա *դանկ* բառի հնչյունական տարբերակն է՝ *պրսկ. dang* (ամբողջի, եկամուտի մեկ վեցերորդ մասը)-.....*մին մսխալն վեց տենկ է....* (135),
- սօֆի-թուրք. *sofi* <արաբ., *պրսկ.sufi* (համաստվածության հետևորդ, համաստվածական): Այս բառի մասին տեղեկություն է հաղորդում նաև Հ. Աճառյանը՝ *սօֆի*՝ մոլեռանդ, ջերմեռանդ (Վանի բարբառ, փոխառություն է արաբերենից)⁶ *Մին մարդ մի սօֆի մանած ունի....*(139), սակայն հարկ է նշել, որ այստեղ իմաստային այլ կիրառություն է նկատվում՝*սօֆի մանածն օխայով կու պարշին....* (139),
- օխայով (139, 140)-օխա-թուրք. *okka* (ծանրության չափ)-.....*սօֆի մանածն օխայով կու պարշին....* (139)
- դանթարի-դանթար-խանթար, կանթար-արաբ., թուրք. *qantar*, *պրսկ. ġentar* (ցենտներ՝ ծանրության չափ)-.....*զէրէ այս մին դանթարի չափն է....* (140),
- մառճամ- արաբ. *պրսկ. marġān, mārġan*, թուրք. *mercan* (բուստ, մարջան)-*Մին մարդ մի հոռմացրուն կուզէ մառճամ զնէ մառճամն քաշով կու ծախեն....* (142),
- քահրիպար-պրսկ. *kāh-roba* (սաք)-*Մին մարդ մի հոռմասարան քահրիպար կամ դրմզ կուզէ զնէ....* (143),
- դրմզ-(արաբ., *պրսկ.,* թուրք. *ğermmez, ğirmiz* (մուգ կարմիր, կարմրագույն): Երկում գործածված է ոչ թե գույնի, այլ կտորի կամ կտորի տեսակի իմաստով՝.... *քահրիպար կամ դրմզ կուզէ զնէ....* (143),
- պալմոմի-բառարանում վկայված է պալմոմի-թուրք. *balmutu* (մեղրամոմ)-*Մին մարդ մի հոռմասարան կուզէ պալմոմի, կամ բամբակի մանած, կամ գիպոր, կամ արճիհ....* (144):

Ինչպես նկատում ենք, մեր ներկայացրած բառախմբում միջին-հայերենյան փոխառությունները հիմնականում վերաբերում են առևտրի ոլորտին, մեծամասամբ չափ ու կշռի տարբեր միավորների, ապրանքնե-

⁶ Տե՛ս Աճառեան Հր., Թուրքերենէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներուն, Մոսկու-Վաղարշապատ, 1902, էջ 325:

րի անվանումներ են: Ռ. Ղազարյանը միջին հայերենի բառապաշարի վերաբերյալ նշում է, որ այն շարունակաբար համալրվել է փոխառյալ նոր բառերով ու տերմիններով, որոնց հիմնական աղբյուրներն են արաբերենը, պարսկերենը, հունարենը, թուրքերենը, ֆրանսերենը, լատիներենը, վրացերենը և ասորերենը⁷: Վերոնշյալ փոխառությունները կատարված են պարսկերենից, արաբերենից, թուրքերենից, իտալերենից է փոխառված *մարշիլ* / *մարշիլ* (*մառնչիլ*) դրամական չափման միավորը՝ եվրոպական արծաթ: Միջինհայերենյան փոխառությունների շարքում թվաքանակով գերակշռում են պարսկերենից (շուրջ 12), ապա թուրքերենից (շուրջ 10), արաբերենից (շուրջ 3), իտալերենից փոխառյալ բառերը (1): Ինչպես նկատում ենք, վերոհիշյալ ցանկի որոշ բառեր երբեմն միաժամանակ վկայված են երկու կամ երեք լեզուներում, ինչպես՝ ֆլանի, սօֆի, մառճամ, դրմզ, դանթարի: Հարկ ենք համարում նշել, որ օտար բառերի առատ մուտքը միջին գրական լեզվի մեջ ընդունված է համարել հասարակական, քաղաքական այն իրավիճակի արդյունք, որում գտնվում էր հայ ժողովուրդը իր գոյության տվյալ փուլում⁸:

Քննության *եղբորդ* փուլի ընթացքում Ռ. Ս. Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ում չվկայված բառերի ուսումնասիրությունը շարունակել ենք Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ի (1944) տվյալների հիման վրա՝ ցանկանալով վեր հանել երկում կիրառված բառային այն միավորները, որոնք միջինհայերենյան չեն և բնորոշ են հայոց լեզվի զարգացման նոր շրջանին: Առանձնացվել են մի քանի փոխառություններ, որոնք վկայված չեն «Միջին հայերենի բառարան»-ում, ինչպես՝

- գէրօ (2, 93 նմ)-ֆր. zero, արաբ.-ից cifron (դատարկ)-*Իսկ տասներորդն որ գէրօ կասալի....* (2),
- կարտ (80, 86 նմ)-ֆր. cart (խաղաթուղթ, թղթախաղ, քարտեզ), սակայն երկում հանդիպող այս բառն ունի չափման միավորի իմաստ-.....*մին մարշիլն 100 սրակ է....* (80),*50 սրակն որ է մին կարտ....* (86),

⁷ Տե՛ս Ղազարյան Ռ. Ս., Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 88:

⁸ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Եր., 1972, էջ 197:

- տինար (97, 100)-դինար-դենար՝ լատ. denarius (մի դրամի կշիռ, զանազան դրամներ)-...*մին տինարն մին սաղ սրակի տասն երկու բաժնէն մեկ բաժինն է...* (97),
- լիրայ-հին ֆրանս. livr, իտալ. lira (1. սկզբնապես՝ որոշ ծանրության քաշ, ապա՝ այդ քաշով արծաթ: 2. Մի քանի ազգերի մոտ դրամական միավոր)-*մին մառչիլն հինկ լիրայ է...* (97),
- դիտր-(լիտր)-լատ. litra (1.Ծանրության չափ՝ հավասար 12 ունկիի: 2. Փոքր դրամ, սիկլ: 3. Ծանրության չափ, որ զանազան մեծություն ունի՝ ըստ տեղերի)-*Դարձեալ թէ առաջինն դիտր լինի և երրորդն տրամ....* (109),
- մայէն-մայա-փոխ. դրամագլուխ, որ դնում են գործի մեջ: Փոխատու լեզուն Ս. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարան»-ում նշված չէ, սակայն Ռ. Ս. Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ում վկայված է *սարմիայ*-պրսկ. sār armaye (դրամագլուխ) բառը (էջ 691), որից ենթադրում ենք, որ *մայա* բառը դրամագլուխ իմաստով ևս պարսկական փոխառություն է (այս փոխառյալ բառի համար (միջին հայերեն՝ *մայայ*) նշված են մաս թթխմոր, խաչ բացատրությունները⁹)-...*պիրի յառաջ զամենու մայէն մին տեղ ճամարած...* (116),
- ճամ-այս բառը վկայված է մաս Ռ. Ս. Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ում՝ պրսկ. jam՝ 1. գավաթ, 2. ապակե (էջ 467), Ս. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարան»-ում՝ լակոտ (հ. 3, էջ 194), սակայն բառի գործածությունը երկուսն մեզ հուշում է, որ երկուսն կիրառվել է ոչ թե *ճամ* բառը, այլ *ջամ*-ը՝ ջ>ճ՝ ձայնեղ-խուլ փոփոխությամբ: Սա փոխառություն է արաբերենից՝ ġam՝ գումար, իսկ ջամ անել՝ գումարել-*առաջին մային ճամն* (117), *առաջին ճամն մային և ժամանակին* (119),

⁹ Տե՛ս Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ., Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 490: Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944, հ. 3, էջ 246:

- կրան-սա *գրան* բառի հնչյունական տարբերակն է՝ լատ. *granum* (հատիկ), փոխառվել է ռուսերենի միջնորդությամբ-....*կու գու-
ցանէ քէ քանի կրան է* (133):

Ինչպես նկատում ենք, վերոնշյալ փոխառյալ բառերից 6-ը դարձյալ չափման տարբեր միավորներ են, 1-ը առևտրի ոլորտին է բնորոշ, 1-ը՝ մաթեմատիկային, հաշվարկ կատարելուն: Փոխառություններից 3-ը կատարված են ֆրանսերենից (սույն 3-ից մեկը միաժամանակ իտալերենից է), 3-ը՝ լատիներենից, 1-ը՝ պարսկերենից, 1-ը՝ արաբերենից:

Աշխատանքը շարունակել ենք՝ օգտագործելով Հ. Աճառյանի «Հայերեն գաւառական բառարան»-ի (1913), «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի (1969), Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի (1976), «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ի (2004) և Ն. Պողոսյանի «Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում» (2014) բառարանի տվյալները: Մեր կողմից ուսումնասիրվող բառացանկից որոշ բառեր վկայված էին «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում (2004), դրանց հիման վրա քննության չոր-
րորդ փուլում առանձնացրել ենք **բարբառային բառախումբը**՝ ցանկա-
նալով ուսումնասիրել երկուսն գործածված տվյալ միավորները և պար-
զել, թե դրանք գրքի բառապաշարում ինչ շերտ են կազմում: Ս. Ղազա-
րյանը նշում է, որ XVII դարի վերջերից բարբառային հասկանալի տար-
րերը խիստ կերպով թափանցում են գրականության մեջ, աշխարհա-
բարն ընդունում է բարբառային առատ փաստեր¹⁰: Ստորև անդրադառ-
նանք առանձնացված բառախմբին.

- իքմին, ինքնմին-Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում վկայված է *իքմին*՝ մի բան (հ. 2, 178), իսկ *ինքն-
մին* տարբերակի մասին տեղեկություն է հաղորդում «Հայոց լեզ-
վի բարբառային բառարան»-ը Թբ. որևէ բան-....*թէպէտ ինքն
ինքնմին իքմին չի նշանակեր....* (2),
- խազ-թեն վկայված է ՆՀԲ-ում՝ գիծ, սակայն այն ընդգրկված է
նաև «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում՝ գիծ: Երկուսն
կիրառվում է *խազ քաշել* հարադիր բայը, որը դարձյալ բնորոշ է

¹⁰ Տե՛ս Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 322:

բարբառներին՝ գիծ քաշել, գծել-....*յետոյ ներքին մի խազ մի կու քաշենք*.... (5),

- Ժուկ-այս բառը վկայված է նաև «Առձեռն բառարան հայկազ-նեան լեզուի» աշխատության մեջ՝ ռմկ. ժամ, ժամանակ (էջ 337), «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում այն դարձյալ բացատրված է ժամանակ իմաստով (Արարատյան, Ղարաբաղի, Մշո, Վանի, Կարնո, Խլաթի, Մոկսի բարբառներ), հանդիպում է նաև *ժուգ* տարբերակով (Թբիլիսիի բարբառ)-*էն ժուկն միատորն կու դնենք խազի տակն*.... (8),
- փսոնտաշ-«Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում վկայված է *փսոն* (Արարատյան, Ղարաբաղի, Վանի, Կարնո բարբառներ), նաև *փսսոն*՝ ընդհանուր հաշվով ծախս՝ ճաշկերույթը կազմակերպելու, մի գործ անելու և այլնի համար (Ղարաբաղի բարբառ): Թեև *փսոն* բաղադրիչով վերոնշյալ բառը վկայված չէ, սակայն հասկանալի է, որ առնչվում է նշված բացատրությանը՝*թէ որ մին փսոնորաշ մի մին ամսումն վեց ոսկի է խարճեր. սպա 8 փսոնորաշն 48 ամսումն քանի կու խարճեն*.... (112, 113),
- զարպաֆ (114)-տրված է Ռ. Ս. Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ում, սակայն *զարպապ* և *զարբաբ* տարբերակներով՝ ոսկեթել, ոսկեհյուս (էջ 202), «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում վկայված է *զառբաբ*, *զարբաբ* (Նոր Ջուղայի, Թբիլիսիի, Ղարաբաղի, Վանի և այլ բարբառներ), հանդիպում է նաև *զառբաֆ* (Նոր Ջուղայի բարբառ), *զարբաֆ* (Վանի բարբառ) տարբերակներով՝ մետաքսյա նուրբ գործվածք, դիպակ: Ինչպես նկատում ենք, երկուսն կիրառվել է *զարպաֆ* տարբերակը, որում առկա է *բ>պ*՝ ձայնեղ-խուլ փոփոխությունը-....*որ մին ամսումն 52 զազ զարպաֆ են գործեր* (114),
- կեօրայ (116, 117, 119)-«Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում վկայված է գյորա (Արարատյան, Ղարաբաղի, Վանի, Ուրմիայի, Թբիլիսիի, Կարնո, Մշո և այլ բարբառներ)՝ համեմատ, համապատասխան-....*և ամեն մարդ իւր կարողութեան կեօրայ փող դնէ մէջ*.... (116),

- գառապխանէն-գառապխանա (134)-գառփանա, գառփիհանէ (Պոլսի բարբառ), գառաբխանա (Վանի բարբառ), գառափխանա (Ղարաբաղի բարբառ)¹¹, փողերանոց, դրամ կտրելու տեղ, ոսկերչի խանութ-*Մին մարդ մի մառչիլ կուզէ տայ գառապխանէն, և կուզէ իմանայ թէ իւր փողն որչափ թուման և որչափ դիան կանէ....*(134):

Հարկ է նշել, որ երկի բառապաշարում տեղ գտած *պզորիկ* (17), *ջոկ* (8), *սաղ* (5), *խարճեկ* (112)՝ «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում՝ խարջել, *մայա* (125), *Ֆլանի* (116)՝ «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում՝ ֆլան, ֆելան, ֆիլան, *ջամ* (117, 119), *ջամ անեկ* (117), վերը նշված *խազ*, *ժուկ* բառերը վկայված են «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում՝ որպես բարբառային բառեր, սակայն դրանք վկայված են մաս այլ բառարաններում (ՆՀԲ, ԱԲ, Ռ. Ս. Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան», Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»): Ռ. Իշխանյանը նշում է, որ «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ՝ երկի լեզվում առկա են բարբառներից և ժողովրդախոսակցականից թափանցած մի շարք բառեր՝ հավելելով, որ դրանց մի մասը ուշ միջնադարի և նոր շրջանի բարբառային փոխառություններ են: Ըստ նրա՝ գործածված բառերից ոմանք բնորոշ են արևելահայ բարբառներին (իքմին, ժուկ), ոմանք՝ արևելահայ և արևմտահայ բարբառներին միաժամանակ (խազ, խարճեկ ևն)¹²: Այս առումով նշենք՝ Վ. Կատվալյանը, անդրադառնալով բարբառների տարբերակայնության հարցին, կարծիք է հայտնում, որ բանավոր փոխառությունների պարագայում դրան մպատում են օտար բառերի հնչապատկերների տարատեսակ յուրացումներն ու ընկալումները (կ՝ստորկա- կ՝ստորուկա-կա-կ՝ստորուտկա ևն), այն հանգամանքը, երբ նույն բառը բարբառ է մուտք գործում և՛ խոսակցական, և՛ գրական աղբյուրներից (շ՝կալաթ-շօկօլաթ ևն), ինչպես մաս, երբ գրական լեզվից բարբառ մուտք գործած

¹¹Տե՛ս Աճառեան Հր., նշվ. աշխ., էջ 85:

¹²Տե՛ս Իշխանյան Ռ., Նոր գրական հայերենը XVII-XVIII դարերում, Եր., 1979, էջ 52-53:

ծնը դեռ լիովին չի փոխարինել բարբառային ձևին (հառսանիք-խառնիս, յօթ-օխտ են)¹³:

«XVII միասնական աշխարհաբարը» քննարկման մեջ Ռ. Իշխանյանը հետաքրքիր է համարում *խարճել, կեօրայ, պարշել, տինար* բառերը՝ տառադարձված *ճ, կ, պ, տ* խուլ բաղաձայններով՝ նշելով, որ դրանք հավանաբար միջին հայերենի կամ արևմտահայ խոսքի ազդեցությամբ են տեղ գտել գրքի լեզվում, իսկ մի մասն էլ զուտ արևելահայ ձև ունի, ինչպես՝ դիտր (Նոր Ջուղայի բարբառ), ֆլան (Երևանի և Նոր Ջուղայի բարբառներ) ևն¹⁴: Այսպիսով՝ «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ՝ երկի բառապաշարում միաժամանակ առկա են արևելյան և արևմտյան բարբառներին բնորոշ միավորներ, որի մասին են վկայում վերը բերված տվյալները և դրանց տարածքային ընդգրկումները: Ինչպես նկատում ենք, բարբառային բառերի մի մասը փոխառություն է, ոմանք կիրառվել են հնչյունական տառադարձումներով (զարպաֆ, կեօրայ, խարճել, ճամ ևն):

Զննության *հիմնգերորդ փուլում* առանձնացրել ենք որոշ բառեր, որոնց վերաբերյալ մեր աշխատանքում ընդգրկված բառարանները տեղեկություն չեն տալիս, կամ այդ բառերն առանձին մեկնաբանության կարիք ունեն: Այս փուլի նպատակներն են քննել նման միավորները, հստակեցնել դրանց իմաստը, գործածության շրջանակները: Ստորև ներկայացնենք այդ բառախումբը՝ համապատասխան մեկնաբանություններով՝

▪ *զառս և զծախս-առ և ծախ-.... և զառս և զծախս զանազանից սպարանաց և զայլս իրս մանրամասնեալս* (Առաջաբանութիւն գրգոյս)- հայոց լեզվի բացատրական բառարաններում վկայված է *առուծախ* հարադրությունը, սակայն վերոնշյալ *առ և ծախ*՝ և շաղկապով հարադրությունը վկայված չէ մեր քննած բառարաններում,

▪ *պարսաւարանից-....առ ի բառնալ զպարճառս ծուլից և պարսաւարանից....*(Առաջաբանութիւն գրգոյս)-*պարսաւարան*- Ն. Պողոսյա-

¹³Տե՛ս Կատվայան Վ., Հայ բարբառագիտության հարցեր, Եր., 2014, էջ 34:

¹⁴Տե՛ս Իշխանյան Ռ. Ա., XVII միասնական աշխարհաբարը, «Լրագրեր», Եր., 1973, էջ 97-98:

նի «Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում» բառա-
րանում վկայված է *պարսաւաբանել* բայը՝ պարսավել, պարսավանքի
խոսք ասել, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-
ում տրված է նաև *պարսավաբանական* բառը, սակայն *պարսավաբան*
ծեր չի հանդիպում մեր քննած բառարաններից որևէ մեկում: Այն նշա-
նակում է պարսավող, նախատող, անարգող,

- միլիարատր (4)-միլիար թվականից (որը դարձյալ վկայված չէ) -
ավոր վերջածանցով կազմված ածական՝ միլիար+ավոր,

- միլիասատր (4)-միլիաս թվականից (որը դարձյալ վկայված չէ) -
ավոր վերջածանցով կազմված ածական՝ միլիաս+ավոր,

- խրթվի (9), խոթած (66), խրթել (81)-*յկրոյ էն բարդածներն*
մին տեղ ժողովենք, որ հեշտ լինի, մտքերս չի խրթվի.... (8-9),*միս*
գրերին հեկ խոթած բաժանողն է....(66),*էն ժուկն զկրորարած թիվն*
չի պիտի խրթել սաղ թվերի հեկ....(81)- Ս. Մավխասյանցի «Հայերեն
բացատրական բառարան»-ում այս բայը մեկնաբանված է հետևյալ
կերպ՝ *գղալով ուրեկ, խոթ չայն հանել* (հ. 2, էջ 302), նման իմաստներ են
վկայված նաև «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառա-
րան»-ում, Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-
ում: «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում, բացը վերը նշված
իմաստներից, բերվում են նաև 1. *խրեկ, մեխեկ*, 2. *ամբոխից մի մասը պո-
կեկ, կիսեկ* բացատրությունները: Սակայն գրքում այս իմաստները կար-
ծես չեն համապատասխանում տվյալ բայի գործածությանը, միայն
որոշ չափով կարող է համապատասխանել *ամբողջից մի մասը պոկեկ,*
կիսեկ իմաստը,

- զփոխառնուլն (20, 21)-....*որ յառաջ քան զփոխառնուլն 8*
էր....(20)-*փոխառնուլն*-կազմությամբ և ձևով գրաբարյան բառ է,
սա երկում կարելի է դիտել որպես տերմինային բառ, նշանակում
է փոխառված թիվ,

- միլիաս-....*կու լինի բովանդակն 2 միլիաս հինկ հարիր ութսուն*
և երկու միլիար հարիր և մէկ միլիոն.... (42)-թվական է,

- միլիար-....*կու լինի բովանդակն 2 միլիաս հինկ հարիր ութսուն*
և երկու միլիար հարիր և մէկ միլիոն....(42)-թվական է: Հարկ է
նշել, որ այս բառը վկայված է Մ. Յարությունյանցի «Բացատ-

րական բառգիրք-օտարազգի բառերի և օտարազգի բառերի ու դարձածքների» աշխատության մեջ¹⁵, սակայն որպես *ար*՝ ֆրանսիական չափման միավորի 1/1000 մաս, իսկ գրքում այն կիրառված է որպես միլիոնից մեծ թվական,

- *քշտի-....էնրոր համար կու ջնջենք....քշտի 0 էլ և կու բազմացնենք....*(49)-Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում, ինչպես նաև «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում վկայված է քշտել բայը՝ պատահել։ Երկում գործածված *քշտի* բառը նշանակում է կողքի՝ կողքի 0-ն,
- գրքում գործածված են չափի և կշռի մի շարք միավորներ, դրանց մեծ մասը վերոհիշյալ բառարաններում վկայված չէ։ Այդ միավորներն օտար բառեր են, որոնք գործածվել են գրքի բառապաշարում, օրինակ՝
 - դիան (81, 84 նմ)-*Դարձեալ բումանն 10000 դիան է* (81),
 - թէրց-....*մին թէրցն երեսուն և երեք տրակ և չորս տինարի է....* (97),
 - լիպրայով (139)-*լիպրա-....կուգէ իմանայ թէ այսչափ լիպրէն քանի օխայ է....* (140),
 - պահր-....*Ձերայ մին գազն 16. պահրի է,մին պահրն երկու կիրահ է* (նույն էջում հանդիպում է ինչպես պահր, այնպես էլ պահիր) (114)-Ռ. Ս. Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ում այս բառը վկայված է՝ արաբ. *bahr*՝ 1. բերանի հոտելը՝ վատ հոտ արձակելը, 2. ծով։ Սակայն երկում այս իմաստով չէ գործածված, այլ կիրառված է որպես չափման միավոր,
 - կիրահ-*մին պահրն երկու կիրահ է* (114)-դարձյալ չափման միավոր է,
 - *ցորնահատ-....գէրէ մին տրամն 64 ցորնահատ է և կու բաժանենք առաջնովն, և կիմանամք թէ քանի ցորնահատ է* (112) - Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում

¹⁵ Տե՛ս **Յարութիւնեաց Մ.**, Բացատրական բառգիրք-օտարազգի բառերի և օտարազգի բառերի ու դարձածքների, Ալեքսանդրապոլ, 1912, էջ 27:

վկայված է ցորենահատ՝ ցորենի հատիկ։ Երկում այս գոյականը գործածվել է որպես չափման միավոր, այսինքն՝ ոչ այն իմաստով, որը վկայված է բառարանում, հետևաբար կարող ենք դիտել որպես իմաստափոխության օրինակ,

- գրքի բառապաշարում հանդիպում են մաս *կամպ* օտար բառը, որը, սակայն, չափման միավոր չէ՝ կամայի (121, 123)-*Մին մարդ իր փողն կամայի րվաւ, հարիւրին էս չափով, քանով որ պարշեցաւ....* (121),
- Աճամստան-*Մին մարդ մի կուզէ ոսկի ծախէ աճամսրան....* (135), *աճամ* բառը վկայված է Ռ. Ս. Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ում՝ արաբ. *ajam*, պրսկ. *ajam*՝ պարսիկ։ Այս բառից և *-սրան* ածանցից կազմվել է Աճամստան բառը, որը տեղանուն է և կնշանակի Պարսկաստան,
- Հռոմացտուն-*Մին մարդ մի հռոմացտուն կուզէ մառճամ գնէ մառճամն քաշով կու ծախեն....*(142): Ըստ բաղադրիչների՝ այս բառը մեկնաբանվում է որպես հռոմների տուն՝ Հռոմ։ Սա ստորև բերվող Հռոմաստան բառին հոմանիշ կարելի է դիտել՝ Հռոմացտուն-Հռոմաստան (Հռոմ),
- Հռոմաստան-*Մին մարդ մի հռոմաստան կուզէ պալմունի, կամ քամբակի մանած, կամ գիւրոր, կամ արճիճ....* (144): Այս բառը կազմված է *հռոմ* (Հռոմ) բառից և *սրան* ածանցից։ Վկայված չէ բառարաններում, նշանակում է հռոմեացիների երկիր։

Քննելով մեր ներկայացրած բառախումբը՝ ստորև այբբենական ցանկով առանձնացնենք հետևյալ բառերը՝ որպես աշխարհաբար առաջին տպագիր երկում գործածված, բայց մեր քննած բառարաններում չհանդիպող միավորներ (նորակազմություններ)¹⁶։

¹⁶ Բացի վերոնշյալ բառարաններից՝ ուսումնասիրել ենք մաս հետևյալ բառարանների տվյալները՝ **Աճառեան Հ.,** Թուրքերենէ փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներուն, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, **Տէր-Ղազարեան Ա.,** Հանրամատչելի բառարան օտարազգի բառերի և գործածութեան մէջ մտած մտքերի ու դարձածքների, Թիֆլիս, 1908, **Յարութինեանց Մ.,** Բացատրական բառգիրք-օտարազգի բառերի և օտարազգի բառերի ու դարձածքների, Ալեքսանդրապոլ, 1912, **Ամատունի Ս.,** Հայոց բառ ու բան, Վաղար-

- Աճամստան (135)-Պարսկաստան,
- առ և ծախս (Առաջաբանություն գրգոյս)-առնելը և ծախելը, առևտուր,
- Հռոմաստան (144)-Հռոմ,
- Հռոմացտուն (142)-Հռոմ,
- միլիասաուր (4)-միլիաս թվականից կազմված ածական,
- միլիարաուր (4)-միլիար թվականից կազմված ածական,
- միլիաս (42)-քանակական թվական,
- միլիար (42)-քանակական թվական,
- պարսավաբան (Առաջաբանություն գրգոյս)-պարսավող, նախատող,
- ցորնահատ (112)-չափման միավոր,
- փոխառնուլն (20, 21)-ունի գրաբարյան կազմություն, ըստ գրքում ունեցած կիրառության՝ մաթեմատիկական տերմինային բառ՝ փոխառված թիվ:

Եզրակացություն: Ուսումնասիրելով «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» (Մարսել, 1675) երկի բառապաշարը՝ հարկ է նշել, որ նրանում կա համագործածական բառերի մեծ խումբ, որը վկայված է գրաբարի բառարաններում: Այդ բառերը կարելի է համարել գրքի բառապաշարի միջուկը:

Երկի բառապաշարում յուրօրինակ շերտեր են կազմում միջին-հայերենյան բառախումբը, ինչպես նաև միջինհայերենյան փոխառությունների խումբը: Առաջինն ընդգրկում է Ս. Ղազարյանի, Հ. Մ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան» (2009) աշխատության մեջ ներառված միջինհայերենյան բառերը, երկրորդը՝ վերոհիշյալ բառարանում վկայված փոխառությունները: Միջինհայերենյան փոխառությունները հիմնականում վերաբերում են առևտրի ոլորտին, դրանք մեծամասամբ չափ ու կշռի տարբեր միավորների, ապրանքների անվանումներ են: Վերոնշյալ փոխառությունները կատարված են պարսկերենից, արաբերեն-

շապատ, 1912, **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Քախչյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1986, **Ճեփեհյան Գ., Տօնիկեան Փ. Կ., Տեր Խաչատուրեան Ա.,** Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրոս, 1992, **Փ. Գ. Մելիքիսանյան,** Նոր բառերի բացատրական բառարան, Եր., 1996:

նից, թուրքերենից, իտալերենից (մարչիլ / մառչիլ (մառնչիլ) դրամական չափման միավորը՝ եվրոպական արծաթ): Թվաքանակով գերակշռում են պարսկերենից (շուրջ 12), ապա թուրքերենից (շուրջ 10), արաբերենից (շուրջ 3), իտալերենից փոխառյալ բառերը (1): Որոշ բառեր երբեմն միաժամանակ վկայված են երկու կամ երեք լեզուներում, ինչպես՝ ֆլանի, սօֆի, մառճամ, դրմզ, դանթարի:

Քննության ընթացքում Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ի (1944) տվյալների հիման վրա վեր են հանվել որոշ փոխառություններ, որոնք վկայված չեն «Սիջին հայերենի բառարան»-ում: Ներկայացված փոխառյալ բառերից 6-ը դարձյալ չափման տարբեր միավորներ են, 1-ը առևտրի ոլորտին է բնորոշ, 1-ը՝ մաթեմատիկային, հաշվարկ կատարելուն: Փոխառություններից 3-ը կատարված են ֆրանսերենից, 3-ը՝ լատիներենից, 1-ը՝ պարսկերենից, 1-ը՝ արաբերենից:

Երկի լեզվի բառապաշարում իրենց տեղն ունեն մաս բարբառներից և ժողովրդախոսակցականից թափանցած մի շարք բառեր: Այդ բարբառային բառերի հիման վրա ձևավորվել է բարբառային բառախումբ: Այս բառախումբը հույժ հետաքրքիր է երկի բառապաշարն ուսումնասիրելիս, քանի որ 17-րդ դարի վաղ աշխարհաբարին բնորոշ են արևելյան և արևմտյան բարբառներին հատուկ տարաբնույթ լեզվամիջոցները միաժամանակ, և, ընդհանրապես, վաղ աշխարհաբարի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար բարբառային տարբեր ընդգրկումները շատ կարևոր դեր ունեն: «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ՝ երկի բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ նրանում առկա են արևելյան և արևմտյան բարբառներին բնորոշ տարբեր միավորներ, որի մասին են վկայում վերը բերված տվյալները և դրանց տարածքային ընդգրկումները: Հարկ է նշել, որ դրանց մի մասը փոխառություն է, ոմանք գործածվել են հնչյունական տառադարձումներով:

Ուսումնասիրության ընթացքում առանձնացրել ենք որոշ բառեր, որոնց վերաբերյալ մեր աշխատանքում ընդգրկված բառարանները տեղեկություն չեն տալիս, կամ այդ բառերն առանձին մեկնաբանության կարիք ունեն:

Երկի բառապաշարի քննության հիման վրա ձևավորվել է աշխարհաբար առաջին տպագիր երկում գործածված, բայց հայերենի տարբեր

բառարաններում չհանդիպող միավորների բառախումբ (նորակազմություններ), որում այբբենական ցանկով տրվում են համապատասխան բառերը, դրանց վերաբերյալ որոշ բացատրություններ:

Այսպիսով, աշխարհաբար առաջին տպագիր գրքի բառապաշարը հարուստ է և բազմաբովանդակ: Այն իր լայն ընդգրկմամբ յուրովի արտացոլում է բառաշխարհի տարաբնույթ դրսևորումների միաժամանակյա գործածությունը երկում՝ վեր հանելով բառապաշարի հետաքրքիր միավորներ ու կիրառություններ: Սույն քննությունը կարող է պատկերացում հաղորդել նաև 17-րդ դարի բառագործածության մասին առհասարակ:

Բանալի բառեր՝ «*Արհեստը համարողութեան ամբողջ և կարարեալ*», *բառապաշար, բառարան, գրաբար, միջին հայերեն, վաղ աշխարհաբար, փոխառություն, օրար բառ, բարբառ, նորակազմություն:*

ТАМАРА ПОГОСЯН – Лексика книги «Ремесло сосчитования полное и совершенное». – В статье изучается лексический состав первой книги, напечатанной на ашхарабаре, – «Ремесло сосчитования полное и совершенное». Книга была напечатана в Марселе в 1675 году.

Исследование основывается на подробном изучении лексики труда и проходило в несколько этапов. Большую часть лексики книги составляют общеупотребительные слова, зафиксированные в словарях грабара. Особый слой лексики составляют слова среднеармянского языка и заимствования, каждое из которых обладает своеобразными чертами. Употребленные в труде диалектные слова образовали диалектную группу, которая состоит из различных лексических единиц восточноармянских и западноармянских диалектов. При исследовании лексики книги нами были выделены слова, описание которых не нашло отражения в толковых словарях. Список этих слов с некоторыми комментариями приводятся в алфавитном порядке.

Проведенный нами анализ показал, что первая напечатанная на ашхарабаре книга имеет богатую и содержательную лексику. В книге одновременно использована своеобразная разнохарактерная лексика, которая отличается употреблением интересных лексических элементов.

Ключевые слова: «*Ремесло сосчитования полное и совершенное*», *лексика, словарь, грабар, среднеармянский язык, ранний ашхарабар, заимствования, иностранное слово, диалект, новообразование.*

TAMARA POGHOSYAN – The Vocabulary of the Book “A Complete and Perfect Craft of Numeration”

The article is devoted to the examination of the vocabulary of “A Complete and Perfect Craft of Numeration” (Marseille, 1675) – the first printed book in the Modern Armenian language. The research is lexicographical consisting of several stages. A large group of words of general use are presented in the book, which are defined in the dictionaries of grabar (the Old Armenian language). The word-groups of Middle Armenian words and different borrowings have their descriptive features and comprise peculiar layers of the vocabulary of the book. A dialectical word-group is formed on the basis of dialectical words, which include different dialectical units in Western Armenian and Eastern Armenian. The examination of the book shows that there are some words used in the book, which are not defined in the Armenian expository dictionaries. These words are presented as one group in the article and defined by us.

The research shows that the vocabulary of the Modern Armenian language first printed book is rich and comprehensive. It reflects the simultaneous usage of various manifestations of words in the book demonstrating interesting lexical units and their usage.

Keywords: *“A Complete and Perfect Craft of Numeration”, vocabulary, dictionary, grabar (the Old Armenian language), the Middle Armenian language, the Early Modern Armenian language, borrowing, foreign word, dialect, new word.*

ԱՆԻ ԱՍԱՏՐՅԱՆ

(ԵՊՀ)

ani.asatryan@ysu.am

**ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱՎԱԳ-
ՔԱՆԱՔԵՌՅՈՒ «ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ» ՄԵԶ**

Զաքարիա Սարկավագ Քանաքեռցին (1627-1699 թթ.) 17-րդ դարի հայ պատմիչ և մատենագիր է: Քանաքեռցին առավել հայտնի է իր «Պատմագրություն» աշխատությամբ, որն ընդգրկում է Հայաստանի պատմությունը՝ Արշակունիների ժամանակներից մինչև 1699-ի դեպքերը: Այն բաղկացած է երեք մասից: Երկի հիմնական շարադրանքը 17-րդ դարի պատմությունն է, որը հեղինակը պատկերում է ականատեսի դիտակետից: Նա սեփական աչքք տեսել էր պարսկական տիրապետության սարսափներն ու վայրագությունները, որոնք անջնջելի դրոշմ էին թողել նրա հիշողության մեջ: Հենց այդ հիշողություններն էլ նրա պատմագրության համար հարուստ նյութ են ծառայում:

Զաքարիայի «Պատմագրությունն» անգնահատելի աղբյուր է հատկապես հեղինակի ապրած ժամանակաշրջանի ուսումնասիրման համար. այստեղ ժողովրդախոսակցական լեզվով, կենդանի և պատկերավոր նկարագրված են Հայաստանի և հարևան երկրների քաղաքական ու տնտեսական կյանքի բազում իրադարձություններ և անցքեր:

Առաջին հատորում նա պատմում է Հայաստանի և Պարսկաստանի առաջին թագավորների մասին և այդ հատորի միայն 28-րդ գլխից է սկսում խոսել իր ապրած ժամանակաշրջանի մասին: Առաջին հատորը ամենայն վստահությամբ կարելի է համարել բանահյուսական ստեղծագործությունների ժողովածու՝ 17-րդ դարի մի նոր «Բուզանդարան»: Քանաքեռցուն Աբեղյանը բնորոշում է իբրև **հայկական բանահյուսական նյութի առաջին բանահավաքը Խորենացուց հետո**, քանի որ պատկերե-

լով իր ապրած ժամանակահատվածի կյանքը՝ նա վկայակոչել է բազմաթիվ ավանդություններ և առասպելներ, որոնցով հարուստ էր հայ իրականությունը¹: Նա ուշագրավ մանրամասներ է ներկայացրել հայոց կյանքի, բարքի, կենցաղի, ազգագրական կազմի վերաբերյալ: Բայց ի տարբերություն Խորենացու՝ նա քննական, տրամաբանական և խիստ մոտեցում չի ցուցաբերում իր նկարագրած դեպքերին՝ նմանվելով զգացմունքային վիպասան Փավստոս Բուզանդին:

Քանաքեռցու երկերն առանձնանում են լեզվի ինքնատիպ որակով: Նրա լեզուն գրաբարի և նոր ձևավորվող աշխարհաբարի ու ժամանակի տիրապետող բարբառների յուրօրինակ համաձուլվածք է, դյուրամատչելի, ոճական տարբեր արտահայտչամիջոցներով հարուստ: Առհասարակ 16-18-րդ դարերում ստեղծված երկերը լեզվական առումով բնութագրվում են անմիօրինակությամբ: Կողք կողքի գոյակցում են գրաբարով, նոր ձևավորվող աշխարհաբարով ու զանազան բարբառներով գրված երկերը: Քանաքեռցու լեզուն աշխարհաբար տարբերով հարուստ գրաբարն է, որտեղ վկայած են նաև ժողովրդախոսակցական լեզվին, ռամկախառն միջին հայերենին բնորոշ ձևաբանական, շարահյուսական, բառակազմական և իմաստաբանական տարբեր իրողություններ:

Մեր այս հետազոտության նպատակը Չաքարիա Քանաքեռցու բանապաշարի քննությունն է: Պատմիչի բանապաշարը հարուստ նյութ է ընձեռնում հայոց լեզվի պատմություն ուսումնասիրողների համար:

Չաքարիան իր ստեղծագործության մեջ գործածել է ամենատարբեր բառաշերտերին պատկանող բառեր՝ բարձր գրաբարյանից մինչև միջինհայերենյան, բարբառային, նաև վաղաշխարհաբարյան բնիկ բառերին միահյուսել է ժողովրդական նոր փոխառություններ արաբերենից, պարսկերենից և թուրքերենից: Չաքարիայի շարադրանքի ոճը միապաղաղ չէ: Վիպական հատվածները, ավանդապատումներն ու գրույցները շարադրելիս պատմիչը կիրառում է աշխույժ ու թեթև ոճ²:

Քանաքեռցու «Պատմագրության» մեջ հանդիպում են բառեր ու արտահայտություններ, որոնք որոշակիորեն տարբերվում են թե՛ գրա-

¹ Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, Դ հատոր, Եր., 1970 թ., էջ 527:

² Տե՛ս Վիրաբյան Ա., Չաքարիա Քանաքեռցի «Պատմագրություն», Եր., 2015, էջ 17:

բարից, թե՛ միջին հայերենից: Դրանք չեն կիրառվել գրաբարյան և միջինհայերենյան բնագրերում և բնականաբար դուրս են եղել գրաբարի ու միջին հայերենի բառարանագիրների ուշադրությունից: Դրանք հեղինակային նորակազմություններ են, հին հայերենի համեմատ հնչյունափոխված և իմաստափոխված բառեր, որոնք ձևավորվել կամ գրի են առնվել այս շրջանում:

Հայ լեզվաբանության մեջ առկա է նորաբանություն տերմինի ըմբռնումների տարասպիռում: Այս առումով հարկ է դիտարկել հայ լեզվաբանության մեջ նոր բառերին վերաբերող տերմինները, որոնք հաճախ միարժեք չեն սահմանվում կամ երբեմն մույնացվում են: Գիտական գրականության մեջ հանդիպում են **նորակազմ, նորակերտ, նորահնար, նորաստեղծ, նորալուր** (Ա. Բագրատունի), **նորաբնույթ**, նորագյուտ (Ռ. Դազարյան), բառերը: Հ. Աճառյանը տարբեր առիթներով գործածում է նորագյուտ, նորածին, նորակերտ տերմինները: Ալ. Մարգարյանը նորաբանություններ է կոչում այն լեզվական միավորները, որոնք արտացոլում են ժողովրդի թե՛ հասարակական–տնտեսական, թե՛ հոգևոր–մշակութային և թե՛ լեզվի կյանքում կատարվող զանազան փոփոխություններ³: Լ. Եզեկյանը նորաբանություն է համարում բոլոր այն նոր բառերը, արտահայտությունները և իմաստները, որոնք դեռևս չեն ձուլվել լեզվի ակտիվ բառապաշարի մեջ, և զգացվում է նրանց թարմությունն ու անսովորությունը: Նա տարբերակում է բուն նորաբանությունները և հեղինակային նորակազմություններ: Վերջիններիս համակարգում իրենց ոճական երանգավորմամբ և կիրառական հաճախականությամբ առանձնացնում է դիպվածական բառերը, որոնք լեզվաբանության մեջ գործածվում են տարբեր անվանումներով՝ անհատական բառեր, անհատական-հեղինակային նորաբանություններ, ինքնաստեղծ բառեր, համ+ատեքստային նորաբանություններ կամ պարզապես՝ օկազիոնալ բառեր⁴:

Ա. Մարտիրոսյանը իր «Արդի հայերենի նորաբանությունների բանակազմական կաղապարները» աշխատության մեջ ընդգծում է, որ նորաբանությունն ավելի լայն ընդգրկում ունի, իսկ նորակազմությունը

³ Տե՛ս Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999 թ., էջ 209:

⁴ Տե՛ս Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2007 թ., էջ 133:

նրա մասնավոր դրսևորումներից է: Նա նորաբանություն է համարում լեզվում գործառնող նոր երևույթները, ինչպես՝ հին բառերին նոր որակներ հաղորդելը, բառակերտման նոր միջոցները, բառակազմական առկա կաղապարներով նոր բառերի ստեղծումը, փոխառությունն ու բառապատճենումը⁵: Ա. Սուքիասյանը տարբերակում է բառային և իմաստային նորաբանություններ: Բառային նորաբանությունները իրենց արտաքին՝ հնչյունական կազմով և իմաստով նոր բառեր են, որ առաջին անգամ են գործածվում լեզվում: Իմաստային նորաբանությունները լեզվում արդեն եղած բառերի նոր ձեռք բերած իմաստներն են⁶: Նորակազմությունների առանձին տեսակ են կազմում խոսքային կամ անհատական նորաբանությունները, որոնք կարելի է անվանել նաև հեղինակային նորակազմություններ, որովհետև ունեն գուտ անհատական բնույթ և պատկանում են միայն այդ հեղինակին: Նշված բառերը, որոնք ստեղծվում են տվյալ լեզվում առկա բառակազմական միջոցներով, խոսքին պատկերավորություն, արտահայտչականություն են հաղորդում՝ նպաստելով նաև գրական լեզվի բառապաշարի հարստացմանը: Մենք կարծում ենք, որ նորաբանությունը ավելի լայն ընդգրկում ունի, իսկ նորակազմությունը նրա մասնավոր դրսևորում է:

Այսպիսով, միասնական բնորոշման բացակայությունը հանգեցրել է նորաբանության չափանիշների սահմանման անմիարժեքությանը:

Ջաքարիայի բառապաշարի հիմքն այն համընդհանուր կամ ավանդական բառերն են, որոնք գործածական են հայերենի զարգացման բոլոր շրջաններում: Այդ բառերը կազմում են լեզվի ողջ բառապաշարի միջուկային շերտը, որ կոչվում է չեզոք կամ համագործածական բառերի շերտ: Լինելով լեզվի գործառնության բոլոր ոլորտների և լեզվակիր հանրության բոլոր անդամների համար ընդհանուր և ամենօրյա հաղորդակցման մեջ օգտագործվող առավել կենսունակ բառեր՝ դրանք միևնույն ժամանակ հիմք են ծառայում նորանոր բառեր կազմելու, բառապաշարն անընդհատորեն հարստացնելու և համալրելու համար⁷: «Պատմագրու-

⁵ **Տե՛ս Մարտիրոսյան Ա.**, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Եր., 2007 թ., էջ 37-38:

⁶ **Տե՛ս Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999 թ., էջ 158-159:

⁷ **Տե՛ս Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984 թ., էկ 139:

թյան» մեջ այս բառաշերտի միավորները կրում են հնչյունական զգալի փոփոխություններ, բայց անգամ մույն էջի վրա կարող ենք հանդիպել և՛ բառի դասական գրաբարյան, և՛ միջին հայերենյան կամ վաղ աշխարհաբարյան, և՛ անգամ բարբառային ձևերի: Բերենք օրինակներ՝

Բաղդաւոր–բախարաւոր

Վախճանել– վաղճանել

Մաւրուս–մօրուս–մուրուս

Թոռն–թոռ

Վարկպարագի–վարկպարիզի

Կապոյոյ–կապույոյ–կապույո

Տոռն–տոռ

Առնել–այնել–աննել

Աւեր–աւեր–աւիր

Քանաքեռցու նորակազմությունները առանձնանում են ոչ միայն իրենց իմաստային բեռնվածությամբ, այլև հեղինակի կիրառած բառակազմական միջոցների բազմազանությամբ և ձևաբանական արժեքով: Նորակազմ ենք համարել այն բառերը, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում, Ռ. Դազարյանի «Գրաբարի բառարանում», Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր»-ում, Ռ. Դազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանում», բառամթերքը համեմատել ենք Ս. Մալխասյանի «Հայերենի բացատրական բառարանի» տվյալների հետ:

Նախ՝ Քանաքեռցու նորակազմությունները քննենք ըստ խոսքիմասային պատկանելության: «Պատմագրության» մեջ գտել ենք յոթ նորակազմ գոյական: Վերլուծենք դրանք՝ ըստ իմաստների.

1. **Պնտակօշիկ** – Եւ զգեցաւ *զպնտակօշիկն* ի յոտսն (էջ 17, 1-ին գ., ԺԱ): Վ. Առաքելյանն առաջարկում է այս բառի ամրակոշիկ տարբերակը: Ակնհայտ է, որ այս նորակազմությունը որոշիչ-որոշյալի միաձուլումից է առաջացել: Հեղինակը նկատի է ունեցել *պինդ կոշիկ* կապակցությունը՝ իբրև ճանապարհորդի համար անհրաժեշտ առարկա և այդ երկուսի միացումով ստեղծել է այս նորակազմ, ըստ ամենայնի դիպվածային բառը:

2. **Վարձավաճառ** – վարձը՝ գինը վճարող, գնորդ - Ասէ կինն, մի՞թե հաց տամք մարդոյ՝ և գին առնումք և լինիմք *վարձավաճառ* (Էջ 24, 1-ին գ., ԺԵ):
3. **Տնտեսատուն** – տնտեսական մթերքները պահելու վայր, մթերատուն, ՄՀԲ-ում առկա է առանց *ա* հոդակապի տարբերակը՝ *տնտեսարուն*, (Շինեաց և փայտեայ գալիք՝ ի վերայ արևմտեան դրան Եկեղեցւոյն, և գտնտեսատունն, և զխցերն, Էջ 76, 1-ին գ., ԽԳ):
4. **Տուրքևառք** – առևտուր, ըստ բնագրի՝ փոխօգնություն, (Բարձաւ սեր և գութ բարեկամաց, ողորմութիւնք և *տուրքևառք* և խնամք վերացան, Էջ 117, 2-րդ գ., ԾԸ):
5. **Հոգեբաժին** – եկեղեցական տուրք մայրավանքին կամ քահանային՝ իբրև ննջեցյալի հոգու բաժին, (Եւ հայր իմ անդ մեռաւ, և *հոգեբաժին* նորա տարաք ի Յօհանավանք, (Էջ 8, 3-րդ գ., Զ):
6. **Գրաքենք** – ամբիոն, գրակալ, քարից պատվանդան, որի վրա մասունքներ կամ տուրք գրքեր են դնում: (Եւ կամարքն ի վերայ նոցա՝ սեաւ և կարմիր, և կողմն հարաւոյ՝ երկուս *գրաքենքս* գեղեցկաշէնս, Էջ 12, 3-րդ գ., Թ):
7. **Խոտափիտ** – խոտազուրկ (Էին անդ դահիճք, և հրամայեաց նոցա հատանել զգլուխ նորա, և դնել ուրոյն սկուտեղը, և զմարմինն ընկնելու ի *խոտափիտ*, Էջ 40, 1-ին գ., ԻԳ): Վ. Առաքելյանը առաջարկում է տարրընթերցում: Նրա համոզմամբ պետք է լինի ոչ թե խոտափիտ, այլ *խոտափիտ*, որ նշանակում է խորխորատ: Բայց չի բացառվում, որ Քանաքեռցին նկատի ունենար բառի ուղիղ իմաստը, այսինքն՝ խոտազուրկ, լերկ, ամայի տեղ, որտեղ քաղիան են արել:

Ինչպես տեսնում ենք, Քանաքեռցին և՛ ինքնուրույնաբար է բառեր կերտել, և՛ արդեն առկա բառերի հնչյունափոխական նոր տարբերակներ է կիրառել:

Հեղինակային նորակազմությունների հիմնական մասը ածականներ են: Գտել ենք 21 ածական:

1. **Ողորմածասիրտ** – գթասիրտ, ներողամիտ, ՄՀԲ-ում առկա է որորմածասիրտ տարբերակը՝ նույն նշանակությամբ: (Եւ էր

- ողորմածասիրտ*. քանզի հասարակ հարկն շնորհեաց ամենայն ումեք, էջ 10, 1-ին գ., Է):
2. **Համամայլ** – համամայիլ՝ համահունչ, համապատասխան (Վասնզի *համամայլ* (էր) մնա, որ թագաւորեաց յետ եղբօր իւրոյ Շահ-Թահմազին՝ ի մտանել Ռ-Ի-Գ թոին, (էջ 12, 1-ին գ., Ը):
 3. **Յոքնահնար** – բազմահնար (Ի հազար և ԻԹ թոին նստաւ Աբաս թագաւոր, այր քաջ ի պատերազմի, ճոռոմաբան, բազմահանճար, *յոքնահնար*, (էջ 14, 1-ին գ., Ժ):
 4. **Պնդապահ** – ըստ բնագրի՝ հսկիչ, քիկնապահ, Ս. Մալխասյանը բացատրում է որպէս պինդ՝ խիստ արգելք (Թե որ մեծաց՝ ի նոցանէ գնայ ուրեք կնաւ իւրով, և հրամայէ *պնդապահս* առնել՝ ի ճանապարհին, (էջ 37, 1-ին գ., ԻԲ):
 5. **Չարյոյզ** – չար զգացումներ տաժող, *չարակամ*: Վ. Առաքելյանը այդ բառը թարգմանել է որպէս չարագրգիռ, որն ինքնին դիպվածային նորակազմութիւն է: (Ի նոյնում աւուր կոտորեաց զամենայն յանգիտելոյ ումեքէ. և այսպէս կորոյս ամենայն *չարայոյզքն* իւր, (էջ 40, 1-ին գ., ԻԳ):
 6. **Փոքրաբերան** – փոքր բերան ունեցող (էր նա գեղեցիկ պատկերօք, փոքրաբերան և մանրատամն, էջ 69, 1-ին գ., Խ): Այստեղ նկատելի է, որ վերլուծական կապակցությունները Զանաքեցին նախընտրում է վերածել հոդակապովոր իսկական բարդությունների:
 7. **Քաղցրագրուց** – քաղցրախոս (Գիտեր և Ե ազգաց լեզու, և ճարտարախօս, ճոռոմաբան, և *քաջագրուց*, էջ 69, 1-ին գ., Խ):
 8. **Համեղախօսք** – *համեղաբան*, միջին հայերէի բառարանում՝ առանց ք-ի (էր նա գեղեցիկ պատկերօք, մեծակն, յունակից, *համեղախօսք*, էջ 69, 1-ին գ., Խ): Վերոհիշյալ քաղցրագրուց բառի հոմանիշն է:
 9. **Միահագոյն** – միահամուռ, բոլորը միասին (Իսկ Կարբեցիքն ելին *միահագոյն* ի Վարդավառի բարեկենդանի շաբաթի օրն՝ և դիմեցին դէպ յերկիրն Քաշթաղու, էջ 9, 2-րդ գ., Ե):

10. **Լայնասմբակ** – լայն, մեծ սմբակներով, արագընթաց, պնդակազմ (Եւ ունէր նա ազնիւ ձի մի՝ կապուտ գունով, բարձր հասակաւ, *լայնասմբակ*, երկայնապարանոց, էջ 24, 2-րդ գ., ԺԷ):
11. **Անիծահար** – անիծյալ, նզովյալ (Եւ դու ընդէ՞ր լինիս ուխտագանց՝ և դաշնաւէր՝ և *անիծահար*, էջ 34, 2-րդ գ., ԻԲ):
12. **Ամրաքերան** – քչախոս, պարկեշտ, զգուշախոս, փակքերան (Անուն նորա Ապագ, ո՛չ որպէս միւս տաճիկս լիբր և հայհոյիչ, այլ *ամրաքերան* և լաւ, էջ 56, 2-րդ գ., ԼԳ):
13. **Տաղտկացոյց** – տաղտկալի, ձանձրալի (Այլև ունէր գործս զագեր և զարշ. և վիրաւորեալ *տաղտկացոյց* քաղաքացիսն ամենայն, էջ 61, 2-րդ գ., ԼԶ):
14. **Երեսքաց** – երեսը բաց, երեսին բոլ չզցած, փխբ. հանդուգն, երես առած, անպարկեշտ, Ս. Մալխասյանը երրորդ իմաստով առանձնացնում է մաս պատշգամբ տարբերակը (Եւ ասացի քահանայիցն առնել պաշտօն. և էր տաղաւար մի շինեալ հանդէպ գերեզմանի նորա՝ *երեսքաց*, էջ 91, 2-րդ գ., ԽԶ):
15. **Գեղեցկայարկ** – *գեղեցիկ հարկ ունեցող, հոյակերպ* (Եւ եկեալ շարժս այս ի կողմանց Գառնոյ՝ և փլան ամենայն շինածք և *գեղեցկայարկ* բնակութիւնք, էջ 104, 2-րդ գ., ԾԱ):
16. **Պղծաքերան** – *հայհոյախոս, պղծախոս, զազրալեզու, բանասարկու* (Եւ էր տէր Ղարայօրան գեղջն տաճիկ մի՝ ազգաւ Ղաճար, լիբր և անզգամ, հայհոյիչ և *պղծաքերան*, յանդուգն և անհնազանդ, էջ 117, 2-րդ գ., ԾԸ):
17. **Աւելազլուխ** – ավել ցախավելի պէս, փխբ. հիմար, տխեղծ (նստեցուցին ի վերայ իշոյ, և անուանեցին զնա՝ *Աւելազլուխ* իշով թագաւոր, էջ 118, 2-րդ գ., ԾԸ):
18. **Շատագետ** – *շարք բան իմացող, բազմագետ, խորիմաց* (Թորոս ոմն ի Նգայ՝ ի Խոտավիտ գեղջէ, այր *շարագետ* և ճարտարախօս, էջ 8, 3-րդ գ., Զ):
19. **Արագալեզու** – արագախոս (Գիտէր և Ե ազգաց լեզու, և ճարտարախօս, և *արագալեզու*, ճոռոմաբան,) էջ 33, 3-րդ գ., ԺԳ):
20. **Պնդասիրտ** – սրտապինդ, քաջ, քաջակորով (Յաջողակ ամենևին և բաղաւոր, ատենախօս և *պնդասիրտ*, էջ 33, 3-րդ գ., ԺԳ)

21. **Քաղցրահոտ** – անուշահոտ, անուշաբույր (Եւ տնկեաց այգի բազում և ազգի ազգի մրգօք անուշահամ և *քաղցրահոտ*, էջ 36, 3-րդ գ., ԺԳ):

Ընդհանուր առմամբ մենք գտել ենք 28 նորակազմություն, որոնք վկայված չեն գրաբարի բառարաններում, Միջին հայերենի բառարանում (ՄՀԲ): Դրանց իմաստային և բնագրային բնութագիրը տալուց հետո ներկայացնենք նրանց բառակազմական առանձնահատկությունները և եզրակացությունները:

Բառաստեղծման գործընթացում Քանաքեռցին գործունե կիրառել է բառաբարդումը: Բարդությունները հիմնականում հոդակապվոր են, կան նաև բաղիյուսական բարդություններ: Բառաբարդման կաղապարներից ամենակենսունակը ածական + գոյական կաղապարն է, որով կազմված է 15 բառ՝ 2 գոյական (պնտակօշիկ, տնտեսատուն) և 13 ածական (ողորմածասիրտ, համամայլ, յոքնահնար, չարյոյգ, փոքրաբերան, քաղցրագրուց, համեղախօսք, լայնասմբակ, ամրաբերան, գեղեցկայարկ, պղծաբերան, պնդասիրտ, քաղցրահոտ): Նկատենք, որ այս կաղապարը հանդես է գալիս ածական + հոդակապ + գոյական մասնակաղապարով: Ըստ կենսունակության՝ հաջորդը գոյական + գոյական կաղապարն է՝ գոյական + հոդակապ + գոյական մասնակաղապարի հետ միասին (3 գոյական՝ տուրքևառք, հոգեբաժին, գրաբեմբ, 1 ածական՝ աւելագլուխ): Առկա են նաև գոյական + հոդակապ + բայարմատ (2 գոյական՝ վարձավաճառ, խոտափիտ, 2 ածական՝ անիծահար, տաղտկացոյց), ածական + հոդակապ + բայարմատ (1 ածական՝ պնդապահ), գոյական + ածական (1 ածական՝ երեսբաց), մակբայ + բայ (1 ածական՝ շատագետ), մակբայ + գոյական (1 ածական՝ արագալեզու):

Այսպիսով, նորակազմությունների ճնշող մեծամասնությունը ածականներ են: Նորակազմ ձևերը հիմնականում ունեն ընդգծված ոճական արժեք, ստեղծագործությանը հաղորդում են պատկերավորություն, արտահայտչականություն: Քանաքեռցին նախընտրում է որոշիչ-որոշյալ կապակցություններն արտահայտել մեկ բառով, այսինքն՝ խուսափում է երկարաբանությունից: Նորակազմ բառեր հատկապես հանդիպում են «Պատմագրության» այն հատվածներում, որտեղ Քանաքեռցին նկարագրում է որևէ անձ կամ երևույթ: Բերելով համագործածական ածա-

կաններ՝ իր խոսքն ավելի բնութագրական դարձնելու համար պատմիչը ստեղծում է գույնեղ հոմանիշներ՝ *յոքնահնար, փոքրաբերան, համեղախօսք, լայնասմբակ, պղծաբերան, ավելագլուխ* և այլն: Քանաբեոցու կերտած նորակազմությունների մի մասը այսօր էլ կիրառելի է արդի հայերենում, օրինակ՝ *անհծահար, չարհոյժ, լայնասմբակ, փոքրաբերան* և այլն:

Քանախ բառեր՝ նորակազմություն, լեզու, գրաբար, քաղաքան, քաղաքաշար, պարսիչ, միջին հայերեն, քաղաքեր:

АНИ АСАТРЯН – Новообразованные слова в «Хронологии» Закария Саркавага Канакерци. – Закария Саркаваг Канакерци (1627-1699) – армянский историк и летописец. Его произведения не были полностью изучены с литературной и лингвистической точки зрения. Канакерци известен своей научной работой «Хронология», которая отличается уникальностью языка. В своей работе Закария использовал принадлежащих к разным группам слова. В «Хронологии» можно найти слова и выражения, отличающиеся и от грабара, и от среднего армянского языка. Они новообразованные слова, которые не использовались в рукописях, написанных на Грабаре или на среднем армянском языке, и действительно остались без внимания лексикографов того времени. Мы нашли 28 новообразованных слов, которые воодушевляют «Хронологию», добавляют в нее живой дух и образность.

Ключевые слова: *новообразованные слова, язык, грабар, словарь, словарный запас, армянский историк, средний армянский язык, слова разных групп.*

ANI ASATRYAN- Newlyformed words in “The Chronicle” by Deacon Zakaria of Kanaker

Deacon Zakaria of Kanaker (1627-1699) is an Armenian historian and chronicler whose works haven't been thoroughly studied from literary and linguistic viewpoint. Zakaria of Kanaker is most famous for his book called "The Chronicle". The latter is distinguished for its uniqueness of language, liveliness and imagery. In his work Zakaria used a wide variety of words belonging to various word groups. In “The Chronicle” one can find words and expressions that are clearly different from both Classical/Old Armenian or Grabar and Middle Armenian. They are new words or neologisms that haven't been used in manuscripts written in Grabar or Middle

Armenian and indeed stayed out of lexicographers' attention of that time period. We have found 28 neologisms which add vitality, verve and novelty to “The Chronicle”.

Keywords: *neologism, language, Old Armenian/ Grabar, dictionary, lexicon, historian, Middle Armenian, word group.*

ՎԱՆՈՒՀԻ ԲԱՂՄԱՆՅԱՆ

(ԵՊՀ)

Ն. ԱԳՈՆՑԸ՝ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆ

«Անձնանունները հաճախ ազդում են միջանձնային
հարաբերությունների վրա»
Յոխեն Գեբաուեր

Անձնանունները, ըստ գերմանացի լեզվաբանների, «սոցիալական ցուցիչ» են: Օրինակ՝ գրագետ միջին խավը նախընտրում է դասական անձնանունները, որոնք կրոնի, պատմության, գրականության մեջ կամ սեփական տոհմաժառանգությունը որոշակի դեր ունեն¹:

Առաջին հանդիպման պահին տպավորությունը ձևավորում են մարդու արտաքին տեսքը և ձայնը, բայց մեծ կարևորություն ունի նաև նրա անունը: Այս գործոնն առկա է բոլոր լեզուներում: Հայոց անձնանվանագիտությունը, սակայն, դեռ պատշաճ խորությամբ չի ուսումնասիրել հայոց բազմադարյա մատենագրության մեջ վկայված անձնանունները՝ թե՛ օտար, թե՛ հայ:

Հայոց անձնանունների քննության հարցում անփոխարինելի է Հր. Աճառյանի դերը: Նրա «Հայոց անձնանունների բառարան»-ն իր տեսակով անգերազանցելի է մեր բառարանագրության և անձնանվանագիտության բնագավառներում: Մեծ հայագետի քննության նյութը 5-15-րդ դդ. հայ մատենագրության մեջ վկայված անձնանուններն են, իսկ 15-18-րդ դարերի աղբյուրներում արձանագրված անձնանուններին նա մասնակի է անդրադարձել:

¹ <http://www.augsburger-allgemeine.de/wissenschaft/Wie-Vornamen-das-Leben-beeinflussen-id19135281.html>

Անձնանունների հետազոտությամբ զբաղվել է նաև համաշխարհային ճանաչում ունեցող ականավոր հայագետ, ուրարտագետ, արևելագետ Ն. Ադունցը: Ճիշտ է, նա հիմնականում քննել է օտար անձնանունները, բայց ուսումնասիրության շրջանակում ներառել է նաև հայկական մի քանի անձնանունների ուշագրավ մեկնություններ:

Գիտական առանձնահատուկ կարևորություն ունի այն, որ Ադունցն իր անձանվանական ստուգաբանություններում հաճախ է անդրադառնում առասպելների հատուկ անուններին, տիտղոսներին և դիցանուններին: Նա օտար անձնանուններից երբեմն փորձում է բխեցնել դրանց հայկական տարբերակները:

Այս աշխատանքում համակարգել և վերլուծել ենք Ն. Ադունցի պատմագիտական և բանասիրական չորս աշխատություններում տեղ գտած անձնանունները:

Այսպես, «Գրիգոր Լուսավորիչ և Անակ Պարթև» հոդվածում (Հայրենիք, 1928, N 9) հայագետը նշում է, որ Ագաթանգեղոսի երկը խմբագրական աշխատանք է, անգամ ոչ հմուտ ուսումնասիրողը կնկատի, որ հատվածները իրար կցված են, կարծես՝ կարված: Բացի դրանից՝ հունական թարգմանության մեջ թարգմանիչը նախաբան է գրել Ագաթանգեղոսի երկի համար: Այդ հատվածը, ըստ Ադունցի, վերաբերում է Արտաշիրի և Արտավանի բախմանը, որ աննշան տարբերություններով հիշատակված է «Կարնամակի» մեջ: Այս հանգամանքը մի կողմից վկայում է «Կարնամակի» հետ Ագաթանգեղոսի անմիջական կապի մասին, մյուս կողմից մտածելու տեղիք է տալիս, թե արդյոք հույն թարգմանիչն է այն կցել Ագաթանգեղոսի երկին. եթե այո, ապա ի՞նչ նկատառումով: «Կարնամակ»-ում Արտաշիրը կոչվում է **Հավթանբոխտ** դևի հետ: Այս պատմությունը հայտնի է նաև նշանավոր «Շահնամե»-ից, որտեղ դևի անունը *Հավթոսար* է:

Այս անվան տարբեր ընթերցումներն արդեն վկայում են, որ հրեշի բուն անունը եղծված է և հստակ ստուգաբանության կարիք ունի: Հատկանշական է, որ Ադունցի ուշադրությունից չի վրիպում Ագաթանգեղոսի այն վկայությունը, թե Հայոց թագավորը Արտաշիրի հարձակումը վանելուց հետո «իրաման տայր յեթն բազին մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կոռց դիցն պաշտաման»: Եվ Ադունցը մտածում է՝ արդյոք

որևէ գաղտնի կա՞պ չկա *յոթն քազին* դարձվածի և *Հավթանքոխրի* միջև: Կարելի՞ է արդյոք հրեշի անվան ստույգ ընթերցումը հանգեցնել հայերեն բառակապակցությանը՝ ենթադրելով, թե դեմ արտահայտում է յոթնքազինյան կողմ պաշտամունքը: Հավթանքոխտի դեմ պայքարում Արտաշիրին աջակցում են **Քուրջ** և **Քուրջակտուր** եղբայրները: «Կարմամակը» նշում է, որ Արտաշիրի հայրը՝ Սասանը, երագում տեսավ, որ իր տան երեք նշանավոր հրատները, սրբազան կրակները՝ *froba*, *gushasp* և *burdjin*, բորբոքվում և լուսավորում են ամբողջ աշխարհը: Ադոնցի համոզմամբ՝ եղբայրների անունը գուգակցվում է **burdjin** *կրակ* բառի հետ: Հայտնի է, որ երրորդ հրատը կոչվում էր *adr-Burzin-Mihr-երկրագործության*: **Քուրջ**-ը ներկայացնում է այս հրատը, այն է՝ *Burdjin* (= *հին Քուրջին*): Իսկ *Քուրջակտուր*-ը, Ն. Ադոնցի կարծիքով, աղավաղումն է *burdjak-dar*-ի, որը հրատը պահող մոգ պաշտոնյայի անվանումն է²:

Իսկ «Հայոց առաքելությունը Հոնաց աշխարհում (Ջ դար)» հոդվածում Ադոնցն անդրադառնում է VI դարի սկզբների հոնաց թագավորն Ամբագուկի պատմությանը, որի ձեռքին էր հռչակավոր պահակը՝ իր ժամանակի Դարիալի կիրճը: Ջգալով իր մահը՝ ծերունի հոն թագավորն առաջարկում էր Ամաստաս կայսերը տիրանալ պահակին և փոխարենը իրեն տալ դրամական վարձատրություն: Ամաստասը մերժում է, իսկ Ամբագուկի մահից հետո պարսից թագավոր Կավատը հեռացնում է նրա որդիներին ու հափշտակում պահակը: Քաղաքական այսպիսի պայմաններում, բնական կլինեք, եթե հոները միանային հույներին և հակվեին քրիստոնեություն ընդունելուն: Դրացի քրիստոնյա ժողովուրդների ազդեցությունը և հատկապես գերիների 30-ամյա բնակությունը հոների հետ, անտարակույս, որոշիչ էին այս դեպքում: Գերիների թվում էին շատ հայեր, ինչպես նաև Աղվանից եպիսկոպոսն իր երեցներով: Եպիսկոպոսի անունն էր **Կարդուծատ**, որը, հեղինակի մեկնությամբ, նշանակում է *թեօկաղոս*: Անգլիացի թարգմանիչներն այս անունը ներկայացնում են՝ որպես հայերեն «կարդալ» և «Աստված» բառերից կազմություն: Բայց ըստ Ադոնցի, հայերենում այդպիսի բառ չկա, և բարդու-

² Ադոնց Ն., Գրիգոր Լուսավորիչ և Անակ Պարթև, Երկեր, Ա, Եր., 2006, էջ 177:

թյունն իսկ հայեցի չէ: Հայագետի ենթադրությամբ ավելի հավանական է, որ *Կարդուսք* բառի մեջ առաջին երկու տառերը աղավաղված են, և պետք է կարդալ *Ասդվասարք՝ Ասրվածասր (որ)*:

Մեր կարծիքով, թեօճկղտօշ-ը «Աստված» և «կարդալ» բառերից է բաղադրված, բայց *կարդալ*-ն այստեղ ոչ թե արդի *ընթերցել* իմաստն է արտահայտում, այլ գրաբարյան *կոչել, դիմել*: Թեօճկղտօշ նշանակում է՝ *Ասրծու կողմից կանչված, կոչված*: Ինչ վերաբերում է Ն. Ադոնցի կողմից *Կարդուծասր*-ի՝ նախ *Կարդուսք* և ապա *Ասդվասարք, Ասրվածասր(որ)* ձևերի հանգեցմանը, ապա կարծում ենք, որ հնչյունական տեսանկյունից արհեստական է՝ *Կարդուծատ>Կարդուսք>Ասդվասարք>Աստվածատ (որ)*:

Այնուհետև Ն. Ադոնցը գրում է, որ երկրորդ հայ եպիսկոպոսի անունը նույնպես աղավաղված է մեզ հասել՝ **Մակու**: Այսպես, Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է VI դարում ոմն *Մակար* եպիսկոպոսի, որ Պետրոս Քերթովի նախորդն էր, բայց Ադոնցը դժվարանում է ենթադրել, որ խոսքն այս Մակարի մասին է, մանավանդ որ ավելի քան հավանական է, որ *մակու* ձևի մեջ թաքնված է ուրիշ անուն, ոչ՝ *Մակար*-ը: Վերջինս, լինելով ընդհանուր քրիստոնեական անուն, ըստ նրա, չէր աղճատվի:

Միրիան-ը, գիտնականի համոզմամբ, *Միրիան*-ի վրացերեն տարբերակն է, իսկ **Միրվանոս**-ը արաբական *Մրվան* անունը չէ, այլ հին *Միրիբանես* պարթևական անունը: Ադոնցը, կատարյալ տիրապետելով պարսկերենին՝ իր հիմնական տարբերակներով՝ գրական և բարբառային, նշում է, որ *Միրիբան*-ն սասանյան ձևն է պարթևական *Միրիբան*-ի և նշանակում է «Միրի պաշտպանյալ»³:

Միրիան-ը (մի այլ վկայությամբ՝ Միրեան, ինչպես վրաց Միրիան) ազգականն էր Խոսրով Ապրվեզի, Ջևանշերի նախահայրը: Տոհմն այս պատճառով կոչվում է *Միրիբան*:

Ն. Ադոնցի վկայությամբ՝ Վարաչանի մեծ իշխանի **Ալի Իլիթվեր** կամ **Իլութվել** անվանումը խազարական շատ հետաքրքիր, բացատրության կարոտ անուն է: *Ալք* կամ *Ալփ* նշանակում է *քաջ*: Իլութվել-ի առա-

³ Ադոնց Ն., Քննություն Մ. Կաղանկատվացու, Էջմիածին, 2005, էջ 73:

ջին մասը՝ *իլու*, նրա վերականգնմամբ, նշանակում է *ժողովուրդ*, իսկ *թվել՝ պեւր*, միասին՝ *ցեղապեւ*⁴:

Խազարների դարձի պատմության մեջ, ըստ Ադոնցի, ասված է, որ քրիստոնեություն ընդունեցին նրանց «Գերագույն իշխան»-ը (թագավոր)՝ **Իշադը**, և զորականներն ու մեծամեծները: Մարկվարտը, նրա հաղորդմամբ, *Իշադ*-ը սրբազրում է *ալ-շադ*:

Ն. Ադոնցն այստեղ հիշատակում է նաև Կադանկատվացու **Շաթ** անվանումը, որ Ջեբդու խաքանի որդու անունը կամ պատվանունն էր, այն Մարկվարտն անտեսել է, թեև կողմնակից չէ սրբազրության, այլ գտնում է, որ *Իշադ*-ը ավելի հին և ստույգ ձև է: Այս անվանումը, ըստ Ադոնցի, իրանական բառ է, ոչ թե խազարական: Գիտնականի վկայմամբ՝ Ֆերգանի և Կոկանդի իշխանը արաբական աշխարհակալության շրջանում կոչվում էր *իշխադ*, ինչպես և Սոգդի կամ Բուխարայի իշխանը: Այս *իշխադ*-ը հին *իշայաթիա՝ թագավոր* բառի տեղական բարբառային իրանական ձևն է, որից ծագում են պահլավերեն *շահր* և պարսկական *շահ բառերը*:

Իբրև ամփոփում՝ հետազոտողը նկատում է, որ *Իշադ*, *շաթ* անվանումները տիտղոս են և ոչ հատուկ անուն, բայց կարող են նաև կիրառվել որպես հատուկ անուն, այս անցումն հաճախադեպ է (հմմտ. շահալ=սատրապ, իշխան, թագավոր և այլն):

Ավչի Թարխան և Կաթ Խասար (և ոչ Կասար), Երթգին Խուրսանա և Կաթ Խազր անուններից առաջինը Ադոնցի համար ստուգաբանորեն թափանցիկ է: *Ավչի*-ն նշանակում է *որսորդ*, *Թարխան* տիտղոս է, *երթգին*=*եր-Թիգին երկրի կամ ժողովրդի պեւր*: *Խուրսանը* =Խուրսան, պարսկերեն հոգնակի է՝ խուրս-ի (ինչպես Մազքուր-ան, փոխանակ հայերեն Մազկուր-ք), բյուզանդական Khursa-ն, կովկասյան ցեղի անուն է: **Կաթ Խասար**-ը Ադոնցը հակված է բառանջատելու իբրև *Կաթ Խուար* (=Խուրս), մնան՝ *կաթ խազր*-ի, այսինքն՝ խուրսական և խազրական կաթ, իսկ *կաթ*-ը ենթադրաբար սրբազրում է *շաթ*⁵:

⁴ Նշվ. աշխ., էջ 93:

⁵ Նշվ. աշխ., էջ 93-95:

Ադոնցը մեջբերում է հին հավատալիքը, որ «եթե կայծակ «մարդոյ ղիպեսցի, թէ այլ ինչ նիւթեղինաց, ձօնեալ իմն գնա նոիրեալ Քոար Աստուծոյ համարէին» (Բ, գլ. Խ), այսինքն՝ մոտավորապէս այն սնոտի հավատն էր, որ մեր ժողովրդի մեջ էլ կա, թե կայծակնահար անձը սուրբ է»⁶: «**Քոար**», ուրեմն, Ադոնցի կարծիքով, խազարական կամ հոնական բառ է՝ նույնանիշ՝ *նվիրեսալ*-ի: Հունգարական ցեղերից մեկը կոչվում էր Koubiaries, այսինքն՝ *քու(վի)ար*, որ գրեթե համահնչյուն է *քոար*-ին: Ադոնցի վկայմամբ՝ Թեոփիլակտ Սիմոկատան հաղորդում է, որ սկյութական Boukolabra հաստով անումը նշանակում է magos, hiereus, այսինքն՝ մոգ, նվիրակ (=քահանա): Եթե կարելի է կարդալ Boulo-klabra, ապա երկրորդ մասի մեջ, ինչպէս գիտնականն է նկատում, կունենանք *քաւրա* (=նվիրյալ), նման՝ քոար-ի:

Ինչպէս տեսնում ենք, ստուգաբանությունների ժամանակ Ադոնցը նախապատվություն է տալիս տարբեր բառանշատումների կիրառման սկզբունքին և այդ ճանապարհով առաջացած միավորների իմաստային բովանդակությունը փորձում է շաղկապել բանահյուսական տարբեր աղբյուրների հետ:

Կարծում ենք, որ համոզիչ է Ադոնցի կողմից *քոար*՝ *նվիրակ* և **Boukolabra**՝ *մոգ, քահանա* եզրերը համադրելու ձգտումը, իմաստային համապատասխանությունն առկա է, բայց հնչյունական տեսանկյունից ծագում են անհարթություններ. Ադոնցի նշած Boukolabra հատկանունն ինքնին հեշտությամբ կարող էր դառնալ *քաւրա*՝ առանց Boulo-klabra օղակի:

Այնուհետև Ադոնցն անդրադառնում է **Թանգրիխան** անվանը, որը հոմանիշ է իրանական *Սպանդհարին*: Գիտնականը նշում է, որ *Թանգրի* նշանակում է *երկինք*, իսկ *խան*-ը *խաքան*-ի կոչումն է, հետևաբար՝ *երկնքի տեր*: Այժմ էլ *Թանգրի*-ն գործածական է կովկասյան թուրքերի շրջանում՝ *երկինք*=*Ասրված* նշանակությամբ (տունդ Աստված քանդի=տունդ Թանգրի-ն քանդի)⁷:

⁶ Նշվ. աշխ., էջ 95:

⁷ Նշվ. աշխ., էջ 95:

Պանկրատիոս անունը Ն. Ադոնցի դիտարկմամբ՝ հայերեն *Բագրապ* անվան հունարեն տարբերակն է: Այս Պանկրատը Հովհաննես Քերականի հայրն էր, հայ Բագրատը: Բագրատի «փութ անունը»՝ *Սկիասպես* է: Σκιαστής-ը, Ն. Ադոնցի համոզմամբ, Ապոլլոնի մակդիրներից է, եթե, իհարկե, հունարեն բառ է և գործածված է Ապոլլոնի փոխարեն՝ նշանակելով *գուշակ, գուշակության ձիրք ունեցող*: Այս իմաստով՝ *Սկիասպես*-ը, Ադոնցի վերականգնմամբ, կատարելապես նույնն է, ինչ *սուր-մարգարե*, քսեմոփոփոհի, ինչպես կոչում են աստեղաբաշխ Բագրատին⁸:

Սինուտես-ը, նույն տիպի մականունն է, ինչ *Տարոնիսպես* կամ *Բասպուրականիսպես*, և նշանակում է, որ այն կրող անձը ծագում է Սյունիքից⁹:

Կրինիտես անվան ծագումը գիտականի համար անորոշ է: Կոստանդին Ծիրանածինը գրում է Կրոնից, Շարունակողը՝ Կրոնից, Գեորգ Վանականը՝ Կրոնից: Եթե այստեղ պետք է տեսնել հունարեն կրոնի՝ *աղբյուր* բառը, ապա, ըստ Ադոնցի, «բանասիրական մոլուցքով տառապող կայսր մատենագիրը չէր մոռանա այդ մասին նշում կատարել»¹⁰: Կրոնից անունը, Ադոնցի մեկնությամբ, կազմված է Կրոնից, Σινούτης, Βασπαρκακονίτης անունների համադրությամբ, այսինքն՝ այն ստեղծվել է աշխարհագրական անվան հիման վրա: Հին աշխարհում հույժ տարածված էր անձերին կոչել ըստ իրենց ծննդյան և բնակության վայրի անունների:

Այսպեսով ավարտենք Կաղանկատվացուն վերաբերող աշխատության մեջ առկա ադոնցյան հատուկ անձնանունների վերլուծությունը:

Ն. Ադոնցի լեզվաբանական հետաքրքրությունների շրջանակում առանձնահատուկ տեղ է գրավել հայոց անձնանունների ստուգաբանությունը: Հույժ հետաքրքիր է **Մեսրոպ Մաշտոցի** անվան ստուգաբանական փորձերի հետ կապված պատմությունը:

«Հանդես Ամսօրեայ»-ում Ֆնտգլյանը, ըստ Ադոնցի, համեմատել է *Մաշթոց*-ը *Մագդակ*-ի հետ, որովհետև mazd փոխվում է mašt-ի, ինչպես՝

⁸ Հմմտ. էջ 65:

⁹ Հմմտ. էջ 282:

¹⁰ Նշվ. աշխ., էջ 289:

yazd-ը՝ yašt-ի: Այս համեմատությունն Ադոնցը սխալ է համարում: Ըստ նրա՝ պարսկերեն yazd-ը երբեք չի կարող փոխվել yašt-ի: Առաջինը ծագում է yazatu ձևից, որը ապառնի կրավորական դերբայ է, իսկ yašt-ն առաջացել է անցյալ կրավորական դերբայ yaz-ից: Ճիշտ է, դրանք արմատակից են, ինչպես Ադոնցն է վկայում, սակայն «ինչպե՞ս փոխանցման կապ չկա դրանց միջև»:

Ըստ գիտնականի՝ այլ արմատ է mazd-ը, որը նույնն է, ինչ հուն. μαθ-ειν, պավ. μυδ-ρ, երկրորդը dha-«դնել» արմատն է: D-ն փոխվում է z-ի հաջորդող dh-ից առաջ, և այս փոփոխությունն այլ կարգի է, քան *յազդ* և *յաշդ*, և mazd-ը mašt չի կարող դառնալ:

Ուստի Ադոնցը *Մաշդոնց* անվան ելակետը *Մաժդ-ոնց* ընթերցումն է համարում, որ հիշեցնում է անմիջապես *Մազդ* բառը: Գիտնականը գրում է. «Իրանական գետնի վերա Մազդ չէ կարող տալ Մաժդ, որովհետև պակասում են հարկավոր պայմանները, օրինակ՝ I կամ r հնչյունը նախընթաց վանկում, որպիսի գրությամբ z փոխվում է շ»¹¹:

Իսկ -ոնց մասնիկը Ադոնցի ենթադրությամբ՝ առաջացել է հայերեն-ոնց հոգնակի սեռականի վերջավորությունից: Լեզվագետը չի բացառում, որ *Մաշդոնց* և *Մաշթոնց* ձևերի սովորական և հին գրությունից առաջացած լինեն *Մաշդոնց* և *Մաժդոնց* ձևերը՝ արևմտյան արտասանության ազդեցությամբ: Մեր լեզվի արևմտյան բարբառի առանձնահատկությունը, Ադոնցի համոզմամբ, շատ ավելի հին է, քան ենթադրվում է:

Ըստ այսմ՝ Ադոնցն առաջարկում է մեկ այլ ստուգաբանություն՝ համեմատելով *Մաշդոնցը* ուրիշ, բայց դարձյալ իրանական մի հին անվան հետ: Հերոդոտոսը հիշում է Μάσιστος անունը, որ կրում էր Քսերքսեսի զորականներից մեկը, ով առաջնորդում էր Սապիր՝ Սպեր ցեղի բանակը, հետևաբար, Հայաստանում հայտնի է եղել այդ անունը: Masistus գերադրական աստիճանն է mas-, հունարեն μακ-ρός «երկար» բառի, ուրեմն՝ masišta՝ *ամենից երկար*: Ըստ Ադոնցի՝ կարող է լինել նաև գերադրական և maz՝ *մեծ* բառի, mazišta՝ *ամենամեծ*: Երկու դեպքում էլ հայերենում սպասելի է *Մաշդ*- հիմնաձևը՝ համաձայն իրանականի:

¹¹ Ադոնց Ն., Կորյունի մասին, Երկեր, Բ, Եր., 2006, էջ 54:

-Ոց վերջավորության ծագումը, սակայն, անորոշ է, ինչպես որ անորոշ է նրա կապը *-ng* մասնիկի հետ: Հատուկ անունների շարքում, Մաշտոց-ից բացի, այդ մասնիկն ունեն *Տիրոց* և *Բարոց* անունները: Ադոնցին հայտնի է այդ վերջավորությամբ մի անուն ևս՝ *Ափոց*, հավանական է, որ Չափիկ Մոկաց եպիսկոպոսի անվան այլ տարբերակն է:

Ինչ վերաբերում է *Մեսրոպ* անվանը, ապա Ադոնցը մախ հիշատակում է Գ. Ֆնտզյան տեսակետը, ըստ այդմ *Մեսրոպ* անունը Խորենացու «հերյուրանքն» է և պատմահայրը *Մեսրոպ* անունը ստեղծել է՝ Մաշտոցին Սերովբի հետ համեմատելու ձգտմամբ՝ ստեղծելով *Մար-Սերովբ*, որից էլ՝ *Մեսրովբ* ձևերը:

Բայց Ադոնցը մեղք է համարում պատմահոր՝ առանց այդ էլ ծանրաբեռնված ուսերին այդպիսի «հերյուրանքի» բարդումը, և հետևյալ ստուգաբանությունն է առաջադրում՝ «Մեսրոբ Mesrob հաղորդ է իրանական մեծ աստվածության անվան, որ է Սիտր: Նա բաղկացած է երկու տարրից՝ *Meh-srob, ուր առաջին մասը՝ *Meh ձևափոխումն է Սիտր-ի: Հայտնի է, որ հին Mitra տալիս է Midra, Mihr, Meh, Mer, Mel-, որտեղից և հայերենում Սիհր, Մեհ (մեհյան), Մեր (Մերշապոս), Մհեր, Մլեհ (<պրս. Milād հին Mihrdat-ից), Μελίας...»¹²: Երկրորդ՝ *-սրոբ* տարրը, ըստ Ադոնցի, նույնն է, ինչ որ տեսնում ենք *Խոսրով* անվան մեջ, իսկ srōva-ն պահպանված է հայերեն փոխառյալ *դ-սրով* բառում, համապատասխանում է հունարեն κλέος, սլավ. слово բառերին և նշանակում է իսկապես *խոսք, գովք* (հմմտ. ռուս. слово՝ խոսք և слава՝ փառք):

Այս մեկնաբանությամբ՝ Մեսրոբ <Me^h-srōb նշանակում է «Սիհր գովող, փառաբանող» կամ «գովեալ ի Սիհրեն»: Հունական և սլավոնական հատուկ անունների մեջ ևս, ըստ գիտնականի, ընդունված է այս բառը, ինչպես՝ Ξεμιστο- κλής, Vladislav, որտեղ κλής < *Kleues, և slav հավասար են –srob, -սրոբին: Իրոք, սլավոնական այդ կառուցվածքի անունները կենսունակ են ցարդ՝ Мирослав, Мстислав, Владислав և այլն:

Ադոնցի համոզմամբ՝ Me^h-srōb-Mesrōb փոխանցման օրինակ կարող է ծառայել պարսկերեն Mihrāb անունը, որ հայերեն կոչվում է *Մեհրաբ* և *Միրաբ*: Mehrāb-ը նույնպես կազմված է նույն Mihr և āb բառերից:

¹² Նշվ. աշխ., էջ 57:

Սանսկր. *ābha* նշանակում է *փայլ*, որով Mehrab՝ *Միհրափայլ* –ը իմաստային դաշտով մոտենում է Մեսրոբին՝ որպես «Միհրափառ»-ի:

Կարծում ենք, համոզիչ և հայերենի իրողություններով ամրակայվող են Ադոնցի ստուգաբանությունները, հատկապես՝ *Մաշդոց* և *Մաժդոց* տարբերակների՝ արևմտյան արտասանության ազդեցությամբ առաջացման հանգամանքը:

Ինչ վերաբերում է –*ոց*-ի ծագմանը, ապա այն իրոք հայերենի ո հոլովման հոգնակի սեռականի վերջավորությունն է, որը հատուկ անուններում դառնում է վերջածանց՝ *Հայոց*, *Վայոց*, *Տայոց* և այլն: Կարծում ենք՝ տեղանվանակերտ այդ ածանցը համաբանությամբ անցել է մաս որոշ անձնանունների, այդ թվում՝ Մաշտոց-ին:

Իսկ *Մեսրոպ*-ի՝ նախնական *Մեհսրոպ* տարբերակի գոյությունը և ըստ այդմ մաս նրա՝ Միհրի հետ առնչությունն ունի և՛ ուժեղ, և՛ թույլ, խոցելի կողմեր:

«Նշանագիր կարգաց բանից Եզնկան երիցու» (Սիոն, 1938) վերնագիրը կրող հոդվածում Ադոնցը կատարում է հետևյալ ստուգաբանությունները՝ Նշանագրի **Չարէն** անունը, ըստ նրա, ավելի հին ձևն է *Չաւէն*-ի, որը երևում է մույն անվան մի այլ համագործից՝ *Չարակ*, իսկ ավելի ուշ՝ *Չարայ*:

Ադոնցի հաղորդմամբ՝ **Փառներսեհ** անունը, ըստ Ն. Ակինյանի, ծագած է *Փառեն ուն էրեց* բառերի սխալ ընթերցումից: Ըստ նրա՝ զարմանալի է, թե ինչու *Փառեն* պիտի *Փառներսեհ* դառնար: Ադոնցը նշում է, որ Ակինյանը շատ ավելի հեռու է գնում, երբ գրում է, թե Փառներսեհ-ը չի կարող պահլավական անուն լինել, քանի որ պահլավերենի բառակազմական օրենքը պահանջում է *Ներսեհ-Փառեն*: Այդպիսի օրենք, Ադոնցի խորին համոզմամբ, չկա: Նա գրում է. «Գեթ հիշեր այնքան զորեղ հիշողության տեր բանասերը Փավստոսի՝ Փառավազ=Մեբեոսի՝ Փառավազ =արևմտյան հեղինակների՝ Φαρνάβας, Փառանձեմ էլ չեն ասում հույն հեղինակների Φαρνάσιος... Հիշենք մաս Մեբեոսի՝ Խրոխ-Որմիզդ, Խորենացու՝ Խոռոխբուտ ուր **խրոխ** մի այլ հնչյուն է **փառն**-ի, կամ Farrux-Sapu, ուր farrux դարձյալ մույն **փառն** բառի այլ ձևն է»¹³:

¹³ Ադոնց Ն., Հայր Ակինյանի պատասխանին պատասխան, Երկեր, Բ, էջ 224:

Իր «Հայր Ն. Ակինյանի պատասխանին պատասխան» վերնագրով հոդվածում Ադոնցը նշում է, որ Ակինյանը նույնացնում է **Հուսիկ, Սահակ** և **Շահակ** անունները՝ «Երեք հիմնովին տարբեր անունների նույնացման դեմ կարելի է միայն երեք անգամ «չէ» ասել»¹⁴:

Ադոնցը հավելում է նաև, որ ըստ Ակինյանի՝ *Սահակ* անունը Կորճայքում արտասանվում էր *Շահակ*՝ ասորերենի ազդեցությամբ, իսկ «հայ բնիկ ժողովուրդին բերանը սեղմված եղած է Հուսիկ»: Ադոնցը գրում է. «Ոչ, որքան կուզեք սեղմեցեք բերանը, Սահակից՝ Հուսիկ չի դուրս գալ: Բերան սեղմելով չի կարելի բառեր մեկնել և ո՛չ էլ բերան լայնելով՝ սխալ մեկնություններ պաշտպանել»¹⁵:

Ակինյանը, Ադոնցի համոզմամբ, նկատել է, որ Հյուբշմանը *Շահակ* անունը «զգուշորեն» կապում է իրանական «շահ» բառի հետ, բայց նրա մտքով չի անցնում այդ անունը համեմատել *Շահրիկ*, *Շահեն* անունների հետ: Անձանունների ստուգաբանության մեջ խորամուխ գիտնականը եզրակացնում է, որ *Շահրիկ* նշանակում է *կողմնասպեհ*, մյուս կողմից էլ հատուկ անուն է, ինչպես *Շահասպ*՝ *սարքասպ*, որը նաև հատուկ անուն է: Ամփոփելով Ադոնցի այս ստուգաբանությունները՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին՝

Ա. Ն. Ադոնցի կողմից տարբեր աշխատանքներում քննության են ենթարկվել տասնյակ անձնանուններ, որոնց շարքում գերակշիռ են օտարները:

Բ. Ադոնցի՝ անձնանունների ստուգաբանության հիմնական մեթոդը իմաստների, բանահյուսական, դավանաբանական հիմքի վրա կառուցվող բառանջատումն է:

Գ. Ուսումնասիրողը օտար անձնանուններից հաճախ փորձում է բխեցնել դրանց հայկական տարբերակները:

Դ. Հատկանշական է, որ անձնանունների քննության հարցում Ադոնցը բավական զգուշավոր է, ինչպես մնացյալ բնագավառների իր ուսումնասիրություններում. իր ստուգաբանությունները գիտնականը չի առաջադրում որպես մեկընդմիջտ տրված վերլուծություններ, այլ ամեն

¹⁴ Նշվ. աշխ., էջ 225:

¹⁵ Նշվ. աշխ., էջ 225:

քայլում նշում է՝ *հնարավոր է, հակված ենք այսպես դիտելու, հավանական է* և այլ արտահայտությունները:

Ե. Օտար բազմաթիվ տեղանունների շարքում ուշագրավ է *Կարդուծար* անձնանվան ստուգաբանությունը, որը, ըստ էության, *θεός* κλητός-ն է, որը անգլիացի թարգմանիչները, թեպետ դիտարկում են իբրև *Աստված* և *կարդալ* բառերից բաղադրված անձնանուն, Արմենը, սակայն, կարծում է, որ *Կարդուս* բառի մեջ առաջին երկու տառերը աղավաղված են, և պետք է կարդալ *Աստվասր՝ Աստվածար (որ)*:

Ե. Ն. Արմենի դիտարկմամբ՝ *Պանկրատիոս*-ը հայերեն *Բագրատ* անվան հունարեն ձևն է: Բագրատի (Հովհաննես Զերականի հոր) «փութ անունը»՝ *Սկիասրես* է: Σκιάστῆς-ը, ըստ Ն. Արմենի, Ապոլլոնի մակդիրներից է, եթե, իհարկե, հունարեն բառ է և գործածված է Ապոլլոնի փոխարեն՝ նշանակելով *գուշակ, գուշակության ձիրք ունեցող*: Այս իմաստով՝ *Սկիասրես*-ը, ըստ Արմենի, կատարելապես նույնն է, ինչ *սուրմարգարե*:

Զ. Արժեքավոր է Մեսրոպ Մաշտոցի անվան ստուգաբանությունը Արմենի կողմից այն առումով, որ հայագետը *Մաշյ*- հիմնաձևին իրանական ծագում է վերագրում՝ *masišta՝ ամենից երկար* ձևից առաջացած: *Մեսրոպ* անունն էլ իր հերթին կապում է իրանական *Միսր* աստվածության հետ՝ այն մեկնելով որպես Մեսրոք<Me^h-srōb՝ «Միսր գովող, փառաբանող» կամ «գովեալ ի Միսրեն»:

Է. Ն. Արմենի՝ օտար անձնանուններում հայկական անձնանունների որոնման հասկանալի ձգտումը իր բնութագրական «սահմանում-բացատրությունն» է գտել Գրեգորիի հայտնի խոսքում, թե Ն. Արմենը միակ թերություն ուներ՝ բյուզանդական գահի բոլոր կայսրերին՝ լինելին Չմշկիկ, թե Մորիկ, «հայացնում էր»:

Բանալի բառեր – Ն. Արմեն, *հայագետ, անձնանուն, դիցանուն, օրար, բնիկ, սրուգաբանություն, ծագումնաբանություն*:

ВАНУИ БАГМАНЯН – Н. Адонц – этимолог собственных имен. – Цель нашего доклада – выделить из этимологического наследия Н. Адонца толкование антропонимов и названий богов. В центре внимания арменоведа были как армянские, так и иностранные имена. Причем в основе кажущихся

иностранными именами арменовед часто пытался восстановить их армянский вариант. Особенно интересна этимология имени Месропа Маштоца. Это имя Н. Адонц рассматривает с новой точки зрения, видя в основе антропонима имя персидского бога Митр/Митра, Мигр. Значимость этимологических исследований Адонца нужно оценивать не только с точки зрения лингвистики. Они очень важны и для исторической науки, этнологии и фольклористики, т.к. его толкования часто приводят к раскрытию важных исторических и фольклорных фактов.

Ключевые слова: *Н. Адонц, арменовед, коренные и заимствованные антропонимы, названия богов, этимология, генеалогия.*

VANUHI BAGHMANYAN- N. Adonts as an etymologist of proper names

The purpose of our report is to underline the etymology of personal names, theonyms from N. Adonts's heritage spread in his different works and to present them in proper order. The main concerns of the armenologist have been not only the Armenian, but also foreign proper names. In addition to this the armenologist often tried to restore Armenian versions according to the stems of the foreign proper names. The Adontsian etymology of Mesrop Mashtots's name is especially remarkable, which the armenologist views from a new perspective discovering the Persian Mitr/ Mitra- Mihr theonym in the stem. These etymological views of Adonts must be taken into account not only from linguistic but also historical, national and ethnographical perspectives, as these type of etymology often brings forward the discovery of important facts about history and folklore.

Keywords: *N. Adonts, armenologist, personal names, theonyms, foreign, local, etymology, derivation.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ողջույնի խոսք	3
Ողջույնի խոսք	5
Աննա Աբաշյան	
Մ. Ասատրյանի կյանքն ու գիտական վաստակը	7
Վիկտոր Կատվալյան	
Մ. Ասատրյանը բարբառագետ	15
Անահիտ Յուզբաշյան	
Բայական կարգերը՝ ըստ Մ. Ասատրյանի	26
Նարինե Դիլբարյան	
Զթեքվող խոսքի մասերի ըմբռնումը Մ. Ասատրյանի քերականական համակարգում	35
Լիլիթ Պետրոսյան	
Բառերի կապակցելիության մասին դիտարկումները Դ. Թրակացու «Քերականական արուեստ»-ի մեկնիչների երկերում	48
Նորայր Պողոսյան	
Միասնական հայերենի (արևմտահայերեն և արևելահայերեն տարրերի համատեղ գործածությամբ) դրսևորումներ 17-18-րդ դդ. աղբյուրներում	53
Նեկի Թիրաբյան	
Փոխառությունները և օտարաբանությունները արդի մամուլում	63
Նվեր Սարգսյան	
Խոսակցական լեզու-բարբառ փոխհարաբերության մասին	76
Հովհաննես Զաքարյան	
Հնխլ. *Pel- «շարժել» և *Mē- «չափել» արմատներից սերված հայերեն բառեր	84
Սուսաննա Գրիգորյան, Նաիրա Պարոնյան	
Մակբայ խոսքի մասը՝ ըստ Մ. Ասատրյանի	94
Հեղինե Մելքոնյան	
Հեղինակային կետադրության հարցեր	103
Ալվարդ Խաչատրյան	
Խոսքի մասերի փոխանցումը և փոխանունությունը Մ. Ասատրյանի քերականական աշխատություններում	123

Անահիտ Մանուկյան

Մ. Գալշոյանի «Չորի Միլոն» վիպակի բառապաշարը 132

Վիկտորյա Մուրադյան

Բառակապակցության ասատրյանական ըմբռնումը 142

Թամարա Պողոսյան

«Արհեստ համարողության ամբողջ և կատարեալ» գրքի
բառապաշարը..... 151

Վանուհի Բաղմանյան

Ն. Ադոնցը՝ անձնանունների ստուգաբան 181

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

**ՊՐՈՖԵՍՈՐ ՄԱՆՎԵԼ ԱՍԱՏՐՅԱՆԻ
90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

Համակարգային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Ստորագրված է տպագրության՝ 15.11.2016:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 12.25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.yysu.am